



NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

**NEW WORDS IN WEST ARMENIAN
LANGUAGE**

BOOK 1

**НОВЫЕ СЛОВА НА ЗАПАДНОАРМЯНСКОМ
ЯЗЫКЕ**

КНИГА 1

Yerevan 2021
Ереван 2021

ՀՀ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ԼԵԶՈՒԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆՈՐ ԲԱՌԵՐ
ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՄԷԶ

Ա. ԳԻՐՔ

Երևան
ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51
Ն 930

Կը տպագրուի ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան լեզուի
ինստիտուտի գիտական խորհուրդի որոշմամբ:

Խմբագիր՝ Բ.Գ.Պ. Վ.Լ. Կատվայան
Գրախօս՝ Բ.Գ.Թ. Ա.Ս. Գալստյան

Ն 930 Նոր բառեր արեւմտահայերէնի մէջ / Կազմ.՝ Ս. Տիոյեան,
Ա. Ֆիշենկճեան, Յ. Մարաշլեան. - Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021.
Գիրք Ա.- 145 էջ:

«Նոր բառեր արեւմտահայերէնի մէջ» խորագիրով Ա գիրք աշխատասիրութիւնը կ'ընդգրկէ արեւմտահայերէնի շուրջ 1000 բառեր, որոնք արեւմտահայերէնի որեւէ բառարանին մէջ տակաւին չեն վկայուած: Ատոնք քաղուած են արեւմտահայերէն արձակ ու չափածոյ ստեղծագործողներու գիրքերէն, ամսագիրերէն, շաբաթաթերթերէն եւ օրաթերթերէն:

Աշխատասիրութիւնը կրնայ օգտակար ըլլալ ոչ միայն արեւմտահայերէնի բառագիտութեամբ ու բառակազմութեամբ հետաքրքրուող մասնագէտներուն, այլեւ՝ ուսանողներուն եւ ուսուցիչներուն համար:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51

ISBN 978-9939-9277-0-1

© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անվան լեզվի ինստիտուտ, 2021

ԱՌԱՋԱԲԱՆ

ՀՀ ԳԱԱ Ն. Աճառեանի անուան լեզուի հնաստիտուտի արեւմտահայերէնի բաժինը ձեռնամուխ եղաւ արդի արեւմտահայերէնի նոր բառերու հաւաքման եւ բացատրական աշխատանքներուն: Ինքնուրոյն եւ թարգմանական, գեղարուեստական եւ գիտական գրականութենէն, օրաթերթերէն եւ ամսագրերէն, ինչպէս նաեւ համացանցէն եւ այլն, ի մի բերուած են այնպիսի նորաբանութիւններ, որոնք արեւմտահայերէնի առկայ բառարաններուն մէջ տակաւին չեն վկայուած:

Հանրութեան դատին ներկայացուող սոյն «Նոր բառեր արեւմտահայերէնի մէջ» Ա. գիրքը, որ կը պարունակէ շուրջ 1000 բառամիաւոր, շարունակական է:

Բառարանին մէջ գլխաբառէն ետք կը նշուի բառի խօսքիմասային պատկանելութիւնը, կը տրուի բառի բացատրութիւնը՝ արեւմտահայերէն եւ արեւելահայերէն, օրինակը եւ աղբիւրը:

Սոյն բառացանկում, ինչպէս արեւելահայերէնի «Նոր բառեր» պրակներուն մէջ, չեն ներառուիր հնչիւնափոխ եւ անհնչիւնափոխ տարբերակները, ուղղագրական առանձնայատկութիւններով բնութագրուող բառամիաւորները, քանի որ ատոնք բառային նոր միաւորներ չեն դիտարկուիր:

Մօտ ապագային բաժինը ծրագրած է հրատարակել յաջորդական գիրքեր, իսկ վերջը լոյս տեսած գիրքերու բառամթերքէն առանձնացնելով տպագրել հանրութեան ընդունելի նորաբանութիւնները:

Բառարանը կը ներկայացնէ ինչպէս օգտագործուած աղբիւրներու, այնպէս ալ համառօտագրութիւններու ցանկը (արեւմտահայերէնի բառապաշարի մէկ հատուած, որ վերցուած է մասնագիտական բառարաններէն /ռազմական, բժշկական, բարոյագիտական, փիլիսոփայական եւ այլն/, կը տրուի միայն իմաստային բառարանային բացատրութեամբ (նաեւ լատիներէն, եթէ այն առկայ է) եւ սկզբնաղբիւրի յղումով. (օրինակ՝ ԱԼԵՅԻՐ, գ., **Ձայնի ալիքներ ցրող սարք // հաղորդող սարք:** Ռատիոալիքներու անմիջական ճառագայթման համար նախատեսուած սարք):

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ ԵՒ ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹՅՒՆՆԵՐ

1. //- զուգահեռները կը դրուին գլխաբառի արեւմտահայերէն եւ արեւելահայերէն բացատրութիւններու միջեւ, այլեւ յապաւումներու մէջ եզրոյթային տարբերութիւնները նշելու ժամանակ:

2. /- բանաստեղծական տողերու միջեւ, եթէ ստոնք կը բերուին շարունակաբար

3. ած. – ածական
4. բ. – բայ
5. բժշկ. – բժշկական
6. բնստ. – բանաստեղծական
7. գեղգտ. – գեղագիտական
8. գեղնկ. – գեղանկարչական
9. գ. – գոյական
10. գրկն. – գրականագիտական
11. գրք. – գրքային
12. դիպվ. – դիպումաձային
13. երժշտ. – երաժշտական
14. ընկ./սոց. – ընկերաբանութիւն/ սոցիոլոգիա
15. իրավ. – իրաւաբանական
16. լեզվ. – լեզուաբանական
17. կենս. – կենսաբանական
18. կզմխս. – կազմախօսական
19. կր. – կրօնական
20. հեզն. – հեզնական
21. մկբ. – մակբայ
22. մարզ. – մարզական
23. մանգ. – մասնագիտական
24. շին. – շինարարական
25. ռազմ. – ռազմական
26. փիլ. – փիլիսոփայական
27. փիւբ. – փոխաբերական
28. քղք. – քաղաքական
29. օղգ. – օղագնացութիւն
30. օտրբ. – օտարաբանութիւն

Ա

ԱԲԵՂԵԱՆԱԿԱՆ, ան., Մանուկ Աբեղեանին վերագրուող արեւելահայերէն ուղղագրութեան բարեփոխուած տարբերակը // արեւելահայերէնի՝ արեղյանական ուղղագրական բարեփոխումների մասին է խոսքը: Այս պարագային «պատերազմը չի դադարի պատերազմի չգոյութեամբ», քանի «թշնամին», **արեղեանականը**, ներսէ՛ն է (*Գ. Բ., 2009, էջ 29*):

ԱԲԵՂՅԲԵՂՈՒԹԻՒՆ, գ., **Խենթ ու խելառութիւն, անիմաստ, անտրամաբանական մտքեր // անկապ, անիմաստ մտքեր:** Թերեւս պատմեր էր բարոյականի դասախօսին **արեղցբեղութիւնները** (*Գ. Պ. 1, 2012, էջ 195*):

ԱԳՈՒԱԻԱԶ, ան., **Ագռաւի չար աչք // ագռավի չար, աղետաբեր աչք:** Եւ գուցէ լայ նորէն բոլոր վիշտերը՝ զանգակաձայն, **ագռաւաչ** սկսող անծանօթ ցաւազին այսօրուան մը որու անձուկին դառնութիւնն աղօտապէս կը հեռաշնչեմ արդէն, բայց որու հեռաւորութիւնը հրճուանքով կը զգամ դեռ (*Ին., 2014, էջ 52*):

ԱԶԱԶՈՂ, ան., **Չորցնող, հիւծող, թառամեցնող // հյուծող:** Եւրոպական արքորէն կը բերէ քերթուածներ՝ Արեւմուտքի մէջ ընձիւղած ծաղիկներ, որոնք պիտի ջանան դիմանալ Արեւելքի **ազազող** խորշակին (*Գ. Պ. 4, 2014, էջ 12*):

ԱԶԱՏԱԲԱՂՁՈՒԹԻՒՆ, գ., **Անկախութեան, ինքնիշխանութեան տենչ // անկախության, ազատության ձգտում:** Շուշիի ազատագրումը նոր իմաստ ներարկեց հայութեան պատմական դատին եւ վերընձիւղեց անկաշկանդ եւ անկախ ապրելու արցախահայութեան **ազատաբաղձութիւնը** (*Հորգ., 8 Մայիս 2019*):

ԱԻՏԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ (relapse), գ., (բժշկ.), **Ախտակրկնում, ապաքինումէն ետք՝ հիւանդութեան կրկնում // հիվանդության կրկնություն:** Տեսնուած է որ հիւանդներէն շատերը դարմանումէն ամիսներ ետք **ախտադարձութիւն** կ'ունենան, այսինքն՝ հիւանդութիւնը կը վերանորոգուի (*Հայր., 23 Հունվար 2019*):

ԱԻՏԱՄԵՐԺՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ (immunity), գ., (բժշկ.), **Ախտազերծում // հիվանդազին երևոյթների մերժողականություն:** Տկար ախտամերժութիւն ունեցողներու եւ մարդկային **ախտամեր-**

ժողականություն ժաիրով տառապողներու մօտ վերքը շատ ուշ կը սպիանայ (*Հայր., 4 Մեպտեմբեր 2018*):

ԱԽՏԱՄԵՐԺՈՒԹԻՒՆ (immunity), գ., (բժշկ.), **Հիանդություններու՝ ախտերու մերժումի ամբողջական համակարգ // հիվանդության դեմ պայքարելու համակարգ:** Տկար ախտամերժություն ունեցողներու եւ մարդկային ախտամերժողականության ժաիրով տառապողներու մօտ վերքը շատ ուշ կը սպիանայ (*Հայր., 4 Մեպտեմբեր 2018*):

ԱԽՏԱՊԱՏՃԱՌ, գ., (բժշկ.), **Հիանդություն յարուցող սկզբնապատճառ // հիվանդության առիթ, հարուցիչ:** Վերոյիշեալ հինգ ախտապատճառները մասնակիօրէն կը խցեն կոկորդը:

ԱԽՏԱՎԱՐԱԿՈՒԻԼ, բ., (բժշկ.) **Արատով, մոլուցեամբ համակուած, հիանդագին // որևէ արատով, մոլուցքով համակված:** Սարսափելին հոն է, որ սկսած ենք վերածուիլ ատելավառութեամբ ախտավարակուած հասարակութեան եւ անհանդուրժող ընկերային հաւաքականութեան: (*Հորգ., 20 Մայիս, 2019*):

ԱՀԱԳՆԱԿԱՆ, ած., **Հսկայածաւալ // հսկայական, ահռելի:** Ան խառնուրդ մըն է մտացածինի, իրականի ու պատմականի, բոլորը խմբուած՝ պատմական կորիզի մը շուրջ, սակայն յաճախ **ահագնական** չափազանցություններով ու քմածին հրաշագործություններով: (*Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 32*):

ԱՀԱԼԻՐ, ած., **Ահագոյու, երկիւղալի // վախով պարուրված:** Կ'արձագանգես սիրտէ սիրտ հայ անունիս **ահալիր** (*Հայ., թիւ 11 (119), սեպ., 1932, էջ 86*):

ԱՂԱԽՐՈՒԱԾ, ած., **Աղի մէջ խրած՝ մխրճուած // ցամաքած լճի աղի մէջ խրված նավ:** Ձեփիւռը սակաւ կաթիլ մը բերաւ աչքեղ / - չոր լիճի մէջտեղ **աղախրուած** նաւ ... (*ԵՐԹ, 2006, էջ 99*):

ԱՂԱԻՆԵԾԻՐՏ, գ., **Աղանիի ծիրտ // աղավնու ծերտ:** ...որուն վրայ կոտորած աղանէտուն մը կայ, **աղավնեծիրտերով** ծածկուած ձողեր կամ աղին-անդին երկարած փեթակներ... (*Համ. 2007, էջ 32*):

ԱՂՕԹԱՄԱՀ, գ., **Աղօթելու յատկացուած տարածք տաճարին մէջ // աղօթելու համար նախատեսված հատված:** Եւ Թորամանեան, Ղաֆադարեան, Սահինեան չեն սխալիր երբ կը

մատնանշեն հայկական «Բազիլիկալ» տաճարներ, որոնց **աղօթարահները** շինուած են հայոց Քրիստոնէութեան դարձէն առաջ (Ահկ., 1966, թիւ 1, էջ 72):

ԱՂՈՒՈՐՈՒԹԻՒՆ, գ., **Գեղեցկութիւն // գեղեցկություն:** Կու գար, կը նստէր մայրիկի մեքենային մօտիկ, կը թուէր աւելի նիհար, աւելի սլացիկ, **աղուորութիւնը** աւելի հասուն (Գ. Պ. 1, 2012, էջ 202):

ԱՂՕՏԱՊԷՄ, մկբ., (բնստ.), **Անորոշ կերպով, տարտամօրէն // մշուշոտ:** ...որու անձուկին դառնութիւնն **աղօտապէս** կը հեռաշնչեմ արդէն, բայց որու հեռաւորութիւնը հրճուանքով կը զգամ դեռ (Ին., 2014, էջ 52):

ԱՃԻՒՆԱԲԱՇԽՈՒՄ, գ., **Մոխրացած դիի, մասունքի սփռում // դիակամոխրի սփռելը:** ... դժուար կը թուի հաւատալ թէ այս կոտորակուած **աճիւնաբաշխումը** անմեղունակ եւ զուտ քրիստոնէական ոգիի մը արտայայտութիւնն է սոսկ (Գ. Բ., 2009, էջ 45):

ԱՄԵՐԻԿԱՆԱՍՏԱՍՏԱՍ, ած., **Ամերիկահիմն հիմնարկ կամ յանձնախումբ // Ամերիկայում գործող:** Այդ վտանգաւոր շարժումը կոչուեցաւ Ապրիլեան Եղեռնին իրաւականութեան քննարկումը, ըստ ՄԱԿ-ի Ցեղասպանութեան կանոնադրութեան, յանձնել **ամերիկահաստատ** Յանձնաժողովի մը (Գ. Բ., 2009, էջ 55):

ԱՄԵՐԻԿԱՆԱՍՏԱՍՏԱՍ, ած., **Ամերիկեան քաղաքական վարքագիծին բարեհաճ // Ամերիկայի հանդէպ բարյացակամ:** 2000 թուականին ան կը յայտարարէ նաեւ թէ Իրաքի եւ Իրանի մէջ հանրային կարծիքը այնքան **ամերիկանապաստ** է, որ... (Գ. Բ., 2009, էջ 84):

ԱՄՊԱԿԵՐՏՈՒԻԼ, բ., (բնստ.), **Ամպով ձեւաւորուիլ // ամպերից ստեղծվել, շինվել:** ... չես գիտեր ինչ հմայքով **ամպակերտուեր** էր սարերու այն կոյտը որ ... (Ին. 1, 2014, էջ 377):

ԱՄՊՈՏՈՒՄ, գ., (փխբ.), **Բնութեան մթազնում, հոս թախիծ // մթազնում, մշուշվելը:** Ափսոսանքի ծամածուռ մը դէմքին, կոպերուն, մանաւանդ սեւ աչքերուն մէջ մելամաղձոտ **ամպոտում** մը... (Գ. Պ. 2, էջ 319):

ԱՄՊՈՒՄ, գ., (բնստ.), **Մռայլ ամպերու կուտակում // սև ամպերի կուտակում:** ...դէպի հեռանկարներուն երանաւէտ ան-

ստուգութիւնը, ու կարծես ալ աւելի հեռուն, անաշխարհային **ամպումներու** մէջ... (*Ին.*, 2014, էջ 63):

ԱՄՐԱԴՐՈՒԱԳ, ած., **Յիշողութեան մէջ քանդակուած, անմոռանալի // դաջված, հաստատված:** Կը բարեւենք... իրարու նմանող, իրարմէ տարբեր այրիներ իրենց լաչակներուն տակ պահող **ամբադրուագ** մասերը իրենց չհատնող պատմութեան եւ ամուլ կնիկութեան (*Գ. Պ. 1, 2015, էջ 65*):

ԱՄՐԱԽԱՐԻՄԻՍ, գ., **Ամուր հիմք ունեցող // ամուր, հաստատուն:** ...առանց որոնց լուծման կարելի չէ ազգային մշակութային ինքնութեան զօրացումը, ոչ ալ Սփիւռք-Հայաստան **ամրախարիսիս** կապերու հաստատումը (*Գ. Ք., 2009, էջ 29*):

ԱՄՐԱԿԱՊԻԶ, գ., **Ամբօրէն միացնող // ամբացնող գոտի** ...մե՛րթ կը ստուգէր մէջքի **ամրակապիչը**, մե՛րթ թիկունքը կը սեղմէր բազկաթոռին (*Գ. Պ. 2, 2012, էջ 366*):

ԱՍՕԹԼԵԱՅ, ած., (բնաստ.), **Ամօթի զգացումով համակված // ամոթխած:** Հետզհետէ սաստկաթոյր ու հսկայածէ այն երկիրը Կիլիկիան էր. ցանկալիօրէն եւ **ամօթլեաց** վայրենականութեամբ մը ծայրաշխարհեայ... (*Ին. 1, 2014, էջ 378*):

ԱՅԺՄԷԱԿԱՆԱՅՆԵԼ, բ., **Ներկայ ժամանակին առնչել, համապատասխանեցել // արդիականացնել:** Լուրը նոր չէ. ամսուայ մը հնութիւնը կրնար արգելք ըլլալ անոր անդրադարձումին, եթէ նոր տարրեր չգային զայն **այժմէականացնելու** (*Գ. Ք., 2009, էջ 34*):

ԱՅԺՄԷԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Նորարարութիւն // արդիականություն:** ...որքա՞ն կրնան հետաքրքրական նկատուիլ, եւ նոյնիսկ որոշ **այժմէականութիւն** մըն ալ ներկայացնել (*Գ. Ք., 2009, էջ 7*):

ԱՅԼԱԴԱՐՁՈՒՄ, գ., (փոխ.), **Շեղում, տարադարձում, խեղաթիւրում // խեղաթյուրում, հակադարձում:** Քերթուածը շրջագայութեան մէջ դնողին եւ զայն ընդունողին միջեւ **այլադարձում** մը կայ օտարէն (*Գ. Պ. 4, 2014, էջ 166*):

ԱՅՄՐԿԱՐՄԻՐ (infrared), ած., **Լուսապատկերային ճառագայթում // սպեկտորի մաս հանդիսացող անտեսանելի ճառագայթներ:** Մոտիլիանիի տասնհինգ գործերը ուսումնասիրուած են շողարձակումով, անդրմանիշակագոյն եւ **այսրկարմիր ճառագայթներով** (*Գ. Ք., 2009, էջ 297*):

ԱՆԱՄԱՅԱՅՆԵԼ, ք., **Կեանքով լեցնել, ճոխացնել, շինցնել // կենդանացնել:** Եւ դարձեալ մենաքայլ կնիկին, կորովագեղ տղամարդուն կողմերէն հեռացող իր հիքանոյշ նկնութեան՝ որ բաւ էր սակայն մենաւոր ուղին **անամայացնելու...** (*Ին. 1, 2014, էջ 337*):

ԱՆԱՆԿԱԽ, ած., **Ազատութիւն չունեցող // ազատությունից գուրկ:** **Անանկախ**՝ դիրքին էր հուլովել «երագ»ը, / խոնարհել «ազատութիւն»ը... (*Մ. Պ., էջ 40*):

ԱՆԱՆՈՒՆՈՒԹԻՒՆ, գ., **Անունէ եւ անոր բերած սահմանափակումներէ, ինքնութենէ հրաժարում // անհայտություն:** Ուղղուելով այդպէս ռեւէ մէկուն եւ ո՛չ թէ ինծի, մէկու մը որ կարենայ ստանձնել **անանունութիւնը**, լիանայ անով, մտնէ անհետացման կիրքին մէջ... (*Գ. Պ.1, 2015, էջ 22*):

ԱՆԱՊԲԵԼԻ, ած., **Անիրականանալի // անիրականանալի:** Յանկալին կը դառնայ **անապրելի**, վսեմը կը դառնայ ստրկացած (*Գ. Պ.4, 2014, էջ 150*):

ԱՆԱՐՁԱՆԱԳԻՐ, ած., **Յուշակոթողի կառուցման չվկայուած թուական // ճշգրիտ թվականը չվկայված:** Ճարտարապետական շինութեանը Հ.Կ. Պոլթեր ջանաց այս իրողութիւնը օգտագործել, ճշդելու համար **անարձանագիր** եկեղեցիներու թուականը (*Ահկ., 1966, թիւ 1, էջ 69*):

ԱՆԲԱՐԵՑԱԿԱՍ, ած., **Ուրիշին յաջողութիւնը չկամեցող. բարբարոս // չարակամ:** Այս անապահով աշխարհին մէջ հայութիւնը դարձեալ ինքզինք կը գտնէ դէմ յանդիման **անբարեցակամ** ուժերու (*Գ. Ք., 2009, էջ 23*):

ԱՆԴԱՄԱԼՈՒԾՈՒՄ, գ., (փխբ.), **Անշարժութեան մատնուած ըլլալը, հոս՝ զարգացումի անզօրութիւն // մտավոր զարգացմանը անընդունակ:** Ո՛չ գաղթականութիւնը, ո՛չ ալ աստանդական կեանքի քայքայիչ ներգործութիւնը կրնան պատճառ նկատուիլ իմացական ու մտաւոր **անդամալուծումի** (*Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 3*):

ԱՆԴԱՐՁՕՐԵՆ, մկբ., **Վերջնականօրէն, անփոփոխելիօրէն // անդառնալիորէն:** Էութեան որակ մը, հեւքի մը անձնաւորումը, կշռոյթ մը, տրոփիւն մը, միակ, **անդարձօրէն** եզակի, ուստի անկրկնելի, ժամանակաւոր կառուցում մըն է ընդմէջ հագագի, բերնի, քիմքի ու ականջի (*Գ. Պ.2, 2012, էջ 177*):

ԱՆԴՆԴԱԳՆԱՑ, ան., **Դեպի անդունդ, վիհ ընթացող, գահավիժող // գահավեժ:** Հոս է, որ կը գրուի վերկայացումին պակասը, անոր **անդդագնաց** քերծը (*Գ. Պ. 4, 2014, էջ 205*):

ԱՆԴՐԱԲԵԻԵՌՈՒՄ, գ., **Ուշադրութեան շեղում գլխաւորէն // ուշադրության շեղում:** ...սխալ պիտի ըլլար եղեմը շփոթել նախադէտին հետ (1895-96-ի ջարդերը, Ատանայի դէպքերը) եւ մէկէն կատարել **անդրաբեւեռումներ** (*Գ. Պ. 4, 2014, էջ 24*):

ԱՆԴՐԵՐԿՐԱՅԻՆ, ան., **Գերբնական, գերերկրային // երկրից վեր:** «Ջրհեղեղը» **անդրերկրային** կերպարանքներու եւ խռով հոգեկան վիճակի արտայայտութիւն մըն է (*Բ. Կ., 1975, էջ 242*):

ԱՆԴՐՀԱՅՏՈՒԹԻՒՆ, գ., (բնատ.), **Դեպի հեռուն, դեպի անորոշը յառած // դեպի հեռուն, դեպի ապագան ուղղված հայացք:** Սոխրագոյն աչքերուն մէջ հեռանուող **անդրհայեցութիւն** մը կար: (*Ին., 2014, էջ 67*):

ԱՆԴՐՄԱՆԻՇԱԿԱԳՈՅՆ (ultraviolet), ան., (զեղանկ.), **Մագնիսակէկտրական ճառագայթումի մասնաւոր տեսակ // լուսաճառագման մասնավոր տեսակ:** Մոտիլիանիի տասնհինգ գործերը ուսումնասիրուած են շողարձակումով, **անդրմանիշակագոյն** եւ այսրկարմիր ճառագայթներով (*Գ. Բ., 2009, էջ 297*):

ԱՆԵԼԵԻՔ, ան., **Միալար, միապաղաղ // միապաղաղ:** Նպատակս ոչ ծիծաղիլ է եւ ոչ ալ երգիծել, այլ ցոյց տալ Սպիտակ Տուն-Հանրութիւն **անելելէջ** կապի մը պատկերը, եւ ընել թելադրութիւն մը (*Գ. Բ., 2009, էջ 59*):

ԱՆԻՆՔՆՈՒԹԻՒՆ, գ., **Ինքնութենէ զուրկ, անձնականութիւն, դիմագիծ չունեցող // ինքնագիտակցումից զուրկ:** «Ոչ հայ ոչ ալ օտար – զուտ ինքնէկ, **անինքնութիւն**, առանձին եւ արկածախնդիր Սփիւռքն է» (*Վ. Օ., 2017, էջ 445*):

ԱՆԻՏԷԱԼ, ան., **Աներագ, բարձրագոյնի չձգտող // աննպատակ:** ...յաջողեցան ... շատերու համար դաւանանքի մը վերածել **անիտէալ** համրանք ըլլալու եւ մնալու ճակատագրապաշտութիւնը (*Հայ., 1, 1970, 9-րդ համար, էջ 5*):

ԱՆԼԱԻԱՏԵՍ, ան., **Յոռետեսական աշխարհահայեացք ունեցող // հոռետես:** Անով երեսան բերուածը եղած է մարդկային

հոգիին եւ իրավիճակին քիչ մը պղտոր, անհանդարտ, **անլուսատե** եւ տրտում խորքը... (Գ. Ք., 2009, էջ 220):

ԱՆԽԱԲՕՐԵՆ, մկբ., **Առանց կեղծիքի, նենգութեան // ազնվորեն: ...անխաբօրէն** ճշդելու համար թէ բարոյական ի՛նչ սկզբունքներով կը գործէ իշխանութիւն մը (Հայ., 2, 1969, 5-րդ համար, էջ 3):

ԱՆՀԵՏԵԼԻ, մկբ., (բնստ.), **Աննկատ, առանց հետք ձգելու // առանց հետք թողնելու:** Բաւ էր սակայն մենաւոր ուղին անամալացնելու, իր հեռացմանն ու ընդհուպ **անհետելի** ըլլալուն հրապոյրին... (Ին. 1, 2014, էջ 337):

ԱՆՁԱՆԿԱՄ, գ., **Դիմապատկեր // դիմանկար:** «Շատերէն մէկը» յատկանշական **անձնանկար** մըն է, խոնարհ, ինք իր մէջ կծկուած գութի, ցաւի, նուաստացման արտայայտութեամբ մը (Բ. Կ., 1975, էջ 298):

ԱՆՁԱՏՈՒՈՂԱԿԱՆ, ած., **Անձնատուր ըլլալու տրամադիր // անձնատուր լինելը:** ... ստորագրուած **անձնատուողական** ու ազգակործան համաձայնագրին որոգայթներուն խորքը դրոշմուած կը մնայ այն յստակ հարցը՝ թէ ... (Հորգ., 13 Նոյեմբեր 2020):

ԱՆՃԻԳ, ած., (գեղանկ.), **Առանց յոգնութեան եւ ջանք թափելու // առանց ջանք գործելու:** Դիւրավարծութիւնը եւ նկարելու գիտութիւնը գործին կ'ապահովէին քիչ մը մակերեսային յաջողութիւն, առանց **անճիգ** աշխատանքի մը (Գ. Ք., 2009, էջ 233):

ԱՆՄԱՍՆՈՒԹԻՒՆ, գ., **Անհաղորդ ըլլալը// անհաղորդութիւն:** Պէտք չկայ պարագծելու այս արտադրութեան շրջարկը՝ յիսունական-վաթսունական թուականներու հայ բանասեղծութիւնը, Սփիւռքի եւ Հայաստանի մէջ, հաստատելու համար անոր **անմասնութիւնը** ժամանակէն (Վ. Օ., 2017, էջ 444):

ԱՆՄԻԱԻՈՐ, ած., **Անեզական, չմիաւորուած, չհամախորմբուած // չհամախմբված, անմիասնական:** ...Վ. Օշական կը դնէ ամբողջի մը նուաճումին ձգտող խայտաբղէտ, խառն, **անմիաւոր**, իր կեղորոնի կորուստէն տեւականապէս վտանգուած եւ մեր օրերու քառնն ու մտքի անհեթեթ սխրանքները գրաւող խօսք մը (Վ. Օ., 2017, էջ 447):

ԱՆՈՒԱՆԱԶԵՂԾՈՒՄ, գ., (գեղանկ.), **Անուանախեղաթիւրում // անվանարկում:** Ան աշխարհի ամենէն հարուստ նկարիչն է

այսօր, ու ամէն զիջումի, **անուանազեղծումի** յօժար գտնուած է ամերիկեան տոլարի սիրոյն (*Գ. Ք., 2009, էջ 280*):

ԱՆՋԱՏԱԿՅՈՒԻԼ, բ., (բնստ.), **Մահմանագատուիլ // սահմանագատվել, անջատվել**: Շինական քաղքին մեծ ճամբան որ մօտակայ ամայութիւններուն կը հասնէր, պարտեզը կը քերէր իր քաղաքածայրի լուսեամբը, լեցուն՝ սարսուռովը ձմեռնային առանձնութեանց, որոնց **կ'անջատակցուէր** տրտում պարտեզը կըրն պատով մը... (*Ին., 2014, էջ 54*):

ԱՆՋՐՊԵՏԵԱՆ, ան., (բնստ.), **Տիեզերական, անհուն // անսահման, անհուն**: Ինքնամոռաց եւ ինքնասպառ /Ես կը շրջիմ/ Ինձ ի վերուստ բաժնեզծուած / **Անջրպետեան** իմ ուղիով... (*Երթ, 2006, էջ 87*):

ԱՆՍՍԱՆՁՆԵԼԻ, ան., **Աննշմարելի, անբացատրել // անընկալելի**: ...պատկերը, որքան ալ տիեզերականօրէն խօսուն բան մը նկատեմ, կը մնայ օդային, **անստանձնելի**, եւ զուրկ պատում մը յօրինելու խորհուրդէն (*Գ. Պ. 1, 2015, էջ 19*):

ԱՆՎԿԱՅԵԼԻ, ան., **Անհաւաստի, անփաստելի // անփաստելի**: Ըստ երեւոյթին՝ տարիներու վկայագրական աշխատանքը, ... չէ բաւած անկարելին կարելի դարձնելու, անասելին՝ ասելի, **անվկայելին՝ վկայելի...** (*Ս. Ս., 2016, էջ 35*):

ԱՆՏԱՐԱԶԵԼԻ, ան., **Աներեակայելի //անասելի**: Այս բոլորէն ետք, արինարբու ճեմալ փաշաները, **անտարազելի** շնականութեամբ, դեռ կը յոխորտային... (*Ազ., 6 Մայիս, 1966*):

ԱՆՅԵԱԼԱՆԱԼ, ան., **Անցեալ, պատմութիւն, յիշողութիւն դառնալ // պատմութեան գիրկն անցնել, հիշողութիւն դառնալ**: Ես քիչ մը փոխուած եմ / ոչ այսպէս առտուայ ցօղով /այլ թոյլ-խոցուած հրաշքովն այս / արինլուայ հաշտութեամբն այս / **անցեալացած** յաջորդովն այս (*Երթ, 2006, էջ 36*):

ԱՆՅԵԼԱԽՈՅԶ, ան., **Անցեալը փնտռող՝ քննող // անցյալը քննող**: Հանճարեղ գաղափարը ունեցած է քաղաքական նոր անելի մը որպէս լաւագոյն մեկնաբանութիւն՝ ներկայացնելու այդ **անցելախոյզ**, կարօտաբաղձ երզը (*Գ. Ք., 2009, էջ 31*):

ԱՆՅԵԼԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ., **Անցեալի, աւարտուածի հանդէպ պաշտամունք // անցյալի պաշտամունք:** Այս անցելապաշտութիւնը ցանկութիւն մըն է, կարօտ մը ... (Գ. Պ. 4, 2014, էջ 66):

ԱՆՅԵԼԱՍՈՅՁ, ած., **Անցեալի մէջ ընկղմած՝ կորսուած // անցյալով տարված, անցյալի մէջ ընկղմված:** Միւրմէլեանի պատանութեան տողերը դասական կաղապարով մը անցելասոյգ հայեացքէ մը տարուած են (Գ. Պ., 2017, էջ 115):

ԱՆՓՈՐՁԱՐԿԵԼԻ, ած., **Փորձի, քննութեան ենթակայ չեղող // անքննարկելի:** Կը յղուի մասնաւորապէս եղեռնի անփորձարկելի փորձառութեան եւ կ'ենթադրէ ողբերգութիւնը (Գ. Պ. 4, 2014, էջ 183):

ԱՆՔԱՋԱԼԵՐԱԿԱՆ, ած., **Չխրախուսող, չոգեւորող // չոգեջնչող:** ...առաջին մղումով պիտի տարուէի որ գիծերս արտայայտեն ճանանչագէղ մտաւորական մը, լրջախոհ տեսքով, խուզարկու եւ թերեւս քիչ մը **անքաջալերական** նայուածքով... (Գ. Լ., 2009, էջ 141):

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆՕՐԵՆ, մկբ., **Աշխարհագրական դիտանկիւնէ // աշխարհագրական առումով, այդ տեսակետից:** Աշխարհագրականօրէն, ցեղայնօրէն, գործնականօրէն. ոչ մէկ կապ (Բ. Կ., 1975, էջ 261):

ԱՇԽԱՐՀԱԿՈՂՄ, գ., **Երկրի մէկ ուղղութիւնը, հոս՝ (փխր.) մարդկութեան մէկ մասը // երկրի մէկ հատվածը:** Հին աւանդութիւն մը հաստատած էր, թէ Արեւմուտքը խաւարի եւ չարիքի **աշխարհակողմն** է... (Ահկ., 1966, թիւ 1, էջ 67):

ԱՇԽԱՐՀԱՅՆԱՅՈՒՄ, գ., (բնաս.), **Համաշխարհային դառնայր, ամէն տեսակի սահմանները չճանաչելը՝ չընդունիլը // համահարթումը:** Առայժմ եւ այսօր նոյնն են լուրերը / դաշինքներով / հրասայլերով / **աշխարհայնացումով** / կամ հսկայ շարժմամբ... (Տ. Գ., 2006, էջ 36):

ԱՇԽԱՐՀԱՎԵՐՁ, գ., **Երկրի վախճանը, աւարտը // աշխարհի վերջը:** Հոն տակաւին արգելափակուած է Միեր, սպասելով **աշխարհավերջին...** (Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 34):

ԱՇԽԱՐՀԱՅՐԻԻ, ած., **Աշխարհասփիտ // աշխարհով մէկ տարածված:** Գանատայի Հայ Դատի յանձնախումբի հաւատոյ հանգանակը կը հանդիսանայ՝ պատմական արդարութեան վերահաս-

տատումը, ցեղասպանության պատճառով արմատախիլ դարձած **աշխարհացրի** հայության բեկորներու հայրենադարձութիւնը... (Հորգ., 15 Ապրիլ 2019):

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ, ան., Արտայարաբերութիւններու վերլուծման եղանակ, որ նկատի կ'առնէ երկրի աշխարհագրական դիրքի ազդեցութիւնը քաղաքականութեան վրայ // աշխարհագրական դիրքից բխող և քաղաքական բնույթ ունեցող: Մեր դրժբախտութիւնը եղաւ ա՛յն՝ որ հայ ազգային միութեան մէջ օտարին կողմէ բացուած ճեղքը լայնցաւ ու խորացաւ, **աշխարհաքաղաքական** առումով եւս աղիտալի վերիվայրումներու հետեւանքով (Հայ., 1970, 9-րդ համար, էջ 6):

ԱՇԽԱՐՀՇՄՌՆՈՒՄ, գ., **Աշխարհընկալում // աշխարհընկալում:** Իր կրթական առաքելութեան գիտակից՝ «Ս. Յակոբ» վարժարանը իր **աշխարհըմբռնման** մէջ ներառած է ազգային արժէքներն ու հայեցի ինքնաճանաչումը աշակերտներուն հոգւոյն մէջ քանդակելու ուղեգիծը (Հորգ., 1 Նոյեմբեր 2019):

ԱՉՔԽՓՈՒԿ, գ., **մանկական խաղ՝ աչք կապուկ, պահմտոցի // մանկական խաղ՝ պահմտոցի:** Այս տուն-տուն խաղին, որ կը յիշեցնէր նաեւ չափահաս մանուկներու **աչքխփուկը** - վերջին մասը համանման էր փոքրիկ բախտորոշ խաղին... (Գ. Ք., 2009, էջ 55):

ԱՊԱԿԵԳՈՒՆՏ, գ., (բնաս.), **Ապակիէ պատրաստուած գունդ // ապակյա գունդ:** Չունէի յատկանիշը ձուկերուն, /այլապէս գտած ըլլալով երրորդ վիճակը՝ /ես ալ կը նետուէի **ապակեգունտին** մէջ... (Մ.Պ., 2015/6, էջ 48):

ԱՊԱԿԵԶՈՒԿ, ան., **Անապակի, ապակի չունեցող // անապակի:** Շահնուրի բանաստեղծութեան **ապակեգուրկ** պատուհանը, վերընթաց, որ նոյն ատեն աչքի ձեւ ունի, կը պատկերէ միայն անկէ վար ինկող կայլակ մը արցունք (Գ. Ք., 2009, էջ 162):

ԱՊԱԿԵՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ, գ., (գեղնկ.), **Ապակիի վրայ պատկերելը կամ գունաւոր ապակեկտորներով պատկերում // նկարչության ոճ՝ ապակու վրա կամ գունավոր ապակեբեկորներով պատկերի ստեղծում՝ վիտրաժ:** ...իբ գործերուն մաս կը կազմեն պատի զարդանկարչութիւնը, **ապակենկարչութիւնը** եւ մանաւանդ՝ պատի գորգագործական նկարչութիւնը (Գ. Ք., 2009, էջ 230):

ԱՊԱԿՐՕՆԱԿԱՆ, ան., **Կրօնական բովանդակություններ կամ բնույթ գուրկ // կրոնական նկարագրից գուրկ:** Անտոնեան կը ջանայ «հայկական մարտիրոսագրությունը» գրել, տեսակ մը նոր, **ապա-կրօնական** վկայաբանություն (Մ. Մ., 2016, էջ 23):

ԱՊԱԶԵԻ, ան., (փխբ.), **Ձեռք կերպարանք չունեցող, անձեռ, անկերպարան // տձեռ, անկերպար:** Երկերը կ'ապրին մեզմե առաջ, հիմնովին **ապաձեռ**, անաշխարհ (Գ. Պ. 3, 2008, էջ 13):

ԱՊԱԶԵԻՈՒԹԻՒՆ, գ., Տճեռություն, **ձեռ, կերպարանք չունե-նայր // տձեռություն:** Հասեր, ամփոփուեր է Ահիրամի գերեզմանին, որուն կոպիտ զանգուածը կարծես հազու անջատուած է քարածայ-ռի **ապաձեռություններն** (Գ. Պ. 1, 2012, էջ 200):

ԱՊԱՃԻԼ, բ., (բժշկ.), **Մկաններու կարծրախտ // մկանների կարծրացում, ետաճ:** Հոքին կը տառապէր հազուազգիտ հիւանդություններ (մկաններու **ապաճման** երկրորդական կարծրախտ) ... (Ազ., 15 Մարտի, 2018):

ԱՊԱՄԵԿՈՒՄԱՑՈՒՄ, գ., **Երկիրի մը շրջափակումը դադ-րեցնել, կապեր վերահաստատել աշխարհի հետ // մեկուսացման դադարեցում:** Մինչ այդ, Պէրուրը կրնայ նիւթական յատկացում-ներ ստանալ, Քարթարը **ապամեկուսացման** առումով քայլեր արձա-նագրել... (Ազ., 22 Յունուարի, 2019):

ԱՊԱՅԺՄԷ, ան., (բնստ.), **Ժամանակավրէպ, անքննելի // ժամանակից դուրս, անքննելի:** Անշուշտ գիտեմ որ «մշակուած բանաստեղծի» գաղափարը ընթերցող-չընթերցողներու լայն խաւի մը համար **ապայծմէ** բնույթ ունի (Գ. Պ. 4, 2014, էջ 7):

ԱՊԱՄԵՐՈՒՄ, գ., (քղք.), **Այլասերում, ազգային յատկություն-ներէ օտարացում // այլասերում:** ... Բոլշեւիզմը սփիւտքեան մարզ փոխադրեց մինչեւ 1953 թուականներու իր խաթարիչ բարքերը, **ապասերումի** ու քանդումի բացորոշ իր նպատակներուն հետ հաշտ հանգանակներ (Հայ., 1970, 9-րդ համար, էջ 5):

ԱՊԸՆԿԵՐԱՅԻՆ (asocial), ան., **Հանրային կեանքի մէջ դերակատարություն չունեցող // արտահասարակական:** ... Իբսեն դէպի մեր բեմը կը մաքսանենգէ իր ապաքաղաքական, **ապրնկե-րային** ցեղամշակ գաղափարները (Ազ., 28 դեկտ., 2017):

ԱՊԼԻԿՆԱԼ, բ., (բնաստ.), **Ապուշնալ, անմտանալ, խենթանալ // հիմարանալ**: Յիսուն տարիներէ ի վեր ո՞վ կըսէր, որ պիտ դիմանայինք, ասքան պիտ շատնայինք...ասանկ տուն-տեղ պիտ ըլլայինք, յաղթական, կարծես նոյնիսկ վրիժառու, ասքան, ասքան... ասպուշնայինք **ապիկկնայինք**, շոշոկէինք.: (Գ. Պ. 2, 2012, էջ 317):

ԱՌԱՍՊԵԼԱԶԵՐԾՈՒՄ (demythologization), գ., (բնաստ.), **Բանաստեղծութեան մասին տարածուած հեքիաթային անիրական ու անքննելի պատմութիւններէ ազատում, պսակազերծում // առասպելագրկում, նյութականացում**: Բանաստեղծականի առասպելագրերումի իր պատկերամարտին մէջ Վ. Օշական սկիզբէն կ'որդեգրէ «խօսակցական» արեւմտահայերէն մը... (Վ. Օ., 2017, էջ 445):

ԱՌԱՍԱԽՕՍԵԼ, բ., (բնաստ.), **Շատ՝ առատօրէն խօսիլ // շատախոսել**: ... պիտի տխրի, կրկին պիտի առատախօսէ... (Մ. Պ., 2015/6, էջ 37):

ԱՌԱՔԵԼԱՍԻՊ, ան., **Առաքելանման անձնուրաց // առաքյալի պէս նվիրված և անձնագոհ**: Կը ներկայացնէ **առաքելատիպ** այն դէկավարները, որոնք ... (Սհկ., 1966, թիւ 1, էջ 81):

ԱՌԳՈՐԾԵԼ, բ., **Ձեռնարկուած գործը աւարտին հասցնել // ստանձնել և մինչև վերջ հասցնել գործը**: Բնչն՝ ոչ օրինակ ճկունութիւն մը որեւէ գործ ի կատար չածելու, ճկունութիւն մը երբեք **չառգործելու** (Ս. Ս., 2016, էջ 25):

ԱՌԵԻՏԸԱԿԱՆԱՅՈՒՄ, գ., **Երեւոյթ կամ առարկայ մը առուծախի առարկայ դարձնել // առնտրի առարկա դարձնելը**: Մամուլի, ձայնասփիւռի, հեռատեսիլի ամբողջական օգտագործումը եւ հրատարակչական ու բաշխիչ հաստատութիւններու **առնտրականացումը** մեծ չափով կ'աւելցնեն պսակաւոր վէպերու տպաքանակը (Սհկ., 1966, թիւ 1, էջ 88):

ԱՌԸՆՉԵԼԻ, ան., **Կապակցելի, աղերսուող // կապակցված**: Վերի «ոսկորներ»-էն ետք, ահաւասիկ մեռելը՝ **առընչելի** հօր մահուան (Գ. Պ. 4, 2014, էջ 146):

ԱՌՀԱԻՕՐԵՆ, մկբ., **Նախնիներէն ժառանգած յատկութիւններու համաձայն՝ անոնց նմանութեամբ // նախնիների ժառանգությանը հավատարիմ, այն իր մէջ ամբարած**: Առհաւօրէն խորհող

բանաստեղծին է Մեռած Աստուածներուն նուիրուած, կը պանծայ իր սուգին մտածումը (*Լ. Է., 1919, էջ 16*):

ԱՌՓԱԿՈՒՄ, գ., **Ժամանակաւոր սահմանափակում, // Ժամանակավորապէս սահմանափակումը**: Եւ սակայն ընթերցումը ունի իր սկիզբը եւ աւարտը, իր ժամանակաւոր **առփակումը** ըսենք... (*Գ. Պ. 3, 2008, էջ 12*):

ԱՍՏԵՂԱՏՈՒՆ, գ., **Ընկերութեան երեւելի մարդոց ընտրանի, ընտրեալ անուանիներու կաճառ // անվանի, ականավոր մարդկանց խումբ, բույլ**: Առաջին մեր ծրագիրը, աւա դ, ի ծնանելն չորացաւ: «**Աստեղատունն**» էր: (*Յակ. Ս., 2006, էջ 194*):

ԱՍՏՂԱՅՆԱՆԱԼ (կր.), բ., **Աստղային բնոյթ ձեռք բերել // աստղային դառնալ**: Հեթանոսութիւնը վերածնութեան մէջ կը շարունակուի աւելի բարդ, խորհրդաւոր եւ անիմանալի: Անհատը կը ծառանայ, կ'առիւծանայ, **կ'աստղայնանայ** (*Լ. Է., 1919, էջ 15*):

ԱՍՏՈՒԱԾՍՅՆՈՒԹԻՒՆ (կր.), գ., **Աստուծոյ շնորհքներով օժտուած ըլլալը // աստծո կողմից ստեղծված լինելը**: Գեղեցկութիւնը հոս է, անմահութիւնը հոս է: Մարդու **Աստուածայնութիւնը** հոս է (*Բ. Կ., 1975, էջ 248*):

ԱԻԱՆԴԱՊԱՇՏՕՐԷՆ, մկբ., **Ժառանգած սովորութեան հաւատարիմ // ըստ սովորոյթի, դրան հետևելով**: Թէեւ դեռ **աւանդապաշտօրէն** կառչած է իր ճարտարապետութեան, բայց միշտ նորոգուելու ընդունակ է (*Բ. Կ., 1975, էջ 40*):

ԱՏԱՂՁԱԳՈՐԾԵԼ, բ., **Հիւսնի արհեստով զբաղիլ // ատաղձագործութեամբ զբաղվել**: Եւ անոր վերեւ թոչկոտող հրեշտակներու Հոյրը, Յովսէփը, որ անտարբեր կը շարունակէ **ատաղձագործել** դուրսը (*Բ. Կ., 1975, էջ 231*):

ԱՏԱՄՆԱՇԱՐՈՂ, գ., (բժշկ.), **Ատամնաշարութեան գեղագիտական մասնագիտութեամբ զբաղող // ատամնաբույժ՝ ատամնաշարի նեղ մասնագիտութեամբ**: Ան կանոնաւոր աշխատանք ունի որպէս վարպետ **ատամնաշարող** (*Թ. Թ., 2016, էջ 82*):

ԱՏԱՄՆԱՇԱՐՈՒԹԻՒՆ, գ., (բժշկ.), **Արուեստական ակռաներու պատրաստութեան մասնագիտացում // արհեստական ատամնաշարերի պատրաստում**: Ան հոս պետական դիպլոմ ստա-

նալով՝ վարպետացած է **ատամնաշարութեան** արհեստով (*Թ. Թ., 2016, էջ 92*):

ԱՏԵԼԱԽԱՆՁՈՒԹԻՒՆ, գ., (բնաստ.), **Բուռն ասելութեան լեցուած // բուռն ասելություն:** Իսկ վերջին գրութեամբ կ'ակնարկէր իր համակարգիչի նամակատուփին, որ կը յորդէր իր դէմ եղած տեղատարափ **ատելախանձութեամբ** եւ մահուան սպառնալիքներով (*Գ. Բ., 2009, էջ 88*):

ԱՏԵԼԱՎԱՌՈՒԹԻՒՆ, գ., **Սաստիկ հակակրանքով բորբոքած ըլլալը // թշնամություն հրահրում:** Բազմակարծութիւնը ամլացնելով եւ **ատելավառութիւն** սերմանելով կը ստեղծենք պառակտման եւ անմիաբանութեան այն վիհը... (*Հորգ., 28 Մայիս 2019*):

ԱՐԱԳԱՅՈՒՑԻՉ, գ., **Շարժում կամ գործողութիւն արագացնող սարք // մեքենայի շարժումն արագացնող սարք:** Վարորդը կը դնէ ձեռքը **արագացուցիչին** վրայ, աչքին ծայրէն կը նայի իրեն (*Գ. Պ.1, 2012, էջ 281*):

ԱՐԲՈՒՆՔՈՏՈՂ, ած., **Մեռային հասունութեան վարք ունեցող, հոս՝ (փխբ.) առոյգութիւն // արբունքի հասնող:** Ամավերջի հանդէսին համար յատուկ կը հրաւիրուէր տիկին Ֆիմին քաղաքէն հայկական պար սորվեցնելու... մարզանքի կարճ տարատ հագած, բարակ ու երկար աղջիկներուն եւ **արբունքոտող** տղոց (*Գ. Պ.1, 2012, էջ 184*):

ԱՐԳԵԼԱՓԱԿԵԱԼ, գ., **Կալանատը, բանտարկեալ // Բանտարկյալ:** ...հաղորդագրութեան մը մէջ նշուեցաւ, որ **6 արգելափակեալներ** շաբաթ օր կրցած են փախուստ տալ Ռումիէի բանտէն (*Ազ., 15 Օգոստոս, 2011*):

ԱՐԳՈՍԵԱՆ, ած., (փխբ.), **Աչալուրջ եւ խիստ հսկողութիւն // խիստ հսկողության ներքո:** Կարճատեւ բանտարկութենէ մը յետոյ այլեւս թոյլատրուած էր ինձի շրջագայիլ քաղաքը ... **արգոսեան** հսկողութեան մը տակ (*Լ. Է., 1919, էջ 5*):

ԱՐԴԱՐԱԽՆԴԻՐ, ած., **Անաչառութիւն հայցող ու պահանջող // անաչառ:** Հաճոյքի այս բաժինն է որ կը պակսի եւ իր տեղը կը զիջի **արդարախնդիր** պարտականութեան... (*Սեկ., 1966, թիւ 1, էջ 98*):

ԱՐԴԻԻՆԱԲԵՐՈՒՄ, գ., (փխբ.) **Ստեղծագործություն // արգասավորություն:** Կարելի չէր որ հայ բանաստեղծութեան նման տիտանի մը դարադարձի հանդիսությունները վերջ գտնէին առանց իր ալ գործօն նուիրաբերութեան, նոր **արդիւնաբերումի** (Գ. Ք., 2009, էջ 108):

ԱՐԵՆՈՒՇԱԿԱՆ, ած., **Աղջիկ սկաուտներուն վերաբերող, յատուկ // աղջիկ սկաուտներին հատուկ:** Շաբաթ օրերը, սովորաբար, **արենուշական** կեդրոնաստեղին կը հանդիպիմ (Թ. Տ., 2007, էջ 17):

ԱՐԵԻԵԼԱՊԱՇՏ, ած., **Արեւելքն ու մշակոյթը պաշտող // արևելքը, դրա մշակոյթը պաշտող:** Եղածը պատահական ճամբորդութիւն մըն է եւ չի նմանիր Շատոբրիանի, Ռընանի կամ Եւրոպացի ուրիշ մտաւորական-գրագէտ ճամբորդներու **արեւելապաշտ** քրջապտոյտներուն (Գ. Պ. 4, 4 2014, էջ 56):

ԱՐԺԱՆԱՅՈՒՄ, գ., **Շնորհում, պարգևում, ընծայում // շնորհում:** Եւ դեռ չեմ գիտեր ինչո՞ւ, վերոնշեալ ամբաստանեալներուն ներման **արժանացումը** սուր կերպով վերյիշել տուաւ այդ նախընթացը (Գ. Ք., 2009, էջ 41):

ԱՐԻԻՆԱՍԵԻԱՅՏՈՒՅ (bloody melanoma), գ., (բժշկ.), **Մաշկային քաղցկեղի տեսակ, սեւ մուգ գոյնի արիւնով լեցուած խալ // մուգ կարմիր ուռուցք, այտուց:** Յատկանշական են լեզուի **արիւնասեւայտուցը** եւ լեզուի վատորակ քաղցկեղը (Հայր., 11 Հոկտեմբեր, 2018):

ԱՐԽԻԻԱՅՈՒՄ, գ., **Տեղեկագիրերու, նամականիի (փաստաթուղթերու) հաւաքագրում եւ մշակում // կարևոր փաստերի կանոնավոր մշակում և հավաքագրում:** Գործին մէջ երկու ժամանակ կայ. առաջինը եօթանասունականներու՝ գրութեան **արխիւացումի** ժամանակն է... (Բագ., թիւ 2, 2019, էջ 12):

ԱՐԽՈՆԱԻՈՐԴ, ած., **Արգօ նաւի նաւորդներուն պէս կտրիճ, անվախ // խիզախ, ալիքները ճեղքող նավաստի:** Նաւակի յետնամասը գրեթէ բռնող, ամենակարող, պատրաստ կարծես անհունը գրկելու, տեսակ մը **արխոնաւորդ** հերոս՝ որ կը տնօրինէր իրենց ճակատագրին... (Գ. Պ. 1, 2012, էջ 213):

ԱՐԿԱԾԱՄԱՀ, ած., Արկածի, փորձանքի մը պատճառով մահացած // արկածախնդորեն մահացած: Արկածամահ հայրենակից մը այս ալ... (Գ. Պող., 1974, էջ 74):

ԱՐՀԱԻՐԱԼԻ, ած./մկբ., Սոսկալի, ահարկու, արհաւիրքներով լեցուն // արհաւիրքներով լի: Կծկուած, տառապագին, ու թերեւս դեռ ժպտուն, ռունգերս անջրպետին հօր աղի շունչին՝ որ արհաւրալի բացարձակէ մը կու գար... (Ին., 2014, էջ 69):

ԱՐՀԵՍՏԱՔՈՒՆ (hypnosis). գ., (բժշկ.), Արհեստական քնաբերութիւն // արհեստական ճանապարհով քնաբերություն: Անիկա արհեստականօրէն յառաջ բերուած քնանման դրութիւնն է, գորկարելի է «արհեստաբուն» կոչել, իսկ արհեստաբունի յառաջացման գործընթացը՝ «արհեստական քնաբերութիւն» (Ասպ., 26 Յունուար, 2016):

ԱՐՄԱՏԱԽԼԻԶ, ած. գ., 2. (փոխ.), Բան մը էութենէն, գոյութեան հիմքերէն խլող, հեռացնող // արմատից, արմատներից կտրող: ...գուցէ պարզապէս կը բացայայտէ գիտակցութեան արմատախլիչ ու նորոգիչ բնոյթ իսկ... (Գ. Պ., 2017, էջ 19):

ԱՐՄԱՏԱԽԼՈՒՄ, գ., (փոխ.), Հայրենագրկում. անհատը իր ինքնութենէն պարպելը // արմատներից, հայրենիքից կտրվելը: Այս գրագէտները որոնք ցրուած են աշխարհով մէկ եւ որոնք զանազան հնարքներու կը դիմեն կարենալ վերապրելու համար, արմատախլումը կը փորձարկեն... (Գ. Պ., 2017, էջ 108):

ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏՈՒՅԻ, գ., Ստեղագործող կին // կին արվեստագետ: Անկասկած որ արուեստագիտուհին բնութեան դիմաց կը դիտէ ու կը զգայ իբրեւ նկարիչ... (Բ. Կ., 1975, էջ 294):

ԱՐՏԱԲԵԻԵՌԱՅՈՒՄ, գ., (փխբ.), Սովորականը՝ ընդունուածը յաղթահարելը // կենտրոնացումից, սկեռումից հեռանալ: Սիրելով գիծը եւ անոր արտաբերեալացումները՝ ամբողջովին ազատ կը զգամ այդ գիծերուն ճշգրիտ շրջանակին մէջ (Գ. Բ., 2009, էջ 179):

ԱՐՏԱՀԱՅԵԱՅ, ած., Դէպի արտաքին աշխարհը ուղղուած հայեացք // արտաքին, շրջակա աշխարհին ուղղված հայացք: Առօրեայ բարբառէն որոշ խաւի մը ներկայութիւնը, արձակի նշած շերտս, մանաւանդ «իրական» կոչուած, յղումներով լեցուն աշխար-

հի խիտ ներկայութիւն մը, գրեթէ միշտ **արտահայեաց** խօսք մը, յօրինած են առասպելը «խօսակցական» լեզուի մը (*Վ. Օ., 2017, էջ 446*):

ԱՐՏԱՅԱՅՏԱԶԵԻ, գ., **Դրսետրման եղանակ կերպ // դրսե-վորում**: Բոլոր արտայայտածները կրնան իրենց տեղը գտնել անոր մէջ (*Սհկ., 1966, թիւ 1, էջ 97*):

ԱՐՏԱՅԱՅՏԱՊԱՇՏ (Expressionism), ած., (գեղագ.), **Բանաստեղծական եւ նկարչական արդիական շարժում**, որ գոյը պատ-ճէնելով ներկայացնելու փոխարէն կը պատկերէ անձնական յոյզերու եւ ապրումներու փորձը // անձնական հույզերի և ապրում-ների փոխանցում: Օրագեան տաղանդաւոր արտայայտապաշտ մըն է (*Գ. Ք., 2009, էջ 202*): Շարքին արտայայտապաշտ եղանակն է ասիկա (*Գ. Ք., 2009, էջ 220*):

ԱՐՏԱՅԱՅՏԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ., (գեղգտ.), **Արդիապաշտա-կան շարժում**, որ կը գերադասէ ենթակայական ըմբռնումն ու թերի կը համարէ առարկայական պատկերումը աշխարհի // գեղանկար-չութեան ուղղութիւն: Բարդ և մթին յղացումներ, տարօրինակ էակ-ներ, հզօր արտայայտապաշտութիւն (*Բ. Կ., 1975, էջ 212*):

ԱՐՏԱՅՈՒԶԵԼ, բ., **Յուզում՝ ներքին ապրում յայտնել // հուզ-մունքը արտահայտել, դրսևորել**: ...երբ ճիգ կ'ընէ արտայայտելու, դուրս բերելու, կերպաւորելու ստեղծումին տուեալները (*Գ. Պ.1, 2015, էջ 21*):

ԱՐՏԱԶԱՓՈՒՄ, գ., **Որեւէ գիտական ասպարէզի ընդհանուր ուրուագիծը ընդգծող հետազօտութիւն // գիտահետազօտական աշխատանք**: Անտեղի չէ ըսել նաեւ որ աշխատութիւնը կու գայ այն առաջին արտաչափումներէն որ կատարած էի այդ թուականէն գոնէ տասնամեակ մը առաջ (*Գ. Պ., 2017, էջ 5*):

ԱՐՏԱՏԵՂԱԿԱՆ, ած., **Օտար // ոչ տեղական, օտար**: Այս պատճառաւ, եթէ տեղական եւ արտատեղական կարգ մը ուժեր կը ստանան իրենց արժէքին, երբեմն նոյնիսկ անկէ գերիվեր, գնահա-տանքը... (*Գ. Ք., 2009, էջ 225*):

ԱՐՏԱՔԱՆԴԱԿՈՒՄ, գ., (գեղնկ.), **Քանդակի մը կրկնօրինա-կումը // արվեստի նոր շարժում**, որ միայն արտաքինն էր կարե-

վորում: Տալիտ միջոցի տպաւորութիւնը կը ստեղծէ **արտաքանդակումով** միայն... (Բ. Կ., 1975, էջ 203):

ԱՐՏՕՆԱԹՈՒՂԹ, գ., Պաշտօնական գրութիւն՝ անձի մը այս կամ այն արարքը արտօնելու մասին // անձը վկայող պաշտօնական փաստաթուղթ: Կը շինէին նաեւ զինուորական արտօնաթուղթեր եւ կը տրամադրէին զանազան տողոց ... (Յակ. Ս., 2006, էջ 168):

ԱՐՓԱԼԻ, ած., (բնատ.), **Արեւի լոյսով ողողուած // արևով, արևի լոյսով լեցուն:** Եւ արիւնիս մէջ արշաւէ, նժոյգիդ /Վրայ բոցաթել, ու թող անցքէդ **արփալի,** /Յանուն սերմին աստուածաշիթ, անժպիտ / Խոպանութեանս ամայութիւնը ծաղկի (Գ. Կ., 1977, էջ 10):

ԱՐՓԱԻՏԵՆԼ, բ., **Արեւի ճառագայթներով առատ լուսաւորել // արևի ճառագայթներով պարուրել:** ...ստեղծեց պատմութեան ոսկի շրջան մը, կրօնք մը որ ո՛չ թէ միայն կեանքը կ'արփաւետէ, այլ նաեւ գերեզմանն... (Գ. Պ. 4, 2014, էջ 104):

ԱՐՔԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., Բացարձակ իշխանութիւն // արքայական ընտանիքների միանձնյա, բացարձակ տիրապետություն: Կոյան կը նախատեսէ արքայականութեան անկումը (Բ. Կ., 1975, էջ 79):

ԱԻԱԶԱՃԱՆՃ, գ., **Ճանճի տեսակ, աւազամժողով // ճանճի մի տեսակ:** Ան կը փոխանցուի մարդոց Ֆլեպոթոմըս (Phlebotomus) կոչուած էգ **աւազաճանճի** (sandfly) խայթուածքով (Հայր., 23 Յունուար, 2019):

ԱԻԵԼՈՅԹ, գ., **Բազմազբաղութիւն // բազմազբաղություն:** Հակառակ իր **աւելոյթին** եւ յոգնածութեան, հրատարակչական կայծը չէ՛ր մարած ուրեմն իր ներսիդին (Լ. Շառ., 2016, էջ 52):

ԱԻՇԱԳԵՂԶ, գ., (բժշկ), **Աւիշային հիւթ արտադրող գեղձ // ավշային հյութ արտադրող գեղձ:** ...անոնց գործածութիւնը պարտաւորիչ կը դառնայ հետեւեալ պարագաներուն՝ վերքի երկարատեւ բորբոքում, ...**աւշագեղձերու** յայտնութիւն եւ ծաւալում... (Հայր., 23 Յունուար, 2019):

Բ

ԲԱԶՄԱԲԵԻԵՌ, ան., **Իրարու հաւասարակշռող բազմաթիւ կեդրոններ ունեցող // տարաբնույթ: Կ'ապրինք բազմաբեւեռ եւ բազմակրօն աշխարհի մէջ** (*ՆՄ, 25 Մարտ, 2015*):

ԲԱԶՄԱԶՏԻՉ, գ., (փխբ.) **Երեւոյթներ յստակեցնող, զանոնք ընտրութենէ անցնող // հստակեցնող: Շահնուր նախ կը ներկայանայ որպէս իմացական գրական եւ արուեստի գիտելիքներու բազմազտիչ մը** (*Գ. Բ., 2009, էջ 141*):

ԲԱԶՄԱՀԱՐԻԲ, ան., **Բազմաթիւ, ստուարաթիւ // հազարավոր: Սիմոնեանի բազմահարիւր աշակերտներէն շատեր կը վկայեն, թէ...** (*Լ. Շառ., 2016, էջ 22*):

ԲԱԶՄԱՄԻԼԻԱՐ, ան., **Շատ՝ մեծ թիւով միլիարներէ բաղկացած // մեծ թվով միլիարդներ: Անոնց գլխաւորները կոչուեցան Էմբոն, Արթիւր Անտերսըն, Թայքո՝ բազմամիլիար տոլարի զեղծարարութիւններով** (*Գ. Բ., 2009, էջ 69*):

ԲԱԶՄԱՄԻԼԻՈՆԱՏԷՐ, ան., **Շատ՝ մեծ թիւով միլիոններ ունեցող, հարուստ, դրամատէր // մեծաքանակ միլիոններ ունեցող: ...սփիւռքահայ այդ բազմամիլիոնատէրը, եւ մի քանի բարձրաստիճան եկեղեցականներ** (*Գ. Բ., 2009, էջ 18*):

ԲԱԶՄԱՍԵՌ, ան., **Մէկէ աւելի գրական տեսակներով (ժանրերով) յօրինուած, ստեղծուած // մեկից ավելի ժանրերով ստեղծված: Ինչպէ՞ս բռնել հիմնական յատկանիշները գրականութեան մը, որ լինելութեան մէջ է, եւ որուն գլխաւոր նկարագիրը այլազան ու բազմասեռ ըլլալն է** (*Ահկ., 1966, թիւ 1, էջ 88*):

ԲԱԶՄԱՏԱՍՆԱՄԵԱԿ, գ., **Տասնեակ տարիներ // շատ տասնամյակներ: Այս ձեւով բազմատասնամեակներ ապահովուած կ'ըլլար Էջմիածնայ գահակալին վրայ իրենց որոշ ազդեցութեանց բանեցումը** (*Գ. Բ., 2009, էջ 20*):

ԲԱԶՄԱՏԱՍՆԵԱԿ, ան., **Հարիւրաւոր // բազմաթիւ: Սիհրան Սինասեան անդադրում աշխատող մը ըլլալով՝ եղեռնէն վերապրող բազմատասնեակ հայորդիները խօսիլ տալով նկարահանած է ու պահած** (*Թ. Թ., 2016, էջ 100*):

ԲԱԶՄԱՐՀԵՍՏԵԱՆ, ան., **Մէկէ աւելի արհեստներու տիրապետող վարպետ // մի քանի արհեստների տիրապետող: Մեզի հա-**

րեւան **բազմաբհեստեան** գործաւոր մըն է Տոն Նազար (*Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 48*):

ԲԱԶՄՍՓՈՒԼ, ած., **Բազմաթիւ հանգրուաններէ, փուլերէ կազմուած // բազմաբնույթ**: Իր մահէն երկու-երեք տարի առաջ, Լիբանանը բռնկող պատերազմի օրերուն, Սիմոնեան **բազմափուլ** երկա՛ր գրոյցի մը նստեր էր ֆրանսահայ իր գրչեղբօր՝ արձակագիր Կարօ Փօլատեանի հետ (*Լ. Շառ., 2016, էջ 50*):

ԲԱԺԱԿ, գ., (մարգ), **Մարգական մրցանակ // մարգական գավաթ**: «Լիբանանի պասքեթպոլի տղոց **բաժակի** մրցաշարքի քառորդ աւարտականի ծիրին մէջ... տեղի ունեցաւ Պիպլոս – ՅՄԸՄ մրցումը» (*Ազ., 8 Դեկտեմբեր, 2015*):

ԲԱԺՆԵԳԾՈՒՄԾ, ած., (բնստ.), **Նախասահմանուած վիճակ, բախտ // ճակատագրով նախանշված**: Ինքնամոռաց եւ ինքնասպառ / Ես կը շրջիմ / Ինձ ի վերուստ **բաժնեգծուած** / Անջրպետեան իմ ուղիով... (Երթ, 2006, էջ 87):

ԲԱԽԲԻՄԵԼ, բ., **Շարունակական եւ հաւասար շարժումներով բանի մը մեղմօրէն զարնել // հավասարաչափ հարվածել**: Մեծափոր համպուրկցին՝ իբր բովանդակ եզրակացութիւն՝ գիրուկ ձեռքերը ուռած փորին վրայ **բախբխելով՝** ահա թէ ինչ ըսաւ (*Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 45*):

ԲԱՂԱԴՐԱԳԻՐ, գ., **Բացատրական գրութիւն Գործողութիւն մը կատարելու կամ բան մը պատրաստելու յաջորդական քայլերը նկարագրող // բացատրագիր**: Նկարելու «ձեւեր» գոյութիւն չունին: **Բաղադրագիր** չկայ (*Գ. Բ., 2009, էջ 179*):

ԲԱՂՀԻՒՍԵԼ, բ., (գրկն.), **Միահիւսել // միահյուսել, միաձուլել**: ...ուր սիրտս իր հրայրքը կը **բաղհիւսել**, ուր հնէութեանս լուռ աղաղակը կ'էախառնուի... (*Ին., 2014, էջ 58*):

ԲԱՂԶԱԽՏԱԻՈՐ, ած., **Անյաղթահարելի տեսչանքի գերի // բաղձանքով տարված, լեցուն**: Բնութեան մ'ու աստուածային նկարչի մը **բաղձախտաւոր** յղացմանն ու երազին մէջ ընտանօրէն ու եովին սուզուած էի ես (*Ին.1, 2014, էջ 340*):

ԲԱՄԲԱՍՈՒՆ, ած., **Նենգախօս // չարախոսող**: Այսպէս, **բամբասուն** այս ռճով, ուր իւրայատուկն ու հասարակը կը խառնուին իրարու... (*Գ. Պ.1, 2015, էջ 48*):

ԲԱՆԱԴԱՐՁՈՒՄ, գ., (գրկն.), **Բառիմասունքու շրջումով կազմուող ճարտասանական հնարք // բառիմաստի շրջում, հակադրում:** ...կեանքը մտածելու, ապրելու եւ խօսքին մէջ բերելու համար են յօրինումի այս եղանակները որ կը կոչեն **բանադարձումներ...** (Գ. Պ. 3, 2008, էջ 25):

ԲԱՆԱԿԱՎԱՅՐ, գ., **Սկաուտական ճամբար // սկաուտական ճամբար:** ...գացինք **բանակավայր** (Թ. Տ., 2007, էջ 29):

ԲԱՆԱՎԱՐԱԿԱՆ, ած., **Բանական, բանապաշտական, մըտքով, խելքով հարուստ // մտքով, իմաստով հարուստ:** Դանակի պէս կտրուած **բանավարական** բառեր, բառեր, բառեր... (Լ. Է., 1919, էջ 7):

ԲԱՆԴԱԳՈՒՇԱՆԱՅԻՆ, ած., **Տնորական, պատրանքային, խաբեպատիր // ցնորական, երևակայական:** Եւ ինչ որ կը մնայ **բանդագուշանային** ստուեր մըն է ... (Գ. Պ., 4, 2014, էջ 20):

ԲԱՆՋԱՐԱՃԱՇԱԿՈՒԹԻՒՆ, գ., **Միայն բանջարեղէնով կերակրուիլ, բուսակերութիւն // միայն բանջարեղէնով սնվելը:** ... ինքզինք կը նուիրէ միանձնութեան, լեռնակեցութեան, քաղցի, ծարաւի, **բանջարաճաշակութեան...** (Համ., 2007, էջ 195):

ԲԱՆՏԱՐՁԱԿ, ած., **Յատուկ նպատակով բանտազատ յանցագործ // բանտից բաց թողած:** ...ինչքան առատ Հայերու արիւն հոսեցուցին վայրագ դահիճները, Իթթիհաստի **բանտարձակ** աւազակներէն եւ հասարակ ոճրագործներէն կազմած Նոր Ենիչերիներու - չեթէներուն ձեռքովը... (Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 43):

ԲԱՌԱԿՑՈՒՄ, գ., **Բառակապակցում // բառերի կապացելը:** Կը մտաբերէր նախադասութիւններուն կտրուածքը, շեշտուածքը, **բառակցումը...** (Գ. Պ. 1, 2012, էջ 279):

ԲԱՌԱՄԱՐՏ, գ., **Պարսաւանք, բառակոի // բառակոիվ, վեճ:** Գիտենք նաեւ թէ առաջին շրջանին իր դէմ տեղացող հարուածները չսահմանափակուեցաւ յաճախ պիղծ **բառամարտով** (Գ. Լ., 2009, էջ 146):

ԲԱՌԵՁԸ, գ., **Սահմանում, բանաձեւում // բառային տերմին:** Պատահարը «դիւանագիտական միջադէպ» **բառեզրով** կը բնութագրուի (Ագ., 16 Ապրիլի, 2019):

ԲԱՌՇԷՆ, գ., **Բառախաղ // բառախաղ: Բառշէնը** սուրիահայ Պ. Զանալեքեանի կողմէ պատրաստուած խաղ մըն է... (Յառ., 15. 4. 1988):

ԲԱՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ, գ., **Կնճռոտ՝ խրթին գրութիւն // խրթին, անհասկանալի:** Մանաւանդ այն **բարդագրութիւնէն**, /որ բանաստեղծութիւն կը յորջորջուի (Մ. Պ., էջ 26):

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԱՅԻՆ, ած., (փխբ.), **Բարեկենդանին յատուկ, հոս անհարկի ցուցադրական կերուխում, ուրախութիւն // բարեկենդանին բնորոշ:** Ո՛վ ուզած ու փորձած է վերջին երեսունէ աւելի տարիներու **բարեկենդանային** ցոյցերուն ետեւ հասնիլ... (Հայ. 2, 1969, 5-րդ համար, էջ 3):

ԲԱՐԵՃԱՇԱԿ, ած., **Ազնիւ, մշակուած գեղեցիկի, հաճելիի եւ համի ըմբռնում ունեցող // հաճելի:** Պատրաստուած այս ապուրը **բարեճաշակի** դէմ բացարձակ մեղանչում ըլլալէ աւելին է, շատ աւելին (Գ. Ք., 2009, էջ 46):

ԲԱՐՁՐԱԳՈՒ, ած., **Ուժգին, սուր, խրոխտ ձայնով աղաղակող, արտայայտուող // ուժգին ձայն:** ...ուրացող յուսահատութիւնը **բարձրագոյն** արտայայտող անհատը, ծառայեց աւելի եւս սիրցնելու հայ լեզուն (Գ. Ք., 2009, էջ 153):

ԲԱՐՁՐԱԴԱՍ, ած., **Ընկերութեան աւագ՝ ընտիր դասակարգին պատկանող // բարձրակարգ:** ...պատրաստ է խորապէս յուզուելու նման **բարձրադաս** ընտանի տեսարաններէ,- կենդանիներու հանդէպ գուրգուրանքներէ (Գ. Ք., 2009, էջ 58):

ԲԱՐՅԱԶՐԿԻՉ, ած., **Բարոյականութենէ զրկող, անբարոյ, աննկարագիր դարձնող // անբարո:** Չափազանց գուարձալի էք դուք ու սարսափելիօրէն **բարոյազրկիչ** (Օ. Ու. 1992, էջ 69):

ԲԱՅԱԿ, գ., **Տողերու միջեւ բաց տարածութիւն // տողամիջյան բացատ:** Կուսակցութեան անունը աւելցուած է ձեռագիրով՝ տողամիջեան **բացակին** մէջ (Մփիւռք, 2016, էջ 183):

ԲԱՅԼԱՆՁ, ած., **Բաց կուրծքով // կրծքաբաց:** Արուեստը աստուածային ծիրանի մըն է որով բանաստեղծը կը սքօղէ **բացլանջ** կերտուածքներ (Լ. Է., 1919, էջ 47):

ԲԱՅՄԻՐՏ, ած., **Անկեղծ, մտերմական, հարազատ** // սրտաբաց, հյուրասեր: Կ'այցելեն ու կը վայելեն մօրս բացսիրտ հիւրասիրութիւնը մարդիկ (Երթ, 2006, էջ 75):

ԲԵՄԱԳՐՈՒԹԻՒՆ, գ., (գրկն.), **Շարժանկարի համար գրուած բնագիր** // ստեղծագործության՝ բեմադրելու համար պատրաստված օրինակը: ...կացութիւնը նկատելով նախաճգնաժամային եւ անհրաժեշտ սեպելով ապագայ բեմագրութիւնը սերտելու եւ կանխատեսելու... (Հայր., 2 Յուլիս, 2019):

ԲԵՄԱԴՐԱՎԱՆ, ած., **Երկի մը բեմականացնելու արուեստին վերաբերող, անոր յատուկ** // բեմադրությանը վերաբերող: 1976-ին Յարութիւն Չննոզեան աւարտելով Երեւանի Գեղարուեստա-թատերական ինսթիթիւթի բեմադրական բաժինը, վերադարձաւ իր ծննդավայրը՝ Հալէպ (Կ. Լեփ., Հալէպ, 2010, էջ 16):

ԲԵՄԱԴՐԱՎԱՅՐ, գ., **Հանդիսասրահ, թատերական գործի բեմադրուելիք սրահը** // բեմադրության սրահ: Բեմադրավայր՝ Ազգ. Ներսէսեան Վարժարանի կամ այլ դպրոցի մը սրահը (Գ. Պող., 1974, էջ 101):

ԲԵՄԱՅԱՐԴԱՐՈՒՄ, գ., **Բեմի պատշաճ յարդարում** // բեմի նախապատրաստումը ներկայացման համար: Պիտի ըսէք, որ այս բեմայարդարումը յաճախ կը կրկնեն (Երթ, 2006, էջ 52):

ԲԵՄԱՐՈՒԵՍ, գ., **Թատրոն, թատերական արուեստ** // թատերական արվեստ: ...բեմարուեստը ծառայեցուցին հասնելու համար սովալլուկ որբերու կարիքներուն... (Կ. Լեփ., Հալէպ, 2010, էջ 3):

ԲԵՐԴԱՐԳԵԼՈՒԹԻՒՆ, գ., **Բանտարկութիւն** // **ձերբակալություն:** Գիշերը իրարու ետեւէ ձերբակալուած էին՝ դրկուելու համար Ռաշայա բերդարգելութեան զրկանքները կրելու (Ազ., 20 Նոյեմբեր, 2015):

ԲԻՒՐԱԶՕՐ, ած., **Անհաշուելի զօրութիւններով, կարողութիւններով օժտուած** // **ամենագոր:** Խորխորատներն ու անոնց ձգողութիւնն յղացող բիրադիմի, բիրազօր Բնութեան ուխտաւոր անյազ եւ անխոնջ, պէտք էր որ այն լեռներէն անցնէի (Բն.1, 2014, էջ 379):

ԲԼԸԱՇԱՐ, գ., **Բլուրներու շարք, շրթայ // բլուրների շարք**: Ու հեռուն կ'երկարի կարաւանին պէս ուղտերու / **Բլրաշարը** կողերն ի վար աւագներու... (Երթ, 2006, էջ 43):

ԲԾԱՊԱՇՏ, ան., (գեղանկ.), **Բժապաշտական ոճին հետեւող արուեստագէտ // բժանկարչական ոճով ստեղծագործող**: Ինչպէս որ ալ սակայն բացատրուի, **բժապաշտ** կամ կիտապաշտ արուեստը արդիւնքը կ'ըլլայ, խորքի տեսակէտէն, մեր քաղաքակրթութեան հետ խզումի մը (Գ. Ք., 2009, էջ 223):

ԲՆԱՇՐՁԱԿԱՆ, ան., **Բարեշրջական, բարեշրջական տեսութեան կողմանից // բնական զարգացմանը վերաբերող**: Եւ սակայն, նորը երբեք հինին կրկնութիւնը կամ նմանութիւնը չէ, -ասիկա հակառակ է **բնաշրջական** օրէնքին... (Բ. Կ., 1975, էջ 206):

ԲՆԱՇՐՁՈՒԹԻՒՆ, գ., **Բնական օրէնքներուն համաձայն տեղի ունեցող աստիճանական փոփոխութիւն, զարգացում // աստիճանական փոփոխություն՝ զարգացում**: Երջանիկ միտք, ուր նիւթի ու ձեւի **բնաշրջութիւն**, ուր ներաշխատութիւն ու ժամավաճառութիւն չկար (Բն.1, 2014, էջ 361):

ԲՆԱՏԻՊԱՐ, գ., **Երեւոյթի կամ արարածի նախօրինակը // նախօրինակ**: Նոյն հարազատ **բնաստիպարի** երկու տարբեր արտայայտութիւնները դարձած են Օտեանի եւ Սարուխանի երկուրեակ հերոսները (Գ. Ք., 2009, էջ 137):

ԲՆՈՒԹԱԳԾԵԼ, բ., **Նկարագրել, բնութագրել, ի յայտ բերել // նկարագրել, բնութագրել**: Աւանդական, այսինքն պատմութիւն մը տուող եւ հերոսներ **բնութագծող**, վէպի կողքին յայտնուած է նոր տեսակի վէպ մը... (Սհկ., 1966, թիւ 1, էջ 89):

ԲՆՕՐԻՆԱԿԱՆԱՑՈՒՄ, գ., **Սկզբնական նմոյշին նմանցնելը // նախնական, սկզբնական օրինակի նմանեցում**: Հելլադայի **բնօրինականացում** մըն է ասիկա անկասկած (Գ. Պ.4, 2014, էջ 58):

ԲՈՒՍԱՀՈՒՆՏ, գ., **Բոյսի մը հատիկը, սերմը // սերմ**: Քանի մը **բուսահունտեր** իրար խառնած, ...թիթեղ պնակներու մէջ փուռը նետուած.- ահա պոպոթա կոչուած հացը՝ այդ օրերուն: (Հայ. 1, 9-րդ համար, էջ 38):

ԲՆՆԱԿԱՇԿԱՆԴՈՒՄ, գ., **Անօրինաբար այլոց ազատութիւնը սահմանափակել, բիրտ ուժ կիրառել // բիրտ ուժով ազատության**

սահմանափակումը: Ընդդիմութեան բռնակաշկանդումը՝ քաղաքական առողջ երկխօսութեան կայացման գործընթացը կը խափանէ (Հորգ., 15 Յունիս 2020):

ԲՈՆԱՆՏՈՍ, ան., **Բռնի ոչ կամովին հոսող, ստիպողաբար // ստիպողաբար, բռնի:** Բայց ինչ բռնագրօս եւ բռնահոս հատուած մըն է այս որ այնքան դժբախտ ըրեր է վսեմ քերթուածը (Լ. Է., 1919, էջ 40):

ԲՈՆԱՍՏԻՐՕՐԷՆ, մկբ., **Հարկադրանքով բանի մը տիրանալը // հարկադրաբար:** ...տեսութիւնը բռնաստիքօրէն իշխող եղած է մինչեւ յիսունական թուականները (Գ. Բ., 2009, էջ 291):

ԲՈՆԻՇԽՍՆՈՒԹԻՒՆ, գ., **Ուժով՝ ապօրինութեամբ երկիրի մը տիրող դեկավարութիւն // ապօրինաբար երկրին տիրող իշխանություն:** ...իր ձեռքը ունէր դարաւոր բռնիշխանութեան ահաւոր վարչամեքենան: (Ազ., 3 Ապրիլ 2019):

ԲՐԳԱՁԵԻԵԱԼ, ան., (բնստ), **Բուրգի ձեւ առած՝ բուրգի տպաւորութիւն ձգող // բուրգի ձև ստացած:** Քանի մը կատարներու կոտ միաւորում մը կը թուէր. անորոշապէս բրգաձեւեալ... (Ին.1, 2014, էջ 345):

ԲՐԳԱՆԱԼ, բ., **Բուրգ կազմել, բուրգի պէս բարձրանալ // բուրգի պէս հառնելը:** Արեւը: Հովիտը: Յալիտենական Գետը: Ապրելու սէրը, պոռթկացող կիրքը, յալիտեան ապրելու: **Բրգանալու** երկնքին մէջ, վիթխարի արձաններ եւ սիւներ ժամանակին դիմաց (Բ. Կ., 1975, էջ 259):

Գ

ԳԱՂԱՓԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ, ան., (քղբ.), **Գաղափարական հիմք, քաղաքական դաւանանք ունեցող // որոշակի գաղափարախոսության դավանող:** Բոլոր ոչ նոր-ազատական դիմագիծ ունեցող գաղափարաքաղաքական ուժերը, որոնք կ'ազդուին... (Ազ., 19 Մարտի, 2019):

ԳԱՂԹԱԿԱՅԱՆ, գ., **Գաղթականներու նոր հանգրուան // գաղթականների հանգրվան:** ...որ մսագործի դանակն էր Լիբա-

նանի Մապրա եւ Շաթիլա **գաղթակայաններու** պաղեստինցիներուն սրածումին (*Գ. Ք., 2009, էջ 49*):

ԳԱՂԹԱՇԱՐԺ, գ., **Տարագրութիւն, տեղահանութիւն, բնակավայրի բռնի լքում // տեղահանություն: ...**կը յատկանշուի ոչ միայն անկախութեան վերականգնումով, այլև՝ Յեղասպանութենէն փրկուած եւ **գաղթաշարժի** ենթարկուած հայութեան աշխարհագրական մէկ տարածքի մէջ համախմբումով (*Հորգ., 28 Մայիս, 2019*):

ԳԱՂԹԱՏԻՐՈՒԹԻՒՆ, գ., **Բռնի տիրապետութիւն նուաճուած եւ գաղութացուած երկիրներու // բռնի տիրապետություն: Ալճերիացիներ** հոս եւս կը մղէին իրենց երկրին անկախութեան պայքարը ֆինանսական **գաղթատիրութեան** դէմ (*Գ. Ք., 2009, էջ 11*):

ԳԱՐՇԱԶԳԱԼ, բ., **Նողկանք, պժգանք զգալ, գանիլ // զգվել:** Հոն առանձնութեան մէջ, բանականութիւնը կը դադրի իր իսկ վրայ **գարշազգալէ** զուարճալիքը ընկերական ոսկեգոծմանց (*Ին., 1955, էջ 48*):

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆՕՐԷՆ, մկբ., **Գեղեցիկի գիտութեան՝ փիլիսոփայութեան տեսանկիւնէ // գեղագիտության տեսակետից, առումով: Գեղագիտականօրէն** ամէն բան կատարեալ չէ (*Գ. Ք., 2009, էջ 197*):

ԳԵՂԱՊԱՇՇԱՃ, ած., **Գեղեցիկ, ներդաշնակ ձեւով յօրինած // գեղեցիկ և ներդաշնակ:** Անտարակոյս, առանձինն դիւցազներգութեան կարելորդ մեծ մասը եղած է **գեղապատշաճ**, անձնեայ եւ քաջագանգուր ու հաստաբազուկ Հայկը, որ աստուածներէն սերած է (*Համ., 2007, էջ 190*):

ԳԵՂՕՆԱԶԵԻ, ած., (բնստ.), **Գեղօնի, գովասանական բանաստեղծութեան ձեւ, չափ ունեցող // առասպելային:** «Արեւելեան Բաղանիքի» շքեղ այլ ծանրատաղտուկ ձեւը աւելի լաւ էր որ **գեղօնաձեւ** կատարեր (*Լ. Է., 1919, էջ 54*):

ԳԵՐԱՆԿԱԽ, գ., (գեղանկ.), **Ֆրանսա գործող արուեստի մասնաւոր դահլիճ, ուր կը ցուցադրուէին արդի նկարիչներու ստեղծագործութիւնները // արվեստի մասնավոր դահլիճ:** Առանձինս ներկայացայ, 1930-ին, Անկախներու Սալոնին: Անկէ անցայ **Գերանկախներուն**, ապա՝ աշնանային Սալոնին (*Գ. Ք., 2009, էջ 176*):

ԳԵՐԲՆԱԿ, ան., Մեծաթիւ բնակիչներ ունեցող // բնակիչներով հագեցած: Անոնք արմատախիլ անտառներն են, գերբնակ քաղաքները (Գ. Բ., 2009, էջ 176):

ԳԵՐԴՐԱՄՍՏԻՐԱԿԱՆ (supercapitalism), ան., Դրամատիրութեան նոր, միջազգային տեսակ // հասարակական զարգացման նոր դրամատիրական մակարդակ: Այս անգամ գերդրամատիրական Ամերիկան է որ սկսած էր ինքզինք քանդել (Գ. Բ., 2009, էջ 69):

ԳԵՐԸՄԲՈՆԵԼ, բ., Երեւոյթ մը գերագոյն, կատարեալ կերպով ըմբռնել, ընկալել // կատարելապէս ըմբռնելը: Այսպէս կը գերըմբռնէ հայ քերթողը Մարդը մարդուն մէջ, Մարդը կեանքին հանդէպ (Լ. Է., 1919, էջ 18):

ԳԵՐԻՐԱՊԱՇՏ (surrealist), ան., (գեղանկ.), այդ արուեստի այդ ուղղութեան հետեւող, ներկայացուցիչ // արվեստի այդ ուղղության պատկանող: Անտրէ Պրըթոն 1924-ի գերիրապաշտ մանիֆեստին մէջ կը գրէր... (Բ. Կ., 1975, էջ 296):

ԳԵՐԻՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ (surrealism), գ., (գեղանկ.), 20-րդ դարու արուեստի եւ գրականութեան մէջ սկիզբ առած մշակութային շարժում որ կը շեշտէր «իրականութենէն» անդին գտնուող մարդու էութեան մեկնաբանումը // մշակութային շարժում: Գործին մէջ ներկայ է երագայինը, անձանօթին հետամտումը, կապանքներէ ձերբազատ կողմը, որ գերիրապաշտութենէ կու գայ (Գ. Բ., 2009, էջ 270):

ԳԵՐՃՆՇԻԶ, ան., Չափէ դուրս նեղութիւն պատճառող // չափից շատ նեղություն պատճառող: Ճիշդ կամ սխալ, այդ է գերձնշիչ տպաւորութիւնը (Գ. Բ., 2009, էջ 32):

ԳԵՐՄԱՆԱԳԻՐ, ան., Գերմաներէնով ստեղծագործող // գերմաներէն ստեղծագործող: Տոթէլէն կը խնդրէ ...աւստրիացի գերմանագիր բանաստեղծ Ռընէ Մարիա Ռիլքէի (1875-1926) գործին թարգմանութիւնը (Գ. Բ., 2009, էջ 167):

ԳԵՐՄՐՅԱԿՑԱԿԱՆ, ան., Յոյժ պայքար՝ դիրք նուաճելու համար // անմարդկային պայքար՝ հանուն դիրքի: Ինքնասպասարկութեամբ՝ ոտքի վրայ մատուցուող շտապ սնուցման գերմրցակցական ժամանակներուն, դժուարամարտութիւնը համատարած երեւոյթի վերածուած է (Երթ, 2006, էջ 270):

ԳԻՆԵՐԳԱԿ, գ., **Գինիի զորութիւնն ու ազդեցութիւնը խնկարկող // գինին փառաբանող**: ...մեր գրականութեան պայծառութեան համար՝ սիրերգակ ու **գիներգակ** Ժագ Յակոբեանն էր լաւը (*Ահկ.*, 1966, թիւ 1, էջ 111):

ԳԻՏԱԿԱՆԱՆԱԼ, բ., **Գիտական դառնալ // գիտական դառնալ**: **Գիտականացած** ձեւ մըն է ասիկա, ուր երանգները չեն զատուիր ինչպէս տպաւորապաշտներու մօտ (*Գ. Բ.*, 2009, էջ 300):

ԳԻՏԱՐՈՒԵՍ, գ., **Գիտութեան վրայ յենած // գիտության վրա խարսխված**: Արդի եւ ժամանակակից **գիտարուեստին** համահունչ սպառազինութիւնները լաւագոյն միջոցներն են պաշտպանելու Հայաստանի օդային սահմանները (*Հորգ.*, 21 *Սեպտեմբեր*, 2020):

ԳԼԽԱԳՐՈՒՄ, գ., **Գլխատառերով գրել // մեծատառերով գրելը**: **Գլխագրումը** կը պատկանի հռետորական գրելակերպին (*Գ. Պ.Գ.*, 2014, էջ 168):

ԳԾԱԳԵՏ, ած., (գեղանկ.), **Նկարչութեան մեջ գիծերով ստեղծագործող // նկարչական որոշակի ոճով ստեղծագործող**: Ի՛նչ գրել այս արտասովոր **գծագէտ** արուեստագէտին համար (*Գ. Բ.*, 2009, էջ 287):

ԳԾԱՔԱՇ, գ., (փխբ.), **Գիծեր քաշելու դպրոցական գործիք, հոս՝ հասարակութիւնը յստակօրէն զատորոշող գաղափարներ // զատող գաղափարախոսություն**: Բնակչային մնայուն այս շարժունակութեան առընթեր ներկայ աշխարհակարգը **գծաքաշով** կը սահմանազատէ իսլամն ու քրիստոնէան... (*Ազ.*, 18 *Մարտի* 2019):

ԳՈՅԱԶԱՐԳԱՅՈՒՄ, գ., **Կեցութեան, գոյութեան յառաջադիմութիւն, աճ // կեցության առաջադիմություն**: Հայութեան **գոյազարգացումը** իրականութիւն կը դառնայ ազգահաւաքով ու հայրենադարձութեամբ (*Ազ.*, 3 *Յունիս*, 2019):

ԳՈՅԱԿԵՐՊ, գ., **Գոյատեւելու, ապրելու եղանակ, // կենսաձև**: Սփիւռքի տարածքին, ազգային գաղափարախօսութիւնը հայ անհատի **գոյակերպը** պահպանող ամրապինդ այն համակարգն է, որ ...(*Հորգ.*, 1 *Նոյեմբեր* 2019):

ԳՈՅԱԿԵՅՈՒԹԻՒՆ, գ., **Միաբան եւ համախումբ ապրիլը // համակեցություն**: Խնդիրը անոնց գործնականացումն է ընկերային

համընդհանուր բարօրության, **գոյակեցության** եւ խաղաղության համար (Գ. Բ., 2009, էջ 54):

ԳՈՅԱՌՈՒՄ, գ., **Ծնունդ, ստեղծում, երեւութաստեղծում // ստեղծում:** Հայաստանի Երրորդ Հանրապետության **գոյառումէն** ասոյին, մասնաւորաբար վերջին տասնամեակին, Սփիւռք-Հայաստան կապերու ձայնաշարին մէջ նոր շեշտ մը աւելցաւ (Գ. Բ., 2009, էջ 73):

ԳՈՅԱՏԵԻԵԼԻՈՒԹԻՒՆ, գ., **Գոյատեւելու մշտականութիւն եւ ամբողջութիւն // ապրելու ունակություն:** Նոյնինքն այդ անհանդուրժողութիւնը կրնայ դառնալ մեր **գոյատեւելիութեան** արքիլէսեան խոցելի գարշապարը (Հորգ., 20 Մայիս 2019):

ԳՈՅԵՐԹ, գ., (բնստ.), **Յարատեւութիւն, շարունակականութիւն // գոյատևման ընթացքը:** Պահպաներ են դարէ դար մեր **գոյերթը** նոր ու հին (Երթ, 2006, էջ 38):

ԳՈՅՈՒԹԵՆԱՊԱՇՏԱԿԱՆ, ած., (բնստ.), **Փիլիսոփայական եւ արուեստի այդ ուղղութեան վերաբերող // գոյությանը, գոյին առաջնություն տալը:** Ես, որ եղած եմ բոլոր բնագրաւումներու դէմ, /առանց ստրկամտութեան/ պարզապէս **գոյութենապաշտական** մօտեցումով, /ամչնալով կը մտածեմ/ որ ... (Մ. Պ., , էջ 48):

ԳՈՐԾԱԴԱՇՏ, գ., **Անհատի կամ հաստատութեան գործունէութեան շրջանակը, ազդեցութեան սահմանը // ազդեցության սահմանները:** ՀՕՄ-ի բարեսիրական **գործադաշտը** տարածուեցաւ չորս տարբեր բեւեռներու վրայ (Հորգ., 15 Հոկտեմբեր 2019):

ԳՈՐԾԱՆԱԼԻ, ած., **Գործնական // գործնական, իրական:** Հին մանկութեան գաղափար մը դարձեալ, գոր տղան սակայն կը գետեղէ՝ անմիջապէս **գործանալի** մտապատկերներէն հեռու... (Ին. 1, 2014, էջ 376):

ԳՈՐԾԵԼԱԶԵԻ, գ., **Գործելու եղանակ // վարվելակերպ** ՀՀ դէմ թշնամաբար տրամադրուած պետութիւններու քարոզչական եւ հոգեբանական նախայարձակ գործողութիւններուն հակազդելու եւ հակադարձելու **գործելաձեւերու** համակարգումը անյետաձգելի եւ էական պարտաւորութիւն է այսօր (Հորգ., 5 Յուլիս 2019):

ԳՈՐԾՆԱԿԱՆԱՅՈՒՄ, գ., **Բան մը գործնական, կիրառական դարձնել // իրականացում:** Խնդիրը անոնց **գործնականացումն** է

ընկերային համընդհանուր բարօրութեան, գոյակեցութեան եւ խաղաղութեան համար (Գ. Ք., 2009, էջ 54):

ԳՈՐԾՆԱՊԱՇՏ, գ./ած., Գործնականությունը, արդիւնաւէտ գործելու եղանակը գերադասող անձ // գործնականությունը գերադասող անհատ: Այդ միտքը պիտի արտայայտէ միայն դրամագլուխը, միայն **գործնապաշտը**, արդեօք օտարը ընդհանրապէս (Ազ., 18 Յունուար 2017թ.):

ԳՈՒՐԱՆԱՍՈՒՆ, ան., Գուրանի ուսմունքով դաստիարակուած // Գուրանի ուսմունքի հետևորդ: Ոչ բողոք օգուտ կ'ընէ, ոչ խնդրանք: Թուրքը միշտ նոյն թուրքն է, ըլլայ հին, **գուրանասուն**, թէ նոր, անհաւատ (տեօսմէ) (Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 36):

ԳՏԱՆԻՇ, գ., Որեւէ բան վերստին գտնելու համար օգտագործուած նշաններ // որեւէ բան վերագտնելու համար գործածվող նշաններ: Ան կ'ապրի անջրպետի մը մէջ որ **գտանիշեր** չունի, կ'ապրի «անյիշատակ յիշատակներով» (Գ. Պ., 2017, էջ 122):

ԳՐԱԲԱՆ, գ. (գրկն.), Գրաքննադատ, գրադատ, երկ մը գիտարժեւորող անձ, մասնագէտ // գրաքննադատ: Գրաբանը, ուրեմն, միջնորդ մըն է գրողին եւ ընթերցողին միջեւ... (Յան., 6 Յուլիս 1997):

ԳՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. (գրկն.), Գրաւոր ստեղծագործութեան մեկնաբանություն, վերծանություն, գրական քննադատություն // գրական քննադատություն: Գրաբանությունը օժանդակն է գրականութեան. կը բացատրէ գայն, կը մեկնաբանէ, մատչելի կը դարձնէ ընթերցող հասարակութեան (Յան., 6 Յուլիս 1997):

ԳՐԱԳԱՐ, ան. (գրկն.), Գրելու բուն փափաք, կիրք, մոլուցք, անսանձ մղում ունեցող // գրելու մոլուցք ունեցող, դրանով տառապող: Ատոր գրամով կ'ըսեն, **գրագար**, ջղագարի պէս, ամէն գրող այդպէս կողմ մը կ'ունենայ... կը շինէ խօսքը (Գ Պ 2, 2012, էջ 351):

ԳՐԱՎԵՐԼՈՒԹՅԱՆ, ան. (գրկն.), Գրական երկերու իմաստի, խորքի մեկնաբանում // գրաքննական: Առաւելաբար հակում ցուցաբերած է դէպի **գրավերլուծական** ու գրաքննադատական մարզերը (Լ. Շան., 2016, էջ 66):

Դ

ԴԱՆԿՏՈՒՄ, գ., **Դանակահարում, դանակով այս ու այն կողմէն հարուածել // դանակոտում, ամեն կողմից դանակահարում:** Տուփ մը սիկարէթ ու շիշ մը օդի կը հրամցնէ եւ ատով հոգին ու մարմինը կ'ազատէ **դանկոտումէն** (Գ. Պ. 1, 2012, էջ 271):

ԴԱՇՆԱԹԱԻԱԼ, ած., **Ներդաշնակ, ականջահաճոյ ընթացք // ներդաշնակ:** «Արեւելեան Բաղանիքի» շքեղ այլ ծանրատաղտուկ ձեւը աւելի լաւ էր որ գեղօնաձեւ կատարէր, արդէն կատարած է իր «Կդէոպատրա» **դաշնաթաւալ** տաղիկը (Լ. Է., 1919, էջ 54):

ԴԱՇՆԵՐԳԵԼ, բ., **Ներդաշնակ եւ տրամաբանականօրէն շարադրել գրել // ներդաշնակորեն, հետևողականօրէն շարադրել:** Մեր պապերը հացուջուրով ու մումի մը լոյսին տակ, քարայրներու մէջ պատուած, թշնամիի թուրին ենթակայ **դաշներգեցին** մագաղաթի վրայ մեր ողջ պատմութիւնը (Թ. Թ., 2016, էջ 31):

ԴԱՍԱԿԱՐԳ, գ., (մարգ.), **Մարզիկի պատկանած կարգը անոր մարմինի ծանրութեան, կշիռքի համաձայն // քաշային կարգ:** Հայ մարզիկներէն լաւագոյն արդիւնքը ցուցադրեցին 77 քկ. **դասակարգին** մէջ Անդրանիկ Կարապետեանն ու գերծանր դասակարգին մէջ Գոռ Մինասեանը (Ազ., 26 Հոկտեմբեր, 2018):

ԴԱՐԲՆԱՐԱՆ, գ., **Դարբնոց // դարբնոց:** Անդենականը յետագային պիտի ըլլար **դարբնարան** Դաշնակցականութեան (Գ. Պող., 1974, էջ 109):

ԴԱՐՁՊԱՐ, գ., **Միեւնոյն ու միատեսակ գաղափարներու, միտքերու կրկնութիւն // գաղափարների, համոզմունքների հակադարձը:** Մի քանի տողեր միայն իր մէկ կարելոր աշխատանքի յառաջաբանէն «Անցորդը եւ Իր Ճամբան», «Ու անտանելի նազպարը մտքերու, ձանձրալի, միակերպ **դարձպարը** գաղափարներու» (Համ., 2007, էջ 121):

ԴԱՐՄԱՆԱՄԻՉՈՑ, գ., (բժշկ.), **Հիւանդ մը բժշկելու, առողջացնելու եղանակ, ախտը դարմանելու ձեւ // բուժման, ապաքինման միջոց:** Երրորդ աշխարհի կարգ մը երկիրներու մէջ ժողովրդային դարմանամիջոց մը կը կիրարկուի, որ կը կոչուի ինքնապատուաստում (autoimmunization) (Հայր., 23 Յունուար, 2019):

ԴԵՐԱՍԱՆԱԽՈՒՄԲ, գ., **Դերասաններու խումբ // դերասանակազմ:** ... ուր կը տեսնուին թատրոնի, շարժանկարի եւ արուեստի աշխարհի աստղերէն մէկուն եւ կամ ամբողջ **դերասանախումբի** մը հիանալի գծագրութիւնները (*Գ. Բ., 2009, էջ 120*): 1915-ին, Վարդան Պարիկեան «Արեան Բիծը» թատերախաղին մէջ հանդէս կու գայ Տեսթէի Դուքսի դերով՝ վերոյիշեալ **դերասանախումբին** հետ (*Կ. Լէփ., Հալէպ, 2010, էջ 22*):

ԴԵՐԱՓՈԽՈՒԹԻՒՆ, գ., **Ընկերային կեանքի մէջ ունեցած կշիռի, ազդեցութեան (դերի) շրջում // ընկերական հարաբերություններում ասկա տեղի, կշռի փոփոխություն:** Տէր դառնալու եւ մնալու ողբերգական զաւեշտ մըն է կարծես ընկերային կեանքը, **դերափոխութեան** ցաւոտ կատակերգութիւն մը՝ յեղափոխութիւնը (*Ահկ., 1966, թիւ 1, էջ 84*):

ԴԷԶԴԻԶՈՂ, ած., **Առարկաներ իրարու վրայ կուսակող, բարդող // ցանցերը դեզի նման իրար վրա շարող:** Եղեգներու կամ ժայռերու կողքին՝ ուռկաններ **դեզդիզող** կամ նաւակներ մաքրող քանի մը ձկնորսներ (*Գ. Պ.1, 2012, էջ 260*):

ԴԷՄՅԱՆԴԻՍԱՆԱԿԱՆ, ած., (գեղգտ.), **Առանց կողմնակի միջամտութեան կամ օգնութեան եզրակացութեան մը յանգիլ // հակադարձվածությամբ ճշգրտության հասած:** Գեղագիտութեան մէջ մեծ քայլ մը ըրած պիտի ըլլանք, երբ հասնինք ոչ միայն տրամաբանական հասկացողութեան, այլեւ անմիջական, **դէմյանդիմանական** ստուգութեան թէ արուեստի ամբողջ զարգացումը կապուած է ապողոնեանի եւ դիոնիսեանի երկուութեան (*Գ. Պ. 4, 2014, էջ 47*):

ԴԺՄԱՏՈՅՑ, ած., **Երեւոյթ մը, որուն հասնելու համար կը պահանջուի աշխատանք եւ ուժերու լարում // դժվար հասանելի:** Չի թոյլատրեր «հանիլ» բոլորանուէր, ինչ որ կարելի է լոկ տեսլականէ գուրկ կամ ոչ շատ **դժմատոյց** տեսլական մ'ունեցող մտքերու համար (*Ին. 1, 2014, էջ 363*):

ԴԻՄԱԿԱԻՈՐՈՒՄ, գ., **Մէկու մը երեսին դիմակ դնել, ծպտել // դիմակ դնել:** Կը յիշեմ լեղապատառ փախուստը երեխայի մը, երբ հագուելէ եւ **դիմակաւորումէն** ետք իր ծնողքը զինք տարած էր հայելիի մը առջեւ (*Գ. Բ., 2009, էջ 63*):

ԴԻՄԱՐՉԱՆ, գ., **Անձի դեմքը պատկերող քանդակ // միայն դեմքը պատկերող արձան:** «Բրուտոս»-ը վարպետին հազուադիս **դիմարձաններէն** մին է եւ գլուխ գործոց մը (*Բ. Կ., 1975, էջ 135*):

ԴԻԻԹԱԽԱՂ, գ., **Դիւթելու, հրապուրելու խաղ // առինքնելու, հրապուրելու խաղ:** Ասիկա չի նշանակեր նոյնպէս որ կ'անտեսուին յուզաշխարհ, զգայութիւններու **դիւթախաղ**, խօսքի ճշգրտութիւն, առարկայի հանգամանալից քննութիւն (*Գ. Պ., 2017, էջ 10*):

ԴԻԻԹԱՓՈԽՈՒԻԼ, բ., (բնաս.), **Հրապուրանքի, զմայլանքի ազդեցութեամբ փոխուիլ // կերպարանափոխվել՝ հմայլվածության ազդեցությամբ:** Իր (Դանիել Վարուժանի) բանաստեղծութեան արուեստը **կը դիւթափոխուի**. Գաւառին մէջ ծաղկած երիտասարդ Վիրգիլիոսը իր մշակակականները կու տայ (*Լ. Է., 1919, էջ 70*):

ԴԻԻՐԱՎԱՐԺՈՒԹԻԻՆ, գ., (գեղանկ.), **Սորվելով ձեռք բերուած հմտութիւն, վարժուածութիւն // հմուտ և վարժ լինելը:** **Դիւրավարժութիւնը** եւ նկարելու գիտութիւնը գործին կ'ապահովէին քիչ մը մակերեսային յաջողութիւն, առանց անձիզ աշխատանքի մը (*Գ. Բ., 2009, էջ 233*):

ԴՆԴԵՐՈՒՏ, ած., **Մկանտ, ջղուտ, ջլապինդ // մկանտ:** Հովիւին շիկահողային խանձահար դեմքը մեղմիւ հակած, իր թոյլ ու բաց օձիքն ի վար անսքօղ արեւակեզ լանջքին, իր **դնդերուտ** ազդրերուն, ...իւր գոյութենէն... գոհ էր (*Ին. 1, 2014, էջ 336*):

ԴՊՐՈՑԱԶՈՒԻԿ, ած., **Անուս, դպրոց յաճախելէ զրկուած, դպրոցի կարօտ // բնակավայրում դպրոց չունեցող:** Երեւանէն կէս ժամ հեռու գիւղի մը մէջ կան չգրանցուած հինգ հայ մանուկներ, **դպրոցագուրկ** եւ սոված (*Հայր., 30 Յունիս, 2019*):

ԴՊՐՈՑԱՇԻՆՈՒԹԻԻՆ, գ., **Դպրոցներ, կրթարաններ կառուցել, հիմնել // դպրոցներ, կրթօջախներ հիմնելը:** Դպրոցաշինութիւնը ու եկեղեցաշինութիւնը Հայոց համար առաջին գործն էր՝ ազգը հայ պահելու համար (*Թ. Թ., 2016, էջ 7*):

ԴՊՐՈՑՈՒՆԱԿ, ած., **Դաստիարակչական շեշտ ունեցող, րնդունուած օրինակի մը հետեւող // դպրոցին հատուկ:** Այդ շըրջանին իր գործերը նախ կը ստանան քիչ մը **դպրոցունակ**, ակադեմական կադապար (*Գ. Բ., 2009, էջ 219*):

ԴԲԱԿԱՆԱՅՈՒՄ, գ., Իրական, ստոյգ ըլլալ, նիւթականին ու շօշափելիի շրջարկին մէջ գտնուիլ // լավատեսություն: Դասականութիւն ու հեթանոսութիւն տեղ մը կը միանան իրարու եւ այդ միացման կէտը կը թուի ըլլալ կեանքի «լաւատեսութիւն»-ը, որ այս շրջարկին մէջ, համարժէք է կեանքի **դրականացումին** (Գ. Պ. 4, 2014, էջ 56):

ԴԲՍՈՒԹԻՒՆ, գ., Անծանօթ՝ անհարազատ վայրի կամ շրջանակի մը մէջ ըլլալը, օտարութիւնը // դրսում լինելը: Դրսութիւնը կը սրէ անհատականութիւնները երբ զանոնք կը գրկէ համայնութենէ (Գ. Պ., 2017, էջ 31):

ԴԲՕՇԱՀԱՄԲՈՅՐ, գ., Հայրենասիրական, հայրենիքի նուիրուած (դրօշը իբրեւ խորհրդանիշ հայրենիքի) // հայրենասիրական: Բանաստեղծին վերջին խօսքը իր վսեմ նահատակութեան հետ նոյնացաւ: **Դրօշահամբը** յի իր վկայարանին (Լ. Է., 1919, էջ 5):

ԴԲՕՇՈՒՄ, գ., Որեւէ կարծր նիւթ յղկելով՝ նորի քանդակումը // քանդակում: Սակայն աստուածներու այս քանդակումը կը կազմէ անոնց հիմնումը, յար եւ նման կոփումին, կոանումին, **դրօշումին** որով պապերը, աստուածներուն մէջ՝ պապեր կը դրոշեն (Գ. Պ. 4, 2014, էջ 193):

Ե

ԵԶԱԿԱՆՕՐԷՆ, մբ., Եզականապէս, աննման, անհամեմատելիօրէն, անբաղդատելիօրէն // եզակի, միակ: Սեպածեւ երկնաբերձ կատարներու իր լուսապրակ խուրձով, որ զանգուածին սասանմանց ու բորբոքումներուն յիշատակներով... կարծես **եզականօրէն** պատշաճ վայր մը նկատուէր (Ին. 1, 2014, էջ 349):

ԵԶԵՐԱԳԱՅՈՒՄ, գ., Եզերքին հասնիլը // սահմանին, եզերքին հասնելը: Կոհակին **եզերագայումը** Ծովուն անբաւութեան վեհաշուք ու խոովիչ հպանցքն է միայն մարդկային... Ին., 2014, էջ 61):

ԵԹԵՐԱԳԵՂ, ած., (բնստ.), Երկնային գեղեցկութեամբ օժտուած // ամպերի պէս գեղեցիկ: Եւ լեռներուն կը նայէի, կոհակաձեւ **եթերագեղ** լեռներուն, որոնց ցամաքին ծովակերպ ամբարձումն էին անեզրութեան մէջ (Ին. 1, 2014, էջ 336):

ԵԼԵԿՏՐԱՀՄԿԻՉ, գ., Ելետրականութեան բաշխումը եւ աշխատանքը հսկող պաշտօնեայ // հոսանքը չափող և բաշխող պաշտոնյա: ...n^ր նամակաբաշխը կամ էլեկտրահսկիչը կը բարձրանայ մինչեւ հոս շարք օրով (Գ. Պ. 1, 2012, էջ 185):

ԵԼԵՔՏՐԱԳՈՐԾ, գ., Ելեկտրական հոսանքի ու անոր խնդիրներով զբաղող մասնագետ // էլեկտրականության մասնագետ: Տան խողովակները նորոգող կապարագործէն կամ էլեքտրագործէն, օրինակ, կ'ակնկալուի իր աշխատանքին առընթեր քննարկող հայեացք մը նետել նաեւ տան մեջ գտնուող իրերուն (Գ. Ք., 2009, էջ 68):

ԵՂԵՌՆԱԿՈԾ, ան., Ցեղասպանութիւնը, եղեռնը սզացող, ողբացող // եղեռնը սզացող: Եղեռակոծ կոչնական, յաւերժօրէն գինով եմ (Գ. Կ., 1977, էջ 15):

ԵՂԿԱԾՈՒՓ, ան., Հեղզութեան, թուլութեան ու ծուլութեան մեջ տարուբերուող // տհաճ, անտուր: ...մենաւոր ու անշարժ կ'երագեմ իր բոցին յառած, ծխախոտի եղկածուփ շղարշներուն մեջէն որ գայն կը պարուրեն... (Ին. 1, 2014, էջ 49):

ԵՆԹԱԲՆԱԲԱՆ, գ., (բնատ.), Երկի գլխաւոր բնաբանին յաջորդող եւս բնաբան, գլխաւորի միտքը լրացնող // բնաբանին հաջորդող ևս մի բնաբան: Վարուժանի Հեթանոս երգերը ունի կրկնակ ենթաբնաբան մը (Գ. Պ. 4, 2014, էջ 122):

ԵՆԹԱԸՄԲԱՆ (hypopharynx), գ., (բժշկ.), Բերանի խոռոչը կերակրափողին միացնող մկանին (կոկորդին) խորքը, տակը գտնուող 12.5 սանթիմէթր երկարութեամբ խողովակ // կոկորդի տակ գտնվող խողովակ, ըմպան: Շրթունքի, ներբերանային խոռոչի լորձնաթաղանթի (mucous membrane), լեզուի, նշիկներու (tonsils), լինտերու, ըմբանի եւ ենթաըմբանի քթաըմբանի (nasopharynx) եւ քիթի բորբոքումներ, վերքեր, լաւորակ եւ վատորակ ուռեր (Հայր., 11 Հոկտեմբեր, 2018):

ԵՆԹԱԽՈՐՔ, գ., (գեղանկ.), Խորապատկեր, խորանկար // խորանկար: ...պատուհանները միշտ ունեցած են տեսարան մը որպէս ենթախորք (Գ. Ք., 2009, էջ 162):

ԵՆԹԱՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ, գ., Կեդրոնական, գլխաւոր յանձնախումբին ենթակայ եւ անոր այս կամ այն ասպարեզի որոշումները

իրականացնող կազմ, ենթայանձնաժողով // ենթահանձնաժողով: Բանաձեւին մէջ յղում կատարուած է Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգիլելու եւ պատժելու մասին յօդուածին, ՄԱԿ-ի Մարդու իրաւունքներու հարցերով **ենթայանձնախումբի** որոշման... (Ազ., 12 Ապրիլի 2019):

ԵՆԹԱՄԱՐԴ, գ., Երկրորդ կարգի պատկանող մարդ, ստորակարգ եւ անարժան անհատ // ստորակարգ, անարժան: Այն ստեն ի՞նչ էինք որ... անապատի փոշի: Անկէ մարմին առեր, յառներ էր: Բայց իբրեւ ի՞նչ... իբրեւ ո՞չ որ: Անասուն: Գազան: **Ենթամարդ:** Կամ մարդու ձախողած փորձ: Մէկը: Շունչ մը: (Բազ., թիւ 2, 2019, էջ 14):

ԵՆԹԱՇԱՂԱԽ, գ., (փխբ.), Բանի մը հիմքը, էութիւնը կազմող զանազան նիւթերու ներդաշնակ խառնուրդ // էություն: Անոր կը պակսի Շահնուր մարդուն առանցքային գիծը, բազմերես կառոյցը, անոր **ենթաշաղախը** (Գ. Բ., 2009, էջ 144):

ԵՆԹԱՓԷՇ, գ., Կարգ մը հագուստներու, եւ մանաւանդ սօնական հագուստներու ներշերտ փէշ՝ հագուստը աւելի վայելուչ դարձնելու համար // հագուստի, փէշի տակից հագնվող փէշ: Վերնազգեստին տակէն, մինչեւ կրունկին վերեւ կ'իջնէ նոյն կտաւէ պատրաստուած բարակ, մթնցած **ենթափէշը...** (Գ. Պ. 1, 2015, էջ 28):

ԵՌԱՏՕՆ, ած., Նշանակալից երեք տօներու համատեղ նշումը // միաժամանակ նշվող երեք հանդիսություններ: 18 Դեկտ. 2012-ին Աւետիք Իսահակեանին նուիրուած **եռատօն՝** անոր ծննդեան 140-ամեակին, ներկայիս անոր անունը կրող գրադարանի հիմնադրման 80-ամեակին, եւ գրադարանը Աւետիք Իսահակեանի անունով կոչելու 60-ամեակի առիթով (Թ. Թ., 2016, էջ 43):

ԵՏԴԻՄՈՒԹԻԻՆ (regression), գ., Վերադարձ նուազ զարգացած նախնական վիճակի մը // ետդարձ նախնական անզարգացած վիճակի: Ով որ ստանտարտ, ըսել կ'ուզեմ հաստատուած, կանոնաւորուած լեզու «ունի» չի վերադառնար բարբառին, այլապէս քան ախտաբանական **ետդիմութեամբ** (Գ. Պ., 2017, էջ 25):

ԵՐԱԶԱԾՈՒՓ, ած., (բնատ.), Օփացող երազներու պէս // ծփացող երազների նման: Գոց պատուհաններուդ ետին հիմա կը

քնանաս կոր դուն, **երազածուփ**, նոճիններուն խաւարակոճ երաժըշտութեան մէջ (*Ին. 1, 2014, էջ 116*):

ԵՐԱԶԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Երազական, ցնորական ըլլալ // երազային, երևակայական լինելը**: Այլապէս անկարելի պիտի ըլլար ըմբոնել իր ծաղիկներուն զգայութիւնը, իր կիներուն **երազականութիւնը** եւ իր ամբողջ ճիգը իրականութենէն խուսափելու ու նետուելու դէպի խորհրդանշաններու աշխարհը (*Բ. Կ., 1975, էջ 283*):

ԵՐԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ, գ., (բնստ.), **Երազային, անիրական նկարագիր ունենալ // անիրական**: Աչքերը նուազած **երազայնութիւն** մը ունին եւ յունական իտէլ գիծերու ազնուականացած մտայնեցում մը (*Բ. Կ., 1975, էջ 127*): Հարուստ երևակայութիւն ու խառնուածք, եւ արեւելեան հզոր գոյներ, որոնք երբեմն կը հալին զգայուն եւ թափանցիկ կնոջականութեան մը բանաստեղծական **երազայնութեան** մէջ (*Բ. Կ., 1975, էջ 294*):

ԵՐԱԶՄԱՅԼ, ած., (բնստ.), **Երազի պէս հմայիչ // երազի պէս դյութող**: ...սարսռալի մարդկայնութեամբ մը ուրուային, Լամբարիս հանդարտ, **երազմայլ** բոցին կը նայիմ, գորովագին վայելքով. (*Ին. 1, 2014, էջ 52*):

ԵՐԱԺՇՏԱԳՐՈՒԹԻՒՆ, գ., **Բանաստեղծութեան մը համար երաժշտութիւն յօրինել // բանաստեղծության խոսքերով երաժշտություն գրելը**: Յեղին Սիրտը թէ Հեթանոս երգեր փառերգող բանաստեղծին «Վարուժնակիս» քերթուածին **երաժշտագրութիւնը**, ինքնուրոյն գրաչութեամբ մեղեդի մը, տասնամեակներէ ի վեր իր մնայուն տեղը գրաւած էր մենահամերգներու յայտագիրներուն մէջ (*Գ. Ք., 2009, էջ 108*):

ԵՐԱԺՇՏԱԽԱՌՆ, ած., **Երաժշտական բաժին, մաս ունեցող // երաժշտությունը, օպերան**: Իսկ Բարեկամացը 1945-ին բեմադրեր էր Յ. Թումանեանի Ա. Տիգրանեանի **երաժշտախառն** «Անուշ»-ը, աննախընթաց յաջողութեամբ (Նորայր Չիլինկիրեան, Ա. Պուտագեան, Արշալիր Պերպերեան) (*Թ. Տ., 2007, էջ 101*):

ԵՐԱԽՏԱՐԺԱՆ, ած., **Երախտիքի արժանի // երախտագիտության արժանի**: Դարձաւ այս մարզին ամենէն հեղինակաւոր ու **երախտարժան** մասնագէտը (*Լ. Շառ., 2016, էջ 32*):

ԵՐԱԿԱՌՈՐԲ (thrombophlebitis), գ., **Երակի պատի բորբոքում, որ պատճառ կ'ըլլայ երակի մեջ արիւնի թանձրացումին եւ երակախցանման // երակի պատի բորբոքում:** Մակայն այս նոր դեղերը կրնան յառաջացնել լուրջ բարդութիւններ, օրինակ՝ շարոյրի եւ լեարդի բորբոքում, արիւնակուտային **երակաբորբ...** (*Հայր., 23 Յունուար, 2019*):

ԵՐԱՆԳԱԽՄՈՐ, գ., **Խմորանման գունաւոր նիւթ, որուն հետ պզտիկները կը խաղան // գունավոր խմորանման նյութ:** ...որ է բանաստեղծականութիւնը, եթէ նոյնիսկ պատկերուած իրը շրջագրծուած ըլլայ, կամ օղակուած՝ **երանգախմորի** հաստ գիծերով... (*Գ. Ք., 2009, էջ 205*):

ԵՐԱՆԳԱՆՕԹ, գ., **Քոյն պարունակող պզտիկ տուփ, անօթ // ներկատուփ:** Մասները կը թափառէին թիթեղէ երանգանօթներու եւ չորացած վրձիներու խառնակոյտի մը մէջ բան մը փնտռելու ձեռով (*Օ. Ու., 1992, էջ 46*):

ԵՐԳԻԾԱՂԻՄԱՆԿԱՐ, գ., **Ծաղրական՝ հեզնական դիմապատկեր // ծաղրանկար:** Երկրորդը՝ ընտրովի հաւաքածոյ մը այն բոլոր դիմանկարներէն կամ **երգիծադիմանկարներէն**, ուր Սարուխանի տաղանդը բանեցուցած է իր սրամտութիւնը (*Գ. Ք., 2009, էջ 119*):

ԵՐԵՒԱԿԱՅԱԾԻՆ, ած., **Անիրական, մտացածին, ցնորական // մտացածին:** ...կը մնայ անկեղծ իր խառնուածքին եւ մտերիմ իր ապրումներուն հետ, առանց արուեստական կամ գոտ երեւակայածին յօրինումներու մէջ մխրճուելու (*Գ. Ք., 2009, էջ 218*):

ԵՐԵՒԱԿԱՅԻՆ (social imaginary), ած., (ընկ.), **Գերիրական, երեւութական հանրութիւն // անիրական՝ թվացյալ հանրություն:** Ինչ որ կոչած եմ «օղակ», ունի «երեւակային» կամ «պատկերառման» (imaginaire) բնոյթ... (*Գ. Պ., 2017, էջ 38*):

ԵՐԿԼԵԶՈՒԱԻՈՐ, ած., **Մանկութենէն երկու լեզու կրող // երկլեզվակիր:** Պատուածքները, բեկումները, հերձերը (կամ խոցերը) թերեւս աւելի յաճախադէպ են **երկլեզուաւորին** համար... (*Գ. Պ., 2017, էջ 21*):

ԵՐԿԻՕՍՄԱԿԱՆ, ած., **Երկխօսութեան վերաբերող, յատկութիւնները ունեցող // բանավիճող, երկխոսող:** ...ունին մասնայա-

տուկ ու հասարակաց եզր մը. **երկխօսական** գրութիւններ են (Գ. Պ. 4, 2014, էջ 87):

ԵՐԿԾՄԱԻԱԼ, ած., **Երկու չափումի մէջ գտնուող, երկատարած (լայնութիւն եւ երկայնութիւն) // երկու չափում՝ լայնություն և երկարություն ունեցող:** Մակերեսային, երկծաւալ նկարչութիւն է (Բ. Կ., 1975, էջ 286):

ԵՐԿՅՅՂՈՒՄ, գ., **Նոյն պահուն երկու տարբեր աղբիւրներէ ներշնչուիլը // միաժամանակ երկու աղբիւրներից ներշնչվելը:** Ֆրանսահայ գրականութիւնը կ'աճի, կը զարգանայ տեւական երկյուղումով, որ երկերը կ'առնչէ մէկէ աւելի լեզուներու կամ «մշակութային» ոլորտներու (Գ. Պ., 2017, էջ 38):

ԵՐԿ-ՏԱՐԱԾՄԱԿԱՆ, ած., **Երկու չափումի մէջ գտնուող, երկծաւալ (լայնութիւն եւ երկայնութիւն) // երկծավալ՝ լայնություն և երկարություն ունեցող:** Նկարչական մակարդակը, պաստառի երկտարածական միջոցը, բացատրութիւններ են, որոնց շուրջ վէճեր, տեսութիւններ եւ մեծ շարժումներ տեղի պիտի ունենային (Բ. Կ., 1975, էջ 203):

ԵՐԿՏԱՐԱԾՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Տեսողական երկու չափում՝ սահման // երկծավալականություն:** Առաջինէն փոխ պիտի առնէ արտայայտաձեւը կտրատուած երեսակներու, գիծերու ծրագրայնութեան (շէմաթիզմ) եւ երկտարածականութեան (Գ. Բ., 2009, էջ 294):

ԵՐԿՏԱՐԱԾԵԱՆ, ած., **Տարածական երկու չափ ունեցող (լայնութիւն եւ երկայնութիւն) // երկծավալ՝ լայնություն և երկարություն ունեցող:** Կ'արժէ յիշել նկարը, ուր Յակոբն ու հրեշտակը կը կռուին («Քարոզէն վերջի տեսիլը»), կարծես ճափոնական յղացում մըն է, **երկտարածեան**, ճերմակներ եւ կապոյտներ (Բ. Կ., 1975, էջ 216):

ԵՐԿՐԱԾՆՈՒԹԻՒՆ, գ., **Որեւէ երկրի (հայրենիքի) մէջ ծնած՝ բնիկ լինելը // բնիկ, տեղացի լինելը:** Հողի, արիւնի, զանգուածեղ միատարր ինքնութեան ջատագով գաղափարախօսութիւնները, որոնք քաղաքական կարգախօսի կը վերածեն բնիկն ու **երկրածնութիւնը**, պիտի միայն հերքեն հնարաւորութիւնը ... (Գ. Պ., 2017, էջ 20):

ԵՐԿՐԱՇԱՐԺԱՅԻՆ, ած., **Երկրաշարժներու առնչուող, անոնց վերաբերող // երկրաշարժին հատուկ:** Իւրայատուկ երկրաշարժային աւերի զոհ այդ լեզուն կը կարօտի նոյնքան հոգածու վերականգնման աշխատանքի (Գ. Ք., 2009, էջ 29):

ԵՐՓՆԱԺԽՈՐ, ած., (բնստ.), **Չայներու եւ ճիչերու աններդաշնակ բազմազանութիւն // բազմաձայն:** Ու թաղն ամբողջ երփնաժխոր կը նմանի / Բաբելոնի մ'երկարաձիգ ուր կը պարեն, / Կը հեկեկան ու կը վիճին ահեղօրէն (Գ. Կ., 1977, էջ 76):

ԵՐՓՆԱՄՈՒԼ, ած., **Գոյնի, երանգի մոլութիւն // գույնի, երանգի մոլուցք:** Իրերն իւրախառնելով վերարտադրելու կենսալի բաղձանքը միայն պիտի ունենար. երփնամոլ ձեւասէր արուեստի միտքը պիտի ըլլար (Ին. 1, 2014, էջ 368):

ԵՐՓՆԵՐԱՆԳՈՒԹԻՒՆ (enluminure), գ., **Գոյնզոյն՝ պէսպէս // գույնզգույնությունը:** Արուեստ մը, որ կատարելութեան բարձրացուցած էր մանաւանդ երփնեքանգութիւնը (enluminure) (Գ. Ք., 2009, էջ 233):

Չ

ՉԱՆԳՈՒԱԾՍՅՆԱՅՆԵԼ, բ., **Չանգուածային դարձնել // զանգվածային դարձնել:** Անպայման պէտք է զանգուածայնացնել «Ազդակ»-ի Էփը¹ (Ազ., 18 Դեկտեմբեր 2018, էջ 3):

ՉԱՐԴԱՆԿԱՐՉԱԿԱՆ, ած., **Նկարներով զարդարելու արուեստ // նկարներով զարդարելուն վերաբերող:** Ժամանակաւորապէս կը հրահրէր զիս զարդանկարչական գործի մը (Ս. Ս., 2001, էջ 35):

ՉԱՐԴԱՐԱՒՈՐՈՒՄ, գ., **Որեւէ առարկայ զարդել, ձեւաւորել // ձեւավորում:** Չարդարաւորումը կառուցողական դեր մը չունի, այլ մակերեսը կը ծածկէ միայն (Բ. Կ., 1975, էջ 105):

ՉԲՕՍԱՇՐՁԻԿՈՒԹԻՒՆ, գ., **Օտար երկիրներ զբօսաշրջագայող անձի վերաբերող // օտար երկրներ այցելելուն վերաբերող:** Մեր զբօսաշրջիկութեան թերթիկներուն մէջ կ'ըսենք թէ տարուան գրեթէ բոլոր օրերը արեւ ու պայծառ օդ ունինք, եւ շատ ալ սխալ չէ (Թ. Տ., 2007, էջ 21):

¹ Էփը՝ «Ազդակ»-ի Էփիլքէյշըն (application)՝ կիրառական ծրագիր:

ԶԳԱԼԱԿԵՐՊ, գ., Զգալու, երեւոյթները ընկալելու, զանոնք ըմբռնելու եղանակ, կերպ // ընկալելու, զգալու եղանակը, տեսակը: Անոնցմով հեղինակը կու տայ սփիւռքահայ զանգուածներու իւրա-յատուկ **զգալակերպն** ու ամպրումները... (*Մեկ., 1966, թիւ 1, էջ 112*):

ԶԳԱՅԱՐԱՆԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ (sensualism), գ., Աշխարհընկալումն ու ճանաչողութիւնը հիմնուած գլխաւորապէս զգայարանքներու վրայ // միայն զգայարաններով աշխարհաընկալում: Վարուժան հեռու է հեթանոսական հաճոյքներով, զգայարանական վայելքներով արբենալէ եւ չի քարոզեր տեսակ մը **զգայարանապաշտութիւն** (*Գ. Պ. 4, 2014, էջ 125*):

ԶԵՂՈՅԹ, գ., Առատ, ազատ, անկաշկանդ գեղում, զգացմունք // առատ, անկաշկանդ զգացմունք: ...երբեմն իր վայրենագեղ տաղերուն մէջ Հիւկօի խիտ գեղեցկութիւնը, յորդահոս **գեղոյթը** կը թաւալի բայց միշտ հայկական (*Լ. Է., 1919, էջ 34*):

ԶԻԿԶԱԿՈՒՈՂ, անծ., Օտուումուռ, անհաւասար, մանուածատ եղող // վերուվարվող: Դիտեր էր փողոցի պարապէն անդին տարածուող մինչեւ հորիզոն **զիկզակուող** տանիքներու, հարթ, բեկ, ուղղահայեաց կառոյցներու մոխրագոյն ու գորշ անդասանը (*Գ. Պ. 1, 2012, էջ 266*):

ԶԻՆԱԿԱՌԵԼ, բ., (փխբ.), Պայքարի ոգի տալ, պայքարի մղել // ներշնչել, խանդավառել: «Վարդանանք» պատմավէպը, զոր մեծ պատերազմի ընթացքին հայ բանակայիւնները կը **զինավառէր** հայրենասիրութեամբ (*Թ. Թ., 2016, էջ 72*):

ԶՈՎԱՐԶԱԿ, անծ., (բնստ.), Հովասուն, օղասուն // հով, հաճելի: Բաւական բարձրացած էինք արդէն, եւ լայն, **զովարձակ** տեսարանը մեր դիմացը կը սփռուէր (*Ին. 1, 2014, էջ 360*):

ԶՈՒԱՐՃԱԲԵՐ, անծ., Խնդաբեր, շէնութիւն, ուրախութիւն, ցնծութիւն բերող, տուող // Ուրախություն, խինդ բերող, հարուցող: ...վարպետօրէն գծեց անոնց կեանքէն ինչ-ինչ յուզից կամ զուրճաբեր դրուագներ (*Լ. Շառ., 2016, էջ 14*):

ԶՍՊՈՒԹԻՒՆ, գ., Զսպուած, չափաւոր ըլլալ // չափավոր լինելը: Իսկ երբ պատահէր որ այս կամ այն առիթով իր մասին ակնարկութիւններ ընէր, այդ կ'ըլլար **զսպութեամբ** մը (*Գ. Լ., 2009, էջ 149*):

Է

ԷԱՆԻԻԹ, գ., **Գոյութեան մը ներքին բնոյթը, իսկութիւն կազմող հիմնական գլխաւոր տարրը // ներքին իսկությունը կազմող տարր:** «Սասունցի Դաւիթ»-ով ի՛նչ նոր **Էանիւթ**, տարր կամ մշակման երանգ կ'աւելնայ ստեղծագործական իր վաստակին վրայ (*Հայ.1, 1970, 9-րդ համար, էջ 27*):

ԷՈՒԹԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ., (փիլ.) **Երեւոյթի մը ներքին բնոյթի, բովանդակութեան մասին գիտութիւն // ներքին բովանդակության, իմաստի մասին գիտություն:** Ազգային գաղափարախօսութեան **Էութաբանութիւնը** իր մէջ կը պարփակէ ազգի գոյապահպանման ու զարգացման, ...բաղադրիչները (*Հորգ., 20 Մեպտեմբեր 2018*):

ԷԶԱՆԻ, ան., **Էջ ունեցող, էջեր // էջերով:** Պետք է կարդալ հեղինակին 14 **էջանի** «Յառաջաբանը» (*Լ. Շառ., 2016, էջ 12*):

Ը

ԸՂԶԱՆԿԱՐՈՒՈՂ, ան., (բնաս.), **Բաղձանքով, մաղթանքով կարուած, անոնցմէ բաղկացած // ցանկությամբ, մաղթանքով կարված:** Անզգալաբար ետ դարձող ու վերսկսող քարոզը որքան յատակերպումն էր իր անկախացմամբ մարդանալուն՝ նոյնքան պատրուակ մ'էր իր խեղճ գոյութենէն լուսածնող **ըղձանկարուող** տեսիլներու (*Ին.1, 2014, էջ 147*):

ԸՄԲՈՍՍԱԿԱՆ, ան., **Լուծ, բռնութիւն չհանդուրժող, գերութեան հետ չհամակերպող // համառ, բռնություն չհանդուրժող:** Ոչ որպէս աշխարհաբար լեզու, այլ ուզեց տալ հայ ժողովուրդը իր անտաշ լեզուով, իր ցաւերով, իր իմաստութիւններով եւ իր «**ըմբոստական**» ոգիով... (*Համ., 2007, էջ 252*):

ԸՆԴԱՌԱՋՈՒՄ, գ., **Մէկը կամ բան մը սիրով դիմաւորել, ընդունիլ, որոշումի համաձայնիլ // սիրով ընդունելը:** ...բարիք անհաշիւ / ոչ թէ պաղատալի խնդրանքի **ընդառաջում** (*Երթ, 2006, էջ 103*):

ԸՆԴ-ԴԱՐՁԵԼ, բ., **Դէպի սեփական անձը, «ես»-ը դարձնել, անձնական, անհատականը վերլուծել՝ մեկնել, բացատրել // անձնականով, անհատականով բացատրել:** Թարգմանելը սրբազան

լեզուն մեկնողականին վերածել չէ, որքան փոխակերպել, վերածել մեր լեզուն ու մտածումը: **ԸՆՂ-դարձել:** (Գ. Պ. 3, 2008, էջ 48):

ԸՆԴԵԼՈՒԶԵԱԼ, ած., **Իրարու կապուած, հիստուած, ագուցուած, ընդելուզուած // ագուցված:** Գաղափարի, ոճի ու լեզուի երբեակ **ընդելուզեալ** արժեքներով մոգակերտ (Ին. 1, 2014, էջ 362):

ԸՆԹԵՐՔԱՅԻՆ, ած., **Բանի մը կապուած, յարակից, անկէ անբաժան // ինչ-որ երևոյթին կից, անբաժան:** Շղթայուածին մէջ թզուկները կ'երեւին պարբերաբար, բուն իրական գործողութեան գուգահեռ **ընթերքային** խորհրդապաշտ գործողութիւն մը կ'առաջացնեն... (Սհկ., 1966, թիւ 1, էջ 76):

ԸՆԹԱԾԻՐ, գ., **Ընթացքի, շարժման ուղղութեան ծիրը, շրջագիծը // ընթացքի ուղղություն, երթուղի:** Նոյն բնատիպը եւ իր կեանքը, այդ ուրբաթը կամ շաբաթը կը հետեւին յարանոյն **ընթածիրին** իրար գտնելու հաճոյքը... (Գ. Պ. 2, 2012, էջ 324):

ԸՆԽԱՆՆՈՒԻԼ, բ., **Բանի մը մէկ մասնիկը դառնալ, մասնակիցը ըլլալ, ընդգրկուիլ // ներգրավվել:** Սուրիայէն Երեւանի մէջ ապաստան գտած քանի՞ հայորդի կ'ըլլայ երկրին շունչը զգալու համար, **ընդխառնուելու** համար երկրի շունչին... (Թ. Թ. 2016, էջ 44):

ԸՆԿԵՐԱԲԱՆՕՐԷՆ, մկբ., **Հաւաքականութիւնները ուսումնասիրող գիտութեան տեսակէտէն // գիտականորէն՝ ըստ մարդաբանության:** ...հոգեբանօրէն թէ **ընկերաբանօրէն** կարելի՞ է որ հաւատաւոր նացի մը կարենայ տալ նման լուսամիտ վկայութիւններ (Գ. Բ., 2009, էջ 196):

ԸՆԿԵՐԱԲԺՇԿԱԿԱՆ, ած., **Հանրութեան ընկերային եւ բժշկական ծառայութիւններ մատուցող հաստատութիւն // հանրային և բժշկական:** Այնուհետեւ վեհափառ հայրապետը այցելեց Սուրիահայ օգնութեան խաչի **ընկերաբժշկական** կեդրոն: (Ազ., 3 Ապրիլ 2019, էջ 3):

ԸՆՏՐՈՂԱՊԱՇՏ, գ., **Ընտիրը, կատարեալը պաշտող // կատարյալը պաշտող:** Կը խորհի **ընտրողապաշտ** քերթողը, կը բարձրացնէ կինը իր քնարին վրայ, բնութեան գաղտնիքը հողին արգասաւորութեամբ կը նմանցնէ ծոցուոր կնոջ (Լ. Է., 1919, էջ 16):

Թ

ԹԱԳՆՕՐԴԵՆ, մկբ., **Գաղտնի, ծածուկ ձեռով** // գաղտնաձածուկ: ...ներկայացնել իր մեջ երկրորդ մարդը, ան՝ որուն թագնօրէն կը ձգտի այն (Գ. Բ., 2009, էջ 140):

ԹԱԼԱՅՈՒՄ (pamoison), գ., **Զօրաւոր, բուռն զգացումի պատճառով նուաղիլ** // նվաղում: Նաւառքէն ընկրկող ծփանքներուն շշուշը կը թռչէր իրիկունին մէջ ուր թալացման երանգներ կ'երկնածաղկէին. (Բն., 2014, էջ 72):

ԹԱՆԾՕՐՈՐ, ած., **Թախծոտ, տրտում, տխուր** // տխուր, տրտում: Վերապրող հայ մամիկին աչքերուն մէջ թախծօրոր ... (Հայ., թիւ 11 (119), Սեպ. 1932, էջ 85):

ԹԱՂԱԲՆԱԿ, գ., **Քաղաքի վարչական մէկ հատուածի բնակիչ** // քաղաքի որևէ թաղի բնակիչ: ...այրի, հիւանդկախ՝ ուրիշ մէկ հայրենակցին պէս, միշտ թաղաբնակ (Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 51):

ԹԱՆԳԱՐԱՆԱՎԱՐ, գ., **Թանգարանի եւ հոն պահուող արժէքներու մասին այցելուներուն տեղեկութիւն տուող** // թանգարանների այցելուներին մեկնաբանող: Թանգարանավարը սարք մը գործի կը լծէ (Թ. Թ., 2016, էջ 74):

ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ, գ., (փխբ.), **Որեւէ բան թանգարանային, այսինքն՝ մեռած՝ կեանքի մէջ տեղի ունեցող փոփոխութիւններէն հեռու ըլլալը** // թանգարանին պահ տալը: ...նախկինը չի յանձնուիր պաշտումի մը, թանգարանումի մը ապահով ինամքին (Գ. Պ. 4, 2014, էջ 83):

ԹԱՆՁՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ., **Տեսանելին, նիւթականը (թանձրը) առանց մեկնաբանութեան ընդունիլ** // մակերեսայնություն, վերացականություն: Ուստի՝ «առարկաները սիրել առարկաներուն համար՝ թանձրապաշտութիւն ըսել է... (Գ. Պ. 4, 2014, էջ 40):

ԹԱՏԵՐԱՄԵՐԺ, ած., **Թատերական երկերը ու անոնց ներկայացումները բացասական համարող՝ չհանդուժող** // բեմականացում չհանդուժող: Յետագայ դարերու քաղաքական աննպաստ պայմանները, նոր հաւատքի (քրիստոնէութեան) թատերամերժ իրողութիւնը, կասեցուց թատրոնի զարգացումը՝ պաշտօնապէս միայն (Կ. Լէփ., Հալէպ, 2010, էջ 5):

ԹԱԻԱԼ, գ., Վիճակէ մը ուրիշ վիճակի շարունակական անցում // շարադրանք, շարունակական անցում: 1. Քերթուածին ո՛չ միայն խորագիրը, այլև ամբողջ **թաւալը** կ'ոգեկոչէ այդ մահը (Գ. Պ. 4, 2014, էջ 129): 2. Այս անցքը, տեսանք, յարակայ **թաւալն** է տարուան չորս եղանակներուն (Գ. Պ. 4, 2014, էջ 129):

ԹԱՔՍՏԱԿԱՆ, ած., Որեւէ տեղ, ոեւէ մէկէ պահուրտած ծուարած // փախստական: Զոհ, եղեռնէ ճողոպրած, գաղթական, տարագիր, **թաքստական**, խլումի եւ անտունութեան ենթակաները շատ մը գիտակարգերու համար թիւ են... (Գ. Պ., 2017, էջ 26):

ԹԵԼԱԴԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., (փխբ.), Կռահելի, ենթադրելի ըլլալը, հոս՝ մղում // հիշեցում, ձգտում: «Մարդուն աչքը աղջկան վրան մնաց»-ը կը ստանայ սեռային որոշ **թելադրականութիւն** մը (Գ. Ք., 2009, էջ 119):

ԹԵՄԱՅԱՑՆԵԼ, բ., Բան մը խօսակցութեան եւ քննարկման նիւթ դարձնել// քննարկման նյութ դարձնել: ...այդ գրականութիւնը այս փորձառութենէն կը հանէ օտար աշխարհի տեսութիւն մը եւ ինքնութեան ըմբռնում մը, առաւել կամ նուազ գիտակցուած ու **թեմայացուած**, որ հարկ պիտի ըլլայ բացայայտել (Գ. Պ., 2017, էջ 56):

ԹԵՐԱՐՈՒԹԵՍ, ած., Թերի, թերաւարտ աշխատանք // թերի, անավարտ աշխատանք: Այս **թերարուեստ** անյաջող պատկերն է եղեր ան (Ին. 1, 2014, էջ 340):

ԹԵԻԱԿԱՐԿԱՌ, ած., (բնատ.), Թեւերը վեր պարզած, երկարած // թները, ճյուղերը տարածած: Եւ դարձեալ ծառին, օդին մէջ **թեւակարկառ**, իր մանրատերեւ սաղարթին փափկութեան մէջ մըշտառուգօրէն հոյամարմին... (Ին. 1, 2014, էջ 336):

ԹԻԿՆԱԿԱԼ, գ., Աթոռի կամ նստարանի // աթոռի հենակ: Սրունքներուն վերեւ, **թիկնակալին** կռթնած պարանոցին քով... (Գ. Պ. 1, 2012, էջ 287):

ԹԻՒԸՆԹԵՐՑՈՒՄ, գ., Թիւր, անճիշտ մեկնաբանութիւնը // ոչ ճիշտ մեկնաբանություն: Դժբախտաբար գերծ չեն սխալներէ, վրիպակներէ կամ **թիւրընթերցումներէ** (Գ. Պ. 4, 2014, էջ 26):

ԹԼՈՒՍՏՈՒԹԻՒՆ, գ., Կակազութիւն, թոթովութիւն // թլիկություն, կակազություն: Հայերէնը դպրոցէն կը սորվէին, ան ալ

անանկ մը որ **թլուատութեան** նման թերի մը կը մնայ ... (Գ. Պ. 1, 2015, էջ 89):

ԹԽՍԱԻՈՐՈՒՄ, գ., **Թուխս նստիլ եւ ձագեր հանելը // թուխս նստելը**: Այս մակաբոյժին **թխատրումը** (incubation period) կը տեւէ 2-8 շաբաթ... (Հայր., 23 Յունուար, 2019):

ԹՆՃՈՒԿԱՊԱՍ, ած., **Կնճռոտ, հանգուցապատ, խճճուած, պարզ լուծումներ չունեցող, // խրթին, կնճռոտ**: Վճռելու համար ճակատագիրը Մեսրոպեան թէ Աբեղեանական ուղղագրութեան **թընճուկապատ** հարցին (Երթ, 2006, էջ 93):

ԹՇՈՒԱՌԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ., **Խեղճութիւն, հեգութիւն սիրելը ու անոնցմէ ազատելու ջանք չգործադրել // աղքատությունը, հեգությունը սիրելը**: Այդ **թշուառապաշտութիւնը** եզերող ընդհանուր մթնոլորտը այժմ թերեւցած եւ կարելի է ըսել՝ բարեփոխուած է (Գ. Ք., 2009, էջ 238):

ԹՈՂԼՔՈՒՄ, գ., **Վհատութիւն, ամէն բանէ հրաժարում // ամէն ինչից հրաժարվելը**: Եթէ **թողլքումը** անմիջական հետեւանքը ըլլայ ջղային յոռեգոյն տագնապի մը, կրնայ անհատը անձնասպանութեան մղել անյայտ անկիւն մը... (Գ. Ք., 2009, էջ 97):

ԹՈՒԱԳՐԱԿԱՆ, ած., **Թիւ դնելու, համարակալելու ցուցատախտակ // թվանշանները՝ համարները ցուցադրող տախտակ**: ...որուն կիսադէմքին հարթաքանդակը կ'երեւեր նաեւ ինքնաշարժներու **թուագրական** տախտակին վրայ (Գ. Ք., 2009, էջ 65):

ԹՈՒԼԱԶԳՈՒԱԾ, ած., **Տարտամ, անստոյգ, անորոշ // աննպատակ, անիմաստ**: Քանի մը ձի՝ ճերմակ ու կարմիր, երկարած ու **թուլածգուած** շրջագծերով, կ'արածին կանաչին մէջ (Բ. Կ., 1975, էջ 278):

ԹՈՒԹԱԿԵԼ, բ., **Դատարկաբանել, կրկնօրինակել // կրկնօրինակել**: Յաջող են, որովհետեւ անլի քարոզներ **թութակելու** տեղ անձնական ապրում մը կը քանդակեն... (Սհկ., 1966, թիւ 1, էջ 111):

ԹՈՒԲՔԱՇԽԱՐՀ, գ., **Թուրքերով բնակուած վայր, տարածք // թուրքաբնակ վայր**: Հոն, **թուրքաշխարհի** մէջ պետութիւնը դահիճ է իր երկրացիին (Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 37):

ԹՈՂԱԿՈՒՓ (bird flu), գ., **Ժահրային (virus) տարափոխիկ հիւանդութիւն // սուր վարակիչ հիվանդություն**: Թռչնակրփի է.

խելճ թռչնագզիներ, հիմա ալ սպանդի կարգը ձերն է (*Երթ, 2006, էջ 33*):

Ժ

ԺԱՅԹՔՈՒՆ, գ., **Ուժգին, յախտոն պոռթկում, բուռն արտայայտութիւն // պոռթկուն:** Գործեր, որոնք աւելի մօտ են գաղափարի մը պատկերազարդումին քան թէ **ժայթքուն** եւ ինքնաբաւ երգիծանկարի (*Գ. Ք., 2009, էջ 121*):

ԺԱՅՌԱՆԱԼ, բ., (փխբ.), **Անզգայանալ, քարանալ, բրտանալ, նրբագաց եւ զգայուն ըլլալէ դադրիլ // քարանալ, անզգայանալ:** ...հայ տղաքը, ապաւինելով իրենց հօր կամքին եւ **ժայռացած** հոգիին, կը նետուէին մահասփիւռ պայթումներու յորձանուտին մէջ (*Ազ., 3 Սպրիլ, 2019, էջ 4*):

ԺԵՌԱՓՈՒՆԷՔ, գ., **Ժայռոտ, քարքարոտ ափ // ժայռոտ, քարքարոտ ափ:** ...արթեմիսեան սրահներու պչրոտ քաղաքայնութենէն մինչեւ Լէմանին **ժեռափունքներուն** վրայ թափառական բնամարդուն... (*Ին., 2014, էջ 80*):

ԺԽՏԱԶԵԻ, ան., **Հռետորական լեզուական հնարք, երբ գրողը սովորական հաստատական նախադասութիւն գործածելու փոխարէն, ժխտելով կը հաստատէ իր միտքը // լեզվական հնարք, երբ գրողն իր միտքը ժխտելով է հաստատում:** Վարուժան իր այս քերթուածին մէջ անդադար շեշտը կը դնէ անապատացման հոլովոյթին վրայ, **ժխտաձէ** հաստատումներու բարդումովը... (*Գ. Պ. 4, 2014, էջ 85*):

ԺԽՏԱՎԱՅԸ (dystopia), գ., (ընկ./ւոնգ.) **Մարդու ազատութիւնը սահմանափակող, ճնշող անարդար, տառապալից ընկերութիւն, կառավարութիւն // ճնշող, հետադիմական:** Որպէսզի չվերածուինք ժխտավայրի մը, այսօր աւելի քան երբեք անհրաժեշտ է երկրի հիմերը սնուցանել ժողովրդավարական բարձրագոյն արժանիքներով (*Հորգ., 28 Մայիս, 2019*):

ԺՈՂՈՎՐԴԱԶԵՂ, ան., **Ժողովուրդի, անոր բարքերու, աւանդութիւններու նկարագրութիւններով հարուստ, լեցուն // ժողովրդական ավանդութիւններով հարուստ:** Ռաֆֆի Ռուսահայ այն **ժողովրդագէտ** վիպասանն է, որ... (*Լ. Է., 1919, էջ 40*):

ԻՄԱՑԱՀՈԳԵԿԱՆ, ան., Մարդու մտային եւ ճանաչողական կարողություններուն եւ ներքին կեանքին վերաբերող // մտավոր-ճանաչողական և հոգեկան: Ճնշուածի իմացահոգեկան մոլորում մը, որ ինքնախաբերութեան շապիկ կը հագցնէ ինքնութեան կորուստին եւ նորի ընդունման (*Ազ., 2 Ապրիլ 2019*):

ԻՆՆԱՃԻԻՂ, ան., **Ինը ստեղն, թեւ ունեցող, բազմաստեղն // ինը մասերից բաղկացած:** Վերջին շաբաթը հրեաները, իրենց իննաճիւղ մոմակալներով, տօնախմբեցին Հանուքան (*Գ. Բ., 2009, էջ 51*):

ԻՆՔՆԱԲԱՆ, ան., **Ինքն իր հետ խօսող, // ինքն իր հետ զրուցող:** Մէկ կողմէն՝ մեծափառ ձախողություններ կամ լռություններ, միւս կողմէն՝ յարատեւ, միապաղաղ ու **ինքնաբան** մենախօսութիւն մը. (*Գ. Պ. 4, 2014, էջ 22*):

ԻՆՔՆԱԲԻՕՐԷՆ, մկր., **Բնականօրէն, ինքնակամ // բնականօրէն, ինքնակամ:** Հողը **ինքնաբխօրէն** իր բարիքները կ'ընծայէ եւ դարաւանդներէն ու անապատներէն վայրի անասունները խաղաղօրէն կը մօտենան (*Գ. Պ. 4, 2014, էջ 47*):

ԻՆՔՆԱԳՐԱԻՈՒՄ, գ., **Ինքզինք նուաճել, սեփական անձը կատարելապէս գիտակցել // ինքնիրեն ամբողջովին ընկալել:** Ողբերգութիւնը անունն է բանաստեղծութեան, որ կը ծնի սուգին մէջ եւ կը դիմէ ինքն իր հաստատումին (**ինքնագրաւումին** ու ինքնորոշադրումին) իբրեւ այն որ կու գայ աստուածներու մահէն (*Գ. Պ. 4, 2014, էջ 175*):

ԻՆՔՆԱԶՈՆՈՒՄ, գ., **Ինքզինք զոհաբերել, նուիրելաբերել // անձը զոհաբերելը, անձնագոհ:** ...հակառակ երեւոյթին զոհաբերումը կամ **ինքնագոհումը** չի յաջորդէր տաճարին, ժամանակին մէջ... (*Գ. Պ. 4, 2014, էջ 116*):

ԻՆՔՆԱԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ, ան., **Ինքնաթարգմանութեան վերաբերող, յատուկ // ինքնաթարգմանությանը հատուկ:** **Ինքնաթարգմանական** նման ձեռնարկ իրեն անհրաժեշտ հսկայ աշխատանքէն անդին, կ'ենթադրէր փակագծումը... (*Գ. Պ., 2017, էջ 17*):

ԻՆՔՆԱԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Հեղինակի երկի թարգմանութիւնը հեղինակի իսկ կողմէ // հեղինակի ստեղծագործության**

թարգմանությունը իր իսկ կողմից: ...գրողը կրնար անշուշտ ինք իսկ ձեռք առնել աշխատանքը եւ կատարել գործողութիւն մը որ սովորաբար կը կոչուի «**ինքնաթարգմանութիւն**» (Գ. Պ., 2017, էջ 14, 14-15):

ԻՆՔՆԱԽՆԿԱՐԿՈՒՄ, գ., **Ինքզինք փառաբանող, զովաբանող, ինքն իր անձը պաշտող, մեծամիտ // ինքնագովեստ:** Զգեցած է «հանճար»ի պատմուճանը՝ նուիրելու համար անսսանձ **ինքնախընկարկումի** (Գ. Լ., 2009, էջ 279):

ԻՆՔՆԱԿԵԴՐՈՆ, ած., **Իր կեդրոնը, կորիզը, մեկնակէտը ինքն իր մէջ պարփակող // իրականությունից դուրս, ինքն իր մէջ պարփակված:** ...նկատեց իբրեւ անկախ, **ինքնակեդրոն** իրականութիւն (Արնասըն) (Բ. Կ., 1975, էջ 206):

ԻՆՔՆԱՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆ, գ., (բնատ.), **Ինքզինք մերժել, բացասել, ինքզինք հակասել // ինքնաբացարկ:** Իր բանաստեղծութեան այս ներքին **ինքնահակադրութիւնը** մաս կը կազմէ իր ներաշխարհին եւ շրջապատին (Գ. Լ., 2009, էջ 169):

ԻՆՔՆԱՀՈՒՈՎ, ած., **Առանց մղիչի թաւալող, փոփոխուող // ինքնափոփոխ:** Շեփորելով թէ ժամանակն **ինքնահողով /** Եթէ կրնայ լեռներն հսկայ բլրակներու վերածել / Բայց սիրոյ դէմ կը խոնարկի ինչպէս ծառան արքայի (Երթ, 2006, էջ 43):

ԻՆՔՆԱՄՇԱԿՈՒՄ, գ., **Ինքն իր անձը զարգացնել, կրթելը // ինքնազարգացում:** Մարդկային կեանքին նպատակն է **ինքնամշակումը** (Օ. Ու. 1992, էջ 31):

ԻՆՔՆԱՄՈՒՏ, գ., **Ոչ թէ անձնական փորձառութեամբ ծանօթ, այլ մակերեսային ծանօթութիւն // մուտք գործել իրեն չվերապահված ժամանակաշրջան:** ...երբեք չեմ կրնար մտնել այնտեղ, այլապէս քան իբր **ինքնամուտ** մը... (Գ. Պ. 1, 2015, էջ 15):

ԻՆՔՆԱՊԱՍՍԱՆ, ած., **Յանձնապաստան, մարդ, որ իր կարողութիւններու մասին ունի մեծ համարում // իր կարողությունների մասին մեծ կարծիք ունեցող:** Զուիցերիացի երիտասարդը չէզոք դիրք կը բռնէ, ամէն ինչի վերէն կը նայի, իմաստակ է եւ **ինքնապաստան** (Բ. Կ., 1975, էջ 162):

ԻՆՔՆԱՊԱՍՏՈՒԱՍՏՈՒՄ (autoimmunization), գ., **Մարմնի ախտամերժողական (immune) պատուաստի արտադրութիւն իր**

հիսակէն տարրերուն դէմ // ինքն իրեն պատվաստելը: Երրորդ աշխարհի կարգ մը երկիրներու մէջ ժողովրդային դարմանամիջոց մը կը կիրարկուի, որ կը կոչուի **ինքնապատուաստում** (*Հայր., 23 Յունուար, 2019*):

ԻՆՔՆԱՍՈՒՅԶ, ան., **Ինքնամփոփ, իր ներքին աշխարհին մէջ ընկղմած // ինքն իր մէջ ամփոփված:** Եւ ինքնատոյգ, ըմբռնող նայուածքներ (*Բ. Կ., 1975, էջ 109*):

ԻՆՔՆԱՍՊԱՆ, ան./մկր., **Ինքզինք հիւծող, հասցնող // ինքն իրեն հյուծող:** Ինքնամոռաց եւ **ինքնասպառ** / Ես կը շրջիմ / Ինձ ի վերուստ բաժնեգծուած / Անջրպետեան իմ ուղիով (*Երթ, 2006, էջ 87*):

ԻՆՔՆԱՍՏԻՃԱՆԱԻՈՐՈՒՄ, գ., **Ինքզինք կամ իր աշխատանքը ըստ կարեւորութեան որոշակի մակարդակի մը վրայ դնել // ինքնակարևորում, կամ ինքն իրեն ավելի բարձր մակարդակի հասցնելը:** Շահնուր կատարած է ընդհանուր **ինքնաստիճանաւորում** մը. «Ֆրանսիացի եւ ֆրանսագիր բանաստեղծներու թիւը կը հաշուուի շուրջ հարիւր հազար» (*Գ. Բ., 2009, էջ 170*):

ԻՆՔՆԱՎԱՐԱԿՈՒՄ, գ., **Ինքզինք վարակել // ինքն իրեն վարակելը:** ...կը վերցուի եւ կը զետեղուի ոտքին եւ կամ դէին վրայ որպէսզի **ինքնավարակում** կատարուի (*Հայր., 23 Յունուար, 2019*):

ԻՆՔՆԱՏԵՂԵԿԱՆԱԼ, բ., **Անհատական նախաձեռնութեամբ որեւէ նիւթի մասին տեղեկութիւններ ձեռք բերել // ինքնուրոյնաբար տեղեկութիւններ քաղել:** Բաց համակարգը **ինքնատեղեկանայու** եւ ինքնուսումի հեշտ եւ ամենահասանելի միջոցները տրամադրած է (*Ազ., 9 Մարտ 2019*):

ԻՆՔՆԱՏՆՕՐԻՆՈՒՄ, գ., **Ինքնակազմակերպում, անձնիշխան ըլլալ // ինքնակազմակերպում:** Գուպար մըն էր **ինքնատնօրինումի**, իրաւունքի պաշտպանութեան, արդարութեան (*Գ. Բ., 2009, էջ 24*):

ԻՆՔՆԱՅՈՒՅՄԱԴՐՈՒԹԻՒՆ, գ., **Հրապարակաւ երեւնալ, ընկերութեան ուշադրութիւնը ինքն իր վրայ սեւեռել // այլոց ուշադրութիւնն իր վրա սեւեռելը:** Գիտցած էր միշտ **ինքզինք** պահել «երկրորդ կարգ»ի վրայ, խուսափելով, գրեթէ խորշելով **ինքնացուցադրութենէ** (*Գ. Բ., 2009, էջ 182*):

ԻՆՔՆԱՔԱՆԴ, ած., **Անձը խորտակող, կործանող // ինքնա-կործան:** Դատապարտուած է անգօր եւ լուռ ականատեսը ըլլալու այս նոր կարգի **ինքնաքանդ** պատերազմին (Գ. Բ., 2009, էջ 23):

ԻՆՔՆԱՔԱՆԴՈՒԽ, գ., **Անձը խորտակել, կործանել // ինքնա-կործանում:** **Ինքնաքանդումի** աշխատանք մը կը տարուի գրեթէ գիտակցօրէն (Գ. Բ., 2009, էջ 293):

ԻՆՔՆԱՔՆՆՈՒԹԻՒՆ, գ., **Ինքն իր գործունէութիւնն ու արարքները վերատեսութեան՝ վերագնահատումի ենթարկել // վերագնահատում:** Այլոց նման Հ.Յ.Դաշնակցութիւնն ալ պարտաւորութիւնը ունի **ինքնաքննութիւն** կատարելու պարբերաբար եւ վերանայելու իր ծրագիրը... (Ազ., 24 Փետրուար, 2020):

ԻՆՔՆՈՐՈՇԱԴՐՈՒԽ, գ., **Ինքն իր անձի բնութագրի, յատկութիւններու որոշ կերպով ճշդում // ինքն իրեն բնութագրելը, բնորոշելը:** Ողբերգութիւնը անունն է բանաստեղծութեան, որ կը ծնի սուգին մէջ եւ կը դիմէ ինքն իր հաստատումին (ինքնագրաւումին ու **ինքնորոշադրումին**) իբրեւ այն որ կու գայ աստուածներու մահէն (Գ. Պ. 4, 2014, էջ 183):

ԻՍԴԱՅԱԼԱՍԵՏՈՒԹՅՈՒՆ, գ., **Հրեասիրական, Հրեաստանի պետութեան աջակից // դէպի Իսրայելը հակվածություն:** Այս յայտարարութիւնը կը կատարուի համաքայլ՝ նախագահ Թրամփի կողմէ ամերիկեան **իսրայալամետութեան** մրցանիշ արձանագրող յայտարարութիւններուն... (Ազ., 25 Մարտ 2019):

ԻՐԱՆԿԱՐ (naturmort), գ., **Բնապատկեր, առարկէներու պատկերներ // բնանկար, տարբեր առարկաների նկարներ:** Մօտ երեսուն կտաներ - բնանկարներ, **իրանկարներ** եւ մերկեր կը վկայեն արուեստագէտի մը մասին (Գ. Բ., 2009, էջ 226):

ԻՐԵՐԱՆՄԱՆ, ած., **Իրարու նմանող, նմանատիպ // նմանատիպ:** Երեք **իրերանման** պարբերաթերթեր՝ նոյն քաղաքին մէջ (Լ. Շառ., 2016, էջ 23):

ԻՐԵՐԱՆՑԻԿ, ած., **Փոխադարձաբար եւ շարունակաբար մէկէն միւսին անցնող // մէկից մյուսին անցնող:** ...լեզուն կը մտածէ մեր մէջ եւ մենք կը մտածենք անոր մէջ, կրկնակի, **իրերանցիկ** շրջարկով... (Գ. Պ. 4, 2014, էջ 7):

ԻՐՈՂԱՊԷՍ, ան., **Իբրեւ հաւաստի փաստ // փաստացի:** Եթէ ոչ **իրողապէս`** այլ գոնէ բարոյապէս Անգարան պիտի նկատէր հաշուետու Եղեռնին (*Գ. Բ., 2009, էջ 56*):

Լ

ԼԱՅՆԱՃԱԽԸ, ան., **Ազատ, անկաշկանդ ճախրող, անպարագիծ, հորիզոններ նուաճող // անկաշկանդ ճախրող:** Հայկական դրոշմով շեշտուած իր **լայնաճախր** տաղերը (*Լ. Է., 1919, էջ 34*):

ԼԵԶՈՒՍԱԲՈՐԲ, գ., (բժշկ.), **Լեզուի բորբոքում // լեզվի բորբոքում:** Բերնի չորութեան որպէս հետեւանք կը պատահին հետեւեալ բարդութիւնները` բերնի զանազան տեսակի վերքեր, **լեզուաբորբ,** լեզուամաշկ... (*Հայր., 4 Սեպտեմբեր, 2018*):

ԼԵՂԱԿԱԳՈՅՆ, ան., **Գոց կապոյտ գոյն ունեցող // Լեղակի գոյն ունեցող, կապոյտ, երկնագոյն:** Իսկ խորը, բիլ երկինքին տակ, **լեղակագոյն** լեռներ կը տեսնուէին: (*Ին. 1, 2014, էջ 334*):

ԼԻԱՐԺԵԻՈՐՈՒՄ, գ., **Լիակատար, ամէն բան ընդգրկող գնահատանք // համապարփակ գնահատանք:** Այս տողերը գրի կ'անոնուին արուեստագէտին յոբելենական հանդիսութեան առթիւ, որպէս առաւելաբար շնորհաւորական եւ գնահատանքի արտայայտութիւն, հեռու` անոր վաստակին **լիարժեւորումը** կատարելու մերձեցումէ (*Գ. Բ., 2009, էջ 188*):

ԼԻՆԴԱԲՈՐԲ (scurvy), գ., (բժշկ.), **Սկենսաւիշի սակաւութեան պատճառով յառաջացած հիւանդութիւն // սկենսաւիշի պակասութեամբ առաջացած հիվանդություն:** Սկենսանիւթի անբաւարարութիւն (deficiency), որ կը յառաջացնէ յատուկ **լինդաբորբ** եւ արիւնահոսութիւն (*Հայր., 11 Հոկտեմբեր, 2018*):

ԼՕԱԿՑԱԲԱՐ, ան., **Գործակցութեամբ, ընկերակցութեամբ // համագործակցությամբ:** Լ. Շանթի ութհատորեայ շարքը` Ակադեմիայի հրատարակութիւն է, կատարուած **լծակցաբար** «Համագային»-ի հետ (*Ազ., 18 Յունուար 2017թ.*):

ԼՈԶՈՒՆԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Կարգախօս, նշանաբան, որ կազմակերպութեան մը գլխաւոր ուղղութիւնն է // կարգախօսաբանություն, ճառաբանություն:** Սաստկացած են ու յառաջիկայ օրերուն աւելի պիտի սաստկանան ընդհանրապէս ժողովրդավարա-

կան ընթացիկ արարք նկատուող ընտրություններու առիթով քաղաքական կեցուածքները, **լոգունգաբանութիւնը...** (Ազ., 19 Մարտի 2018թ.):

ԼՈՐԶՆԱԳԵՂԶ, գ., **Մարմնի գործարան, որ լորձունք կ'արտադրէ // լորձ արտադրող օրգան:** Լորձունքը կ'արտադրուի **լորձնագեղձերու** մէջ (Հայր., 4 Սեպտեմբեր, 2018):

ԼՈՒԾՍԱՐԿՈՒՄ, գ., **Վերլուծութիւն, մեկնաբանութիւն // մեկնաբանություն:** Իմացական-գրական ամբողջ արտադրութեան մը վերբերումը ի հարկէ չի ձգտիր, հոս, այս էջերուն մէջ, բանաստեղծութեան **լուծարկումին...** (Գ. Պ. 4, 2014, էջ 73):

ԼՈՒՍԱԲԱՆԻԶ, գ., **Լուսաբանող, մեկնող, հասկնալի եւ ընկալելի դարձնող // մեկնիչ, բացատրող:** Որքան ալ տարօրինակ թուի բաղդատութիւնը, թերեւս նաեւ «սրբապիղծ», չի դադրիր **լուսաբանիչ** ըլլալէ... (Վ. Օ., 2017, էջ 447):

ԼՈՒՍԱԶՈՒԲԿ, ած., **Անտիպ, չիրատարակուած, լոյս չտեսած // Չիրատարակված, անտիպ:** Նախատեսուած Բ. հատորը, մասամբ պատրաստ, դժբախտաբար մնաց **լուսագորկ** (Լ. Շառ., 2016, էջ 33):

ԼՈՒՍԱԿԱՌՈՅՑ, ած., **Լոյսէ շինուած, աննիւթական, հոգեւոր եւ մտաւոր համոզումներու վրայ հիմնուած // լուսէ, երևակայական, մտավոր:** ...հերոսն է, գերմարդը, որ այդ ապագայ լաւագոյն կեանքին շէնքին հիմունքը պիտի հաստատէ, մարմար մարմարի վրայ պիտի զետեղէ, պիտի տեղաւորէ **լուսակառոյց** սիւները... (Լ. Է., 1919, էջ 92):

ԼՈՒՍԱՄԵՇԵԱՆ, գ., **Լոյս պարգեւող (սփռող) պաշտամունքի վայր // լույս սփռող պաշտամունքի վայր:** Զիս կը փոխադրեն նոր հորիզոններ / Առանձնացումի **լուսամեհեանը** / Ուր սէր կայ համակ... (Երթ, 2006, էջ 88):

ԼՈՒՍՆԼՈՅՍ, ած., **Լուսինի լոյսով լուսաւորուած, լուսնկայ // լուսնկա:** Թաղին պատանիները տանիք ելան, ընկոյզ գողնալու եւ Էլիզին սրունքները տեսնելու: **Լուսնլոյս** գիշեր էր, տեսան... (Երթ, 2006, էջ 58):

ԼՈՒՍՈՂՈՂ, ած., **Լոյսով հեղեղուած՝ լեցուն, պայծառ, շէնշող // Լուսով ողողված, լույսով լեցուն:** Լեռնային հեռաստանը

ծառերուն թխաթոյր բուներուն ու խրթներանգ հողին խստութիւններէն անդին կը պարզուէր **լուսողող** (*Ին. 1, 2014, էջ 334*):

ԼՊԸԾԱՆԿԱԸ, գ., **Լպրծուն, այստեղ՝ բազմաթիւ մեկնաբանութիւններու համար բաց նկար, ուստի անհասկնալի // անմեկնաբանելի**: ...պերպաթ բաներ են, **լպրծանկար**, թելադրեր է հայհոյանք մը արտաբերելու շեշտով (ԳՊ2, 2012, էջ 431):

ԼՌԱԶԱՅՆ, ած., **Անձայն, լուռ, լռութեան ձայնով լեցուն // լուռ, անխոս**: **Լռածայն** հոգին՝ որ կը բնակէր մթաստուեր անտառներու մէջ (Օ Ու, 1992, էջ 59):

ԼՍԱՏԵՍՈՂԱԿԱՆ, ած., **Թէ՛ լսողութեան, թէ՛ տեսողութեան սորվելու եւ մտապահելու կարելիութիւնները նկատի ունեցող դասաւանդման եղանակ // դասավանդման մեթոդ**: Սկսա դասաւանդել իմ հեղինակած **լատեսողական մեթոտի** բանաւոր հաղորդակցութիւն սորվեցնող առաջին դասը... (Հ. Գ-Փ., դասագիրք, Փարիզ, 2017):

ԼՐԱՍՓԻԻՌ, գ., **Լուր տարածող՝ հաղորդող կայան // հաղորդիչ**: Բոլոր **լրասփիտները**, լրագրողներն ու խօսնակները բերանացի թէ գրաւոր կը կրկնեն նոյն յանկերզը օրն ի բուն (Գ Ք, 2009, էջ 68):

ԼՐԱՏՈՒԲԱԴԱՇՏ, գ., **Լուրեր տարածող՝ հաղորդող բոլոր ընկերութիւնները համատեղ // լրատվամիջոցների համախումբ**: Թէ՛ ընտրութիւնները մշտադիտարկողները, թէ՛ միջազգային **լրատուադաշտի** ներկայացուցիչները եւ թէ՛ գերտէրութիւններու բարձրաստիճան պաշտօնեաները դրական գնահատականներ կը հրնչեցնեն ... (Ազ., 12 դեկտեմբեր, 2018):

ԼՐԹԱՂՕՏՈՒԹԻՒՆ, գ., **Երկնագոյն, բայց հեռու եւ անթափանցելի// ոչ հստակ, ծանծաղ**: Նայուածքին **լրթաղօտութեան** մէջէն մշտնջենապէս կ'անդրանկարուէր անջրպետին ու Ծովուն անեզրութիւնը (*Ին., 2014, էջ 67*):

ԼՐԶԱԲԱՆԵԼ, բ., **Լուրջ ձեռով ըսել՝ խօսիլ // լրջորեն ներկայացնել**: ...երբ ասոնք ավըր բանան ու սկսին իրենց գուշակութիւնները **լրջաբանել** (Գ Պ1, 2012, էջ 185):

Խ

ԽԱԲԱՆԱՐԱՐԱԿԱՆ, անծ., **Գործ մը՝ ձեռնարկ մը խոչընդոտող, անոր ընթացքը կասեցնող // խոչընդոտող:** Կը դասուի ընդդիմադիր մը չեզոքացնելու **խաբանարարական** եւ ահաբեկչական արարքներու ամենէն ստորին աստիճանին (*Գ. Բ., 2009, էջ 147*):

ԽԱԹԱՐԻՉ, անծ., **Ապականող, արատաւորող, այլասերող // ապականող, արատավորող:** Բոլշեւիզմը սփիւռքեան մարզ փոխադրեց մինչեւ 1953 թուականներու իր **խաթարիչ** բարքերը... (*Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 5*):

ԽԱՂԱՂԱԲԵՐ, անծ., **Անդորրութիւն, հանգստութիւն պարզեւորող // անդորր, խաղաղություն բերող:** Ոչ միայն Հայոց ցեղասպանութեան համար, այլ ընդհանրապէս, խաղաղաբեր պատմութիւն ունեցող բոյս է... (*Հայր., 7 Յունիս, 2019*):

ԽԱՂԱՄԱԿԱՐԴԱԿ, գ., **Թատերական դեր խաղալու վարպետութեան աստիճան, խաղի որակ // վարպետության աստիճանը: ...խաղամակարդակը մնացեր է նոյնը՝ «սիրողական»** (*Կ. Լէփ., Հայէպ, 2010, էջ 12*):

ԽԱՂԱՅԿՈՒՆ, անծ. **Բազմաձեւ, ոչ միապաղաղ ու ձանձրալի, յարափոփոխուող // հարափոփոխ:** Կը սիրեր որոշ չափով ձայնին մէկ դիւրաբեկ, ինքնաբաւ ու տրտում երանգը, թեթեւ ու դիւթիչ, **խաղացկուն** ու խոհուն դրոշմը (*Գ. Պ. 1, 2012, էջ 283*):

ԽԱՂԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, գ., **Խաղընկեր, խաղակից ըլլալ // խաղակից:** Հզօր Աճեմեանի հսկողութեամբ, Փափագեանի, Աւետիսեանի, Ներսիսեանի եւ Մկրտչեանի **խաղընկերութեամբ** այդ ի նչ մոլեգնող ու հրավառ տօնախմբութիւն էր (*Բագ. թիւ 4, էջ 8*):

ԽԱՅԹԱՀԱՐԵԼ, բ., **Խայթել, խայթերով ծակծկել // խայթել:** Ո՛չ մէկ մեղուահոյլ կարող էր սակայն վերանալ արեւակուլ այն նահանգը **խայթահարելով** մեռցնելու (*Բն. 1, 2014, էջ 366*):

ԽԱՅԹՀԱՄԵՐ, անծ., (փոխ.) **Սքամտութեամբ, առանց վիրաւորելու խայթող, ճիշդը ըսող // սքամտորեն:** ...հոետորական մակընթացութեամբ եւ միշտ խայտաբղէտ ու **խայթեամեղ՝** գերդ արեւելեան իմաստուն (*Լ. Է., 1919, էջ 89*):

ԽԱՆԴԱԲՈՐԲ, անծ., **Մեծ, յորդուն, եռանդ, աշխուժութիւն, խանդավառութիւն // խանդավառիչ:** Տօնական օրերու **խանդաբորբ**

եւ ջերմեռանդ այս շրջանին, մեր միակ մաղթանքը պիտի ըլլար կրօնքը տանիլ իր հեռաւոր արմատներուն (Գ. Բ., 2009, էջ 54):

ԽԱՉԱՆԻՉ, ած., **Խաչի ձեւ ունեցող, խաչի ձեւով ծալուած // խաչված:** Խոհուն, խոնարհ իսկ դէմք մը, ձեռքերը իրարու վրայ **խաչանիչ՝** կուրծքին, երկիւղածութեան, իր պարտքը կատարածի ...տպաւորութիւն մը (Բ. Կ., 1975, էջ 281):

ԽԱՉՈՒՀԻ, գ., **Հայ Օգնութեան Միութեան (ՀՕՄ) մէջ կամաւոր ծառայող, անոր հայանպաստ բարեգործական ձեռնարկներու աջակից // կամավոր ծառայող, աջակցող:** ...բոլոր ասպետուհիներն ու **խաչուհիները** անխտիր, արժանի են հայ ժողովուրդի երախտագիտական զգացումներուն... (Հորգ., 15 Հոկտեմբեր 2019):

ԽԱՉՈՒՄ, գ., **Երկու կամ աւելի միտքերու, կարծիքներու միաձուլում, զօղում // բախում:** Բաղդատութիւնները, պատուաստները, **խաչումները**, փոխթափանցումները յարաբերակցական բնոյթ ունին... (Գ. Պ., 2017, էջ 37):

ԽԱՐԱԶԱՆԱՀԱՐՈՒԹԻՒՆ, գ., **Մտրակով զարնել, ծեծել, զանաւարել // ծեծ, զանաւարություն:** Խարազանաւարութիւնը կը բանի բոլոր մակարդակներուն, հայ համայնքէն դուրս ու ներս (Ս. Ա., 2016, էջ 13):

ԽԱԻԱՐԱԿՈՄ, ած., **Խաւարի, մութի մէջ ողբացող, սգացող // խավարի մէջ ողբացող:** Գոց պատուհաններուդ ետին հիմա կը քնանաս կոր դուն, երազածուփ, նոճիներուն **խաւարակոճ** երաժըշտութեան մէջ (Ին., 2014, էջ 58):

ԽԱԻԱՐԱՄՈՅՆ, ած., **Խաւարի՝ մթութեան մէջ ընկղմած, սուզուած // մթի մէջ ընկղմված:** Կործանարար եւ ահարկու, **խաւարամոյն** իր ծուխով ու մուխով, արձակուած հայիոյանք մըն էր առ Աստուած (Ս. Ս., 2001, էջ 10):

ԽԱՓԱՆԱՐԱՐ, գ., **Որեւէ պետութեան վնասելու նպատակով ծրագրուած քանդիչ, զաղտնի եւ թշնամական զինուորական գործողութեան մասնակից // հետախույզ, դիվերսանտ:** Հայկական բանակը ետ շարտած է Ատրպէյճանական **խափանարար** խումբերը (Հորգ., 8 Ապրիլ, 2014):

ԽԵՂԱԹԻԻԲԻԶ, ած., **Եղծիչ, ապականիչ, աղաւաղող, քայքայիչ // կեղծիչ:** Վայրենութեան շրջանի խեղաթիրիչ ազդեցութիւնը կ'ունենայ իր եղերական վերապումը ... (Օ. Ու., 1992, էջ 32):

ԽԻԺԱՆԿԱՐ (Tempera), գ., **Արագ չորցող, մնայուն ներկի տեսակով նկարուած նկար // արագ չորացող ներկով կատարված նկար:** Սամսոնեանի գործերուն մաս կը կազմեն նաեւ հոծ թիւով խիժանկարներ (թամբերա) (Գ. Բ., 2009, էջ 208):

ԽՃԱՀԱՐԹ, ած., **Խիճով հաւասարեցուած, հարթուած ճամբայ // խճերով հարթված:** Աջին փողոցի խճահարթ մակարդակէն հագիւ բարձր տուն մը (Գ. Պ. 1, 2015, էջ 27):

ԽՆԴՐԱԿԱՆԱՑՈՒՄ, գ., **Վիճելի, տարակուսելի, թեական ընելը // վիճելի դարձնելը:** սկիզբէն կը մտնեն հարցումի, զարմանքի, խնդրականացումի արարքին մէջ (Ս. Խ., 2017, էջ 13):

ԽՈՍՏՄՆԱՇԱՍ, ած., (գրկն.), **Ստեղծագործ, բեղուն ապագայի յոյս ներշնչող // խոստումնալից:** Գեղամ Գուշակեան, կոչուած էր ըլլալու որքան չափածոյի՝ նոյնքան եւ արձակի մարզերուն վրայ խոստումնաշատ գրող մը (Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 76):

ԽՈՏՈՐԱՄԻՏ, ած., **Ծուռ, մոլար միտքեր ունեցող // ոչ ուղիղ, թեք:** Բայց եթէ իր ոյժը կը հասնի գրելու միայն օրինազանց ազնուականներու եւ հեռագրատան խոտորամիտ ցրուիչներու համար (Օ. Ու., 1992, էջ ԺԶ):

ԽՈՐԱԶԳԱԼ, բ., **Սասկօրէն՝ բուռն կերպով զգալ՝ ապրիլ // խորությամբ ընկալել:** Ամբողջ Արեւմտեան Հայաստանի մէջ պատմաբան պէտք է ըլլալ զգալու, խորագգալու, խորաչափելու համար անչափելի ու անպարագրելի այս ճշմարտութիւնը... (Լ. Շառ., 2016, էջ 51):

ԽՈՐԱՆԱՐԴԱՊԱՇՏ, ած., (գեղնկ.), **Խորանարդապաշտութեան (cubism) հետեւող, անոր սկզբունքները որդեգրած արուեստագետ // գեղանկարչության այդ ոճին հետևող նկարիչ:** Երբեք գրաւուած չէի Մորիս Տրնիի եւ կամ խորանարդապաշտ տեսութիւններով (Գ. Բ., 2009, էջ 177):

ԽՈՐԱԶԱՓԵԼ, բ., **Երեւոյթի հոգեւոր խորքը չափել՝ անոր սահմանները փորձել ըմբռնել // խորությամբ ըմբռնել:** Ամբողջ Արեւմտեան Հայաստանի մէջ պատմաբան պէտք է ըլլալ զգալու,

խորագրալու, **խորաչափելու** համար անչափելի ու անպարագրելի այս ճշմարտությունը (Լ. Շառ., 2016, էջ 51):

ԽՈՐԱՊԱՊԱՏԿԵՐ, գ., **Խնդիրի կամ երեւոյթի մը գլխաւոր ու ամբողջական ըմբռնումը**, որուն օգնութեամբ կը մեկնուին մասնաւոր, անջատ իրադարձութիւնները // մանրագին, ըստ ամենայնի ներկայացումը: ...հիմնախնդրի իսկական խորապատկերի ներկայացումը Գանատայի հանրութեան (Հորգ., 20 Մարտ 2019):

ԽՈՐՀՐԴԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ., **Մտքի մը, ներքին՝ հոգեւոր գաղտնիքի մը ներգործութիւնը, ազդեցութիւնը // ազդեցություն:** Զարեանի սիրելի, բայց խմբակին կողմէ ալ ընդունուած այս խենթութիւնը «խորհրդագործութեան» մէկ դէմքն է... (Գ. Պ. 4, 2014, էջ 41):

ԽՈՐՀՐԴԱԾԱԿԱՆ, ած., **Միտքը, բանականութիւնը յուզող խոհ՝ վերլուծութիւն // վերլուծական:** Իր պատմուածքները, խորհրդածական սեռումները, երաժշտական-քննադատական էջերը եւ քերթուածները ցրուած են ... (Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 72):

ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆԱՑՈՒՄ, գ., **Որեւէ առարկայ, նկար կամ երեւոյթ խորհրդանիշի վերածելը, խորհրդանշական դարձնել՝ անոր տալով այլաբանական իմաստ եւ խորք // խորհրդանշական դարձնելը:** Վարուժանը կը թուի խուսափիլ Սիամանթոյի յատուկ շատ որոշ խորհրդանշականացումէն, որ ինք իսկ կիրարկած է «Ջարդ»-ի երկայնքին: Այս խորհրդանշականացումին, անձնաւորումին կը պատկանի այդ քերթուածի մէկ տողը (Գ. Պ. 4, 2014, էջ 163):

ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Խորհրդանշական, այլաբանական իմաստ եւ տարողութիւն ունենալ // այլաբանություն:** Ծանրաբեռն ալ է «Ջարդը»-ի մէջ ընդլայնուած Յիսուսի խաչելութեան խորհրդանշականութեամբ (Գ. Պ. 4, 2014, էջ 194):

ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՈՒՄ, գ., **Որեւէ առարկայի, նկարի կամ երեւոյթի իրենցմէ աւելի բարձր բանի մը արտայայտութիւնը՝ նշանը ըլլալը, փոխաբերական ըլլալը // որեւէ անձի կամ առարկայի պաշտամունքը:** Անունը, որ մանկութեանս ինծի չեմ գիտեր ի՛նչ վրդովող անձանօթի մը խորհրդանշանումը կը թուէր, եւ որ, գիտեմ թէ Անհունին առաջին ըմբռնումն էր իմ պատկերամոլ տղայութեանս (Ին., 2014, էջ 59):

ԽՈՐՀՐԴԱՆՇԱՊԱՇՏ (symbolist), ան., (գրկն.), **Խորհրդապաշտութեան ներկայացացուիչ, անոր որդեգրած ոճին հետևող // խորհրդանիշ պաշտող:** ...ծանօթ է մէկէ աւելի յորջորջումներով, ըստ վայրի ու պարագաներու- Գեղապաշտ, **խորհրդանշապաշտ**, կամ՝ անոր հակառակորդներուն բնորոշումուը՝ անկապաշտ (decadent) (*Օ. Ու., 1992, էջ Է*):

ԽՈՐՀՐԴԱՊԱՀԱԿԱՆ, ան., **Գաղտնապահական, խորհրդաւոր // խորհրդավոր:** Անշուշտ կարելի է միշտ ըսել թէ որոշումը միայն խորհրդանշանական բնոյթ ունի, «**խորհրդապահական**» է... (*Գ. Ք., 2009, էջ 55*):

ԽՈՐՀՐԴԱՍԷՐ, ան., **Գաղտնիքը սիրող, բանի մը թաքուն, քօղարկուած կողմը յայտնաբերելու մղում ունեցող // գաղտնասեր:** «Անտեսանելի մարդը» դարձած է այս ինքնին խորհրդաւոր եւ **խորհրդասէր** մարդը (*Գ. Ք., 2009, էջ 69*):

ԽՈՐՀՐԴԱԻՈՐՈՒՄ, գ., **Բան մը, երեւոյթ մը խորհրդաւոր՝ առեղծուածային դարձնել, այդ երեւոյթին ներքի եւ գաղտնի իմաստ տալ // պաշտամունքային դարձնելը:** Հիմա որ ականջը կարող ենք առընչել **խորհրդաւորումին** ... (*Գ. Պ. 4, 2014, էջ 204*):

ԽՈՐՇԱՊԱՍ, գ., (բժշկ.), **Փոսի կամ փորուած տեղի, ինչպէս եւ խոռոչի ներքին պատ // որևէ խոռոչի ներքին պատ:** Բերանային շնչառութիւն, որ տեղի կ'ունեայ քիթի զանազան տեսակի խցումներով, օրինակ՝ քիթի **խորշապատի** ծռութիւն... (*Հայր., 4 Սեպտեմբեր, 2018*):

ԽՈՒՍԱՓՈՒԿՈՒԹԻՒՆ, գ., **Տարտամ, անորոշ ըլլալը, այստեղ առանց յստակ ուղղութեան եւ հանգանակի // խաբուսիկ:** Սփիւռքեան գրականութիւնը կը սահմանուի գոյութեան իր պայմաններու խախուտութեամբ, խմբակներու անկայունութեամբ ու **խուսափուկութեամբ**... (*Գ. Պ., 2017, էջ 46*):

ԽՍՍԱԲԻԲ, ան., **Պահանջկոտ, բծախնդիր, խստապահանջ // պահանջկոտ, բծախնդիր:** ...լեզուն գրկուած է իր երբեմնի խստաշունչ եւ **խստաբիր** պահակներէն (*Գ. Ք., 2009, էջ 27*):

ԽՐԱՍԱԴԻՐՔ, գ., **Պաշտպանութեան համար փորուած փոս, դիրք, խրամատ // խրամատ:** ...զէն ի ձեռին **խրամադիրքերուն** մէջ կանգնեցան հայ զինուորի կողքին (Ազ., 3 Ապրիլ 2019, էջ 5):

ԽՐՏՉՈՒՆ, ան., **Խրտնող, վախկոտ // վախվորած:** Ակումբին մէջ կը նստէր դիմացը, **խրտչուն** աչքերով, ու երկչոտ հաճոյքի մը մէջ՝ իրարմէ բաժնուած շրթունքներով (*Օ. Ու., 1992, էջ 58*):

ԽՕԼԸՆԹԱՑ, ան., **Անգուսպ, չնտածուած գործելակերպ // անգուսպ:** ...շնորհիւ որպէս Դեմոկրասի ըմբռնուած **խօլընթաց** սեփականաշնորհումի աշխարհատարած եւ համայնակով նոր օրէքններուն, յանձնախումբի մը պաշտօն տուած է... (*Գ. Բ., 2009, էջ 34*):

ԽՕՍՆԱԿՈՒՇԻ, գ., **Կին բանբեր, լուրեր հաղորդող կին // հաղորդավարուհի: Խօսնակուհին** անայլայլ, միապաղաղ ձայնով եւ տաղտկալի եղանակով կը հաղորդէ Նախագահ Ռոպերթ Քոչարեանի հրամանագիրը (*Գ. Բ., 2009, էջ 30*):

ԽՕՍՈՂՈՒԹԻԻՆ, գ., **Խօսելու, ինքնարտայայտումի՝ իբրեւ գոյութեան ձեւի կարողութիւն // ինքնարտահայտման կարողությամբ օժտված:** Խնդիրը կը վերաբերի ոչ այնքան «տոհմին» կամ «ազգին», որքան հաւաքականի **խօսողութեան** (*Գ. Պ., 2017, էջ 26*):

Ծ

ԾԱԼՈՏՈՒԻԼ, բ., **Ծալուիլ, ուրբուիլ, պլլուիլ հոս՝ (փխբ.) կնձռոտելով // կնձռոտվել:** Երեսը **ծալոտուելով** կ'ելեւէջէր, կը բացուէր ու ահագին ակռաները կը փայլատակէին (*Ին. 1, 2014, էջ 391*):

ԾԱԾԿԱԿԱՅՈՒՆ, ան., **Տեականօրէն գոյութիւն ունեցող, բայց աննկատ, գաղտնի // գաղտնի:** Ֆրանսական ներագդումը (prégnance) տեւական **ծածկակայուն** ներկայութիւն է, որ հարկ է պահել ուշադրութեան կեդրոնին (*Գ. Պ., 2017, էջ 56*):

ԾԱՂԿԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ, գ., **Ծաղիկի առուծախի խանութ // ծաղկի խանութ:** ...այդ հարիւր մեթրին վրայ բացուած են երեք **ծաղկավաճառատուներ...** (*Հայ. 1, 9-րդ համար, էջ 51, 1970*):

ԾԱՅՐԱՅԵՂԱԿԱՆՍՈՒՄ, գ., (քրք.), **Դիրքորոշում մը, համոզում մը արմատական, անհաշտ դարձնել // առավել արմատական, անհաշտ դարձնելը:** ...ատիկա յետագային պիտի նպաստէ հակամարտող կողմերու մօտեցումներուն **ծայրայեղականացման** (*Ազ., 15. 10. 2020, էջ 1*):

ԾԱԻԱԼԱՊԱՇՏԱԿԱՆ, ան., (քղք), **Այլ երկիրներ գրաւելուն միտուած // այլ երկրներ զավթելուն միտուած:** Թուրքիան իր փանթուրանական ու ծաւալապաշտական քաղաքականութեան նոր ձեւատրում եւ շեշտատրում տալով... (Ազ., 14. 10. 2020, էջ 1):

ԾՈՎՈՒԺ, գ., **Զօրքի ծովային ճիւղը, ենթաբաժինը, նաւատորմ // նավատորմիդ:** ...պիտի չծառայէ իրեն յետ մահու եւ դարեր ետք, խուսափելու համար Նենգ Ալպիոնի **ծովուծին** կողմէ Ուաթերլոյի պարտութենէն եւ Ռուսիոյ սառնամանիքի ողբերգական նահանջէն (Գ. Ք., 2009, էջ 76):

Կ

ԿԱԶՄԱԻՈՐԻՉ, ան., **Հիմնական գլխաւոր տարրերէն մէկը հանդիսացող // գլխավոր, հիմնական բաղկացուցիչ:** Այս կապը կազմաւորիչ է, հիմնական եւ ոչ երբեք պարագայական (Գ. Պ., 2017, էջ 43):

ԿԱԶՄԱՔԱՆԴՈՒՄ, գ., **Շատ մասերէ կազմուած կառոյցի մը (հոս՝ պետութեան) փլուզումը, խորտակումը, մասնատումը // փլուզում:** Խորհրդային Միութեան կազմաքանդումէն ետք ենթարկուեցաւ քաղաքական, լեզուական, մշակութային, քաղաքացիական եւ կրօնական իրաւունքներու անարգել խախտման (Հորգ., 10 Յունիս 2019):

ԿԱԿՂԱՄՈՐԹԱԽՏ (molluscum Contagiosum), գ., (բժշկ.) **Ժահրային հիւանդութիւն, որ կը վարակէ մաշկը // մաշկային վարակիչ հիվանդություն:** Վարակիչ կակղամորթախտը մորթային վարակիչ հիւանդութիւն մըն է. թարախափշտիկներով (Ասպ., 3 Ապրիլ, 2015):

ԿԱՄԱՎԱՐԵԱԼ, ան., **Անձնական, անհատական կամքի թելադրանքով գործող, կամաւոր // կամավոր:** ...կատարեալ էին Պերպերեանի մտքին մէջ, վասնզի թէ՛ բնածին էին, թէ կամավարեալ (Բն. 1, 2014, էջ 362):

ԿԱՄՐՁՈՒՄ, գ., **Հակադիր երկու կողմեր հանգուցելը, զօդելը, առնչութիւն, միասնութիւն ստեղծելը // միասնություն, միացում:** ...կը կարծէ գտնել իմացական եւ զգացական փոխազդեցութիւններու մարզ մը, մարզեր, անհատէն դէպի հաւաքականութիւն (եւ

փոխադարձաբար) հաստատելու համար **կամրջումի** կռուաններ (Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 1):

ԿԱՅՏՈՒՈՒՆ, ած., **Աշխոյժ, առոյգ, եռանդուն // աշխույժ:** Երկրին լրասփիւռները պէտք է ամէն օր հանրութեան տեղեկութիւն տան Առաջին շան կեցութեան մասին ու սփռեն անոր **կայտունուն** ուսումներուն պատկերները (Գ. Բ., 2009, էջ 59):

ԿԱՆԱՉԱԹՈՅՐ, ած., **Կանաչաւուն, կանաչի երանգ ունեցող // կանաչաւուն:** Կողաւաղէն Մօր լուսանկարը **կանաչաթոյր / ու** նայլոն տոպրակներու հետ մեղսակից... (Երթ, 2006, էջ 102):

ԿԱՆԱՉԱԻՈՒԽՏ, ած., **Կանաչով հարուստ, յորդ, առինքնող կանաչով առատ // մուգ կանաչ:** Երեկոյեան կիզիչ արեւը, որ այդ մոնմարթեան վայրը կը բանայ բլուրներու **կանաչաւուխտ**, գմբթներէն կտրտուած համայնապատկերին. (Գ. Պ. 2, 2012, էջ 428):

ԿԱՆԽԱՉԱՅԵԱՅ, ած., **Պէպի ապագայ յառած հայեացք, ապատումով լի հայեացք // ապագային ուղղված հայացք:** Ըսեմ միայն՝ առաջինը աւելի խիտ է ու կտրուկ: Երկրորդը ձգտումն ունի ընդլայնելու եւ լեցուն է յետահայեաց ու **կանխահայեաց** ակնարկներով (Ս. Ս., 2016, էջ 27):

ԿԱՆԽԱՄԻՉՈՅ, գ., **Որեւէ աղէտ, փորձանք կանխելու հնարք, գտնուած ելք // կանխելու ճար, հնար:** Արեւմուտքը կը զգուշացնէ որ հեռու մնան ծայրայեղ **կանխամիջոցներէ** Միջին Արեւելքի մէջ (Գ. Բ., 2009, էջ 83):

ԿԱՆԽԱՅԱՐՈՅՅ, գ., **Ատտու կանուխ արթնցող // վաղ արթնացող:** Ամէն օրուան իր սովորութեան համեմատ **կանխայարոյց** Վարդապետը դեռ ելած չըլլա յ... զարմանալի բան (Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 41):

ԿԱՆՈՆԱՊԱՇՏՕՐԵՆ, մկբ., **Մահմանուած օրէնքները օրինապաշտօրէն կիրառել // օրինապաշտօրէն:** Ներկայացուած հարիւրյիսուն գործերը ցոյց կու տան մեծամեծ նկարիչ մը, որ **կանոնապաշտօրէն** հետեւած է ուղիի մը (Գ. Բ., 2009, էջ 289):

ԿԱՌՈՒՑԱՅԻՆ, ած., **Բանի մը յօրինուածքին, կազմութեան վերաբերող // ձևային կազմութեանը վերաբերող:** Մօտեցումը շեշտուած է երկու նախադասութիւններու **կառուցային** նմանութեամբ ու նոյնաձայնութեամբ (Գ. Պ. 4, 2014, էջ 123):

ԿԱՌՈՒՑԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ (structuralism), գ., Ընկերաբանության, մարդաբանության եւ լեզուագիտության մեջ հետազոտություններու եղանակ, որ կը կարեւորուի ձեւը եւ ոչ թէ խորքը: // ձևին, այլ ոչ թէ իմաստին առաջնություն տալը: ...1920-ական թուականներու գերիրապաշտութենէն կ'երկարի 1970-ականներու կառուցապաշտութիւնը... (Գ. Պ., 2017, էջ 56):

ԿԱՌՈՒՑՈՂԱՊԱՇՏ (constructivisme), գ., Կառուցապաշտութիւն արուստի ուղղութեան հետեւող, ուղղութեան ներկայացուցիչ // արվեստի այդ ուղղության ներկայացուցիչ: Նոյնպէս՝ «կառուցողապաշտ»-ը, որուն գլխաւոր յատկանիշներէն կը կազմէ յօրինումին հաստատ կազմութիւնը... (Գ. Ք., 2009, էջ 207):

ԿԱՏԱԽԱՌՆ, մկբ., Պատահար, որ ծաղրով՝ զաւեշտով կը պատմուի // զավեշտով լի: Ինքնակենսագրական նամակը երկու տողով ու կատախառն կը պատմէ միջադէպը (Ա. Ա., 2016, էջ 31):

ԿԱՏԱԿԱԼԻՑ, ած., Կատակ բովանդակող // կատակով ասված: Կ'ըսեն իր կատակալից մէկ զրոյցին վրայ էր որ կուսակալական հրահանգով արգելքի տակ առնուեցաւ... (Գ. Պող., 1974, էջ 88):

ԿԱՏԱՐԵԼԱՊԱՇՏ, ած., Կատարելալը, անթերին պաշտող // կատարյալը պաշտող: Հելլէն արուեստագէտը, ամէն բանէ վեր, ձեւապաշտ եւ կատարելապաշտ է (Բ. Կ., 1975, էջ 11):

ԿԱՏԱՐԵԼԱՊԱՇՏ, ած., Չափազանց բժախնդիր, դժուարահաճ, գործի մը անթերի ըլլալուն համար ոչինչ խնայող // բժախնդիր: ...ինչ որ անընդունելի էր կատարելապաշտ գրագէտին համար (Գ. Ք., 2009, էջ 151):

ԿԱՏԱՐԵԼԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ., Բժախնդրօրէն, անթերի կերպով գործել, այդ նպատակին ձգտիլը // բժախնդրություն: Այդ կատարելապաշտութեան ամէնէն շօշափելի փաստերը ունին անոնք, որոնք տեսած են Շահնուրի ձեռագիրներուն սրբագրութիւնները (Գ. Ք., 2009, էջ 151):

ԿԱՏԱՐԵԼԱՏԻՊ, գ., Մէկու մը կամ երեւոյթի մը ամբողջական տիպարը կամ տեսակը // անթերի, կատարյալ: Խորհրդաւոր հայ բանաստեղծի կատարելատիպը եղաւ Ինտրա (Հայր., 6 Յունիս, 2019):

ԿԱՐԱՊԱՆՈՒԱԳ, գ., (փխբ.), **Հեղինակի մը գրական վերջին երկը // կարապի երգ՝ վերջին գործը:** Հեթանոս երգերը տաղանդաւոր բանաստեղծին կարապանուագն է պարզապէս (*Լ. Է., 1919, էջ 69*):

ԿԱՐԾՐԱԽՏ (sclerosis), գ., (բժշկ.), **Մարմինի տարբեր գործարաններու, անօթներու եւ հիւսակներու կարծրացում // զանազան օրգանների կարծրացում:** Հոքինկ կը տառապէր հագուագիւտ հիւանդութենէ (մկաններու ապաճման երկրորդական կարծրախտ)... (*Ազ., 15 Մարտ, 2018թ.*):

ԿԱՐՃՈՒՄ, գ., (գրկ), **Նիւթ, որ համառօտելով կը հաղորդուի // կրճատում:** Ծայրագոյն վիճակները կը գրուին մարդկայինի, հոգեբանականի խստագոյն կարճումով... (*Ա. Ա., 2016, էջ 22*):

ԿԱՐՄՐԱՀՈՂՈՒՏ, ած., **Կարմրահողէ բաղկացած տարածք // կարմրահող տեղանք:** Երկարատեւ գնացքէ մը վերջը կը գտնուէինք կարմրահողուտ ու ոլորուն գառիվերի մը վրայ (*Ին. 1, 2014, էջ 379*):

ԿԱՅԱՊԱՇՏՈՒԹԻՆ, գ., **Մասնաւոր վարքի, բարքի, ընթացքի պաշտամունք // պատեհապաշտություն:** ...պէտք է քայքայել պետութիւնը, ազգութիւնը, միջազգային կացապաշտութիւն, անմիթատրոնին մէջ՝ զիշեր, ցերեկ ուղղակի, անմիջական, բացարձակ ժողովրդավարութիւն (*Գ. Պ. 2, 2012, էջ 76*):

ԿԱՅԻԶ, գ., **Որեւէ բան կայուն, հաստատուն դարձնող սկզբնական եւ էական պայման // որեւէ բան կայունացնող սկզբնապայման:** ...անիկա անգօրութիւն է եւ ամլութիւն, զուրկ հօրենական կացիչէն... (*Գ. Պ., 2017, էջ 45*):

ԿԵՆԴԱՆԱՊԱՇՏԱԿԱՆ, ած., **Կենդանիներու պաշտպանութեան, հովանավորութեան վերաբերող // կենդանիների պաշտպանությանը վերաբերող:** Այդ կենդանապահական օգտապաշտ աւանդութեան կը հետեւի նաեւ... (*Գ. Բ., 2009, էջ 58*):

ԿԵՆՄԱԵՐԹ, **Գոյութեան, կեանքի ընթացք, զարգացում // գոյության ընթացքը, զարգացումը:** ...կը նպատակադրէ նաեւ ամրագրել Հայաստանի եւ զանատահայութեան կենսաերթը... (*Հորգ., 9 Հոկտեմբեր, 2019*):

ԿԵՆՄԱԶՐԱՀ, **Կեանքը, հոս՝ գոյութիւնը պաշտպանող ուժ, գաղափար // այստեղ՝ գոյությունը պաշտպանող ուժ:** Մեր կենսա-

գրահը՝ մեր ազգային միասնականությունն է (Հորգ., 15 Յունիս, 2020):

ԿԵՆՍԱԼՈՅՍ, գ., Կենսական ուժ եւ կորով փոխանցող լոյս // կյանք պարզևող լոյս: Յստակատեսութեան (clair voyance) տիտանը կը մնայ Շէքսպիր: Չտեսածը գրելու կարողությունն է. պատմական դրուագներու **կենսալոյսը** (Լ. Է., 1919, էջ 87):

ԿԵՆՍԱԽԱՅՏՈՒԹԻՒՆ, գ., Կենսուրախություն, կեանքի հանդէպ բերկրալից վերաբերում // կենսուրախություն: Շահնուրն իր մէջ պիտի պահէ այդ անհանդարտ, եռանդուն պատանիի մը վառ ոգին, մինչեւ իր վերջին օրերը, եւ նաեւ **կենսախայտություն** մը... (Գ. Ք., 2009, էջ 142):

ԿԵՆՍԱԿԱԳԻՐ, գ., Նշանաւոր մարդու կենսագրութեան հեղինակ // կենսագրության հեղինակ: Այս անգլիացի գրողը նոյնքան ծածկանուն փոխած է որքան բարեկամներ, որոնց թիւով եւ իր գրաւչութեամբ նաեւ հպարտացած է: «Մարգարիտ մը եւ խոզ մը», ըստ իր մէկ **կենսակագիրին** (Գ. Ք., 2009, էջ 297):

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ, ան., Կենսագրություններու հետազոտութեան եւ անոնց ցուցակագրումին վերաբերող երկ // կենսագրությունների ուսումնասիրությանն ու ցուցակագրմանը վերաբերող: Մինաս Թէօլէօլեանի տուած պատկերը շարք մըն է **կենսամատենագիտական** նշմարներու որոնց կցուած է ամէն մէկ գրագէտէն յատկանշական հատուած մը (Գ. Պ., 2017, էջ 49):

ԿԵՆՍԱՇԱՀՈՅԹ, գ., Կեանքի շարունակութեան համար անհրաժեշտ վաստակ, եկամուտ // գոյությունն ապահովող եկամուտ: Ի ծնէ երկրին միացած մարդիկ են՝ բայց պարտին մտածել **կենսաշահոյթի** մասին ալ (Թ. Թ., 2016, էջ 46):

ԿԵՆՍԱՎԷՊ, գ., (գրկն.), Անհատի կեանքը պատմող գեղարուեստական ստեղծագործություն // կենսագրությունը պատմող վեպ: ...դիցագներգությունը այս ձեւով կ'ըլլար տեսակ մը ամբողջական **կենսավեպ** (Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 28):

ԿԵՐՊԱՐԱՆԱԳԻՏԱԿԱՆ, ան., Երեւոյթի մը արտաքին կազմուածքի գիտական մանրակրկիտ քննություն, հետազոտություն // արտաքին կազմվածքի գիտական մանրակրկիտ քննությանն առնչվող: ...ծառերը աւելի քան իրական ներկայություն են, քանի

նախապես ուշադիր դիտուած են անոնք, եւ ուսումնասիրուած՝ անոնց կերպարանագիտական կառուցուածքը (Գ. Ք., 2009, էջ 214):

ԿԻԶԱԿԵԴՐՈՆ, գ., Մտաւոր կամ մարմնաւոր գոյութեան շարժիչ ուժը, կենդանութիւն տուող մասը՝ սիրտը // գոյութեան հիմնական շաժիչ ուժը: Իր էութեամբ անութեան կիզակեղրոնը հանդիսացող վերոնշեալ կարգախօսին հաւատարիմ՝ ՀՅԴ-ն 128 տարուան իր ազգային առաքելութեան ընթացքին ջանք չէ խնայած... (Հորգ., 4 Դեկտեմբեր 2018):

ԿԻՊՐԱՀԱՅՈՒԹԻՒՆ, գ., Կիպրոսի մէջ ապրող հայերը // կիպրոսաբնակ հայեր: Կիպրահայութեան մեծ մասը Առաքելական էր (Թ. Տ., 2007, էջ 87):

ԿԻՍԱՍՏՐԿՈՒԹԻՒՆ, գ., Այլ պետութեան հովանիին ներքոյ որոշ ինքնավարութիւն ունենալ // կիսանկախ: Հայաստան դարերու ստրկութենէ եւ կիսաստրկութենէ ետք անկախ է (Գ. Ք., 2009, էջ 22):

ԿԻՏԱՊԱՇՏ, ած., (գեղնկ.), Կիտապաշտութեան նկարելու եղանակը որդէգրած // գեղանկարչութեան այդ եղանակի հետևորդ: Ինչպէս որ ալ սակայն բացատրուի, բժապաշտ կամ կիտապաշտ արուեստը արդիւնքը կ'ըլլայ, խորքի տեսակետէն, մեր քաղաքակրթութեան հետ խզումի մը (Գ. Ք., 2009, էջ 223):

ԿԻՏԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ (pointillism), գ., (գեղնկ.), Նկարչուեան մասնաւոր եղանակ, երբ տարբեր գոյներու առանձին կէտեր դնելով ամբողջական պատկեր մը կը գծագրուի // գեղանկարչութեան ուղղություն: Թաշխամի կամ Բուանթիլիզմի (բժապաշտութիւն, կիտապաշտութիւն) նախատանները կարելի է գտնել աշխարհահռչակ նկարիչներու մօտ (Գ. Ք., 2009, էջ 222):

ԿՂՄԻՆՏԻՍՄ, ած., Կղմինտրէ պատրաստուած, շինուած // կղմինտրապատ: Երկյարկանի շէնք մըն է: Աղիւսէ, կղմինտրեայ երդիքով, ընդարձակ պատշգամով... (Լ. Կ., 1975, էջ 192):

ԿՇՌԱՅԱՆՔ, գ., (գրկն.), Ուրոյն կշռոյթով գրուած, յանգերու կշռութեային՝ եղանակային ձեւաւորում ունեցող քերթուած // ուրոյն չափով գրված և ձևավորված: Կշռայանգ գրուածքին մէջ անգամ կրնան որոշուիլ *սղիլն* ու *սղիլիսղը* (Լ. Է., 1919, էջ 32):

ԿՇՌՈՒԹԱԻՈՐՈՒՄ, գ., Ներդաշնակ, չափական ու վայելուչ դարձները // ներդաշնակ, վայելուչ դարձները: Եգիպտական ար-

ձաններու անթարթ ու միսթիք նայուածքները: Որմնանկարներու կրկնուող **կշռութաւորումը**: (Բ. Կ., 1975, էջ 280):

ԿՈԹՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Սովորական չափերը զանցող, դէպի կատարելութիւն ձգտող // կատարյալության ձգտում**: Կը ձգտի մանրամասնութեան զեղչումին՝ ի շահ պարզութեան, յստակ գիծերու, կշռոյթի, **կործողականության** (Բ. Կ., 1975, էջ 240):

ԿՈՒԿՈՒՄԻ, գ., **Թռչունի տեսակ // թռչնի տեսակ**: Ճնճղուկներն ու **կուկուսիները** կը ճեմեն լքուած տանիքին վրայ (Երթ, 2006, էջ 33):

ԿՈՒՍԱՎՃԻՏ, ած., **Կոյսի պէս անբիծ, մաքուր, պայծառ // անարատ**: Ծովուն մութ որոտումէն ծնած **կուսավճիտ** խօլաստեղծումներու ծիածաններ կ'աչէին, քթթելով, ու կը մարմրէին՝ հեռուն, մոյզ շարժումներու մէջ (Ին., 2014, էջ 62):

ԿՈՒՍՍԵՂԾ, ած., **Կուռք, պաշտամունքի առարկայ ստեղծող, կերտող // պաշտամունքի առարկայ ստեղծող**: Կռաստեղծ բանաստեղծը կը դառնայ կրօնը աստուածներուն (Գ. Պ. 4, 2014, էջ 193):

ԿՏԱԿԱՐԱՆԱԿԱՆ, ած., **Աստուածաշունչին յատուկ, անոր վերաբերող // աստվածաշնչային**: Տօնական օրերու առթիւ եթէ փորձենք մեր մաղթանքը խօսքով մը արտայայտել, պիտի ըսենք **կտակարանական** նշանաբանի մը թեթեւ փոփոխութեամբ... (Գ. Ք., 2009, էջ 54):

ԿՐԹԱՍԻՐԱՑ, ած., **Կրթութիւն սիրողները, կրթութեան յառաջդիմութեան նպաստող խումբ հոս (փխբ.) վարժարանի անուն է // կրթություն սիրող, կրթությանը միտված**: 1924-ին Այնթապահայերը կը հիմնեն իրենց **Կրթասիրաց** վարժարանը, Մարաշի հայերն ալ իրենց Մեսրոպեան վարժարանը՝ Սուրբ Խաչ եկեղեցիին կից (Թ. Թ., 2016, էջ 5):

ԿՐԿՆԱԿԻՕՐԵՆ, մկբ., **Կրկնապատիկ չափով, հոս՝ լիովին, լիովի // կրկնապատիկ**: Տարուած աշխատանքը **կրկնակիօրէն** կը մերկացնէ գործերը (Գ. Ք., 2009, էջ 297):

ԿՐԿՆԱՍԵԾԱՑԱՆՑ, գ., **Կրկնապատիկ ծաւալած, ընդլայնած ցանց // կրկնակի չափով ընդլայնված**: Քաղաքը ընդարձակ, անհուն, խոկացող ու մշտարթուն, շրջուն, զուգահեռ կամ իրարու մէջ մըտ-

նող զիծերու, հանգոյցներու, ցանցերու կրկնամեծացանց մը... (Գ. Պ. 2, 2012, էջ 81):

ԿՐՕՆԱՏՕՆ (mysteries), ած., **Հին Յունաստանի մէջ կարգ մը աստուածութիւններու նուիրուած պաշտամունքային ծեսեր, որոնք դարձած են բերմարուեստի հիմք // հին աստվածություններին նվիրված պաշտամունքային ծեսեր:** Թատրոնը, որպէս հնագոյն արտայայտութեան միջոց կրօնաստօներու (միտթերիա), ուղեկցած է մարդուն դեռ անյիշելի ժամանակներէ (Կ. Լէփ., *Հալէպ, 2010, էջ 5*):

Հ

ՀԱԳՆԵՐԳԱԿԱՆ, ած., **Հագներգու թեան, հերոսական, վիպասանական, դիւցազնական երգին նման, նոյն յատկութիւններով յօրինուած // դիւցազնական երգի նման:** Բոլորն ալ կ'ընեն անշուշտ իրենց կատարածին մասնակիութիւնը, ժամանակաւոր կառուցում մը ըլլալը, առաւել կամ նուազ յեղաստեղծական ու **հագներգական, ռապսոթիք...** (Գ. Պ. 3, 2008, էջ 20):

ՀԱԼԵՊԱՀԱՅ, ած., **Հալէպ քաղաքին մէջ ապրող հայազգի // Հալէպում ապրող հայ:** ...իրենց ներկայութեամբ նոր լիցք եւ աւիւն կը հաղորդէին **հալէպահայ** թատերական կեանքի (Կ. Լէփ., *Հալէպ, 2010, էջ 11*):

ՀԱԼԵՊԱՀԱՅՈՒԹԻՒՆ, գ., **Հալէպ քաղաքին մէջ ապրող բոլոր հայերը // Հալէպում բնակվող հայեր:** ...տարին մէկ կըրցած է իր ներկայութիւնը զգալի դարձնել **հալէպահայութեան** (Կ. Լէփ., *Հալէպ, 2010, էջ 18*):

ՀԱԿԱԱՄԵՐԻԿԵԱՆ, ած., **ԱՄՆ-ու եւ անոր վարած քաղաքականութեան դիմադրող, հակառակող // ընդդէմ Ամերիկայի:** Ան չէր կրնար չտեսնել թուրքերուն **հակաամերիկեան** աճող ասելութիւնը (Գ. Բ., 2009, էջ 105):

ՀԱԿԱԲԱՆՈՒԹԻՒՆ (oxymoron), գ., **Հոռտորական միջոց, որ հականիշ բառերու գործածութեամբ միտք մը արտայայտելուն կը ծառայէ // հոռտորական հնար:** Այս հակաբանութիւնը կը հաստատէ առանց միջուկի ու առանց պատմութեան հետք մը... (Գ. Պ., 2017, էջ 122):

ՀԱԿԱԳԵՐԶԳԱՅՆՈՒԹԻՒՆ, գ., (բժշկ.), Սուր զգայական ապրումները մեղմող՝ խաղաղեցնող // սուր զգայական ապրումները մեղմող: Որոշ դեղերու մասնաւորապէս՝ հակազերզայնութեան ու հակաճնշումաձութեան դեղերու օգտագործում (Հայր., 4 Մեպտեմբեր 2018):

ՀԱԿԱԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ, գ., Ամբաստանութեան հերքում // քանսարկության հերքում: Թաւալող ամբաստանութիւններու եւ հակազրպարտութիւններու անոպայ արշաւին տխուր ասպետները չեն տուժողը... (Գ. Ք., 2009, էջ 23):

ՀԱԿԱԻԹԻՀԱՏԱԿԱՆ, ած., (քրք.), Միութիւն եւ Առաջադիմութիւն կուսակցութեան սկզբունքները եւ գործունէութիւնը չընդունող, անոնց ընդդիմացող // առաջադիմական կուսակցության սկզբունքները չընդունող: Հաւանական ալ չեմ գտներ որ այնքան բացայայտ կերպով հակաիթթիհատականի վստահուէր նման կարեւոր պաշտօն (Ս. Ս., 2016, էջ 5):

ՀԱԿԱԻՍԼԱՍ, ած., Մահմետականութեան դէմ գործող, անոր դաւանած արժէքները ժխտող // իսլամի դէմ: ...վրէժխնդիր Աստուծոյ կամքին գործադրողը նկատուեցաւ Աստուածաշունչի այս տարօրինակ, փարթամ եւ հակաիսլամ քարոզիչներուն կողմէ (Գ. Ք., 2009, էջ 53):

ՀԱԿԱԶԵԻ, գ., Հակառակ, հակասական ձեւ ունեցող, հակոտնեայ // հակասական ձեւեր ունեցող: Կարելի է այսպէս շարունակել հակաձեւերը առանց յանգելու որեւէ կայուն հաստատումի (Գ. Պ., 2017, էջ 20):

ՀԱԿԱՍՄԿԱՐԴԻԶ, ած., Արեան թանձրացումը դադրեցնող, զայն բարակցնող // արեան թանձրացումը կասեցնող: Արեան հակամակարդիչ (anticoagulants) դեղերու անկանոն գործածութիւն (Հայր., 11 Հոկտեմբեր 2018):

ՀԱԿԱՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ, գ., Ուսմունքի, դասանանքի մը սկզբունքներուն եւ հանգանակին հակառակը պնդող ուսմունք, անոնց դէմ եղող // որևէ դավանանքի հակառակը պնդող ուսմունք: Դիոնիսեան հակավարդապետութիւնը կը սահմանէ էութիւնը իբրեւ զօրութեան կամք... (Գ. Պ. 4, 2014, էջ 48):

ՀԱԿԱՐԺԵԻՈՐՈՒՄ, գ., **Ընդունուած, եղած արժեքներուն հակառակը գնահատող // հաստատուն արժեքներին հակառակ:** ...կը բանէր իբրեւ կեանքին ի նպաստ բնագոյ մը եւ **հակարժեւորում** մը, զուտ գեղարուեստական, հակաքրիստոնէական (*Գ. Պ. 4, 2014, էջ 48*):

ՀԱԿԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆ, գ., **Հիմնովին իրարու հակառակ ըլլալը // իրարամերժութիւն:** Ներյայտօրէն ընդունուած ու ճշմարիտ կը նկատուի պղատոնականութեան հիմնական հակադրութիւնը՝ իտէալին ու իրականին **հակընդդիմութիւնը...** (*Գ. Պ. 4, 2014, էջ 86*):

ՀԱՄԱԾԻՐ, գ., **Ընդհանուր, բոլորին ընդգրկող շրջագիծ, սահման // բոլորին ընդգրկող շրջան:** Ան առած է այն ընդհանուր **համաձիբը** որ Յ. Օշական «Փարիզ դպրոցը» կը կոչէ (*Գ. Պ., 2017, էջ 55*):

ՀԱՄԱԿԱԶՄԱԻՈՐՈՒԻԼ, բ., **Կազմակերպուիլ, ձեւաւորուիլ իբրեւ մէկ ամբողջութիւն, համախմբուիլ // համախմբվել:** Եկան, **համակազմաւորուեցան** Եւրոպային մէջ... (*ՀՀ՝ Հ1, 20. Հոկտ. 2019*):

ՀԱՄԱԿԱՐԳԱՅՆԱՊԷՍ, մկբ., **Համակարգերուն յատուկ ձեւով, եղանակով // իբրև համակարգ:** Վարուծանի մօտ բանաստեղծութիւնը մշտապէս ու **համակարգայնապէս** կը սահմանուի որպէս մարմարի վրայ քանդակում (*Գ. Պ., 2014, էջ 165*):

ՀԱՄԱԿԱՐԳԱՅՆՈՒԹԻՒՆ, գ., **Փոխկապակցուածութիւն, կազմակերպուածութիւն // կազմակերպվածություն, փոխկապակցվածություն:** Գրքի **համակարգայնութեան** անգիտակ չի թուիր ըլլալ Գրիգոր, էջերու երկայնքին (*Գ. Պ. 3, 2008, էջ 51*):

ՀԱՄԱԿԵՐՊՕՐԷՆ, մկբ., **Պարագաներուն, հանգամանքներուն, յարմարելով // առկա հանգամանքներին համապատասխան:** Այս վիճակը գոհացուցիչ է տիրողին համար, ընդվզեցուցիչ՝ տիրուածներէն ցատում ու ընդվզում ունեցողներուն, եւ **համակերպօրէն** ընդունելի՝ խոհեմներուն համար (*Սհկ., 1966, թիւ 1, էջ 82*):

ՀԱՄԱՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ, ած., **Հայագիտութեան բոլոր ճիւղերը ընդգրկող // ընդհանուր հայագիտական:** Չըլլայ վերջն ալ համահայկական-համամարզական-համազաղութային-**համահայագի-**

տական համագումար գիտաժողովի պիտի մասնակցի... (Յակ. Պ., 2006, էջ 93):

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆԱՑՈՒՄ, գ., **Համայն հայութեան գիտակցութեան մաս դարձնելը // որևէ նպատակի՝ համայն հայության սեփականություն դարձնելը:** Հայրենիքի խորհրդայնացումը հարուածեց նպատակի **համահայկականացման** հոլովոյթը (Ազ., 28. 5, 2019):

ՀԱՄԱՀԻՒՍԵԼ, բ., **Միաուրել, երկու երեսոյթ կապել, շաղկապել // միավորել, շաղկապել:** Հայ Դատի յանձնախումբը գիտակից է, որ Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեանց անվտանգութիւնը այսօր **համահիւստած է** (Հորգ., 9 Հոկտեմբեր 2019):

ՀԱՄԱՁԱՅՆԱԿԱՆ, գ., **Միահամուռ, համընդհանուր համերաշխ // քաղաքական որևէ ուղղության համակարծիք:** Եթե աժան յաղթանակի տիրացած **համաձայնականները** ուզէին բան մը ընել իրենց «Փոքր դաշնակիցին» մատուցած մեծ ծառայութեան համար ... (Ա. Հ., 2014, էջ 116):

ՀԱՄԱՁԵՒԱԿԱՆ, գ., **Միաձեւ, միանման // միանման:** Նշանակութիւնը կը պատկանի կատարելիի կարգին եւ ոչ երբեք վարդապետական, հրամայական կամ **համաձեւական** ճշմարտութեան (Գ. Պ., 2017, էջ 30):

ՀԱՄԱՄԱՐՁԱԿԱՆ, ան., **Մարզական բոլոր ձեւերը ընդգրկող // մարզական բոլոր տեսակները ընդգրկող:** Չըլլայ վերջն ալ համահայկական-**համամարզական**-համագաղութային-համահայագիտական-համագումար գիտաժողովի պիտի մասնակցի ... (Յակ. Պ., 2006, էջ 93):

ՀԱՄԱՄԵՐԻԿԵԱՆ, ան., **Ամերիկայի բոլոր քաղաքացիներուն վերաբերող // ընդհանուր ամերիկյան:** Ուրիշ մէկ **համամերիկեան** մարդասիրական կազմակերպութեան պատրաստած տեղեկագիրները կը ծառայեն միայն աւելի մտահոգելու խոռվեալ հոգիները (Գ. Լ., 2009, էջ 39):

ՀԱՄԱՅԵՌ, ան., **Իբրեւ միացեալ մէկ ամբողջութիւն հիւստած՝ քով քովի շարուած՝ ընդելուզուած, առանց համակարգերու յատուկ աստիճանական կապը ունենալու // որպէս մէկ ամբողջություն կերտված:** Գրուածը ինք չունի համակարգային դրուածք, այլ ունի

համայեռ, այսինքն՝ համագոյ, ինքն իր օրէնքներով բանելու բնոյթ (Գ. Պ. 3, 2008, էջ 13):

ՀԱՄԱՅԵՌՈՒՄ, գ., Իբրեւ մէկ ամբողջութիւն հիստուած՝ առանց համակարգերու յատուկ աստիճանական կապը ունենալու // որպէս մէկ ամբողջություն կերտված լինելը: Համակարգ եւ համայեռում նոյն բաները չեն (Գ. Պ. 3, 2008, էջ 13):

ՀԱՄԱՅՆԱՎԱՐԱՄԻՏ, ած., Համայնավարութեան ուղղուածութիւն ունեցող, համայնավարութեան գաղափարակից, հետեւորդ / համայնավարության համակիր: Երեք մեծաւորներ երկրէն արտահանուած էին որպէս անբաղձալի կամ «համայնավարամիտ» (Գ. Պող., 1974, էջ 29):

ՀԱՄԱՅՆՔԱՅՆՈՒԹԻՒՆ, գ., Համայնքին, հանրութեան մէկ հատուածին յատուկ, վերաբերող // համայնքին՝ որպէս հանրության մէկ հատվածին վերաբերվելը: Աշխարհայնացում եւ համայնքայնութիւն վերացում կը թելադրեն աչքերս (Ս. Ս., 2001, էջ 38):

ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀ, գ., (քղք.), Որեւէ կազմակերպութեան կամ խմբակի մէկէ աւելի դէկավարներ // մէկից ավելի նախագահներից մէկը: Կողմերը հանդէս եկած են քաղաքական հոլովոյթի աշխուժացման օգտին, մասնաւորաբար՝ ԵԱՀԿ-ի Միսնքի խմբակի համանախագահներուն կողմէ մշակուած սկզբունքներուն շուրջ (Սգ., 15. 10. 2020, էջ 3):

ՀԱՄԱՇԱՐՔ, ած., Ընդհանուր շարք, կարգ // միաշարք: Մայթին վրայ կը նկատուին երկարատուն սպիտակ քղանցքով համաշարք տասնեակ մը այր մարդիկ (Ս. Ս., 2001, էջ 49):

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՅՈՒՄ, գ., Համաշխարհային դառնալը, առանձին աշխարհներէ, երկիրներէ ու անոնց սահմաններէն անդին մարդկութեան մէկ մասնիկը դառնալը // համընդհանրացում: Հայրի կ, աշխարհը դէպի տիեզերական-համաշխարհայնացում կ'երթայ (Երթ, 2006, էջ 94):

ՀԱՄԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ, գ., Բոլորի մէջ հաւասարապէս յառաջացած պատասխանատուութեան գիտակցում // պատասխանատվության միասնական գիտակցություն: Հայ տարագիրներուն մօտ արագօրէն կը յայտնուի մարդասիրական մէկ այլ գեղեցիկ

երևոյթ մը՝ հայրենակցական **համապարտութիւնն** ու փոխօգնութիւնը (*Երթ, 2006, էջ 165*):

ՀԱՄԱՎԱՐԱԿ, գ., (բժշկ.) **Մեծ թիւով մարդոց գոյութիւնը խաթարող վարակիչ հիւանդութիւն // մարդկութեան գոյութիւնը վտանգող վարակիչ հիվանդություն:** Համաշխարհային **համավարակի** առթած ճգնաժամին պատճառով, 2020 թուականի Ապրիլ 24-ի Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչումը տարբեր բնոյթ կրեց Գանատայի մէջ (*Հորգ., 4 Մայիս 2020*):

ՀԱՄԱՐԿԵԼ (ինտեգրել), բ., **Իրարու հետ սերտօրէն միացնել, համախմբել, կուռ միասնութիւն կազմել // ընդգրկել, ներգրավել:** Ինչպէ՛ս յաջողցնել արեւելահայ աշակերտին **համարկումը** արեւմտահայ աւանդական հոգեբանութեամբ յազեցած սփիւռքահայ վարժարաններուն մէջ (*Ն. Պ., Բանասէր, 24 Յուն. 2017*):

ՀԱՄԸՆԴԳՐԿՈՒՆ, ած., **Բոլորը, ամբողջը ընդգրկող // ամբողջը ընդգրկող:** Պէյրութը սահմանագծումը կ'ընկալէ **համընդգրկուն** հասկացողութեամբ... (*Ազ., 30. 5. 2019*):

ՀԱՄԸՆԹԱՑԱԲԱՐ, մկբ., **Զուգընթաց կերպով, զուգընթացօրէն // զուգընթաց:** Համընթացաբար, հասարակութեան աճող շահագրգռութիւնը եւ գործնական գնահատանքը ունեցան նաև իրենց ձգողականութիւնը... (*Գ. Ք., 2009, էջ 8*):

ՀԱՅԱԲՈՅՐ, ած., **Հայութեամբ եւ անոր ուրոյն նիստուկացով լեցուն // հայոց նիստուկացով հայտնի:** ...առաւօտուն այցելեց **հայաբոյր** Նոր Գիւղի ազգային կառոյցները (*Ազ., 3 Ապրիլ 2019, էջ 3*):

ՀԱՅԱԴԱՐԲՆՈՅ, գ., **Հայկական կրթարան // հայկական կրթօջախ:** Աւելի քան 700 աշակերտ հաշուող եւ 1047 շրջանաւարտ ունեցող այս **հայադարբնոցը**՝ Սփիւռքի մեծագոյն հայկական վարժարաններէն է (*Հորգ., 1 Նոյեմբեր 2019*):

ՀԱՅԱԿԵՐՏ, ած., **Հայաստեղծ, Իր հայրենիքի ու հայութեան քարգաւաճումին եւ զարգացումին նուիրեալ հայ կրթող, պատրաստող // որպէս հայ կրթող ու դաստիարակող:** ...զերագոյն նպատակը եղած է ազգային գաղափարախօսութեան հիմնադրոյթներով՝ աշակերտին **հայակերտ** դաստիարակութիւնը... (*Հորգ., 1 Նոյեմբեր 2019*):

ՀԱՅԵՐԷՆԱՅՈՒՄ, գ., Օտար լեզու է հայերենի թարգմանել, **հայացում // հայերեն թարգմանություն:** ...նախաձեռնած են գիրքին հայերենացման աշխատանքին (*Հայր., 4 Յունուար 2019*):

ՀԱՅՈՐՄ, գ., (փխբ.), Մարդորսորդություն՝ զայն այս կամ ուղղութեան կողմնակից դարձնելու միտումով // **հայ որսալը:** Նոյն մարդերու Հայորսի փորձերը՝ մակոյկով Վոսփորի կամ Ոսկեղջիւրի մէկ ափէն միւսը անցնողներու հանդէպ (*Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 39*):

ՀԱՅՐԵՆԱԿԵՐՏԻՉ, ած., Հայրենիքի պետութեան կայացումին ու զարգացումին անգնահատելի վաստակ ունեցող անհատ // **Հայրենիքի կայացմանը անգնահատելի վաստակ ունեցող անհատ:** երախտամոռութեան համազօր է նման վեհարժէք հայրենակերտիչի աւանդը թողուլ մոռացութեան քմայքին (*Հորգ., 20 Յունիս, 2018*):

ՀԱՅՐԵՆԱՀԱՆՈՒՄ, գ., Հայրենիքէն բռնի հանուած՝ վտարուած ըլլալ // **հայրենիքից բռնի արտաքսում:** Զանազանութիւն ունի՞ն հայրենահանման պատճառով կազմուած եւ դասական համարուող սփիւռքը, եւ ժամանակակից այլազան պատճառներով յառաջացած գաղթականութիւնները... (*Ազ., 2 Ապրիլ 2019*):

ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹԻՒՆ, գ., Հայրենիքի՝ պետականութեան, անկախութեան նպաստելը, անոնց տերը եւ պաշտպանը ըլլալը // **Հայրենիքի անկախության նպաստելը, նրան պաշտպան ու տեր կանգնելը:** ...իր ամբողջական ներուժը ի սպաս դրած է զանաատահայ համայնքի ազգային ինքնաճանաչման, հայրենատիրութեան... (*Հորգ., 4 Մայիս 2020*):

ՀԱՆԳԱՄԱՆԱԻՈՐ, ած., Ընկերութեան մէջ դիրք, պաշտօն ունեցող անձ // **դիրք, պաշտոն ունեցող անձ:** Զոր յօրինելին պարզ որքան արակէպ, **հանգամանաւոր** մարդերը, գրող ինչպէս ընթերցող (*Գ. Պ. 4, 2014, էջ 172*):

ՀԱՆԳՍԱՏՈՒՆ, գ., Ծերերու եւ կարիքաւորներու ապաստանարան, ծերանոց // **ծերերի և կարիքավորների ապաստան:** ...Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի Պիլէք **հանգստատան** դահլիճէն ներս գումարեց իր ամսական ժողովը (*ՆՄ., 9 Սեպտեմբեր, 2020*):

ՀԱՆՐԱԽՈՅՁ, գ., **Հանրային կարծիքի հետազոտություն // հանրային կարծիքի ուսումնասիրում:** Ճիշտ պատասխանները գտնելու համար մենք ալ մեր կողմէ սկսանք աշխոյժ **հանրախոյզ** (Գ. Ք., 2009, էջ 18):

ՀԱՍԿԷՏ, գ., **Աւարտակէտ, ուր մէկը պէտք է հասնի, ժամանէ // ժամանման կէտ:** Ապրէր էր անոր կերպին, առքին մէջ իբրէւ **հասկէտի** մը: (Գ. Պ. 1, 2012, էջ 250):

ՀԱՏԿՏՈՒՆ, մկբ., **Հատիկ-հատիկ, մէկիկ-մէկիկ // մէկիկ-մէկիկ:** -Ուրեմն դեռ յիշողնէր կան,- մրմնչեց տիկին Զօհրապ **հատկտուն**, ու սկսաւ հեկեկալ (Յակ. Ս., 2006, էջ 52):

ՀԱՏՈՒԱՏՄՈՒԼՈՒԹԻՒՆ, գ., **Կողմնակալ, աչառու ըլլալ, խտրական վարք ունենալ, ամբողջին տեղ մասնաւորի ներբողում՝ փառաւորում // մասնավորին հակված, այն փառաբանող:** Պիտի ուզէի, որ մեր գրողները բոլոր կուսակցութիւններու կողմէ ճանաչում գտնէին, առանց **հատուածամտութեան...** (Սիկ., 1966, թիւ 1, էջ 63):

ՀԱՐՍՏԱՂԵՏԱԿԱՆ, ած., **Մեծ հարստութեան տէր քաղաքական գործիչներու գործունէութեան վրայ հիմնուած պետական կառուցուածք, իշխանութիւն // մեծահարուստ քաղաքական գործիչների իշխանություն:** ...հարստապետական կարգերուն եւ ժողովուրդին միջեւ անջրպետի խորացման միտումները պարարտ ենթահող պատրաստեցին յեղափոխական միջոցներու դիմելու (Ազ., 3, Յունուարի, 2019):

ՀԱՐՅԱՐԿԵԼ, բ., **Հարցականի տակ դնել, թեական, վիճարկելի դարձնել // թեական, վիճարկելի դարձնել:** Մտքին մէջ գոյակցող երկու լեզուները կը բանան միջակայքի տարածքը երկու այլութիւններու, որոնք ոչ միայն կը մրցին իրարու հետ, այլեւ **կը հարցարկեն**, կը վիճարկեն իրար (Գ. Պ., 2017, էջ 19):

ՀԱՐՅԱՐԿՈՒՄ (contestation), գ., **Հարցականի տակ դնելը, վիճարկելը // վիճարկում:** ...սփիւռքեան գոյութիւնը վիճարկումքնադատութեան, **հարցարկումի** եւ վերապրումի կացութիւն մըն է՝ մշտապէս ենթակայ անհետացման սպառնալիքին (Գ. Պ., 2017, էջ 43):

ՀԵԳԼԱԻՈՒՆ, ան., **Հեգնանք յիշեցնող, քիչ հեգնական // հեգնական:** ...եւ մէկէն, հանդարտ, անխռով, **հեգնաւուն** ժպիտ մը շրթներուն ծայրը կ'երեւի (Գ. Պ. 2, 2012, էջ 92):

ՀԵԹԱՆՈՍՄԱՎԱՅԵԼ, ան., **Հեթանոսականին պատշաճող // հեթանոսաբար, հեթանոսին վայել:** Ահա առտնին կեանքերէն անկախ **հեթանոսավայել** պատառիկներ (Լ. Է., 1919, էջ 68):

ՀԵՇՏԱՆՔԱԲՈՒՐՄՈՒՆՔ, ան., **Վայելք, բերկրանք յարուցող բոյր, հոտ // բերկրանք, վայելք հարուցող:** Իմ ներաշխարհի բիլ խորանին մէջ /**Հեշտանքաբուրմունք** / Յուրթի ցօղ կ'իջնէ... (Երթ, 2006, էջ 88):

ՀԵՇՏՈՏ, ան., **Վայելք, հաճոյք պատճառող // հաճոյք պատճառող:** Հաճոյքը, ճոխութիւնը, հեռաւոր տարածութիւնները կը սիրէ եւ **հեշտոտ** է անշուշտ (Բ. Կ., 1975, էջ 228):

ՀԵՌԱՎԱՅՈՒԱԾ, բ., **Հեռացած, օտարացած, անմիջականութիւնը կորսնցուցած // հեռակա, օտարացած, ոչ անմիջական:** Կարծես սեպհական եղեռնը մնար տեղ մը անյայտ, զոհերը հարուածող, բայց **հեռակայուած**, չընդունուած. Չներատուած (Գ. Պ. 4, 2014, էջ 172):

ՀԵՌԱԶԳԵԼ, բ., **Դէպի հեռուն արձակել, տարածել, բանի մը ազդեցութիւնը խորացնել // տարածել, խորացնել:** ...կը բացուի ծառերուն յօրինած ստուերոտ ենթաշխարհը որ զով խորութեան մը տպաւորութիւնը կը **հեռաձգէ** (Գ. Պ. 1, 2015, էջ 80):

ՀԵՌԱԶԳՈՒՄ, գ., **Դէպի հեռուն ձգելը, տարածելը // դէպի հեռուն ձգելը, տարածելը:** Մարդկային մտքի **հեռաձգումն** ր... (Գ. Պ. 4, 2014, էջ 88):

ՀԵՌԱՇՆԶԵԼ, բ., (բնաս.), **Հեռազգալ // հեռազգալ:** ...որու անձուկին դառնութիւնն աղօտապէս կը **հեռաշնչեմ** արդէն, բայց որու հեռաւորութիւնը հրճուանքով կը զգամ դեռ (Ին., 2014, էջ 52):

ՀԵՏԱԳԾԵԼ, բ., (գրկն.), **Երեւոյթի մը անցած ուղին զարգացման հանգրուանները երեւան բերել // անցած ուղին, այլև զարգացման հեռանկարները կանխատեսել:** Առաջադրանքը ունի զոյգ նպատակ. նախ **հետագծել** տուեալ շրջանի մը գրականութեան պատմութիւնը... (Գ. Պ., 2017, էջ 41-42):

ՀԵՏԱԽԱՂԱՂ, ան., Փորձառություն մը (խառվիչ, արկածալից) **յաջորդող խաղաղ շրջան, ուր կ'ենթադրուի փորձառության խաղաղ ընկալումը, վերիմաստատումը // վերապրած փորձառությանը հաջորդող խաղաղ շրջան:** Ցանցարկումի մեկնակետին կը զետեղեմ շփումը, հանդիպումը «անցեալ» փորձառության մը **հետախաղաղ** շարունակումով ներկայի ստանձնումին մէջ (Գ. Պ., 2017, էջ 9):

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Ուշագրաւ, հետաքրքրաշարժ ըլլալը // ուշագրաւ:** Երբ նիւթ մը իր մարդկային հոգեբանական գիծով, եւ ոչ թէ պարագայական **հետաքրքրականութեամբ**, կը պահէ յաւիտենական ճշմարտութենէն գէթ մասնիկ մը (Գ. Ք., 2009, էջ 124):

ՀԵՐԹԱԲԱՐ, մկբ., **Մէկ առ մէկ, կարգ առ կարգ, ըստ դասատրութեան, յաջորդականութեամբ // շարունակաբար, կանոնավորապէս:** Սիւննեան իր այդ շարքը կը պատրաստէր ու կը սկսէր **հերթաբար** հրատարակութեան յանձնել երբ տակաւին հազիւ 25-26 տարեկան երիտասարդ մըն էր (Լ. Շառ., 2016, էջ 9):

ՀԻԱՍԱՐԿՍՈՒԼ, բ., **Բանով մը զմայլելէ, սքանչանալէ փշաքաղուի, սարսուռ զգալ, յափշտակութիւն // հիացմունքից սարսուռ:** ...Սողոմոնեան շքեղանքի ու Կրետսեան պերճանքի տեսարանին առջեւ կը **հիասարսիմ** ու շլացած աչքերով կը դանդաշեմ (Լ. Շառ. 1, 2016, էջ 27):

ՀԻԹԻԹԱԳԷՏ, գ., **Հիթիթներու (Hittites) պատմութեան՝ նիստուկացի, գրականութեան մասնագէտ // հեթիթների պատմության մասնագէտ:** Էմիլ Ֆորրեր, գերման հռչակաւոր **հիթիթագէտը**, ասկէ մօտ կէս դար առաջ հրատարակած է Հիթիթ կայսրութեան մէջ պաշտոնող դից մէկ ցանկը (Հայ. 2, 1969, 5-րդ համար, էջ 32):

ՀԻՄՆԱԲԱՌ, գ., **Նիւթի մը ծիրեն ներս առանցքային կարեւորութիւն ունեցող բառ // կարևորվող բառ:** Վերի «ոճիր»էն ետք՝ եղեռնը, որ կու գայ աւելնալ այն քանի մը **հիմնաբառերուն**, որոնք ընդգծուեցան մինչեւ հիմա (Գ. Պ. 4, 2014, էջ 138):

ՀԻՄՆԱԿԱՆԱՊԷՍ, մկբ., (փոխ.), **Հիմնական կերպով, հիմնաւորապէս, հոս՝ Էական, Էականօրէն // հիմնավորապէս, Էականորէն:** Ըսել չեմ ուզեր որ ամեն օտարական գրականութիւն կ'ընէ,

այլ միայն եւ **հիմնականապէս** կը բախի երկուութեան... (Գ. Պ., 2017, էջ 18):

ՀԻՄՆԱՆԻԹ, գ., **Երեւոյթի մը բաղադրիչ տարրերուն մէջ ամենաեականը // ամենակարևորը, ամենաեականը: Հիմնանիւթը «օրուան տպաւորութիւններն» եւ միայն...** (Ս. Ա., 2016, էջ 28):

ՀԻՄՆՈՂԱԿԱՆ, ած., **Կառոյցի մը հիմքը, սիւնը հանդիսացող, հաստատութեան մը կայունութիւնը՝ ամբողջութիւնը եղող // արմատական:** Սակայն՝ յօդուածի ամբողջ տրամաբանութիւնը կը դեգերի հերոսի **հիմնողական** հանգամանքին շուրջ... (Գ. Պ. 4, 2014, էջ 113):

ՀԻԻՂԱԻԱՆ, գ., **Հողաշէն, փայտածածկ կամ թիթեղածածկ խրճիթներէ բաղկացած աւան կամ թաղամաս // փոքրիկ տնակներից կազմված թաղամաս:** ...հազարաւորներու նման իր ընտանիքն ալ ապաստան գտաւ Հալէպ, հայկական **հիւղաւանին** մէջ (Լ. Շաւ., 2016, էջ 19):

ՀԻԻՂԱԻԱՆԱՅԻՆ, ած., **Տնակներէ կազմուած թաղամասերուն վերաբերող, անոնց յատուկ // փոքրիկ տնակներից կազմված թաղամասին վերաբերող:** Վերոնշեալ դասուն կը պատկանին Սարուխանի «Ձեզոք»-ները, «Օտա րը, Ա իս» եւ նման բնոյթով շարքերը, Հայաստան ներգաղթելու համար պերճ կեանքի «նուագագոյն պահանջ» դնող թիթեղածածկ տնակներու բնակիչներուն **հիւղաւանային** մտայնութիւնը... (Գ. Ք., 2009, էջ 126):

ՀՄԱՅԱԶՐԿՈՒՄ, գ., **Երեւոյթ մը իրեն յատուկ թովչանքէն զրկելը, անոր կախարդական եւ միաթիք շղարշը խլելը // թովչանքից, գրավչութիւնից զրկելը:** ...ինչ որ կը կոչուի ընդհանրապէս աշխարհի **հմայագրկո՛ւմը**, սկսած էր շատոնց... (Գ. Պ. 4, 2014, էջ 7):

ՀՆԶԵՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., (փխբ.), **Պահանջքը, պատգամը, հոս՝ ուշագրաւ, իրայատուկ ընողը // ուշագրաւ:** Սարուխանի գծային տիպարը այնքան հիւթեղ, կենդանի, ցայտուն եւ ամբողջական է, որ ունի իր ուրոյն **հնչեղականութիւնը** (Գ. Ք., 2009, էջ 138):

ՀՈԳԵԳԱԼՄՍԱԿԱՆ, գ., **Առաքելական եկեղեցիի կողմէ չընդունուած քրիստոնէական դաւանանք // աղանդ:** Այդ բողոքական տարբեր աղանդներէ, **Հոգեգալստականներ**, Վերածնեալներ, Ժո-

դովականներ, եւ այլն, կազմուած ամեհի զանգուածը... (Գ. Ք., 2009, էջ 49):

ՀՈԳԵԽԱՌՆՈՒԹԻԻՆ, գ., **Զանազան յոյզերու շփոթէն յառաջացած ներքին՝ հոգեկան խռովք ու վրդովում // հոգեկան խռովք:** ...տողերը **հոգեխառնութեան** մը պատկերաւոր արտայայտութիւնն են (Մ. Պ., էջ 41):

ՀՈԳԵԽՈՅԻԶ, գ., **Հոգին վիրաւորող, նեղող, վիշտ պատճառող // հոգին խռովող, վիշտ պատճառող:** Անոնք կը սերին **հոգեխոցիչ** կրկնակի փորձառութենէ մը... (Գ. Պ., 2017, էջ 41):

ՀՈԳԵԿԵՐՏՈՒՄ, գ., **Մարդու հոգիին կերպաւորումը՝ անոր մարդկային արժէքներով դաստիարակելը // մարդկային վեհ արժէքներով դաստիարակում:** Երբ կը տեսնեմ, որ եօթը տարուան տազնապէն ետք այս դպրոցը՝ ճեմարանը, կը շարունակէ **հոգեկերտումի**, հայակերտումի, մարդակերտումի իր առաքելութիւնը... (Ազ., 3 Ապրիլ, 2019, էջ 3):

ՀՈԳԵՃՆՇՈՒՄ, գ., **Հոգեմտաւոր տազնապ, լարուածութիւն // հոգեկան տազնապ:** ...իր մէջ նոր **հոգեճնշումներ** կամ թաքուն բարդութիւն չէ յառաջացուցած... (Գ Ք, 2009, էջ 145):

ՀՈԳԵՍՏԱԻՈՐ, ան., **Հոգեբարոյական կեանքին եւ մտաւոր գործունէութեան վերաբերող // հոգևոր և մտավոր գործունէությանը վերաբերող:** ...զանոնք նկատել ժողովուրդի կեանքի ու **հոգեմտաւոր** գործունէութեան արտայայտութիւններէն մէկը (Յ. Չ., 2005, էջ 10):

ՀՈԳԵԶՂԱՅԻՆ, ան., **Մարդու զգացական կեանքին եւ ջիղերու ցանցին վերաբերող // զգացական կյանքին վերաբերող:** Մեր քաղաքակրթութիւնը եւ մեր **հոգեջղային** խանգարումները կը բուժուին... (Բ. Կ., 1975, էջ 250):

ՀՈԾՈՅԹ, գ., **Խիտ, հարուստ, ստուար // առատ, հարուստ:** Գիտերու **հոծոյթը**, անակնկալներու ճոխութիւնը եւ մանաւանդ այն ոգեկոչողի դերը ուր քերթողը նորագոյն գրականութեան մէջ իր որոշ անկիւնը կը ճշդէ (Լ. Է., 1919, էջ 50):

ՀՈՂԱԶՐԿՈՒՄ (déterritorialisation), գ., (մարդաբանութիւն) **Հողէ, հայրենիքէ զրկուիլը, նաեւ՝ մշակութային կապերու՝ առնչութիւններու սկարանալը // հողից, հայրենիքից զրկելը:**

Սփւռքեան գոյութիւնը բացուիլ մըն է դէպի այլութիւն, տարբերութիւն, եւ **հողագրկում** մը... (Գ. Պ., 2017, էջ 43):

ՀՈՅԱՄԱՐՄԻՆ, գ., **Շքեղ մարմին, արտաքին ձեւ ունեցող // շքեղ արտաքին ունեցող**: Եւ դարձեալ ծառին, օդին մէջ թեւակարկառ, իր մանրատերեւ սաղարթին փափկութեան մէջ մշտառուգորէն **հոյամարմին**, տեսարանին իշխելու խրոխտ հաճոյքն ունէր (Բն. 1, 2014, էջ 336):

ՀՈՅԱՍՏԵՂԾ, ան., **Հոյակերտ, վեհաշուք, շքեղ բաներ ստեղծող, արարող // հոյակապ, վեհաշուք**: «Նեմեսիս»՝ վրէժի եւ արդարութեան արձանն է, զօր Վարուժան՝ Միքէլ Անճէլոյի մը **հոյաստեղծ** քանդակաշինութեամբ կերտեր է (Լ. Է., 1919, էջ 29):

ՀՈՎԱԾԱՂԻԿ (anemone) գ., **Հողմածաղիկ // հողմածաղիկ**: Այս մահը եւ այս վերընձիւղումը Ադոնիսի մը մահուան ու **հովածաղիկի** վերածումին նման գեղեցիկ... (Գ. Պ. 4, 2014, էջ 125):

ՀՊԱՐՏԱՌԻԹ, ան., **Հպարտանալու շարժառիթ ստեղծող պարագայ, դէպք // պարծենալու առիթ**: Վարդանանց պատերազմը, որ ազգային **հպարտառիթ** խորհրդանիշը դարձած է այս իրողութեան (Գ. Ք., 2009, էջ 22):

ՀՌԵՏՈՐԱՇՈՒՆԶ, ան., **Ճարտասանական ոգիով արտասանուած խօսք, յափշտակութեամբ ըսուած խօսք // ոգևորված: ...հռետորաշունչ** դիմանկար մը կը յօրինեն, կը պանծացնեն ու կը չքացնեն (Բագ., թիւ 2, 2019, էջ 8):

ՀՄԿԱՅԱԳՐՈՂ, գ., **Վիթխարի, դիւցազնական յարձակում, արշաւ // հուժկու հարձակում**: Կարծէք «եղեռնի փորձառութիւնը» մղէր բանաստեղծը աւելի խորապէս թափանցելու խօսքի խորուհրդին, առեղծուածին կամ **հսկայագրոհին** (Գ. Պ. 4, 2014, էջ 205):

ՀՐԱԳԻՐ, գ., **Կրակով, աւիւնով, կիրքով առլեցուն գիր կամ խօսք // կրակով առլեցուն խօսք**: Մոմերէ բաղկացած **հրագիր** կը յուրի՞ առ աշխարհ (Երթ, 2006, էջ 96):

ՀՐԱՇԱԳՐՈՂ, ան., **Հրաշալի գրող, ստեղծագործող, 2. Հրաշքներ պատմող // սքանչելի ստեղծագործող**: Մեր նորագոյն բանաստեղծներուն ամենէն ազգայինը, միակ **հրաշագրողը** նոյն սեռին որ տրուած է իրեն: (Լ. Է., 1919, էջ 44):

ՀՐԱՅԱՆԱԶԱՐԿՈՒԹԻՒՆ, գ., **Հրացանաձգութիւն, կրակոց // հրավառություն:** Մայիս 3-ի **հրացանազարկութիւնը**՝ երեւան կը բերեն նկարչին ըմբոստ, մոլեգին խառնուածքը (*Բ. Կ., 1975, էջ 79*):

ՀՐԹԻՌԱԿՈՄԵԼ, բ., (ռազմ.), **Հրթիռներով հարուածել, ուրակոծել // ուրակոծել:** ՄԱՆԱ յիշեցուց, որ բանակը մէկ օր առաջ Իտլիայի հարաւային գիւղական շրջանին մէջ **հրթիռակոծելով** ոչնչացուցած էր Ժապիհաթ Նուսրայէն զինեալ խումբեր... (*Ազ., 14 Մարտի 2019*):

Հրթիռատարափ, գ., (ռազմ.) **Թշնամիին ուժգին հարուածելը, անոր վրայ տեղատարափ անձրեփ նման արկեր թափելը // աննախադեպ քանակով արկեր թափելը:** ...ատրայէճանական հրթիռակայաններու ամէնօրեայ **հրթիռատարափներուն** տակ կքած եւ փլատակի վերածուած էր Ստեփանակերտի աւելի քան կէսը (*Հորգ., 8 Մայիս 2020*):

ՀՐՃՈՒԵՑՈՒՑԻԶ, ած., **Ուրախացնող, բերկրանքի, ցնծութեան առիթ հանդիսացող // բերկրալի:** Հետեւաբար այս հեռաձայնը որքան անակնկալ՝ նոյնքան եւ **հրճուեցուցիչ** էր (*Գ. Բ., 2009, էջ 110*):

ՀՐՈՒՑ, ած., **Հրային. կրակէ գոյացութիւն ունեցող, հրեղէն // Հրեղէն, կրակոտ:** - Ես կը դողամ խենթութեան նոր սարսուտով մը **հրուտ** (*Հայ., թիւ 11 (119), Սեպ., 1932, էջ 86*):

2

ԶԱՅՆԱԳՐԵԱԼ, բ., **Չայնագիր մեքենայի վրայ արձանագրուած, ձայնագրուած // ձայնագրված:** ...**ձայնագրեալ** պատարագամատոյցներ ժամերգութեան բնագիրով եւ թարգմանութեամբ (*Գ. Բ., 2009, էջ 80*):

ԶԱՅՆԸՆԴԼԱՅՆԻԶ, գ., **Կրկնութեամբ՝ ձայնի ալիքները աւելի հեռուն սփռող, անոնց տարածման ծիրը ընդաձակող գործիք // ձայնի ալիքները ընդաձակող:** ...**ձայնընդլայնիչի** մը նման կ'ընդլայնէ անոր արձագանքը մեր մէջ (*Գ. Պ. 4, 2014, էջ 25*):

ԶԵՌԱՍԾՈՒԱԾ, ած., **Աճպարարական, կախարդական երանգ ունեցող, փոփոխուած, անիրական // վարժեցված:** Աշխարհը վերածուեր է աղմկոտ ցանցի, տեղեկութեան, քիչ թէ շատ **ձեռնա-**

ծուած, խոտորուած, ներքին լուրեր, արտաքին լուրեր (*Գ. Պ. 1, 2012, էջ 268*):

ՁԵՌՆԱՆԻՇ, գ., **Ձեռքնաշարժումով արտայայտուած իմաստ // ձեռքի շարժումով արտահայտած իմաստ**: Նշանակութիւնը **ձեռնանիշէ** մը աւելի բան չէ: (*Գ. Պ. 4, 2014, էջ 7*):

ՁԵԻԱԶԱՆ, ած., **Ձեւերու, տեսակներու հարստութիւն, զանազանութիւն ունեցող // տարբեր ձևեր ունեցող**: ...երեւան կու գայ նոյն իսկ այլազան եւ **ձեւազան** էջերու մէջ... (*Լ. Է., 1919, էջ 49*):

ՁԵԻԱԶԱՆՕՐԷՆ, մկբ., **Տեսակներու հարստութիւն, զանազանութիւն, օրինակելի՝ հարուստ բազմաձեւութեամբ // ձևերի բազմազանությամբ աչքի ընկնող**: Այն հատորը գոր կու տայ նախ ուշագրաւ է **ձեւազանօրէն**, հորիզոնները աւելի լայն են հիմա (*Լ. Է., 1919, էջ 53*):

ՁԵԻԱԿԵՐՏԵԼ, բ., **Յօրինել, քանդակել, ստեղծագործել // հորինել, ձևավորել**: Նկարիչի՛ն համար, որ **ձեւակերտեր** էր հրաշագեղ այդ դիմանկարը (*Օ. Ու., 1992, էջ 60*):

ՁԻՆԱՍՏՕՐՈՒՄ, ած., **Ձիւնանման սպիտակամօրուք ունեցող // ճերմակամօրուք**: **Ձիւնամօրու**ս դարաւոր ծերունին խռովեր է այս տարի (*Ս. Ս., 2001, էջ 25*):

ՁՈՐԱԽՈՐՇ, գ., **Բնական եղանակով ձորերու մէջ առաջացած բացուածքներ՝ խոռոչներ, ուր մարդիկ կրնան ապրիլ, քարայր, քարանձաւ // ձորերի մէջ ծվարած փոսեր**: Իր աշխարհը կը տարուբերի կատարներու եւ անարեւ **ձորախորշերու** մէջ (*Գ. Բ., 2009, էջ 160*):

Ճ

ՃԱԿԱՏԱԳՐԱԿԻՑ, գ., **Ճակատագիրով կապուած իրարու, բախտակից, նոյն ճակատագիրը ունեցող // Նոյն ճակատագիրն ունեցող**: Կը թուի թէ այս մէկը եւս Պէյրութի անդրանիկ տպագրութեան **ճակատագրակից** եղաւ՝ մնալով գրեթէ անարձագանգ, գեթ գրական մամուլին մէջ (*Լ. Շառ., 2016, էջ 59*):

ՃԱԿԱՏԱԳՐՈՐՈՇ, ած., **Ճակատագրական, բախտը՝ ապագան վճռող պահ // բախտորոշ**: ...պետութիւնը համավարակի ճգնաժամի ծիրէն ներս իր ամէնէն **ճակատագրորոշ** փորձութեան հանգրուանը կ'անցնէ (*Ազ., 13 Յունիս, 2019*):

ՃԱՆՃԱՅԱՆՅ (ՃԱՆՃԱՐԳԵԼ) (nets), գ., **ճանճերու (եւ այլ միջատներու) բնակատեղի մտնելուն արգելք եղող ցանց // ցանց՝ ճանճերի ու այլ միջատների դեմ:** ...հեռու մնալ աւազանճանճերէ, գործածել **ճանճացանցեր-ճանճարգելներ,** ճանճասպան դեղեր... (Հայր., 23 Յունուար, 2019):

ՃԱՊԿՈՒՄ, գ., **Գալարում, պրկում, լարում: (Փոխ.) մորմոք, կսկիծ, ներքին լարում ու ցաւ // լարվածություն, ներքին լարում:** ...վստահ կրնանք ըլլալ, առանց **ճապկումներու** անձնատուր ըլլալու, որ կը յանգինք մեր «ոսկեղենիկ»-ին սպասարկուներէն Շաւարշ Միսաքեանի տարազին... (Բազ., թիւ 4, էջ 3):

ՃԱՌԱԳԱՅԹԱԽՈՅՁ, ան., **Մարդոց պայուսակներուն, գրքպաններուն պարունակութիւնը զննող, քննող մասնաւոր ճառագայթ // ճառագայթներով ստուգվող:** Մարդիկ վարժուեցան ոտաբոյիկ անցնելու **ճառագայթախոյզ** կամարներու տակէն (Գ. Բ., 2009, էջ 69):

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԻԼ, բ., **Կերտուիլ, յօրինուիլ // կերտվել, կառուցվել:** Մտածուած ու յստակ կառուցումն է որ ՇՂԹԱՅՈՒԱԾ-ին կու տայ ամբօրէն **ճարտարապետուած** երկի մը յատկանիշը (Սհկ., 1966, թիւ 1, էջ 78):

ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆԱՅՈՒՄ (industrialization), գ., **ճարտարարուեստի, արդիւնաբերութեան աննախընթաց զարգացում եւ գործունէութեան ծաւալում // արդյունաբերության աննախադեպ զարգացում:** Ժողովրդավարութեան նուաճումներէն են **ճարտարարուեստականացումը** եւ զանգուածային մտածողութիւնը (Բ. Կ., 1975, էջ 169):

ՃԵՄԱՍՏԱՆ, գ., **Զբօսնելու, քալելու տեղ, տարածութիւն // ճեմելու, զբօսնելու վայր:** Կամարները, **ճեմաստանը,** ծաղիկներու արահետները, սանդխաւոր այգին եւ մարգաստանը (Բ. Կ., 1975, էջ 266):

ՃՇՄԱՐՏԱԽՆԴՐՈՒԹԻՒՆ, գ., **Փաստերու ստուգումին հետամուտ ըլլալը, անոր ձգտիլը // փաստերի ստույգությանը ձգտելը:** Կարելի չէ ըսել որ յիշողութիւնները, իրենց անաւարտութեամբ իսկ, զերծ են այս կիրքէն, որուն անունը **ճշմարտախնդրութիւն** է (Ս. Ա., 2016, էջ 36):

ՃՈՒՍԱԳՆԱՑ, ան./մկբ., **Շքեղ քալուածք ունեցող // շքեղ քայլվածքով:** Շքեղաքայլ, **Ճոխագնաց**, մանրաքայլող / Հոգիքըմ ի մարմնէ քակող (*Համ.*, 2007, էջ 210):

Մ

ՄՄԳԼՑՈՂԱԿԱՆ, ան., (փխբ.), **Խռովութեան, յուզումի առիթ տուող // երկրի քաղաքական իրավիճակը սրող:** ...յայտարարութիւններն ու պատրաստուած լրատուութիւնները իրենց կարգին կը նկատուին **մագլցողական** կեցուածքներ եւ անոնք կը սպառնան քաղաքացիական անվտանգութեան... (*Ազ.*, 7 *Օգոստոս*, 2019):

ՄՄԳՆԻՄԱԹՈՎ, ան./մկբ., **Թովելով, դիւթելով մագնիսի ձգողական ազդեցութիւն ունեցող // մագնիսի պէս ձգելով:** Կարկուրային պէս Արգոն Ոսկեգեղեմին ի խնդիր, / **Մագնիսաթով** խիզախումն իր ցըռուկէն կ'ընդունի (*Գ. Կ.*, 1977, էջ 26):

ՄԱԹԵՄԱ-ԵՐԿՐԱԶՍՏՄԱՓԱԿԱՆ, ան., **Թուաբանութեան երկրաչափական ճիւղին վերաբերող // ճշգրիտ:** Ճարտարապետութիւնը արուեստներուն ամենէն տրամաբանականը, **մաթեմա-երկրաչափականը**, հաւասարակշռուածը (կարելի է դեռ երկարել ստորոգելիներու շարքը) է (*Բ. Կ.*, 1975, էջ 254):

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ, ան., **Ննջեցեալի կեանքի եւ գործունէութեան, յիշատակին գրուած յօդուած, դամբանական, մահախօսական // մահախոսական:** Իր **մահագրական** յօդուածին մէջ Յակոբ Տէր Յակոբեան կը թելադրէ... (*Ա. Ա.*, 2016, էջ 25):

ՄԱՀԱՑՈՒՇ, գ., **Մահասարսուռ յիշեցնող // մահ հիշեցնող:** 1915-ին, տեղահանութեան **մահայուշ** թուականէն ճիշդ տասը տարի յետոյ (*Գ. Պող.*, 1974, էջ 24):

ՄԱՀԱՊԱՐ, գ., **Խօլ ցնորական՝ անգիտակից պար // ցնորական, վերջին պար:** Իր դատական զանեշտի եւ այլ անվերջ խեղկատակութիւններու ենթախորքը վիուկներու, ոգիներու **մահապարն** է (*Գ. Բ.*, 2009, էջ 64):

ՄԱՆԻԷՐԻԶՄ (mannerism), գ., (արվ.), **Վերածնունդի վերջի շրջանին Եւրոպայի մէջ ի յայտ եկած արուեստի (նկարչութիւն, քանդակագործութիւն, ճարտարապետութիւն) ոճ // արվեսի ոճ:**

...ժամանակի ընթացքին տեսանելի կ'ըլլար նաեւ որոշ **մանիւրիզմ** մը (Գ. Բ., 2009, էջ 295):

ՄԱՆՐԱՆԿԱՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ (miniaturisme), գ., (արվ.), **Նկարչական ոճ. մանրապատկերի պաշտամունք // մանրանկարչական ոճի պաշտամունք:** Շուշանեանի տուած իր հարցազրոյցին մէջ կը հաստատէ թէ «ղէմ է իրապաշտութեան» եւ հակում ունի դէպի «Փիեռ Լուիսի Պերճապաշտութիւնը», Անատոլ Ֆրանսի տպաւորապաշտութիւնը եւ Ժիլ Բընարի **մանրանկարապաշտութիւնը** (Գ. Պ., 2017, էջ 131):

ՄԱՆԸՆԹԵՐՑՈՒՄ (close reading), գ., (գրկն.), **Մանրագննին ընթերցում // Մանրակրկիտ, ուշադիր ընթերցում: Մանրընթերցում** թէ համընթերցում մէկ թեմա-հարցի թէ տասնամեակի արտադրութեան ենթարձակ քննութիւն կը պահանջեն... (Գ. Պ., 2017, էջ 12):

ՄԱՍԻՍԱՊԱՇՏ, ած., (բնստ.), **Մասիս լեռ՝ Արարատը կաթոգին սիրող // Մասիսը ջերմագին սիրող:** ...անոր՝ որ դարձած այլեւս **Մասիսապաշտ**, պարտականութիւն կը նկատէ իր իւրաքանչիւր չափածոյին մէջ յիշել մեր պաշտամունքին առարկայ գերեալ լեռը (Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 77):

ՄԱՍԻՍԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ., (բնստ.), **Արարատը կաթոգին ու խորապէս սիրելը, զայն ասուածացնելը // Մասիսը պաշտելը:** ...անդրադարձած է Շիրազի այս ոգիին ու սեւտերուն **Մասիսապաշտութեան** (Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 77):

ՄԱՍՆԱԻՈՐԵԱԼ, ած., **Մասնաւոր, յատուկ // խիստ մասնավոր:** Այս բարձրացումը ունի **մասնաւորեալ** նշանակութիւն մը (Գ. Պ. 4, 2014, էջ 146):

ՄԱՏԱՂՕՐՀՆՈՒԹԻՒՆ, գ., **Որեւէ բարի նպատակով գոհուած կենդանիի օրհնութեան ծէսը // որպէս մատաղ մորթված կենդանու օրհնությունը:** Որոշուեցաւ որ ժամ առաջ նիւթական մեծ բաց ունեցող վարժարաններու համար քայլեր առնուին եւ տարեկան **մատաղօրհնութիւններէ** եւ Սիրոյ Սեղաններէ ետք պիտոճէի բացը հակակշռի տակ առնուի միասնական օժանդակութեամբ (Ն. Մ., 30 Սեպտեմբեր, 2019):

ՄԱՐԳՐՏՈՒՈՂ, ած., **Մարգարիտի նման փայլող՝ ողորկ // մարգարտացող:** Ծովուն վիհերէն **մարգրտուող**, փրփրածնող այն

Էակին ճառագայթին մէջ թրմամբ մը վերսկսաւ ապրիլ անիկա (*Բն.*, 2014, էջ 75):

ՄԱՐԴԱԶՈՀՈՒՄ, գ., **Կուռքերու կամ հեթանոսական աստուածներու մարդ գոհընծայելը** // **մարդուն անիմաստ գոհաբերելը**: Արդ՝ այս մահը գոհագործումի մը բոլոր գիծերը ունի, որով ըստ արդի մեկնաբաններու՝ վերջ կը տրուի **մարդագոհումի** շատ հին աւանդութեան մը (*Գ. Պ. 4, 2014, էջ 123*):

ՄԱՐԴԱԿԵՐՏՈՒՄ, գ., **Պգտիկներու եւ երիտասարդներու կրթելը՝ իբրեւ անհատ կազմաւորելը** // **հային իբրեւ հայ ձևավորում, դաստիարակում**: Պատերազմի աւարտէն ի վեր կը լսենք **մարդակերտման** կարեւորութեան մասին: (*Գանձ., 25 Նոյեմբեր, 2020*):

ՄԱՐՄԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ, գ., **Մարմարի նման, մարմարի յատկութիւններ ունեցող երգ (ողորկ, կայուն, ճերմակ, յստակ գիծերով)** // **մարմարի նման**: Յղացման փշրանք մը, ամբողջ հոգին իր **մարմարեզութեան** (*Լ. Է., 1919, էջ 86*):

ՄԱՐՄՆԱԿԱՆԱՆԱԼ, բ., **Մարմին առնել, մարմնաւորուիլ** // **մարմին ստանալ, իրականություն դառնալ**: Մեծ քերթողը կը սկսի իրական դառնալ, **մարմնականանալ** (*Բ. Կ., 1975, էջ 212*):

ՄԱՐՄՆԱՄՇԱԿ, ան., **Մարմնամարզական զանազան վարժութիւններով խնամուած, մշակուած մարմին ունեցող** // **մարզված մարմին ունեցող**: ...մասնաւորաբար գնահատուիլ իբրեւ մասնագետ՝ **մարմնամշակ** մարզիկներու դնդերային արժէքները լաւագոյնս յատկանշող լուսանկարներու... (*Յակ. Ս., 2006, էջ 178*):

ՄԱՔՐԱՀԻՒՄ, ան., **Մաքրութեամբ հիւսուած՝ շարամանուած, անբիծ** // **անաղարտ**: Այդ **մաքրահիւս** թելը խզուած ընդհատուած է Բագրատունեաց դարաշրջանին... (*Գ. Պ. 4, 2014, էջ 30*):

ՄԱՔՐԱԶԵՌՆ, ան./մկբ., (փիլբ.), **անմեղ, անմեղսունակ, սպաննութիւն կամ գողութիւն չկատարած մարդ** // **չպղծված**: Մանաւանդ թուրքերը, որ վերջին տարիներս քարոզչական մեծ աշխատանք կը կատարեն **մաքրաձեռն** երեւալու համար... (*Ա. Հ., 2014, էջ 102*):

ՄԵԾԱԲԱՌ, ան., **Պերճախօս, ճարտարախօս, բերբասաց** // **ճարտարախօս**: Բոլոր կերպարներն ալ լաւ խօսող ու **մեծաբաս** արտայայտութեան տէր մարդեր են (*Ահկ., 1966, թիւ 1, էջ 81*):

ՄԵԾԱԶԴԵՑԻԿ, ան., **Գործուն եղող, մեծ ներգործություն ունեցող // վիթխարի ներգործություն ունեցող:** Հրեական մեծագրեցիկ «Հակա-Անուանարկման Լիկա»-ն եւ իր մոլեռանդ տնօրէնը (Գ. Բ., 2009, էջ 103):

ՄԵԾԱԿԱԶՄ, ան., **Յաղթանդամ, թիկնեղ // հաղթանդամ:** Տղոցմէ մէկը, քիչ մը **մեծակազմ** միւսներէն... (Թ. Տ., 2007, էջ 63):

ՄԵԾԱՄՈԼԱԽՏ, գ., **Մեծագար, մեծամտութեան, ինքնահաւանութեան ախտ // ինքնահավան:** ...թիթեղածածկ տնակներու բնակիչներուն հիւղաւանային մտայնութիւնը, «Մեծամոլախտ»-է վարակուածները (Գ. Բ., 2009, էջ 126):

ՄԵԾԱՄՈՒՅՅԼ, ան., **Շատ մութ՝ աղօտ, մշուշապատ, անփառունակ // Շատ մռայլ, մռայլապատ:** Մագաղաթեայ նկարագիր մը, մեծապայծառ եւ **մեծամռայլ** հայրենիքը կայ հոն (Լ. Է. , 1919, էջ 31):

ՄԵՂԱԶՐԿՈՒՄ, գ., **Յանցանք չհամարելը, մեղքի զգացումէն ազատ ըլլալը // անմեղացումը:** Այստեղ կարեւորը, առ այժմ, հաճոյքի զգացումին **մեղազրկումն** է... (Գ. ՊՊ 4, 2014, էջ 51):

ՄԵՐԿՕՐԷՆ, մկբ., (փոխ.) **Բացայայտ կերպով, անսքող ու պարզ ձեւով // Բացահայտ:** Հարցումը, որ հարց մըն է, մենք չէ որ սեղանի վրայ **մերկօրէն** կը դնենք (Գ. Բ., 2009, էջ 18):

ՄԵՐՈՒՄ, գ., (փխբ.), **Երկու տարբեր կամ անջատ, հեռացած երեւոյթներու միատրում, ըմբռնում, շղթախում // ընկալում, ըմբռնում:** Այս գիրքը նման **մերում** կը հետապնդէ ի միջի այլոց (Գ. Պ., 2017, էջ 9):

ՄԹԱԽԱԲԱՐ, ան., **Խորունկ, անթափանցելի մթութիւն // անթափանց մութ:** Լուսաւոր գագաթը, ինչպէս անոր շրջուած **մթախաւար** աշխարհը, մաս կը կազմէ Շահնուրի կեանքին... (Գ. Բ., 2009, էջ 160):

ՄԻԱԿԱՐԾՈՒԹԻՒՆ, գ., **Բոլորին կողմէ ընդունուած մէկ կարծիք, համոզում // հանրութեանը պարտադրված մէկ կարծիք:** Ազատութիւնը սակայն պիտի ընկալուէր իբրեւ համայնավարական միակուսակցականութեան կամ **միակարծութեան** դէմ շարժում... (Ագ., 28. 5. 2019):

ՄԻԱԿՇՌՈՅԹ, ան., **միանման, միաչափ // միարժեք**: Բայց ոգեկան ստեղծագործությունը միալար ու **միակշռոյթ** չէ (*Բ. Կ., 1975, էջ 92*):

ՄԻԱՄԱԿԱՐԴԱԿ, ան., **Միակերպ, նոյնաստիճան // նոյնաստիճան**: Պատանեկան եւ երիտասարդական օրերէն իսկ, խառնուածքի ճամբով «տարբեր»-եցաւ շրջանին յատուկ միալար, **միամակարդակ ձեւերէն...** (*Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 72*):

Միանձնադաւանութիւն, գ., **Մէկ անհատի պաշտամունք, երկրպագում // անհատի պաշտամունք**: Իշխանութեան **միանձնադաւանութիւնը**՝ ժողովրդավարական սկզբունքներուն խտտոր համեմատող ճանապարհ է (*Ապ., 18 Յունիս, 2020*):

ՄԻԱՍԼԱՅ, ան., **Անկաշկանդ թոյջք // անարգել**: Արուեստագէտի մը մեծութիւնը կը կայանայ այն յստակ յատկութեան մէջ, երբ աշխատանքը չմատնէ յոգնաշատ ճիգ եւ քրտինք, այլ երեւոյթը ունենայ ինքնաբեր բխումի, **միասլաց** ժայթքի (*Գ. Բ., 2009, էջ 157*):

ՄԻԱՍՏԵՂԾԱԿԱՆ, ան., **Համատեղող, համախմբող // միավորող, համախմբող**: ...տեսակ մը **միաստեղծական** գործողութիւն (*Գ. Պ., 2017, էջ 36*):

ՄԻՋԳՐՈՒԹԵՆԱԿԱՆ (intertextuality), ան., (գրկն.), **Զանազան գրական բանագիրներու կապը եւ փոխազդեցութիւնը, մէկի գոյութեամբ միւսի մեկնաբանութեան կարելիութիւնը // գրական բնագրերի կապին ու փոխազդեցոյթանը առնչվող**: Այս գլուխին մէջ պիտի քննուի «բանաստեղծական հեթանոսութիւն» յղացքին կապերը նման այլ ընթրնումներու, անոր դրած **միջգրութենական** յարաբերութիւնները ուրիշ գրութիւններու հետ... (*Գ. Պ. 4, 2014, էջ 45*):

ՄԻՋԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ (Intersubjectivity), ան., **Երկու (կամ անլի) ենթականերու, անհատներու միջեւ առկայ յարաբերութիւն**: 2. (փիլ., հոգեբ.) Ընկերաբանութեան մէջ ենթականերու բազմապիսի կապերու եւ յարաբերութիւններու անուանում // երկու անհատների, երկու մշակույթների միջև միջնորդ դառնալը, Այս գիրքին մէջ լայնօրէն խօսուած է արդէն այս **միջենթակայական** յարաբերութեան մասին... (*Գ. Պ., 2017, էջ 17*):

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԵԱՆ, ան., **Միջերկրականին յատուկ, միջերկրականին վերաբերող // Միջերկրականին վերաբերող**: Մթին

նոճիներու սլացիկ գիծերը եւ **միջերկրականեան** բիւրեղ կապոյտ երկինքը (*Բ. Կ., 1975, էջ 98*):

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Միջնադարուն յատուկ ըլլալը, անոր վերաբերիլը // միջնադարին հատուկ լինելը, դրան վերաբերվելը**: Պիտի մոռնայինք բոլոր հիւանդութիւնները **միջնադարեանութեան** ու վերադառնայինք հելլենական իտէալին (*Օ. Ու., 1992, էջ 32*):

ՄԴԿՏԻՉ, ան., **Մղկտացնող, մորմոքեցնող, չհանդարտող, չմեղմացող վիշտ // մղկտացող**: ...յանկարծ անոնցմէ ոմանք, ատենի ամենէն **մղկտիչ** ցաւերուն մէկը կամ միւսը, էութեան խորերէն դուրս կը ցայտեն անզապելի դողդիւնով մը (*Գ. Ք., 2009, էջ 112*):

ՄՆԱՅՈՒԹԻՒՆ, գ., **Մնացորդ, հետք // մնացորդ**: ...կը մնայ **մնացութիւն** մը (*Գ. Պ. 3, 2008, էջ 12*):

ՄՇՏԱԿԵՆԴԱՆ, ան., **Անվախճան, անմահ // անմահ, անվախճան**: ... այդ տառապանքներն ու մարմնացեալ մահը պիտի վերածուին ստեղծագործութեան **մշտակենդան** վկայարանի (*Ազ., 28 Ապրիլ 2015*):

ՄՇՏԱՌՈՒԳՕՐԷՆ, մկբ., **Մշտապէս վառվորուն, կայտառ ձեռով // հարատւորեն առույգ**: Եւ դարձեալ ծառին, օդին մէջ թեւակարկառ, իր մանրատերեւ սաղարթին փափկութեան մէջ **մշտառուզօրէն** հոյամարմին... տեսարանին իշխելու խրոխտ հաճոյքն ունէր (*Բն. 1, 2014, էջ 336*):

ՄՈԳԱԿԵՐՏ, ան., **Մոգութեանք, կախարդութեամբ կերտուած // մոգական ուժով արարված**: Գաղափարի, ոճի ու լեզուի եռեակ ընդելուզեալ արժէքներով **մոգակերտ** (*Բն. 1, 2014, էջ 362*):

ՄՈԳԱՆՈՅՇ, ան., **Կախարդանքի, դիւրանքի նման անոյշ, հաճելի // դիւրանքի նման անուշ, հաճելի**: Ու **մոգանոյշ** աչքերուդ լիճն աղուալոյս / Պշնումիս տակ բորբեռանդ... (*Գ. Կ., 1977, էջ 17*):

ՄՈՒԵԳՆԱԽԱՆՁ, ան., **Մաստիկ, կատաղի // կատաղի, մոլի**: Պրոմէթէոսի հուրն, ափսոս խըլելով մեր ակութեն, / **Մոլեգնախանձ** հսկաներ ձիթենիներն այրեցին... (*Գ. Կ., 1977, էջ 31*):

ՄՈՐԹԱԲՈՒԺ, գ., **Մորթի հիւանդութիւններու մասնագէտ բժիշկ, մաշկաբոյժ // մորթաբան**: Հալէպի վերքի ախտաճանաչումը

կը կատարուի մասնագետ **մորթաբուժներու** կողմէ (*Հայր., 23 Յունուար 2019*):

ՄՈՐԹԱՎԷՐՔ, գ., **Մաշկային հիւանդութիւն, ախտ // մաշկային հիվանդություն:** «Հայերէնով պիտի անուանեմ «մորթային լէիշմանախտ» կամ «լէիշմանիա **մորթավերք**»: (*Հայր., 9 Շեկտեմբեր 2019*):

ՄՏԱԶՄԱՅԼՈՒՄ, գ., **Բանական՝ հոգեղէն էացում, սքանչացում՝ վերացում // հոգեպես վերացումը:** Զգացումը, մտազմայլումը յուշիկ կ'արթննան (*Բ. Կ., 1975, էջ 10*):

ՄՏԱՀԱՆԵԼ, բ., **Բան մը ուշադրութեան չարժանացնել, անտեսել, հետաքրքրութեան ծիրէն հանել // մոռանալ:** ...կարծես կոնակ դարձուած է կամ գայն **մտահանած** (*Գ. Բ., 2009, էջ 153*):

ՄՏԱՄՕՏ, ան., **Բանականութեան, իմացութեան համար հասկնալի, դիրքնկալելի // մատչելի:** Ուրեմն երրորդը Սօսն էր. իր ողջ ստեղծագործական գունեղ, համաժողովրդային, հաղորդական, խորաթափանց և յաճախ սրտամօտ, երբեմն ալ **մտամօտ** (*Բագ., թիւ 4, էջ 7*):

ՄՏԱՆԶՐՊԵՏ, գ., **Բանականութեան միջոց՝ ոլորտ // բանականության ոլորտ:** ... «Տէ՛ր Աստուած / Փնտռտուքով մկրտուած՝ / Կը ծփա՛նք **մտանջրպետին** մէջ ...» (*Երթ, 2006, էջ 49*):

ՄՏԱՍԵԻԵՌԱՅԻՆ, ան., **Ամբողջ ուշադրութիւնը կլանող, իր վրայ կեդրոնացնող // ամբողջ ուշադրությունը կլանող:** Quelqu'un-ի թեման, ուրեմն, մարդու բացակայութիւնն է, **մտասուեռային** աշխարհի մը մէջ... (*Սիկ., 1966, թիւ 1, էջ 95*):

ՄՏԱՅԻՐՈՒԹԻՒՆ, գ., **Անուշադիր ըլլալը // անուշադրություն:** **Մտացիրութիւնը** նաեւ մաս կը կազմէ մեքենականութեան: (*Գ. Բ., 2009, էջ 131*):

ՄՐԲՎԱՎԱՐՄ, ան., **Գզգոյած՝ խառնակ մազերով, գիսախռի // խառնակ մազերով:** Ան ո՛չ հսկայ է, ո՛չ մրրկավարս, ո՛չ հրաշուի, ինչպէս «Նեմեսիս»ին մէջ, աւելի ուշ (*Գ. Պ. 4, 2014, էջ 7*):

3

ՅԱՅՏԱԿԵՐՊՈՒՄ, գ., **Որեւէ բանի ի յայտ գալու եղանակը, ձեւը // որեւէ երևոյթի ի հատ գալու ձևը:** Աքսորին ողբերգութիւնը,

առթած տրամաթիք կացութիւնը, գոյութեան իսկ խնդրականացումը ծանօթ եզրեր են, «չարիքի» **յայտնակերպումներ** ամենուրեք, որ անհարկի է ընդգծել (*Գ. Պ., 2017, էջ 7, 18*):

ՅԱՅՏՆԱՐԱՐ, գ., Արտայայտութիւն, նշան, դրսևորում // արտահայտություն, դրսևորում: ...ինչպէս Էլմոնի այս լուսանկարը, իր յօրինումով՝ կոպիտ, բայց միայն **յայտնարար**՝ ներքին, չխոստովանուած, թէև մարդկայնօրէն արդար ցանկութեան մը (*Գ. Պ. 1, 2015, էջ 56*):

ՅԱՆԿԱՐԾՈՒԹԻՒՆ, գ., Յանկարծակիութիւն, անսպասելիութիւն // անսպասելիություն: «Ալ կը սուկամ այդ օրէն: Անոր իրաւութենէն: Սօտաւորութենէն: **Յանկարծութենէն:**» (*Լ. Շառ., 2016, էջ 62*):

ՅԱՆԿԵՐԳԵԼ, բ., Շարունակաբար միեւնոյն միտքը յայտնել, միեւնոյն պատմությունը կրկնել // պարբերաբար կրկնել: Պահպանողական մեծ մամուլը եւ շահախնդիր տարբեր խօսնակներ, որոնք **կը յանկերգէին**, զանազան տարբերակներով եւ լրացումներով... (*Գ. Ք., 2009, էջ 104*):

ՅԱՌԱԶԱՊԱՀՈՒԹԻՒՆ, գ., Արդիականութիւն // առաջադիմություն: Այն է՝ կարելի **յառաջապահութիւն** գրականութեան մէջ... (*Գ. Ք., 2009, էջ 152*):

ՅԱՍՄԻԿԱՆԻԹ, գ., Յասմիկ ծաղիկէ պատրաստուած անուշաբոյր հեղուկ // հասմիկ ծաղկի հյութը: Կը թռչէր ան սենեակէն դուրս, թողնելով ետին նուաղուն բոյր մը **յասմիկահիւթին** (*Օ. Ու., 1992, էջ 77*):

ՅԱՐԱԲԵՐԱԿՅԱԿԱՆ, ան.. Երկու եւ անելի երեւոյթներու փոխկապակցուածութիւն, փոխկախուածութիւնը // փոխկապակցված: Բաղդատութիւնները, պատուաստները, խաչումները, փոխթափանցումները **յարաբերակցական** բնոյթ ունին... (*Գ. Պ., 2017, էջ 37*):

ՅԱՐԱՆՈՐ, ան., Մշտապէս նոր, արդի // մշտապէս նոր: Բաղաքը նոյնն է արտաքնապէս, բայց տարբեր, **յարանոր** (*Գ. Պ. 2, 2012, էջ 371*):

Յարձակապաշտ, ան., Յարձակելու միտում ունեցող /միտուած/, գրոհելը, արշաւելը խնդիրներու լուծում համարող // հարձակվելու հակում ունեցող: ...բնակավայրերն ու ենթակառու-

ցուածքները թնդանօթային համազարկի տակ առնելու **յարձակապաշտ** արկածախանդրութիւնը աւարտեցաւ ատրպէյճանական բանակի լիակատար ձախողութեամբ (*Ազ., 21 Յուլիս 2020*):

ՅԱՐԶԱԿՈՂԱՊԱՇՏ, ան./մկբ., **Յարձակելու միտում ունեցող // հարձակման հակում, մղում ունեցող**: «Ամենէն բարդ խնդիրը, որուն մարդկութիւնը բախած է, մեր **յարձակողապաշտ** բնագոյներն են: (*Ազ., 23 Մարտ 2018*):

ՅԱՐԶԱԿՈՒՆԱԿ, ան., **Յարձակելու անհրաժեշտ պատրաստութիւնը ունեցող // հարձակվելու ունակ**: Հակառակ արեւելեան վառ գոյներու մեր վարժութեան՝ իր այս զօրաւոր, անշէջ, եւ ըսենք՝ **յարձակունակ** երանգաւորումները կը յաջողին մեզ շփոթեցնել (*Գ. Բ., 2009, էջ 220*):

ՅԱՐՎԱՀԱՆԱԳԵՂԶ (parathyroid gland), (բժշկ.), գ., **Ներքնահոս փոքր գեղձ, սովորաբար չորս հատ կ'ըլլայ եւ կ'օգնէ կրածինի եւ ֆոսֆատի մակարդակը հաւասարակշռուած պահելուն // ներքին փոքր գեղձ (սովորաբար չորս հատ), որն ապահովում է կրածինի եւ ֆոսֆատի անհրաժեշտ մակարդակը**: Վահանագեղձի վզիկը (isthmus) երկուքի կը հատէ զգուշութեամբ՝ առանց վնասելու տեղւոյն զարկերակները, երակները եւ վահանագեղձին տակը գտնուող **յարվահանագեղձերը** (*Ազ., 17 Յունուար 2019*):

ՅԵՂԱՇՐԶԱԿԱՆ, ան., **Ընկերային եւ քաղաքական կեանքի մեծ փոփոխութիւններուն յատուկ, յեղափոխական // հեղափոխական**: Սահմանադրական ու **յեղաշրջական** կեանքէ հարիւր տարի ետք սակայն, այսօր, մենք ետ դարձ ենք ըրած դէպի 1840-ական թուականներ (*Հայ. 1, 1970, 9-րդ համար, էջ 4*):

ՅԵՂԱՍՏԵՂԾԱԿԱՆ, ան., **Հինի փոխարէն նորը ստեղծել, արարել, նորով փոխարինել // բարեկեցական**: Ամէն տեղ շինութեան նշաններ, յարկ մը, երկու, պատեր, գունաւոր պատշգամներ, երկաթի, պեթոնի **յեղաստեղծական** կառուցումներ (*Գ. Պ. 1, 2012, էջ 189*):

ՅԵՂԱՐԿԻԶ, ան., **Կացութիւն մը, վիճակ մը վերափոխող, շրջող // վերափոխող**: ...բանաստեղծական հեթանոսութեան իմացումը կը զրկէ ինքզինք այդ կիրարկումի էպէս **յեղարկիչ**, փոխիչ, կառուցիչ ու կազմաւորիչ եզրէն (*Գ. Պ. 4, 2014, էջ 75*):

ՅԵՂԱՐԿՈՒՄ, գ., Կացութիւն մը, վիճակ մը վերափոխելու, շրջելու գործողութիւնը // վիճակի փոփոխություն: Այդ բազմազանութիւնը եթէ անկասկածօրէն կայ, կը մնայ ենթակայ **յեղարկումի** աշխատանքի մը ճնշումին տակ... (Գ. Պ. 4, 2014, էջ 75):

ՅԵՂԱՓՈԽԱՇՈՒՆՉ, ած., Մեծ բարեփոխումներու յոյս ներշնչող // արմատական բարեփոխումներ ներշնչող: Տրանսիացի մեծատաղանդ նկարիչ, քանդակագործ, փորագրիչ եւ **յեղափոխաշունչ** երգիծանկարիչ (Գ. Բ., 2009, էջ 127):

ՅԵՏԱՂԷՏԵԱՆ, ած., Աղէտէն, պատուհասէն ետք // Մեծ եղէտնին հաջորդող ժամանակաշրջան: Հողագուրկ գրականութիւն մը որ աղէտի ենթախորքին վրայ կը յայտնուի եւ ատով կրնայ բնութագրուիլ իբրեւ «յետաղէտեան» (Գ. Պ., 2017, էջ 56):

ՅԵՏԻՈՐԱՆԱՐԴԱՊԱՇՏ, ած., Խորանարդապաշտութենէն առաջացած արուեստի ուղղութիւն, // արվեստի ուղղություն: Սեզանը ներկայ է տեղ մը, ուրիշ շատ մը տեղեր **յետխորանարդապաշտ** շրջանը (Գ. Բ., 2009, էջ 217):

ՅԵՏՆԱՇԽԱՐՀ, գ., Անհատի նորակազմ միջավայրը // սկզբնաշխարհ: Յուշած մտաւորական **յետնաշխարհ** կը բնորոշէ տեղը ուրկէ բանաստեղծը կու գայ: (Գ. Պ. 4, 2014, էջ 7):

ՅԵՏՅՆՅՈՒՄԱՅԻՆ, ած., (քոք), Ընկերային անակնկալ եւ գորատը յուզումի մը անմիջապէս **յաջորդող** // սոցիալական հզոր ցնցումին հաջորդող: Անկախ պայթումի բուն շարժառիթներուն յայտնաբերումէն, **յետցնցումային** նոր իրավիճակ պիտի ստեղծուի նաեւ քաղաքական հարթութեան վրայ (Եր., 6 *Oqnuunu* 2020):

ՅԻՄԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., Յիմարին յատուկ ըլլալը, յիմարութիւն պարունակելը // հիմարին հատուկ: Եւ երազներու առածացուած **յիմարականութիւն** ուրիշ բան չէ այլ մէկ հէք յղացումն անոնց... (Ին., 2014, էջ 76):

ՅԻՍՈՒՍԱՊԱՇՏ, ած., Քրիստոնէութեան ընկալման եւ մեկնաբանման մասնատը ձեւ, որ եկեղեցիի կողմէ ընդունուած չէ, սակայն ունի տարածում ու հետեւորդներ // քրիստոնեական ուղղություն, որ հայ առաքելական եկեղեցու կողմից ընդունված չէ: Սակայն վստահ եմ որ այդ տարեդարձը ոսկի առիթ մը եղաւ երախ-

տապարտ ձգելու եւ **Յիսուսապաշտ** դարձնելու Երեւանի բանտերու այն 6 բանտարկեալները (Գ. Ք., 2009, էջ 41):

ՅՂԱՅԱՅԻՆ, ած., (փխբ.) ` **Հասկացութիւններուն վերաբերող, անոնց առնչուող, հասկացութային // հասկացութայանն առնչվող**: Ո՛չ միայն բառապաշարը, այլ **յղացային** ոլորտը, այն որ բառ-միաւորէն անդին կը մարմնաւորուի շարահիւստութեան մէջ... (Գ. Պ., 2017, էջ 24):

ՅՈԳՆԱՇԱՏ, ած., **Շատ ճիգ ու ջանք թափած // շատ ճիգ ու ջանք թափած**: Արուեստագետի մը մեծութիւնը կը կայանայ այն յստակ յատկութեան մէջ, երբ աշխատանքը չմատնէ **յոզնաշատ** ճիգ եւ քրտինք... (Գ. Ք., 2009, էջ 156):

ՅՈՒԶՈՒՄՆԱՀԵՂԶ, ած., **Յոյզերու, ներքին խռովքի պատճառով խեղդող, անտանելի // զգացմունքներով առլեցուն**: Գոյութիւնն ու պատմութիւնը կ'երեւէին խառնակ, խախուտ, անհերթեթօրէն **յուզումնահեղձ** (Գ. Պ. 2, 2012, էջ 364):

ՅՐԴԱՏՈՒԻԼ, բ., **Կտրատուիլ, մասերու բաժնուիլ, անդամահատուիլ // մասնատվել**: ...զայն ենթարկեց իր անողոք քմայքներուն, իր ցանկատեսութեան, անոր կազմին տալով **յօդատուած** ձեւեր... (Գ. Ք., 2009, էջ 287):

ՅՐԴԱՏՈՒՄ, գ., **Մասերու բաժնելը, կտրատելը, անդամահատելը // մասնատում**: Իր գործը ուղղակի կ'առընչուի գերիրապաշտութեան, երազականին եւ ֆրեյտօյի, եւ նաեւ` կեանքի եւ մահուան` նկատի առնելով «պուպրիկ»ին **յօդատումները** ... (Գ. Ք., 2009, էջ 288):

Ն

ՆԱԽԱՂԷՏ, գ., **Մեծ աղէտին, ցեղասպանութեան նախորդող դէպքեր // մեծ եղեռնին նախորդող դէպքեր**: ...սխալ պիտի ըլլար եղեռնը շփոթել **նախաղէտին** հետ (1895-96-ի ջարդերը, Ատանայի դէպքերը) եւ մէկէն կատարել անդրաբեւեռումներ (Գ. Պ. 4, 2014, էջ 24):

ՆԱԽԱՄՈՒՏ, գ., **Նախերգանք, Երաժշտական երկի ներածական մաս // նախերգանք**: Նախամուտը կը նուագուի լուրջ եւ օժտուած նուագախումբի մը կողմէ (Բ. Կ., 1975, էջ 182):

ՆԱԽԱՅԱՐՁԱԿՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ, գ., Նախայարձակ ըլլալու, արշաւ ձեռնարկելու համար անհրաժեշտ պատրաստութիւնը ունենալը // նախահարձակ լինելը: ...ուր կինը դրսեւորուի իր ցանկասիրութեամբ, նախայարձակունակութեամբ եւ ինքնահաւան գոռոզութեամբ (Գ. Բ., 2009, էջ 293):

ՆԱԽԱՋՈՒՐ, գ., Սկզբնական ջրային տարածութիւն, որմէ կը սերին կամ որու մէջ կը սաղմնաւորուի կեանքը, կը սերին աստուածները // ջրային նախասկիզբ տարածություն: Ծագումնային ընտանութիւն մը ինչպէս նոյն սաղմէն ծնած կամ նոյն նախաջուրին մէջ աճած մարմիններ... (Գ. Պ. 1, 2012, էջ 288):

ՆԱԽԱՎԻՊԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ., (գեղնկ.), Վիպապաշտ դրպրոցին նախորդող շրջան // մինչ վիպապաշտ դպրոցի ժամանակաշրջանը: Նիցչէի Յունաստանը անշուշտ ոչ Ֆրանսական ԺԷ. դարու դասականութեան Յունաստանն է, ոչ ալ Գերմանական նախավիպապաշտութեան... (Գ. Պ. 4, 2014, էջ 55):

ՆԱԽԱԻՈՐ (primitive), ած., Վաղնջական, տարրակ, սկզբնական // պարզունակ: Այն ատեն այս նախաւոր բաներու վերադարձին հետ կը նկատէ որ սիրտը ուժգին կը տրոփէ (Գ. Պ. 1, 2012, էջ 188):

ՆԱԽԱՓՈՐՁՈՒԹԻՒՆ, գ., Նոր նուաճումներու հասնելու եւ կարգ մը ունակութիւններ զարգացնելու նախապատրաստութիւն // նոր ձեռքբերումների հասնելու նախապատրաստություն: ...այսօրուան դրութեամբ կարելի է նկատել նորանկախ պետութեան կազմաւորման նախափորձութեան ճանապարհի առաջին քայլերը (Հորգ., 24 Սեպտեմբեր 2018):

ՆԱՀԱՆՋԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., Ազգային ընդունուած արժէքներէ օտարացում՝ խորթացում, ձուլում, ուժացում // խորթացում, ձուլում, ուժացում: Սակայն ոչ մէկ պատմաշրջանի մէջ ընկրկումը եւ նահանջականութիւնը հասած են աստիճանի մը... (Հայրենիք Եռամսեայ հանդէս, Պոսթըն, 1970, 9-րդ համար, էջ 3):

ՆԱՐԿԻԶԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., Անձի մը ամբողջ ուշադրութեան կեդրոնացումը ինքն իր վրայ // եսակենտրոնացում: ...Շուշանեանի գրականութիւնը կը նկատէր նարկիզականութիւն... (Գ. Բ., 2009, էջ 149):

ՆԱԻԵՂԷՆ, ած., **Նաւերէ բաղկացած, շինուած // նավաշէն:** Հելլէսպոնտոսի անձկագոյն մասին վրայ ձգուած **նաւեղէն** կամուրջով մը Ասիայէն Եւրոպա անցնելով քալած է այս թերակղզոյն վրայ դէպ ի հիւսիս (*Բն. 1, 2014, էջ 344*):

ՆԵՐԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ (elaboration), գ., **Հոգևորի զարգացման նպաստող աշխատանք // հոգևոր զարգացմանը միտված աշխատանք:** Երջանի կ'միտք, ուր նիւթի ու ձեւի բնաշրջութիւն, ուր **ներաշխատութիւն** ու ժամավաճառութիւն չկար (*Բն. 1, 2014, էջ 361*):

ՆԵՐԴԱՇԽԱՅՈՒՄ, գ., **Ստային եւ հոգեկան համաչափութիւն, հաւասարակշռութիւն // համաչափում:** Բաւ էր սակայն մենաւոր ուղին անամայացնելու, իր հեռացմանն ու ընդհուպ անհետելի ըլլալուն հրապոյրին, իր մօտալուտ երանելի կորուստին ու թանկագին դոյզնութեան **ներդաշնացմանը** (*Բն. 1, 2014, էջ 337*):

ՆԵՐԿԱՅԵԼ, բ., **Տեսանելի դարձնել // երևան հանել:** Աստուածները եութիւնը կը **ներկայեն** – բնութեան երեւոյթները ներկայացնելէ առաջ: (*Գ. Պ. 4, 2014, էջ 101*):

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ, ած., **Համայնքի կամ համայնքներու շրջանակէն ներս // Համայնքի մէջ, համայնքի շրջանակներում:** Անարգ այս պատերազմէն առաջ Սուրիոյ մէջ մենք ունէինք **ներհամայնքային** արտօնեալ կարգ (*Թ. Թ., 2016, էջ 9*):

ՆԵՐՀԱՅԵԱՅՔ, գ. **Դէպի ներքինը, միտք եւ հոգի, ուղղուած հայեացք // դէպի ներքինը ուղղված հայացք:** Պուտաններու ինքնատոյզ **ներհայեացքը:** Աչքեր, որ կեանքը կը դիտեն... (*Բ. Կ., 1975, էջ 227*):

ՆԻԻԹԱՇԱՀ, գ., **Դրամական օգուտի ակնկալիք // դրամական ակնկալիք:** Արդի արուեստը իր սխրանքները չ'ուղղեր միայն դէպի նորարարութիւն կամ անկոխ ուղիներու նուաճում, այլ կ'ողմնորոշուի մասնաւորաբար **նիթաշահ** եւ վաճառաշահ նկատումներով (*Գ. Բ., 2009, էջ 228*):

ՆԿԱՐՉԱԿԱՆՕՐԷՆ, մկբ., **Նկարչական դիտանկիւնէ գնահատուած // նկարչի տեսակետից: Նկարչականօրէն,** նկարը իր հիմնական գոյներով ներդաշնակութիւն մը կը կազմէ եւ յղացումի ինքնատարութիւն (*Բ. Կ., 1975, էջ 281*):

ՆՄԱՆՕՐԻՆԱԿՈՒՄ, գ., **Կրկնօրինակում, Որեւէ բանի նմանութեամբ երկրորդ օրինակի մը ստեղծումը // նույնօրինակում:** Զարմանալի նմանօրինակում մը կացութեան, որ կրնայ կրկնուիլ դարերու երկայնքին (Գ. Պ. 2, 2012, էջ 323):

ՆՇԱՆԱԿԱՐԳ, գ., **Խորհրդանշական արժէք ունեցող նիշերու ամբողջական համակարգ // նիշերի, նշանների ամբողջական համակարգ:** Հոս, գրութեան մակարդակին **նշանակարգը** Հայոց լեզուինն է, իսկ վերակայացման մակարդակին **նշանակարգը** տրուած չէ (Գ. Պ. 4, 2014, էջ 166):

ՆՈՅՆԱՀՈՒՆՉ, մկբ., **Նոյնակերպ հնչել, խօսիլ, արտայատուիլ // նույն, նման կերպ արտահայտվել:** Կրօնքները ունին իրենց մեկնաբանները, որոնք միշտ **նոյնահունչ** չեն արտայայտուիք, ոչ ալ նոյնիմաստ կը խօսին (Գ. Ք., 2009, էջ 48):

ՆՈՅՆԱԺԱՄԱՆԱԿԵԱՅ (synchronic), ած., **Նոյն պահուն տեղի, գոյութիւն ունեցող // համաժամանակյա:** Առանց այս երեք հաւատարմութիւններուն,– գուգահե՛ռ, **նոյնաժամանակեա՛յ** հաւատարմութիւններուն,– կարելի չէ դաշնակցական ըլլալ (Հայր., 19 Փետրուար 2020):

ՆՈՅՆՈՐԱԿ, ած., **Նոյն որակը, արժէքը ունեցող // նմանարժէք:** Այս բաժանումին կը համապատասխանեն **նոյնորակ** աշխարհայեացքներ մշակոյթի էութեան ու գործառնութեան մասին, եւ այս ճեղքը տակաւ կը լայննայ (Վ. Օ., 2017, էջ 8):

ՆՈՐԱԲԱՆԵԼ, բ., **Նորաբանութիւններ յօրինել, կազմել // նոր բառ կազմել:** Ինչ որ կը նշանակէ ամենէն առաջ, որ այս ժամանակը, այս «ժամանակեղէն»-ը, ինչպէս փորձուեցայ **նորաբանել**, չի պատկանիր ժամացոյցներու սլաքումին, այլ կ'ըսէ լոյսին *ըլլալու կերպը* (Գ. Պ. 4, 2014, էջ 100):

ՆՈՐԱԴՐՈՇՄ, ած., **Որդեգրուած նոր վարքագիծի, ընթացքի ուղղութիւնը արտայայտող նշան // նոր վարքագիծ:** Հայաստանի ազգային անվտանգութեան հայեցակարգի **նորադրոջմ** տեսլականը (Հորգ., 20 Յուլիս 2020):

ՆՈՐՈԳՉԱԿԱՆ, ած., **Բարեփոխելու, թարմացնելու վերաբերող, յատուկ // բարեփոխական:** Շահնուրին գործին մէջ կը գտնուի,

միշտ ըստ Ռէտայի, շտապ օգնութեան **նորոգչական** աշխատանք մը (Գ. Բ., 2009, էջ 158):

ՆՈՐՈՒՄ, գ., **Եղած բանի վերկանգնում, նորոգում // նորոգում:** Սփիւռքի տարածքին **նորոգումի** ճիգը սակայն միանշանակ չէ եղած: (Յան., 6. 4, 2003):

ՆՈՒԱԶԱՊԱՇՏ (մինիմալիստ), ած., **Երկրորդ աշխարհամարտէն ետք տարածուած արուեստի ուղղութիւն (minimalism) // արվեստի ուղղություն:** Ակնյայտօրէն գեղարուեստական հակում ունեցող Խաչիկ-Հրակ Տեմիրճեանը բեմի վրայ տեսած եմ լոկ երկու անգամ: Կը թուի, թէ «**նուագապաշտ**» դերասանէ (Ազ., 28 Ղեկտ. 2017):

ՆՈՒԻՐԱՅԱՒԱՔ, գ., **Դրամահաւաք, Իբրեւ օգնութիւն, նպաստ հանգանակուած գումար // իբրև օգնություն ժողոված գումար:** Անկախութեան առաջին շրջանի նախարար մը ազգային **նուիրահաւաքի** մէկ միլիոն տոլարով անյայտացաւ Լոնտոնի մանախուղին մէջ (Գ. Բ., 2009, էջ 16):

ՆՐԲԱԳՈՌ, ած., (գրկն.), **Ուժգին, զօրաւոր, խորիստ, բայց նուրբ ձայն // ուժգին, բայց նուրբ ձայն:** Իսահակեանի «Աբու Լալա Մահարի» երկարաշունչ քերթուածին տաղաչափական ձեւը յարմար է նիւթին, ձեւին մէջ կարծես ուղտերն են որ կը քալեն, ինչպէս ձին կը քալէ Վարուժանի «Բեգաս» **նրբագոռ** քերթուածին տաղաչափական ձեւով (Լ. Է., 1919, էջ 54):

ՆՐԲԱՇԽԱՏ, ած., **Նրբակերտ, նրբահիւս, մանրանկարչական նրբութեամբ ու վարպետութեամբ շինուած // նրբակերտ:** Մեր պատմութեան **նրբաշխատ** արուեստագէտ ոսկերիչները կը քանդակէին կատարելատիպ խաչեր (Գ. Բ., 2009, էջ 156):

Շ

ՇԱՀԱՏՈՒԲՔ, գ. **Առեւտրական եւ այլ գործարքով ձեռք բերած նիւթական շահի համար պետութեան վճարուած տուրք // շահի դիմաց վճարվող տուրք:** Իսկ **շահատուրքի** պահանջը հայ հաստատութիւններէն կը շարունակուի աւելի սաստիկ եւ ծանր կերպով... (Յան., 30 Յունուար, 1980):

ՇԱՀՈՒ-ԱՌԵԻՏՈՒՐ, գ., **Առուծախի միջոցով ստացուած շահ՝ եկամուտ** // **առուծախից շահ ստացում**: Եւ սա չի մեկնիր **շահու- առետուորի** մտահոգութենէ (*Ազ.*, 25 *Մարտ*, 2019):

ՇԱՂԱՄԱՂՈՒՄ, գ., **Երկու կամ անելի բաներ իրարու հետ կապելը՝ հիւսելը՝ միացնելը, միաձուլում** // **միացում**: ...առանց այդ հին ու նոր շերտերու **շաղամաղումին** լեզուական նորոգումը յաջողութեան որեւէ բախտ չունի... (*Գ. Պ.*, 2017, էջ 25):

ՇԱՂԱՄԱՆՈՒՈՂ, ան. **Իրմէ տարբեր այլ առարկաներու հետ կապուող՝ հիւսուող** // **հյուսվող**: Անդադար իրարու մէջ մտնող, **շաղամանուող** շրջանակներ աչքերուն շուրջ (*Գ. Պ. 1*, 2012, էջ 215):

ՇԱՂԱՇԱՐԺ, ան., (բնաս.), **Իրարու կապուելով՝ մերձենալով շարժող** // **կիպ, կպած շարժվող**: Եւ ահա բոլորը հոն՝ ձախին ու աջին՝ մէ րթ անկողնին, մէ րթ տիւանին վրայ իրար փակչող, **շա- դաշարժ**, քրտնած մարմիններ (*Գ. Պ. 2*, 2012, էջ 388):

ՇԱՏԱԽՕՄԻԿ, ան., **Երկարաբան, պէտք եղածէն անելի խօսող** // **երկարաջունչ**: ...գործերու որակն ու կշիռը առարկայ դար- ձուեցան գնահատութեան, նոյնիսկ **շատախօսիկ** գեղումներու եւ գերարժեւորումի (*Հայ. 2*, 1969, 5-րդ *համար*, էջ 1):

ՇԱՐԱԿԱՐԳ, գ., **Որոշ հերթականութեամբ, յաջորդականու- թեամբ շարուած** // **հերթով շարված**: Ապահովութիւն մը որ ոչ ինք, ոչ ալ հաւանաբար ընկերուհիներու **շարակարգը** կրնային տալ (*Գ. Պ. 2*, 2012, էջ 329):

ՇԱՐԱՖԻԼՄ, գ., **Որեւէ նիւթի մասին նկարուած շարժա- պատկերներու շարք** // **ֆիլմաշար, սերիալ**: «Տալաս»ի **շարաֆիլմը** պիտի տեսագրեն (*Գ. Պ. 1*, 2015, էջ 17):

ՇԱՐԺԱՆԿԱՐԱՅԻՆ, ան., **Շարժապատկերի կալուածին վերաբերող, անոր յատուկ** // **շարժանկարին՝ կինոնկարին հատուկ, դրան վերաբերող**: ...մեր ժամանակի **շարժանկարային** առաջացած թեքնիքով միայն իրագործելի բեմական «խագ»-երէ ետք (*Ահկ.*, 1966, թիւ 1, էջ 79):

ՇԱՐԺԱՆԿԱՐՉԱԿԱՆ, ան., **Ֆիլմ, շարժապատկեր** // **շարժա- պատկեր**: Երազը հեռաւոր ու գեղեցիկ ամերիկեան ավերու, դրա- սանգուած **շարժանկարչական** արուեստով եւ արուեստագէտներով (*Ա. Ս.*, 2001, էջ 14):

ՇԵՇՏԱՅՆՈՒԹԻՒՆ, գ., **Խօսքի կամ գրութեան մէջ շեշտի որոշ յաջորդականութեամբ կրկնուելու շնորհիւ գերկաշտող ձայնի ելեւէջ // ելեւէջ:** ...դանդաղ ելեւէջ մը, միապաղաղ թուող շեշտայնութիւն մը, երբեմն ներքին բաբախումէ մը տոգորուած կշռոյթ մը կարծես թէ կը կանխեն զիս (*Գ. Պ. 1, Պէյրութ, 2015, էջ 21*):

ՇԵՇՏԱԻՈՐՈՒՄ, գ., **Բնագիրի այս կամ այն կողմը կարեւորելու եղանակ // կարևորում:** Յաջող երգիծանկար մը պէտք է իր գիծերով իսկ ինքնաբաւ ըլլայ, կամ թէ կարօտի նուազագոյն բառերու իր ազդեցութիւնը զօրացնելու, անոնց օգնութեամբ սրելով ներքին երգիծական **շեշտաւորումը**, կամ երեւոյթին անյարիր կողմը (*Գ. Լ., 2009, էջ 122*):

ՇԻԿԵՐԱՆԳՈՒԹԻՒՆ, գ., **Ոսկէ կարմիր գոյն ունենալը // կարմրագունությունը:** Ուղին եզերող հողերու բոլոր հրաջերմ շիկերանգութիւնները կը ցրտէին, կը մոխրախառնուէին (*Ին. 1, 2014, էջ 365*):

ՇՆՉԱՓՈՂԱԾԱԿՈՒՄ (tracheotomy), գ., (բժշկ.), **Շնչարգելութեան խնդիրները լուծելու նպատակով կատարուող գործողութիւն, որուն ընթացքին շնչափողը վիզի առջեւի մասէն ճեղքելով (հերձելով) օդի պզտիկ անցք մը կը բանան հիւանդին հնարաւորութիւն տալով շնչել // շնչափողի փոքրիկ անցք բացելը:** Իմանալէ ետք եղելութեան մանրամասնութիւնները փորձեցի հանդարտեցնել ընկերուհին, որոշ տեղեկութիւններ տուի **շնչափողածակումի** մասին... (*Ազ., 17 Յունուար, 2019*):

ՇՆՉԵՐԱԿԱՐԾՐՈՅԹ (Arteriosclerosis), գ., (բժշկ.), **Շնչերակի պնդացում եւ կարծրացում, որ կը սահմանափակէ արեան հոսքը դէպի մարմնի այլ գործարաններ եւ հիւսուածքներ // շնչերակի կարծրացում:** Ես որ տեղեկութիւն չունէի բնաւ իր **շնչերակարծրոյթէն**, եւ իր հին ու շատ մեղմացած համարուող շաքարախտը միայն զիտէի, քիչ մը զարմացայ (*Ին. 1, 2014, էջ 358*):

ՇՆՆՋԵՐԳԵԼ, բ., (բնաս.), **Ցած ձայնով՝ մըմնջելով երգել // մեղմ երգել:** ...թող բնութեան գաղափարին հանգի ստը իբր օրհնութիւն մը **շննջերգէ** իմացականութեանդ (*Ին., 2014, էջ 58*):

ՇՈՂԱՀԱՄԲՈՅՐ, ան., (այլբ.), **Լոյսի՝ ճառագայթի հպում // լույսի հպում:** Եւ շողահամբոյր աղօթք անբասիր / Հանդէպ բնութեան եւ մոլորակին... (Երթ, 2006, էջ 88):

ՇՈՂՈՄԱԼԻՑ, ան., **Կեղծ, խաբուսիկ սիրալիրութիւն, մտերմութիւն ցոյց տուող // կեղծավոր:** Ինք իրեն յատկացուցած գիրքի մը մէջ, Բաց նամակ Սալվատոր Տալիի, ինքզինքին կը շռայլէ **շողումալից** մեծարանքներ (Գ. Բ., 2009, էջ 279):

ՇՈՐՈՐԱՐՑՆԵԼ, բ., **Մարմինը նազանքով շարժել՝ ճօճել // նազել:** Հիմա Զուարթ կը կաքաւեր ու կը ցատկեր, ոտք մը ձախ, ոտք մը աջ, մարմինը **շորորարցնելէն** (Գ. Պ. 1, 2012, էջ 184):

ՇՈՒՏԻԿՆԱԼ, բ., **Արագաշած, անհամբեր ըլլալ // արագացնել:** ...ապուշնայինք ապլիկնայինք, շոշոկէինք, **շուտիկնայինք** (Գ. Պ. 2, 2012, էջ 317):

ՇՐԹԵԶՐ, գ., (փխբ.), **Շրթները, շրթունքի եզրը՝ ծայրը, այստեղ՝ ծովի եզր՝ ափ իմաստով գործածուած // ծովի, լճի ափ:** Հովը սակաւ կաթիլ մը բերաւ ծովէ / Մինչեւ **շրթեզր** մինչեւ լճեզր (Երթ, 2006, էջ 99):

ՇՐԹՆԱԲՈՐԲ, գ., (բժշկ.), **Շրթունքներու բորբոքում՝ ախտ // շուրթերի բորբոքում:** ...ակոռներու փտում, լինտերու գրգռութիւն եւ բորբոքում, շրթանակիւններու ճեղքատուք եւ **շրթնաբորբ** (Հայր., 4 Սեպտեմբեր, 2018):

ՇՐՋԱԳԱՅՈՒՄ, գ., **Շրջագայիլը, բանի մը շուրջը պտըտիլ // շրջապտույտ:** Վերջապէս կը խօսուի «նոր-հեթանոսութեան» մը մասին, որուն **շրջագայման** կեդրոնը կը հանդիսանայ... (Գ. Պ. 4, 2014, էջ 64):

ՇՐՋԱՆԱԿՈՒՄ, գ., **Երեւոյթ մը շրջանակի մէջ առնելը // սահմանափակում:** Յոգնակին նոյնքան կարելոր է որքան պատկերին վերագրուած **շրջանակումը** (Ս. Ս., 2016, էջ 21):

ՇՐՋԱՐԿ, գ., **Երեւոյթ մը շրջափակող, միացնող պարունակ՝ շրջանակ // շրջանակ:** Հաւաքականութեան մը՝ որ կը ստանձնէ ինքզինք իբրեւ այդ, առնուազն իբրեւ համակցութիւն երեւակային **շրջարկով** մը (Գ. Պ., 2017, էջ 37):

Ո

ՈԳԵԿՈՉԱԿԱՆ, ած., **Ոգին վեհացնող, հոգիին ազատութիւն տուող // ոգեխոսական: Ոգեկոչական** գրականութիւնը կատարելու համար հարկ է ունենալ քիչ շատ պատրաստութիւն... (Լ. Է., 1919, էջ 50):

ՈԳԵՂԻՆԱՑՈՒՄ, գ., **Ոգեղէն բնոյթ, հոգի ստանալը, շնչաւոր դառնալը // ոգեղենանալը:** Ներշնչումը, վերելքը, ոգեղինացումը մեղքէն (թերեւս աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ ցանկութեան յագեցումէն) կը ծնին (Բ. Կ., 1975, էջ 174):

ՈԳԵՊԱՇՏ, գ., **Ոգեղէնի, որպէս նախահիմք գոյութեան, հանդէպ հաւատք, պաշտամունք // ոգեղէնի, ոչ նյութականի, պաշտամունք:** Ռամպրանտեան գալարում՝ զգայապաշտին եւ ոգեպաշտին միջեւ (Բ. Կ., 1975, էջ 271):

ՈՂԲԵՐԳԱ-ԾԻԾԱՂԵԼԻ, ած., **Այն ինչ միեւնոյն ատեն քամահրական է եւ ողբալի // ողբերգական և զավեշտալի՝ միաժամանակ:** Աստուծ օգնէ. ողբենգա-ծիծաղելին այն է, որ միջինը անցնող հրապոյրներու կը կառչի (Բ. Կ., 1975, էջ 162):

ՈՂՈՐԿՈՒՆ, ած., **Յղկուն, հարթ եւ հաւասար մակերես ունեցող // հղկված, հարթ:** Յետոյ ամէն ինչ ստացաւ երկար, սլացիկ թոփչք, ողորկուն ձեւեր (Գ. Ք., 2009, էջ 288):

ՈՂՋԱԴԱՏ, ած., **Խոհականօրէն, բանականօրէն արժեւորող // բանականօրէն արժեւորող:** ...պիտի ըմբռնենք՝ ու պիտի նկատենք հրաւեր եւ ուղեցոյց ողջադատ կեցուածքի... (Հայ. 2, 1969, 5-րդ համար, էջ 5):

ՈՂՋԱԿԻԶԱՅԻՆ, ած., **Ողջակէզին յատուկ՝ առնչուող, // ողջողջ կիզվողի նմանվող:** Կը շարունակէի դիտել եւ համատարած խաւարէն անջատուող ողջակիզային բոցը, որ կը բարձրանար կոհակ առ կոհակ (Ս. Ս., 2001, էջ 10):

ՈՃԱՍՏԵՂԾՈՒՄ, գ., **Ապրելակերպի եւ գործելաճի յատուկ ձեւի, եղանակի ստեղծում, կենսակերպի իւրայատուկ եղանակի ստեղծում // կենսակերպի յուրահատուկ եղանակի ստեղծում:** ...ոճաստեղծումի կարողութիւնը հեթանոսական է, հակադրաբար քրիստոնէականին (Գ. Պ. 4, 2014, էջ 50):

ՈՃՐԱԳՐՈՂ, գ., Ոճիրը, սպանությունը գրութեամբ վկայող, զանոնք փոխանցող // ոճիրը փաստող, գրառող: Ան որ «Կիլիկեան մոխիրներուն» քերթուածի մեռելի թաղող, ողբացող, սգացող, **ոճրագրող** վերջին մարդն է (*Գ. Պ. 4, 2014, էջ 19*):

ՈՃՐԱԳՐՈՒԹԻՒՆ, գ., Յանցանքը, մեղքը գրելը, զանոնք վկայելը // ոճիրը, դրա փաստը գրառելը: Բանաստեղծութեան նո՛ր ժամանակին համար՝ որ Վարուժանի մօտ կը կոչուի «Բանաստեղծական Հեթանոսութիւն» մերձակայութեանը մէջ **ոճրագրութեան** (*Գ. Պ. 4, 2014, էջ 7*):

ՈՃՐԱՄԷՏՈՒԹԻՒՆ, գ., Յանցագործութեան, չարագործութեան հակուող // չարագործության հակում: Այլամերժութիւնը, ատելութիւնը, **ոճրամտութիւնը**, ջարդարարութիւնը, կոյս անտառի մտայնութիւնը թալիպաններու մենաշնորհը չէ (*Գ. Ք., 2009, էջ 52*):

ՈՉՆՉԱՊԱՇՏԱԿԱՆ (nihilistic), ած., Ոչնչապաշտութեան ուսմունքին հետեւող անձ // ոչնչապաշտության ուսմունքին հետևող: ...կը զարգանայ 1915-1922, Ա. Աշխարհամարտի **ոչնչապաշտական** մթնոլորտին մէջ (*Գ. Ք., 2009, էջ 296*):

ՈՍԿԵՄԵՂՈՅՇ, ած., Ոսկիի պէս դեղին եւ մեղրի պէս անուշ // դեղին ու քաղցր, այսինքն՝ հասուն: Ամէն գեղեցիկ պտուղները կը հասնին հոն, **ոսկեմեղոյշ** վտառներով (*Բն. 1, 2014, էջ 347*):

ՈՍԿՐԱՓԽՐՈՒԹԻՒՆ (osteoporosis), բժշկ., գ., Ոսկրային հիւանդութիւն, որուն հետեւանքով ոսկորներու ամրութիւնը կը սկսարանայ եւ դիւրին կոտրուելու ենթակայ կ'ըլլայ // ոսկրային հիւանդություն, երբ ոսկորները կորցնում են կարծրությունը և դառնում դյուրակոտրուն: Հիւանդութիւններ որոնք մեր հակակշռէն դուրս կը մնան եւ անոնք կը դառնան մնայուն եւ երկարատեւ, օրինակ՝ մնայուն յուշաթափութիւն (Ալցհեյ-մերի հիւանդութիւն- Alzheimer's disease), շագանակագեղձի ծաւալում (prostate hypertrophy) եւ **ոսկրափխրութիւն** (*Հայր., 3 Դեկտեմբեր 2018*):

ՈՐՄՆԱՆԿԱՐՉՈՒՇԻ, գ., Պատի վրայ գծող կին, որմնանկարչութեամբ զբաղող կին // որմնանկարչությամբ զբաղվող կին: Իր անմիջական յաջողութեան մեծապէս սատարած պէտք է ըլլայ սկզբնական **որմնանկարչուհիի** իր հանգամանքը (*Գ. Ք., 2009, էջ 232*):

ՈՒԺԱԿԱՆ (dynamic), ան., **Գործունեայ, Ժիր // գործուն, աշխատունակ:** Կիլիկեան վարժարանի ուժական ուսուցչական կազմին կազմակերպած տոնակատարությունը մեծ խանդավառությամբ ստեղծեց (*Ար., Ե., 8. 2. 1991*):

ՈւժԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ, գ., **Զորություն, սաստկություն, կորով, ներգործելու՝ ազդելու ուժ // հզորություն:** ...երկպառակտումներու առաջնորդող բեւեռացումները պարզապես կը սկարացնեն պայքարի ուժականությունը (*Հորգ., 28 Մայիս 2019*):

ՈՒԺԱԿԱՆ ՈՂ, ան., **Կորովի, մարմնական զորություն եւ ստկունություն ունեցող // կորովի:** Տնտեսական տագնապով Պոլիս կ'երթային ուժակարող թիկնեղ տղամարդիկ... (*Համ., 2007, էջ 263*):

ՈՒԺԱՆԻԻԹ, գ., **Երկիրի մը ելեկտրականության, քարիղի եւ հիւլեական արտադրության ճարտարարուեստ (industry) // ատոմական արտադրության մասնագետ:** Նիստեն ետք ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Նատա Պուլթանի հաստատեց... (*Ազ. 3 Ապրիլ 2019*):

ՈՒՂԵՂԱԼՈՒԱՅՔ, գ., **Որեւէ գաղափար իբրեւ անքննելի ճշմարտություն ներկայացնելը եւ այն զանազան եղանակներով պարտադրելը // որեւէ գաղափարի ստիպողաբար պարտադրելը:** Քաղաքական ոճիրի մը գործադրության յարմարագոյն եղանակը կը կայանայ մթնոլորտի թունաւորումը եւ ուղեղալուացքը (*Գ. Բ., 2009, էջ 87*):

ՈՒՂԵՓՈՒՆՈՒՄ, գ., **Ուղիի՝ ընթացքի (հոս՝ զարգացումի, ինքնաճանաչումի) փոփոխում // զարգացման ընթացքի փոփոխություն:** Պորել կը նշէ իր խարխափումները, ուղեփոխումները, անվերջ փնտոտութիւնները (*Անկ., 1966, թիւ 1, էջ 92*):

ՈՒՆԿՆԱԳԵՂՁ (parotid glands), գ., (բժշկ.), **Ականջին կենսական եւ ոչ պիտանի նիւթեր արտադրող, արտաթորող գեղձ // ականջի լորձնագեղձ, որը հեղուկ է արտադրում:** Հիմնական լորձնագեղձերը մեծ են չափով: Այս խմբաւորումին մաս կը կազմեն ունկնա-լորձնագեղձերը / ունկնագեղձերը ենթաձնօտային լորձնագեղձերը ... (*Հայր., 14 Մարտ, 2016*):

ՈՒՍՈՒՅՉԱԳՈՐԾԵԼ, ք., Ուսուցչական պաշտոն վարել // աշխատել որպես ուսուցիչ: Հավելյ առած էր իր նախնական ուսումը, ուսուցչագործած էր հոն տասը տարի... (Լ. Շառ., 2016, էջ 59):

ՈՒՐՈՒՄԱԿԵՐՊ, ած., Երեսկայական՝ յայտնութենական պատկերի նմանող // երեսկայական, աննյութական: ...իր նկարագրած ուրուակերպ անձի ... (Հայ. 1, Պոսթրն, 1969, 5-րդ համար, էջ 7):

ՈՒՐՈՒՄՅԻՆ, ած., Ուրուականային, երեսկայականին՝ ցնորականին առնչուող // երեսկայական: գիտե ս ուրկէ կու գաս եւ կրնաս մերժել թագաւորութիւնդ, ուրուայինդ կամ պահպանել զայն առջեւդ (Գ. Պ. 2, 2012, էջ 399):

2

ՉԱԿԵՐՏԵԱԼ, ած., (փխբ.) 1. Չակերտներու մեջ առնուած, չակերտուած անուն, միտք, արտայայտութիւն, 2. (փխբ.), օտարացնող, ազգայինը վանող // չակերտների մեջ ասված: Համաշխարհայնացումի չակերտեալ արժէքները սկսած են կայք հաստատել մեր կեանքի բոլոր մարզերէն ներս: (Ազ., 16 Յուլիս 2019):

ՉԱՐՉԱՐԱԳԻՆ, ած., Աննկարագրելի տանջանք, տառապանք պատճառող // տառապալից: ...ուր չարչարագին մահով մը կնքեց ան իր կեանքը՝ 1937-ի վերջերը (Հայր. 1, Պոսթրն, 1969, 5-րդ համար, էջ 2):

ՉԱՅԼԱՆԱԼ, ք., Այլ՝ ուրիշ չըլլայ, վիճակի փոփոխութիւն չկրել, չօտարանալ // չփոփոխվել: Ազգին պատմական զարտուղութիւնն է սփիւռք(ներ)-ը: ...որպէսզի ան շարունակէ մնալ ազգի մաս, մնայ հայատեսակ եւ չայլանայ (Ազ., 2 ապրիլ, 2019):

ՉԱՓԱՋԱՆՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ., Չափազանցութիւններու հակուած խօսք՝ արտայայտութիւն // չափազանցությունների հակումը: Կը յիշեցնէ մթնոլորտը Սիամանթոյի որոշ կտորներու չափազանցաբանութեանց (Գ. Պ. 4, 2014, էջ 175):

ՉԱՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., Հաւասակշռութիւն, չափերու հաւասար բաշխուածութիւն // հավասարակշռված լինելը: Բանաստեղ-

ծական **չափականություն** կը հասնին՝ հասնելով ներքին կշռոյթին (Բ. Կ., 1975, էջ 277):

ՉԷՈՒԹԻՒՆ, գ., **Անէ, էութենէ զուրկ, էութին չունեցող // անէություն**: Տեւողութիւնը միայն հատուածային ժամանակ, իսկ ժամանակը՝ **չէություն** (Գ. Պ. 1 2012, էջ 222):

Պ

ՊԱԱՍԱԿԱՆ, գ., **Արաբական Ընկերվարական Պասս Կուսակցութեան անդամ // Պասս կուսակցության հետևորդներ**: Նախկին պասասկանները տեղ չունէին իրաքեան նոր դրուածքին մեջ (Ազ., 28.11. 2015):

ՊԱՅՄԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Փոխադարձ պարտաւորութիւններ հաստատող գրութիւն, փոխադարձաբար պայմանաւորող համաձայնութիւն // պարտավորություններ հաստատող գրություն**: Լեռը, ծովը, մեծ քաղաքի մը ամբողջական հմայքը, առանց **պայմանագրականութեան** եւ ձեւակերպութիւններու (Բ. Կ., 1975, էջ 41):

ՊԱՇՏՕՆԱԶՐԿՈՒՄ, գ., **Անպաշտօն դարձնելը, պաշտօնանկ ընելը // պաշտոնանկ անելը**: ...անոնք կրնան զգալ ապահայ նման եղելութեան մը ժխտական հետեւանքները, թերեւս երկար տարիներ, նունիսկ ի գին իրենց **պաշտօնագրկումին** (Գ. Բ., 2009, էջ 60):

ՊԱՏԵՐԱԶՄԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ., **Պատերազմասիրութիւն, պատերազմամոլութիւն, ռազմատենչութիւն // ռազմատենչություն**: Անիկա շատ հեռու է զուտ **պատերազմապաշտութենէն**, մկանի սոսկական ցուցադրութենէն (Գ. Պ. 4, 2014, էջ 49):

ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒՄ, գ., **Նկարագրութիւն, պատկերում, բնութագրում // բնութագրում**: Նոյն կացութիւնը կը ստեղծուի «Երախտագէտ ժողովուրդ»-ի (էջ 18) **պատկերագրումին** մէջ (Գ. Բ., 2009, էջ 122):

ՊԱՏԿԵՐԱԽՈՒՄ, գ., **Նկարներու խումբ // նկարների խումբ**: Տէրորները կազմուած են բեմի վարագոյրէ մը, երեք **պատկերախումբէ**, ու նաեւ խորքի ուրիշ վարագոյրէ մը (Գ. Բ., 2009, էջ 316):

ՊԱՏԿԵՐԱՌՈՒՄ (imaginaire), գ., **Բանի մը պատկեր, ձև (ուստի եւ գոյութիւն) ստանալը, հետեւաբար ընկալելի դառնալը // պատկերում:** Ինչ որ կոչած եմ «օղակ», ունի «երեւակային» կամ «պատկերատման» բնոյթ... (Գ. Պ., 2017, էջ 38):

ՊԱՏԿԵՐԱՏԱԿ, գ., **Նկարին տակը իբրեւ բացատրութիւն դրուած խօսք՝ գիր // նկարի ներքեր:** Կարելի չէ թղթատել, օրինակայս հանճարեղ արուեստագէտին ստեղծած պատեհապաշտ հերոս Ռոպեր Մաքերի շարքը եւ համբերութեամբ կարդալ անոնցմէ շատերուն **պատկերատակի «ծով»** փոխասացութիւնը (Գ. Ք., 2009, էջ 123):

ՊԱՏԿԵՐՈՏ, ած., **Պատկերներով հարուստ // պատկերներով առատ:** Գրական աշուղութիւնը իր տաղերուն մէջ պատահական է միայն բայց ինքնահոս.-**պատկերոտ** ոճով մշակներուն սրտին կը մօտենայ (Լ. Է., 1919, էջ 75):

ՊԱՏՄԱԿԱՆԱՆԱԼ, բ., **Վաւերական եւ կարեոր ըլլալ // վավերագրական դառնալ:** Ընդհանրականին շողկապելով նաեւ անհատականը՝ Չիթունի պատմութեան կը փոխանցէ դէպքեր, դէմքեր, դրուագներ եւ **պատմականացած** կարգ մը անցուդարձեր... (Հայ. 1, Պոսթըն, 1970, 9-րդ համար, էջ 35):

ՊԱՏՄԱԿԾԻՌ, ած., **Պատմական տեսակէտէ նշանակալից արժէք ունեցող // պատմական տեսակետից լուրջ արժէք ունեցող:** Ցեղասպանութեան միջազգային ճանաչման հետապնդման առաքելութեան մէջ արդէն իսկ վիթխարի ու **պատմակշիռ** ձեռքբերումներ արձանագրած Հայ Դատի յանձնախումբը (Ազ., 29 Փետրուար 2020):

ՊԱՏՄԵԼԱԿԵՐՊ, գ., **Պատմելաճ // արտահայտվելու, պատմելու եղանակը, ոճը:** Մե՛րթ յուզիչ, մե՛րթ անհանդուրժելիօրէն բիրտ՝ **պատմելակերպը** երբեմն դպրոցական շարադրանք կը թուի... (Ս. Ս., 2016, էջ 21):

ՊԱՏՆԷՇԱՆԱԼ, բ., **Կուռ, հաստատ, միասնական ըլլալով դիմադրել՝ աղէտ մը առաջքը առնել // պատվար, արգելք դառնալ:** ...հայութեան վերջին բեկորները, իրենց վերջին կարողականութեամբ **պատնէշանալով** ... (Սայ., 20 Յունիս 2018):

ՊԱՐԱԳՐՈՒՄ, գ., **Ընդհանուր շրջանակի սահմաններու մէջ պարփակում, ամփոփում // ամփոփում:** Կրնայ ձեւանալ ողբերգութեան մը մէկ դրսեւորումը, անոր աւելի լայն պարագրումովը՝ կրնայ երեւիլ իբր իր ողիսակա՛նը (Գ. Բ., 2009, էջ 146):

ՊԱՐԲԵՐՈՅԹ, գ., **Բազմաթիւ լրացումներու եւ երկրորդական նախադասութիւններու շարահարումով կազմուած մէկ երկար եւ քարդ նախադասութիւն // պարբերայթ:** Ամէն կողմէ տողեր, անընդմէջ նախադասութիւններ, բանադարձումներ ու պարբերայթներ կը միջամտեն... (Գ. Պ. 3, 2008, էջ 38):

ՊԱՐԵՐԳՈՒՀԻ, գ., **Պարային երգ կատարող աղջիկ, կին // պարող ու երգող աղջիկ, կին:** Իբրեւ գլխաւոր դերակատար նկատի ունենալով Սարա Պեոնար **պարերգուհին...** (Օ. Ս., 1992, էջ ԺԳ):

ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏՈՒՄ, գ., **Անկախ՝ ինքնիշխան պետութեան կերտումը, կառուցումը // անկախ, ինքնիշխան պետութեան կառուցումը:** ... ինչպէս արմատաւորել հայրենասիրութեան եւ պետականակերտման հոգեբանութիւնն ու ազգային ինքնութեան ամրապնդումը... (Հորգ., 1 Նոյեմբեր 2019):

ՊԵՅՐՈՒԹԱՀԱՅՈՒԹԻՒՆ, գ., **Պէյրութ քաղաքի մէջ ապրող հայութիւն // Բեյրութում բնակվող հայեր:** Նկարիչը **Պէյրութահայութեանը** կը ներկայանայ երրորդ անգամ (Գ. Բ., 2009, էջ 216):

ՊԴՊԶԱԿՈՏ, ան., **Շատ պղպղջակ ունեցող, փրփրոտ // փրփրաղեգ:** Կը լքեր, վերջակէտ, միայն վերջակէտ, ճինի թունդ, **պղպջակոտ** լեղին հեռացուցեր էր սեղանիկէն (Գ. Պ. 2, 2012, էջ 366):

ՊՃՃԵԼ, բ., **Պճնել, զարդարել // զարդարել:** Գիտութիւն մը, գաղտնագիտութիւն մը, ինչպէս տառերն էին, որոնց առեղծուածով երբեմն կը **պճճէր** կտաւները (Գ. Պ. 2, 2012, էջ 423):

ՊՈԼՍԱՄԵՐՁ, ան., **Պոլսոյ մօտիկ եղող, Պոլսոյ հարակից // Պոլսին մոտ, մերձակա:** ...ուր **Պոլսամերձ** գիւղի մը գիւղացիներու սնահաւատութիւնը շահագործող քահանան կը թուի ժամանակի քարքերուն մէկ խտացումը (Ս. Ս., 2016, էջ 13):

ՊՈԼՍԱՎԱՐԻ, ան., **Պոլսեցիի նման, անոր վարքը ունեցող// պոլսեցուն վայել:** Ոճի երեւակայութիւն մը, որ Փարիզէն կու գար եւ այդքան, այդպէս կոչուած մեր **պոլսավարի** քննադատներուն համար ամենէն հեշտ ձեւը դարձաւ (Հաւ., 2007, էջ 125):

ՊՏՈՒՏԱԿԱՂԱՐՁ, գ., Պտուտակը ամրացնող կամ ամրացած տեղէն հանող գործիք // պտուտակը ամրացնող կամ հանող գործիք: Փայտէ սնտուկի մը մէջ դրած է իր գործիքները, որ ինքնաշարժի մը նորոգման համար պիտանի են. **պտուտակադարձ**, անգլիական եւ այլ տեսակի բանալիներ (*Հայ. 1, Պոսթըն, 1970, 9-րդ համար, էջ 49*):

ՊՐՊՏՈՒՔ, գ., Փնտռուք, որոնում // փնտռուք: Տակաւին վերջնական գործ մը չունէին, կամ դեռ **պրպտուքի** մէջ էին (*Թ Տ, 2007, էջ 87*):

Ջ

ՋԼԱՄԱՐՏԻԿ, գ., Ամուր եւ պինդ մկաններ ունեցողներու մրցում, հոս՝ ուժի ցուցադրութեամբ իշխանութեան համար պայքարող գործիչ // ամուր և պինդ մկաններ ունեցող: Ժողովորդ մը պէտք չունի իր թշուառութեան մէջ փարթամացած ղեկավարներու, ոչ ալ իշխանութիւնը յափշտակելու համար կրկէս իջած **ջլամարտիկներու** (*Գ. Բ., 2009, էջ 24*):

ՋՂԱԼԱՐ (Amyotrophic lateral sclerosis (ALS), գ., **Մարմնի մկանները ղեկավարող ուղեղի բջիջներու աստիճանական մահացում // մարմնի մկանները ղեկավարող ուղեղի բջիջների աստիճանական մահացում:** 21 տարեկանին Սթիվըն Հոքինկի մօտ ախտորոշած են կողմնային **ջղալարերու** պրկում... (*Ագ., 23 Մարտ 2018*):

ՋՐԱՆՈՒԱԶՈՒՄ (dehydration), գ., **Մարդու մարմինի մէջ ջուրի անհրաժեշտ չափի անբաւականութիւն // հեղուկազրկում:** Մարմինի ընդհանուր **ջրանուագում**... (*Սսպ., 21 Հոկտեմբեր 2016*):

Ռ

ՌԱԶՄԱԳԻՏԱՐՈՒԵՍ, գ., (ռազմ.) Սպառազինութեան արդիական միջոցներու մասին գիտութիւն // սպառազինության արդիական միջոցների մասին գիտություն: ...ինքնապաշտպանական համակարգը պէտք է յագեցած ըլլայ գերարդիական **ռազմագիտարուեստով** եւ զինուորական սպառազինութեամբ (*Հորգ., 1 Ապրիլ 2019*):

ՌԱԶՄԱԽԱՐԻՍԽ, գ., **Զինուորական կեդրոնատեղի // գլխավոր հավաքատեղի:** Ամերիկեան օդային ռազմախարխսխին անփոխարինելի կարեւորութիւնը (*Գ. Բ., 2009, էջ 104*):

ՌԱԶՄԱՊԱՐՍՊԱՊԱՏԵԼ, բ., (ռազմ.) **Զօրքի օգնութեամբ անառիկ եւ պաշտպանուած դարձնել տարածք մը // զօրքի ու զենքի օգնությամբ անառիկ դարձնել սահմանները:** Ամրակայել եւ հզօրացնել երկրի սահմաններն ու ռազմապարսպապատել սահմանամերձ բնակավայրերը (*Հորգ., 21 Մեպտեմբեր 2020*):

ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ, ան., **Զինուորական ուժի եւ քաղաքական յարաբերութիւններու ընդհանուր համեմատական // զինուժին և առկա քաղաքական հարաբերություններին առնչվող:** ...պէտք է լաւապէս հասկանալ ռազմաքաղաքական իրադրութիւնը ... (*Ազ., 15. 10. 2020, էջ 1*):

ՌՈՒՍԱԾԻՆ, ան., **Որպէս ռուս ծնած, ազգութեամբ ռուս // ազգությամբ ռուս:** կը խլէ անոր ռուսածին կիներ, համբաւաւոր Կալան (*Գ. Բ., 2009, էջ 281*):

Ս

ՍԱՀՄԱՆԱԴՈՒՌ, գ., **Երկիր մը մտնելու գլխաւոր դարպասը՝ կեդրոնական դուռը // երկիր ներխուժելու գլխավոր դարպասը:** Իր հարաւային սահմանադուռը այս ձեւով կը դրուի երկարժամկէտ սպանալիքի ներքոյ (*Ազ., 13 Նոյեմբեր, 2020*):

ՍԱՆԴԱՐԱՄԵՏԱՅԻՆ, ան., **Դժոխքին վերաբերող, անոր յատուկ, գեհեճային, // գեհեճային:** Օրերը ոչ միայն գեղեցիկ չեն, այլեւ սհաւոր, սանդարամետային (*Ա. Ս., 2001, էջ 24*):

ՍԱՆԴԻՄԱԻՈՐ, ան., **Սանդուղք ունեցող // աստիճանավոր:** Կամարները, ճեմաստանը, ծաղիկներու արահետները, սանդիսաւոր այգին եւ մարգաստանը (*Բ. Կ., 1975, էջ 266*):

ՍԱՊԱՏՈՒՄԾ, ան., **Բռնուած, կորացած մէջքով // կոսցած:** Դուք ծնած էք մէջքով սապատուած / Ես՝ բանաստեղծութեամբ (*Երթ, 2006, էջ 108*):

ՍԱՏԻՍԱԿԱՆ (sadistic), ան., **Ուրիշներուն ցաւ, տառապանք պատճառելէն հաճոյք զգացող մարդ // ցավ, տառապանք պատճառելուց հաճոյք ստացող անձ:** Իրենց անսպասելի կամ յանկարծակի

երեւումով սարսափ կ'ազդեն դիմացինին եւ սատիստական հաճոյք՝ ենթակային (Գ. Ք., 2009, էջ 63):

ՍԱՐԻՔ, գ., **Կապանք, շղթայ.** հոս՝ անջատ երեւոյթի զանազան դրսեւորումները շաղկապելու, միացնելու գործիքը // առանձին երևույթի զանազան դրսեւորումները շաղկապող գործիքը, եղանակը: Աւարտած աշխատութեան մը մէջ սովորաբար յղումներու, նոթերու ընդարձակ **սարիքը** կը նկատուին լրջութեան, խորութեան, «գիտականութեան» նշաններ (Գ. Պ., 2017, էջ 7, 11, 11, 14):

ՍԱԻԱՆԱԾՍԻԱԼ, ան., **Սաւանի մեծութիւն ունեցող** // սավանաչափ: Գրասեղանիս վրայ կը տարածեմ սաւանաձաւալ լրագիրը (Ս. Ս., 2001, էջ 22):

ՍԵՂՍՐՏԿԵԼ, բ., **Մէկու մը շարունակ գգուել՝ սիրել՝ ամուր գրկել // ամուր գրկել:** ...կը կերցնէին, թէեւ կերած կ'երթար, կը սեղմրտկէին (Թ. Տ., 2007, էջ 109):

ՍԵՆՆՈՒԹԻՒՆ, գ., **Հարազատ եւ անխառն ըլլալը, յստակութիւն, պարզութիւն // հստակություն, պարզություն:** Եւ այնտեղ անկարելի է չնշմարել գիտակցութիւնը, բացառիկ սեռնութեան, պայծառութեան հասնող... (Գ. Պ. 3, 2008, էջ 53):

ՍԻՆԻՔ, ան., **Պարկեշտութիւն, վայելչութիւն չճանչցող, անամօթ // ցինիկ, անպարկեշտ:** Սիրոյ մարդը չէ Կոկէն: Սոլեգին, ըմբոստ, սինիք մինչեւ իսկ (Բ. Կ., 1975, էջ 215):

ՍԻՐԱԹԱՔՈՅՑ, ան., **Մերը թաքցնող, գաղտնի ու ծածուկ պահող // սերը գաղտնի, թաքուն պահող, պարփակող:** Գանձարաններ սիրաթաքոյց, իրարմով լի ամբողջովին, / Մեր աչուրներն ինքնամատոյց իրարու մէջ կը պարպուին (Գ. Կ., 1977, էջ 19):

ՍԼԱՔՈՒՄ, գ., **Ժամացոյցի սլաքներու շարժումը, ընթացքը // ժամացոյցի սլաքների աշխատանքը:** ...այս ժամանակը, այս «ժամանակեղէն»-ը, ինչպէս փորձուեցայ նորաբանել, չի պատկանիր ժամացոյցներու սլաքումին, այլ կ'ըսէ լոյսին ըլլալու կերպ (Գ. Պ. 4, 2014, էջ 100):

ՍԻԱԼԱԽՕՍՈՒԹԻՒՆ, գ., **Լեզուի մէջ տարածուած սխալ արտայայտութիւններ եւ քերականական ձեւեր // անճշտություններ, սխալ կիրառություններ:** ...խօսակցական եւ օտարամուտ մերժելի

տարբերակներն ու անառարկելի սխալախօսութիւնները (Յ. Չ. 1, 2018, էջ 8):

ՄՆՆԴԱՊԱՐԿ, գ., **Հիւանդին առատ սննդական նիւթ տուող հեղուկ, շիճուկ // հիվանդին սննդանյութ մատակարարող պարկիկ:** Հիւանդապահուհին կախեց **սննդապարկը:** Դանդաղ կաթիլները սահեցան **սննդապարկէն՝** ներարկելով թմրեցուցիչը (Երթ, 2006, էջ 29):

ՍՈՎՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Սովորական ըլլալը, սովորութեան վերածուած ըլլալը // սովորական, ընտելացած լինելը:** Արդէն ընդունած է անհետացումին **սովորականութիւնը** (Գ. Պ. 1, 2012, էջ 218):

ՍՈՐՍՈՐԴԵԼ (gargle), բ., **Բերանը եւ կոկորդը մասնատր հեղուկով ողողել // ողողել:** Յատուկ հեղուկներով բերանը պետք է **սորսորդել** յաճախ (Հայր., 4 Սեպտեմբեր 2018):

ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԻՒՆ, գ., **Սուրիոյ մէջ բնակութիւն հաստատող բոլոր հայերը // Սիրիայում բնակություն հաստատած հայեր:** «Անդրանիկ» թատերախումբը **սուրիահայութեան** հոգեւոր սնունդ տալէ զատ, իր բեմադրութիւններէն գոյացած եկամուտի մեծ մասը կը յատկացնէր չքաւոր աշակերտներու կրթաթոշակներուն (Կ. Լէփ., Հայէպ, 2010, էջ 21):

ՍՈՒՐՆԱԼ, բ., **Մլանալ, արագ եւ կտրուկ բարձրանալ // բարձրանալ, ուժգնանալ:** Ինչպէս արաբերէնի ուսուցիչին ձայնը, որ կը սուրնար շեշտին վրայ եւ թերեւս իմաստ մը կը կերտէր, այդպէս (Գ. Պ. 1, 2012, էջ 208):

ՍՊԱՆԱՇՈՒՆՉ, ած., **Սպանական ոգի, բնութագիր ունեցող // իսպանական նկարագիր ունեցող:** ...մնաս բարո՞վ էր թէ ցոնտութիւն՝ այդ սպանաշունչ, հնչեղ adiosը... (Գ. Պ. 1, 2012, էջ 197):

ՍՏԱՄՈՔՍԱԳԻՏԱԿԱՆ, ած., (փխբ.) **Որովայնի, քիմքի հաճոյքները բարարելու գիտակ, նիւթական վայելքի միտում // քիմքի հաճոյքների գիտակ:** ...ինչպէս նաեւ՝ «կաթողիկէ, առաքելական, հռովմէական եւ ժգովիթականօրէն **ստամոքսագիտական»** (Գ. Ք., 2009, էջ 279):

ՍՏԵՂՏԱՊԱՇՏ (creationism), ած., **Գրական շարժում, բանաստեղծութեան նոր ոճ, որ ստեղծուած է գրողի կողմէ ինքն իրեն հա-**

մար // գրական շարժում, ուղղություն: Ստեղծապաշտ մտածողութենէ մը եկող այս քերթուածը կը կրկնէ այն բացարձակ տըխրութեան միջոցը... (Գ. Պ. 4, 2014, էջ 134):

ՄՏՈՐԱԳՆԱՀԱՏՈՒՄ, գ., Թերագնահատելը, երեւոյթ մը իր իրական արժէքն նուազ գնահատելը // թերագնահատելը: Անդրադարձած է «Նահանջ»-ին թերութիւններուն, երբեմն իր այդ գործը անարժան դարձնելու աստիճան ստորագնահատումով (Գ. Լ., 2009, էջ 152):

ՄՏՈՒԵՐՈՏԻԼ, բ., Ստուերոտ դառնալ, շուք ձգել՝ տարածել // ստվերել, շուք զցել: Պոլսական արասիայի ճիւղերը կը ստուերոտէին սալայատակը. (Գ. Պ. 2, 2012, էջ 430):

ՄՐԱԿԱՄԱՐ, գ., Կեդրոնը սուր անկիւնով կառուցուած կամար // միջին մասում ոչ թե կոր, այլ սուր իառուցված կամար: Սրակամարներ, հարուստ քանդակներ եւ գունագեղ մակերեսային զարդանկարչութիւն (Բ. Կ., 1975, էջ 142):

ՄՐԲԱԶՐԿԵԼ, բ., Սրբութիւն համարտողը իբրեւ սրբութիւն չընդունիլ // այլակերպել, պղծել: Գարոյի հակումը միշտ ծանօթ բան մը գտնելու, տեսակ մը ապրուած, շօշափելի բայց քիչ մը խտոր ու գոեհիկ, մանաւանդ անուն մը տալու, որոշելու, բաները սրբազրկելու... (Գ. Պ. 2, 2012, էջ 436):

ՄՐՏԱԽՕՄԻԿ, ած., Մտերմիկ, հարազատ խօսք, լսողի սրբտին՝ հոգիին դիպչող խօսք ու արտայայտութիւն // հոգեհարազատ: Անոնք սրտախօսիկ արտայայտութիւններով անձնական տպաւորութիւններ կամ յուշեր պատմեցին... (Լ. Շառ., Ե., 2016, էջ 6):

ՄՐՏԱՆՕԹ /փոխ./, գ., Սրտին կենսատու արիւն հասցնող երակ, հոս՝ գոյատեւելու համար էական նշանակութիւն ունեցող կապ՝ յարաբերութիւն // սրտին կենսատու արյուն հասցնող երակ: միշտ հանդիսացած են կենարար այն սրտանօթը, որ պատուար կանգնած է համաթրքական յորձանքին դէմ (Հնրգ., 10 Յունիս 2019):

ՄՓԻՆՌԱՏԱՐԱՄ, ած., Ամէնուրեք սփռուած // Հայրենիքից դուրս բնակվող: Մփիւռքատարած ժողովուրդներուն համար, ինչպէս հայերս, լեզու-մշակութային ինքնութիւն քիչ առաջ բացատրուած կապը կը ստանայ կրկնակի կարեւորութիւն... (Ասպ., 11 Յունուար 2008):

ՍՔՈՂԱՍՈՒԹԻՒՆ, գ., **Բանի մը մասին գաղտնաբար, ծածուկ կերպով խօսիլը // գաղտնախոսաբար**: ...փորձելով իրմէ հեռացնել շրջապատի անվստահութեան վախազդեցիկ կասկածները, զորս սքողասութեամբ կը տարածեն որոշ շրջանակներ (Գ. Բ., 2009, էջ 68):

Վ

ՎԱՀԱԳՆՕՐԷՆ, մկբ., **Հեթանոս հայերու պատերազմի եւ քաջութեան Աստուծոյ նման // ինչպէս Վահագն աստվածը**: Սէրը այն լոյսն է ապաքէն, որ կը սանձէ վահագնօրէն... (Երթ, 2006, էջ 43):

ՎԱՂԱԶԱՐԹ, ած., **Կանուխ զարթնած՝ արթնցած // վաղ զարթնած, առավոտ շուտ արթնացած**: Հայրենի երկինքը հայրենի երկիրն է փոխադրուէր, մշակներուն վաղազարթ մրափին մէջ (Լ. Է., 1919, էջ 83):

ՎԱՅՐԱԶՈՒԻ, գ., **Անկարգելով նախապէս որոշուած տեղ մը վայրէջք կատարող անձ // վայրէջք կատարող անձ**: Սպանական 75 վայրաչունէր յաղթականօրէն թառեցան Փերէխիլի վրայ (Գ. Բ., 2009, էջ 60):

ՎԱՅՐԱՍՈՒԶՈՒՄ, գ., **Արագ ընկղմում, վայրէջք, անհետացում // ակնթարթօրէն ընկղմվելը, խորասուզվելը**: Անոնք կը սերին հոգեխոցիչ կրկնակի փորձառութենէ մը. առաջինը՝ երկրին խորտակումն է, երկրորդը՝ յանկարծակի վայրասուզումը արեւմտեան յորձանքներու մէջ (Գ. Պ., 2017, էջ 41):

ՎԱՅՐԵՆԱԳԵՂ, ած., **Վայրի՝ բնական գեղեցկութիւն ունեցող, գեղեցկութեամբ օժտուած, գեղեցկութեան որոշ հունի՝ օրէնքի շրջանակներու մէջ չտեղաւորուող // վայրի բնութեանը հատուկ գեղեցկութեամբ օժտված**: ...ասոր համար ալ երեմն իր վայրենագեղ տաղերուն մէջ Հիւկօի խիտ գեղեցկութիւնը, յորդահոս գեղոյթը կը թաւալի Բայց միշտ հայկական (Լ. Է., 1919, էջ 34):

ՎԱՐԱԿԱՄԵՐԺՈՒԹԻՒՆ (immunity), գ., **Մարմինը կենդանի եւ անկենդան ախտածին մանրէներէ պաշտպանող համակարգ // մարմնի դիմադրողականություն**: Անոնք շուտով կը վարակուին փոխանցիկ հիւանդութիւններով, որովհետեւ անոնց վարակամեր-

Ժուրիները չափազանց տկարացած կ'ըլլայ... (Հայր., 3 Դեկտեմբեր 2018):

ՎԱՐԴԱԲՈՍՈՐ, ած., **Վարդի կարմիր, արինագոյն երանգը // բոսորագոյն, ալ կարմիր:** Մէկ դար ամբողջ սպասուած Մեսիաս կու գայ այս գիշեր /Երազներուս վարդաբոսոր պարտեզները կը հասնի... (Երթ, 2006, էջ 25):

ՎԱՐԴԵՐԱՆԳ, գ., **Վարդի գոյն ունեցող, վարդագոյն // վարդագոյն:** Մոմի կարմիր ստուերները՝ աւելի ճոխ վարդերանգով մը կը գունատրէին զարթնող զարմանքը անոր դէմքին (Օ. Ու., 1992, էջ 58):

ՎԱՐԺԱՆԻՍ, գ., **Վարժարան // վարժարան:** Այնուհետեւ ներկաները պատասխանեցին հարցաթերթիկի մը, որմէ ետք կեդրոնի տնօրէն Անիթա Մուջոյեան կատարեց **վարժանիստին** արժեւորումը (Ազ., 25 Մարտ 2019):

ՎԱՐԻՉՈՒՇԻ, գ., **Հաստատութեան մը բոլոր գործերը կարգաւորող կին, տնօրէնուհի // կին ղեկավար:** «Առաջնորդ սրբազանը ողջունեց մանկամտրի **վարիչուհի** Հելէն Մանուչարեանը... (Ասպ., 29 Դեկտեմբեր, 2015):

ՎԱՐԿԱԶՐԿԵԼ, բ., **Անձի մը ունեցած համբար անիրաւօրէն եւ միտումնաւոր արատաւորել, վարկաբեկել // վարկաբեկել:** Տեղեկատուութեան աղաւաղումը կը նպատակադրէ տեղեկութիւններ այլափոխելով վարկաբեկել եւ **վարկազրկել** հակառակորդի դիմագիծը (Հայր., 27 Սեպտեմբեր 2019):

ՎԱՐԿԱԾԱԲԱՐ, մկ., **Իբրեւ վարկած, ենթադրութիւն առաջ քաշուած կարծիք // ենթադրաբար, վարկածաբար:** Վարկածաբար կարելի է ըսել. հոն ուր արեւմտեան աշխարհին հետ առճակատումը ամենէն սաստիկն է, այդ առճակատումը համարկելու ջանքը եւ ինքն իր անձին հարցադրումը ամենէն արդիւնաւէտը եղած են (Գ. Պ., 2017, էջ 55):

ՎԱՐՉԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, գ., **Վարչութեան մը կառավարումը, ղեկավարումը // որնէ ոլորտի ղեկավարում:** ...ուրեմն կրթութեան ոլորտի **վարչակառավարումը** ստանձնած են տղամարդիկ... (Ազ., 9 Մարտ 2019):

ՎԱԻԵՐԱԳՐԱՅԻՆ, ած., **Վաւերագիրներով՝ պաշտօնական գրութիւններով վկայուած՝ վաւերացուած // փաստված, վավերացված:** Գումար մըն է, որ գրեթէ ամբողջականօրէն կը ներկայացնէ Մեծ Եղեռնի կապուած եւ Հայ Դատի հետապնդումին անհրաժեշտ ատաղձը՝ **վաւերագրային** եւ մեկնաբանական կրկնակ արժանիքներով (*Ահկ., 1966, թիւ 1, էջ 99*):

ՎԵՀԱՐԺԷՔ, ած., **Վսեմ, փառաւոր, մեծ՝ անգմահատել վաստակ ունեցող // բարձրարժէք:** ...երախտամոռութեան համազօր է նման **վեհարժէք** հայրենակերտիչի աւանդը թողուլ մոռացութեան քմայքին (*Հորգ., 20 Յունիս 2018*):

ՎԵՌՆԻՃՈՒՄ, գ., **Չնարակելը, փայլեցնելը // ջնարակում:** Երբ այցելեցի իր աշխատանոցը, «Արաբ գեղջկուհին»-ի **վեռնիճումով** զբաղած էր (*Բ. Կ., 1975, էջ 302*):

ՎԵՐԱԳԻԻՏ, գ., **Կորսուած բան մը կրկին գտնելը // կրկին գտնելը, վերագտնելը:** ...վերագիտը կորուստ մըն է այլեւս, ինչպէս վիպասանը կ'ըսէր, վեպին վերջը վանումն է սկիզբին (*Գ. Պ. 2, 2012, էջ 453*):

ՎԵՐԱԾՍԱՂԿՈՒՄ, գ., **Վերստին ծաղկիլ՝ բողբոջիլ // վերակենդանացում:** ...Գագիկ Գինոսեանը կազմակերպած էր հանդիպում կորուսեալ հակական պարերու **վերածաղկումի** (*Թ. Թ., 2016, էջ 30*):

ՎԵՐԱԿՅՅՈՒՄ, գ., **Բաժնուած միութիւն վերստին միացնելը՝ միաւորելը // միացում, միավորում:** ...Այստեղ ալ պէտք է նկատել, որ Արցախի **վերակցման** պահանջներու առաջին շրջանը էապէս կը տեղաւորուի միացեալ Հայաստանի գաղափարին մէջ... (*Ազ., 28. 5. 2019*):

ՎԵՐԱՄԿՐՏՈՒԻԼ, բ., **Անգամ մը մկտրուած մարդուն երկրորդ անգամ մկրտելով նոր անուն տալ // երկրորդ անգամ մկրտել, կնքել:** Աղջնակը կը կոչուէր Եղիսաբէթ, սակայն հաստատութենէն ներս անոր ընդունման օրը, ան կը **վերամկրտուի** Ազատուհի (*ԵՐԹ, 2006, էջ 176*):

Վերանորոգ, ած., **Վերընձիւղած, նոր ուժ՝ թափ ու կորով ստացած // նոր ուժ ու կորով ստացած:** ...Հայաստան-Արցախ-

Սփիւռք եռամիասնութեան անքակտելի ու **վերանորոգ** զօրաշարժով (*Ազ., 11 Մայիս 2019*):

ՎԵՐԱՆՈՒԻՐԱԳՈՐԾՈՒՄ, գ., Անգամ մը եւս սրբագործել, բանի արժէքը՝ նշանակութիւնը վերահաստատելը // վերահաստատում: Վերջին շաբաթը հրեաները, իրենց իննաճիւղ մտմակալներով, տօնախմբեցին Հանութան, իրենց ռազմական եւ հաւատքի յաղթանակը,- **վերանուիրագործումը** Տաճարին եւ երբայականութեան (*Գ. Ք., 2009, էջ 51*):

ՎԵՐԱՊԵՏԱԿԱՆԱՅՈՒՄ, գ., Նիւթ կամ խնդիր մը անգամ մը եւս պետական խնդրի մակարդակին բարձրացնելը // որևէ խնդիր պատշաճ, պետական խնդրի մակարդակին բարձրացնելը: Նպատակի վերապետականացման ուղղութեամբ առնուած կարելորագոյն քայլեր էին նշուածները (*Ազ., 28. 5. 2019*):

ՎԵՐԱՊՐՈՒԻՔ, գ., Չմեռնիլը, կենդանի մնալը // գոյատևելը: ... վազել մեթրոյէ մեթրօ, տունէ տուն, ինչպէս ինք երբեմն կիսաժամ՝ ճաշարանէն գրասենեակ, տքնիլ, բանիլ, երկու գործ մէկ շունչի համար, ջլատիչ **վերապրուի** մը ի շահ... (*Գ. Պ. 1, 2012, էջ 284*):

ՎԵՐԱՌՆԵԼԻՔ, գ., Կորսուած բան մը վերստին առնել՝ այն կրկին սեփականը դարձնել // կորցրածը, որ ենթակա է վերադարձվելու: Մեծաւ մասամբ Հայաստան ապաստանած է **վերառնելիք** Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիայի տեսլականով (*Թ. Թ., 2016, էջ 118*):

ՎԵՐԱՍԱՀՄԱՆՈՒՄ, գ., Աներկբայ՝ ստոյգ իրողութիւնը անգամ մը եւս հաւաստել // ստույգ փաստը մէկ անգամ եւս հավաստել: **Վերասահմանումի** կարգով շեշտենք, որ Հայոց Յեղասպանութեան արարքը ծրագրուած եւ ղեկավարուած է Թուրքիոյ օրուան պետական կառոյցին կողմէ (*Ազ., 1 Մայիս 2019*):

ՎԵՐԱՏԻՐԱՅՈՒՄ, գ., Կրկին տէր դառնալ սեփականութիւնը կորսնցուցած բանի // կորցրածը վերադարձնել: Տակաւի՛ն.. բարձրաստիճան պաշտօնատարներ կ'ընդգծէին Հայաստանի Հանրապետութեան կորսնցուցած տարածքներու **վերատիրացման** աշխատանքին ձեռնարկելու անհրաժեշտութիւնը (*Ազ., 28. 5. 2019*):

ՎԵՐԱՐԺԵԻՈՐՈՒԵԼ, բ., Կրկին գնահատուիլ, հին վարկը, յարգը կրկին ձեռք բերել // կրկին գնահատվել: Պատի գորգագոր-

ծուրին (tapisserie) բառը վերարժեւորուած է, ու ան կ'ապրի իր վերածնունդը առանց սպառած ըլլալու իր բոլոր կարելիութիւնները (Գ. Ք., 2009, էջ 230):

ՎԵՐԱՐՏԱՅԱՅՏՏՈՒԹԻՒՆ, գ., Արտայայտութիւն գտած երեւոյթ մը կրկին յայտնելը՝ դրսեւորելը // կրկնօրինակում: Բնանկարի վերարտայայտութեան եւ անկէ բխող վերացական յօրինուածքին միջեւ տրամաբանական ու նկարչական փոխաբերութիւն մը կայ (Բ. Կ., 1975, էջ 293):

ՎԵՐԱՑԱԿԱՆԱՊԱՇՏ, ած., Վերացականապաշտութեան ուղղութեան հետեւող, այդ ուղղութեան ներկայացուցիչ // նկարչական այդ ուղղության ներկայացուցիչ: Եւ իրմով կարելի կ'ըլլայ ճշդօրէն գնահատել վերացականապաշտներուն բերած նրպաստը նկարչութեան (Գ. Ք., 2009, էջ 204):

ՎԵՐԱՑԱԿԱՆԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ (abstract art), գ., Ձեւի, գոյնի եւ գիծի այնպիսի համադրութիւն նկարչութեան մէջ, որ արտաքին եւ տեսանելի աշխարհի արտացոլանքը չէ // նկարչական ուղղություն: Չարդանկարային այս գործին արուեստը գրեթէ բացարձակ է որպէս անիրականութիւն, վերացականապաշտութիւն (Գ. Ք., 2009, էջ 290):

ՎԵՐԱՑԱԿԱՆԱՍՆԵԼ, բ., Առարկայական ընկալուած երեւոյթ մը վերացական՝ մտային դարձնել // անիրական դարձնել: Ստորագծումի եղանակ մըն է, որ կ'ընդհանրացնէ, կը վերացականացնէ բառերը (Գ. Պ. 4, 2014, էջ 168):

ՎԵՐԱՑԱԿԱՆԱՑՈՒՄ, գ., Առարկայական ընկալուած երեւոյթ մը վերացական՝ մտային դարձնելու գործողութիւնը // աներեւութականացում: Բացառութիւնը, ներքին տարածութիւնը, վերացականացումը, էութիւնը միայն կ'առնինքնէն զիս (Բ. Կ., 1975, էջ 236):

ՎԵՐԾԱՆԱԳԻՐ, գ., Գաղտնի, ծածուկ, պայմանական նշաններով գրութիւն, գաղտնագիր // գաղտնագիր: Սպաներուն յղուած վերծանագիրը որ կ'ըսէր «սոյն տողերը ձեր աչքեուն համար գրուած են միայն» (Երթ, 2006, էջ 96):

ՎԵՐԿԱՅԱՑՆԵԼ, բ., Գոյութենէ դադրած երեւոյթը անգամ մը եւս գոյացնել, հաստատել // թարմացնել, նորովի ընկալել: Քեր-

թուածը չ'ընդօրինակեր տուեալ մը, չի վերկայացնէր զայն կամ պատկերացնէր (Գ. Պ. 4, 2014, էջ 167):

ՎԵՐԿԱՅԱՅՈՒՄ, գ., **Գոյութենէ դադրած երեւոյթի մը անգամ մը եւս գոյացնումը, հաստատումը // վերահաստատում:** Հոս, գրութեան մակարդակին նշանակարգը Հայոց լեզուինն է, իսկ **վերկայացման** մակարդակին (երեւակայուած Օտարականի) նշանակարգը տրուած չէ (Գ. Պ. 4, 2014, էջ 166):

ՎԵՐԿԱՅԵԼԻ, ած., **Այն ինչ կարելի չէ վերստին գոյութեան, լինելութեան կոչել // վերստին, կրկին կայանալի:** Ինչ որ քերթուածը ունի իր «առջեւ» **վերկայելի** չէ, պատկերելի չէ (Գ. Պ. 4, 2014, էջ 167):

ՎԵՐԿԵՆՏԱՂԵԼ, բ., **Մեռած բանին նորէն կեանք տալ, վերագարթնել // վերակենդանացնել:** Գթառատ անձրեւներով ու ողորմած կապոյտ տիւերով կրնային **վերկենցաղել** երկիրը (Ին.1, 2014, էջ 353):

ՎԵՐՀԱՄԱՐԿԵԼ, բ., **Ամբողջէն բաժնուած՝ զատուած երեւոյթը վերստին միացնել, ձուլել ամբողջին // միավորել, ամբողջացնել:** ...զայն վերադարձնել իր դէպքի յայտնութեան, վերափորձել անոր ուժական ու վտանգաւոր արեւելումը խօսքին. զայն հաղորդել, **վերհամարկել** մեր լեզուին... (Գ. Պ. 3, 2008, էջ 47):

ՎԵՐՀՊՈՒՄ, գ., **Նորէն հայիր, մերձենալը, յարաբերութիւն ունենալը // մերձեցում:** Իրեն համար Լիւպէն պրիքուէօր (ամենարար) մըն է, թե՛ իր **վերհպումներուն**, թե՛ իր վերստեղծագործութիւններուն մէջ (Գ. Բ., 2009, էջ 157):

ՎԵՐՄԿՐՏԵԼ, բ., **Նոր կեանք, նոր շունչ տալ // նոր շունչ հաղորդել:** Աւետիս Տէր Սահակեան իր ազգանունով կը **վերմկրտէ ԱՐԱՔՍը** (Գ. Պոռ., 1974, էջ 30):

ՎԵՐՅՕՐԻՆՈՒՄ, գ., **Ստեղծագործութեան մը երկրորդ անգամ անդրադառնալը, այն նոր եղանակով հեղինակելու միտումով // նոր մտտեցմամբ երկրորդ անգամ ստեղծում:** Պատկերը, որ **վերյօրինումն** էր հեղինակին նախորդ նմանօրինակ երկու գործերուն, խորագրուած էր «Հայաստան»... (Գ. Բ., 2009, էջ 181):

ՎԵՐՆԱՅԻՆ, գ., **Վերացական, տեսական // տեսական:** Մարդկայինը կը գոհուէր **վերնայինին՝** արգելք հանդիսանալով նոր շարժումներու, փոփոխութիւններու (Բ. Կ., 1975, էջ 240)

ՎԵՐՆԵՐԵԻՈՅԹ, գ., Առարկայի՝ գոյութեան մը էական մասը չկազմող երևոյթ, անոր արտաքին ամբողջութիւնը ապահովող կադապար // որևէ երևոյթի արտաքին առարկայական ամբողջութունը ապահովող: Ձեւական, արտաքին, պարագայական վերներևոյթ մը չէ անիկա... (Գ. Պ. 3, 2008, էջ 44):

ՎԵՐՁՆԱՄԱՐՏ, գ., Վերջին մարտ, վճռորոշ պայքար // վճռորոշ մարտ: Տնակ մը կար այնտեղ որ կը տատանէր եւ իր գոյութեան վերջնամարտը կը մղէր (Ս. Ս., 2001, էջ 54):

ՎԵՐՄԿՍԵԼԻ, ան., Անգամ մը եւս սկսելուն միտուած՝ հակամէտ // մեկ անգամ եւս սկսելուն միտված: Երբ աստուածները կը մեռնին, բանաստեղծութիւնը կը դառնայ խնդրական. վերսկսելի (Գ. Պ. 4, 2014, էջ 194):

ՎԵՐՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ, ան., Ստեղծագործական աշխատանքը կրկին յօրինելու վերաբերող // կրկին հորինելուն վերաբերող: Բայց արուեստագետին գործը կայացած է նաեւ վերստեղծագործական աշխատանքի մէջ (Գ. Բ., 2009, էջ 211):

ՎԵՐՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ., Ստեղծագործութիւն մը կրկին յօրինելու, հեղինակելու աշխատանքը // կրկնահորինում: Իրեն համար Լիւպէն պրիքովէօր (ամենարար) մըն է, թէ՛ իր վերհպումներուն, թէ՛ իր վերստեղծագործութիւններուն մէջ (Գ. Բ., 2009, էջ 157):

ՎԿԱՅԱԳՐԱԿԱՆ, ան., Գրութիւն, որ կ'ամփոփէ կարեւոր դէպքի մը ականատեսի վկայութիւնը, փորձառութիւնը // ականատեսի փաստագրումները: Մեծ Ոճիքէն սկսող վկայագրական աշխատանքները, մեծ մասը ցարդ անտիպ... (Ս. Ս., 2016, էջ 5):

ՎԿԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ, գ., Կարեւոր դէպքի մը ականատեսի փորձառութիւնը ամփոփող, զայն սերունդներուն փոխանցող գրութիւն // ականատեսի փաստագրում: ...անմիջապէս կը ձեռնարկէ վկայագրութեան մեծ գործին (Ս. Ս., 2016, էջ 5):

ՎԿԱՅԱՏԵՍ, գ., Վկայ // ականատես: ...բայց թէ նոյն ատեն ստեղծուած է ամբողջ ենթագրականութիւն մը յուշի, պատումի, վկայատեսի... (Գ. Պ. 4, 2014, էջ 21):

ՎՆՆՈՑ, գ., **Ինքնաշարժի հանած ձայնը // մեքենայի դռոց:** Ամայություն մեջ աղբահաւաք օթօներուն / **Վննոցին** հետ համընկնող (Երթ, 2006, էջ 105) :

ՎՄԵՄԵԼ, բ., **Վեհ, սրբազան ըլլալ // վեհ դառնալ, ազնվանալ:** Մտածելը ծնիլ է նորէն, բարձրանալ վեր, վերնալ, վերացնել. **վսեմել** (Գ. Պ. 4, 2014, էջ 148):

ՎՏԱԿԱՀՈՍՔ, գ., **Փոքրիկ գետակի անարգել, մաքուր ընթացքը՝ յորդումը // գետակի անարգել հորդում:** Անոնք վտակահոսքն են ամենանրբին դաշնութիւններու... (Գ. Ք., 2009, էջ 290):

ՎԲԶՆԱՀԱՐՈՒՄ, գ., **Նկարչական վրձինի թեթեակի հպում // վրձնի թեթն հպումներ:** Իբրեւ թէ վարպետ վրնձահարումներով կ'աշխատիմ քու կենդանագիրիդ վրայ (Ս. Ս., 2001, էջ 57):

S

ՏԱՄԱՍԿԱՀԱՅ, ած., **Տամասկոս /Դամասկոս/ մայրաքաղաքին մեջ ապրող հայ // Դամասկոսում ապրող հայ:** 1979-ին վարչութիւնը կը հրաւիրէ **Տամասկահայ** բեմադրիչ Մանուէլ Ճիճին (Կ. Լէվի, Հալէպ, 2010, էջ 16):

ՏԱՆԱՌԱԶՔ, գ., **Տունի առջեւի մասը // տան առջև:** Կը նայինք պատուհանէ պատուհան ձգուած պարաններուն, փռուած լուացքներուն, **տանառաջքներուն** սեւ գլխանոցով նստած պառաններուն (Գ. Պ. 1, 2015, էջ 65):

ՏԱՌԱԿԿՆՈՒԹԻՒՆ, գ., **Բնագիրի մը մեջ, մասնաւոր հնչութիւն տալու համար անոր, կարգ մը գիրերու կրկնութիւն // հատուկ հնչեղություն տալու նպատակով որոշ հնչունների կրկնություն:** ...տառակրկնութեամբ եւ գեղեցիկ բառերու գործածութեամբ մթնոլորտ կը շինեն... (Սիկ., 1966, թիւ 1, էջ 111):

ՏՍՏՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ (Dada, Dadaism), գ., **Քսաներորդ դարու արդիական արուեստի գլխաւոր ուղղութիւններէն // արվեստի ուղղություն:** Կը հետեւի տատայականութեան եւ կը կրէ անոր ազդեցութիւնը (Գ. Ք., 2009, էջ 296):

ՏԱՐԱԶԱԻՐՈՒՄ, գ., **Երեւոյթ մը արտաքին որոշ ոճով, եղանակով ձեւաւորելը, սահմանելը // որնէ երևույթի՝ որոշակի**

եղանակով ձևավորելը: Վերը յիշուած եւ չյիշուած բոլոր հարցերը ծպտուած էին գաղափարական տարազաւորումով (*Երթ*, 2006, էջ 54):

ՏԱՐԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ, գ., Իրարու չնմանող բազմազան ձևեր ընդունիր, բազմակերպ՝ բազմադէմ ըլլալը // բազմազան ձևեր ընդունելը: Իր գործին մէջ երեսան եկող յարակարծութիւնները երբեմն կ'երեւին որպէս կրկնակի **տարակերպութիւններ** (փարատորս) (*Գ. Բ., 2009, էջ 153*):

ՏԱՐԱՀՆՉԻՒՆ, ած., Ընդունուածէն՝ սովորականէն տարբեր ձեւ հնչող // տարաբնույթ: Քահանան տարահնչին գերմաներէնով կը խնդրէ սպային միջամտութիւնը (*Գ. Բ., 2009, էջ 194*):

ՏԱՐԱՇԽԱՐՀԱՅԻՆ, ած., Օտար, հեռաւոր աշխարհի վերաբերող, անոր յատուկ // օտար, տարաշխարհիկ: Ստոյգ է, որ այս «նոր-հեթանոսութիւնը» չի միտիր միայն ու միայն անցեալ ժամանակներու վերարտադրութեան կամ **տարաշխարհայինի** պատկերացումին... (*Գ. Պ. 4, 2014, էջ 65*):

ՏԱՐԱՍՓԻՌ, գ., Օտար, հեռաւոր կողմեր սփռուած՝ ցրուած // օտար ամերում սփռված: Արտաքրուած «դրախտէն» եւ ինքն իր «առաջին» լեզունէն՝ ցրուած, **տարասփիւտ** արարի գիտակցութիւնը ամէն պատկանելիութիւն կը դարձնէ խնդրական... (*Գ. Պ., 2017, էջ 17-18*):

ՏԱՐԱՍՓՈՒՄ, գ., Նկարի մակերեսին վրայ տարածուած՝ փռուած ըլլալը, մէկ կեդրոն չունենալը // անկանոն տարածված լինելը: Նոյնպէս՝ «կառուցողապաշտ»ը (constructivisme), որուն զըլխաւոր յատկանիշներէն կը կազմէ յօրինումին հաստատ կազմութիւնը եւ մակերեսին **տարասփռումը** (*Գ. Բ., 2009, էջ 207*):

ՏԱՐԵՐԿԻՐ, գ., Օտար, հեռաւոր երկիր // տարաշխարհ, օտար, հեռավոր աշխարհ: Այս գիշեր, երբ կը շրջի տարերկրի շունչ մը վսեմ (*Հայ., թիւ 11 (119), Մեպ., 1932, էջ 85*):

ՏԱՐԵՐԿՐԱՅԻՆ, ած., Օտար, հեռաւոր աշխարհին վերաբերող, տարերկրացի // օտար երկրին հատուկ: Դատարկ տարածութիւններու աստղանաւորդի կամ **տարերկրայիններու** պէս շրջուն մեքենայացած մարդիկ (*Գ. Պ. 2, 2012, էջ 434*):

ՏՄՓԱԿՕՐԷՆ, մկբ., **Տաղսկալիօրէն, ձանձրալիօրէն, անհրապոյր կերպով // ձանձրալի, տաղսկալի:** Կենդանագիրն է անծանօթի մը, որ **տափակօրէն** կը նմանի մարդերուն, պատմութիւնը՝ սովորական կեանքի մը (*Սհկ., 1966, թիւ 1, էջ 94*):

ՏԱՔՍԻՐՏ, ած., **Սիրով լեցուն, մտերիմ, սրտազին, հարազատ // ջերմ, սիրով լեցուն:** Մեր այս փոքր կղզիին ժողովուրդը իրապէս միշտ **տաքսիրտ** ու նուիրուող է (*Թ. Տ., 2007, էջ 19*):

ՏԵՂԱԾԻՆ, ած., **Տեղացի, երկրացի, տեղի մը՝ երկրի մը ծնունդ // բնիկ:** Կը գայթակղիք, կը տրտմիք, / երբ արհունակիցի մը հետ հասկցուելու համար / կը գործածէք հայերէնէն տարբեր լեզու մը, / կը մեղադրէք **տեղածին** հայերը (*Մ. Պ., էջ 39*):

ՏԵՂԱՆՈՒՆԱՅԻՆ, ած., **Աշխարհագրական վայրի, բնակավայրերու անուանումներուն յատուկ // տեղանուններին հատուկ:** ...կը գտնենք՝ որ այս անուններուն ոչ միայն վերջին վանկերը (-տու եւ -սա) **տեղանունային** վերջաւորութիւններ են... (*Հայ. 1, 1969, 5-րդ համար, էջ 35*):

ՏԵՍԱՀԱՐԻԼ, բ., **Տեսածով հրապուրովիլ, տեսածին ազդեցութեան՝ գրաչութեան տակ ըլլալ // հրապուրվել:** Իսկ պատկերները անակնկալ են, կը ցայտեն երբ այքերդ չես իսկ գոցած: Տեսնելը **տեսահարիլ** է: (*Գ. Պ. 2, 2012, էջ 82*):

ՏԵՍԼԱԳՈՐԾ, ած., **Մտաւոր եւ հոգեկան յայտնութենէ դրրդուած, վսեմ նպատակներով գործող // ապագային միտված, տեսիլաստեղծ, երագաստեղծ:** Իր փիլիսոփայութիւնը կենսապատկերինն է, բնապաշտ եւ լուսատես, **տեսլագործ** հաւատքով գտնւած դէպի ապագայ Արշալոյսը (*Լ. Է., 1919, էջ 17*):

ՏԵՍԼԱՀԱՐ, ած., **Տեսածէն ապշած, զմայլուած // տեղի ունեցածից ապշած՝ հիացած:** Տեսլահար վեր առի զայն, ինչպէս դիպուածը վեր պիտի հաներ ովկէանին խորը պահուած մարգարիտը (*Լ. Է., 1919, էջ 6*):

ՏԵՍԼԱԻՈՐԵԼ, բ., **Գաղափարի իրական պատկերը ստեղծել եւ ցոյց տալ, պատկեր, որ ունի տեսիլքի կարողութիւնը հմայելու, թովելու // տեսիլքի կարողությամբ հմայվելու, գերվելու:** Թերգեանական ազգային պայքարները իր օրին դիպեցան, հարկ էր ժո-

ղովուրդին **տեսլաւորել** վարագաթել գաղափարապաշտութիւնը... (Լ. Է., 1919, էջ 90):

ՏԵԻԱԲԱՐ, ած., **Հաստատուն՝ մնայուն ձեւով, միշտ, շարունակ // շարունակ, անդադար, հարատև:** Տեւաբար, առանց դադարելու: Կրկնութեան, ձանձրոյթի ոչ մէկ զգացում (Բ. Կ., 1975, էջ 236):

ՏԻԵԶԵՐԱՆՈՒԻԱԳ, գ., **Տիեզերական, ամբողջը ընդգրկող նուազ, երաժշտութիւն // տիեզերքն ընդգրկող, լցնող երաժշտութիւն:** Անկարելի է իր հատորէն չի վերյիշել «Նեմեսիս»-ը, տեսակ մը **տիեզերանուազ** (Լ. Է., 1919, էջ 29):

ՏՂԱՅԿՈՏ, ած., **Տղայաբարոյ, պգտիկի պէս պարզամիտ // պարզամիտ:** ...Ռենաթան՝ ընկերուհիս կը յիշես չէ՞, elle t'aime bien, **տղայկոտ** իտալուհիի մը վայել ֆրանսերէնով կը փսփսար... (Գ. Պ. 2, 2012, էջ 326):

ՏՂՄԱԹԱՂ, ած., **Տիղմի, ցելիսի մէջ թաղուած // ցելիսի մէջ թաղված:** **Տղմաթաղ** օրեր / Որ յիշողութեան եւ հեզնաքներու / Գետերուն մէջ անընդհատ կը լուսցուին... (Երթ, 2006, էջ 89):

ՏՄԱՐԴԱՅՈՒՄ, գ., **Մարդուն մարդկային արժանապատուութենէ զրկելը՝ զայն ճնշելով՝ կեղեքելով // մարդուն մարդկային արժանապատվությունից զրկելը:** ...տմարդացումով մը իջեր են անասնայինի մակարդակին... (Ս. Ս., 2016, էջ 23):

ՏՆՏԵՍԱՔԱՂԱՔԱԿԱՆ, (Political finance), ած., **Քաղաքական նպատակներու իրագործումին համար հանգանակութիւն // քաղաքական նպատակների իրագործման համար կատարվող հանգանակություն:** **Տնտեսաքաղաքական** գործօնները հաշուի առնուած են անշուշտ (Ազ., 25 Մարտ 2019):

ՏՈՀՄԱԿԱՊ, գ., **Ազգի, տոհմի անդամները եւ անոր սերունդները կապող հոգեւոր օղակը // ազգն ու նրա սերունդները կապող հոգևոր օղակ:** ...գրականութիւնը կը դառնայ այլեւս միաւորումի սրբազան հոլովոյթ, **տոհմակապ** (Գ. Պ. 4, 2014, էջ 41):

ՏՈՂԱԹԱՓ, գ., **Դէպի տողի վերջաւորութիւն՝ աւարտ սողացող գիծը // դէպի տողավերջն ընթացող, սողացող գիծ:** Անդադար սահող, ճողող, զառիթափն ու **տողաթափն** ի վար գլորող խօսք ու գիր... (Վ. Օ., 2017, էջ 447):

ՏՈՂԱՆՁԱՏ, գ., **Տողի չափ բարակ եւ նեղ երիզ // տողի պես բարակ ու նեղ երիզ:** Պատուհանին պզտիկ, **տողանջատ** փեղկերէն ներս կը հոսէր ծիրանագոյն լոյսը (*Օ. Ու., 1992, էջ 73*):

ՏՊԱԻՈՐԱԿԱՆ, ած., **Ներգոծելու, ազդեցութիւն ունենալու ձգտող, անոր միտուած // տպավորիչ:** Մանրամասնութեան, կողմնակի **տպաւորական** ձգտումներու կատարեալ բացակայութիւն (*Բ. Կ., 1975, էջ 125*):

ՏՐԱՄԱԴՐԻՉ, ած., **Տրամադրութիւն, դիտաւորութիւն պարունակող, անոնց ստեղծումին միտուած // տրամադրող:** ...յօղուածը արդէն չէ բանաստեղծական հեթանոսութեան դէմ կազմակերպուող **տրամադրիչին** մէկ մասը (*Գ. ՊՊ 4, 2014, էջ 36*):

ՏՐԱՄԱԺԱՄ, գ., **Ժամանակի ընդունուած կարգէն (անցեալ, ներկայ, ապագայ) դուրս ըլլալը, ժամանակի ընդունուած հերթականութիւնը անտեսելը // անժամանակ:** ...գրողը կը խուսափի գրողական արարքի տեւողական եզրէն, այլ խօսքով՝ կը խուսափի ժամանակէն, միուղի **տրամաժամէն** (*Գ. Պ. 3, 2008, էջ 43*):

ՏՐԱՄԱՍԱԿԱՆ, ած., **Տրամախօսական, տրամասութեան վերաբերող // տրամաբանական:** Նոյն ատեն կը գետեղէր **տրամասական** ցանցի մը մէջ, բաղդատումի եւ փոխանցման հնարաւորութիւն կ'ընծայէր (*Գ. Պ., 2017, էջ 16*):

ՏՐԱՄԱՍՈՂԱԿԱՆ, ած., **Տրամախօսական, տրամասութեան վերաբերող // տրամաբանական:** Հոռետրութիւնը սահմանուած է իբրեւ լեզուին պակասն ու թերին ամբողջացնող **տրամասողական** միջոց... (*Գ. Պ. 3, 2008, էջ 25*):

ՏՐԱՄԱՍՈՂՈՒԹԻՒՆ, գ., **Տրամախօսութիւն, տրամասութիւն // տրամաբանություն:** ...արձանագրել հոն ի գործ դրուած ռազմավարութիւնները, որոնք **տրամասողութիւնը** կը ղեկավարեն (*Գ. Պ. 4, 2014, էջ 23*):

ՏՐԱՄԱՍՈՒԹԻՒՆ, գ., **Տրամախօսութիւն, գրոյց- բանավէճ հարցումի եւ պատասխանի ձեւով // բանավէճ հարցումի եւ պատասխանի ձեւով:** ...գրականութեան մէջ ու գրականութեամբ կազմաւորուող մտածում (իրականութիւնն ու ասոր մասին **տրամասութիւնը**, տրամասութեամբ եկող իրականութիւնը իբրեւ յուզում,

զգայություն, երեսակայություն կամ գաղափարներու ոլորտ) կը վայելեն առաջնորդողի հանգամանք... (Ս. Խ., 2017, էջ 13):

3

ՅԱՆԿԱՏԵՍՈՒԹԻՒՆ, գ., Աշխարհի, շրջապատի ոչ թե իրատեսական ընկալում, այլ անձնական մղումներով իդէերով պայմանաւորուած ուրոյն ընկալում // շրջապատի ոչ իրատեսական, ուրոյն ընկալում: ...զայն ենթարկեց իր անտղոք քմայքներուն, իր **ցանկատեսութեան**, անոր կազմին տալով յօղատուած ձեւեր (Գ. Բ., 2009, էջ 287):

ՅԱՆՅԱՌԱԹԻԻ, ան., Քիչ՝ աննշան թուով, սակաւաթիւ // սակավաթիվ: Այդ **ցանցառաթիւ** քերթողներէն մէկ քանին ցեղին անմահութիւնը երգերու եւ արի արանց տաղերու մէջ կը գտնեն անհատական իմաստասիրութեամբ (Լ. Է., 1919, էջ 35):

ՅԱՆՅԱՐԿԵԼ, բ., Ցանցի մէջ առնել, ցանցել // ցանցի մէջ վերցնել: Գրքի խորագրէն մղուած այս տողերը հատորը կը **ցանցարկեն** եւ քերթուածները կը զետեղեն շատ որոշ, կազմակերպուած կաղապարի մէջ (Գ. Պ. 4, 2014, էջ 122):

ՅԱՆՅԱՐԿՈՒՄ, գ., Ցանց նետելով ասպարեզ մը իր մէջ առնելու՝ պատելու գործողութիւն // ցանցի մէջ վերցնելը: Ցանցարկումի մեկնակետին կը զետեղեմ շփումը, հանդիպումը «անցեալ» փորձառութեան մը հետախաղաղ շարունակումով ներկայի ստանձնումին մէջ (Գ. Պ., 2017, էջ 9):

ՅԱՏԿԱՀԱՐԹԱԿ, գ., Ցատկելու, տեղէ տեղ դիւրութեամբ անցնելու համար սարքուած հարթակ // ելակետ, մեկնակետ: Դէպի այդ երկիրները ելքի համար հայերը իբրեւ **ցատկահարթակ** Լիբանանը կը գործածեն (Գ. Ե., 2016, էջ 239):

ՅԵՂԱՄՇԱԿ, ան., Տոհմը, ազգը մշակող, կրթող // ցեղը՝ ազգը կրթող: ...Իբսէն դէպի մեր բեմը կը մաքսանենգէ իր ապաքաղաքական, ապարնկերային **ցեղամշակ** գաղափարները (Ազ., 28 Դեկտ. 2017):

ՅԵՂԱՅՆՕՐԷՆ, մկբ., Ազգանպաստ, ցեղի տեսանկիւնէ, տոհմական ձեւով // ցեղանպաստ, ազգանպաստ: Աշխարհագրա-

կանօրէն, **ցեղայնօրէն**, գործնականօրէն – ոչ մէկ կապ (*Բ. Կ., 1975, էջ 261*):

ՅՆՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ., **Պատրանքայնութիւն, երազայնութիւն // պատրանքայնություն: Տնորականութիւն** մը՝ որ խենդութիւնը չէ... (*Գ. Բ., 2009, էջ 281*):

ՅՆՈՐԱՄՏԱՅԻՆ, ած., **Երազկոտ՝ խենթ մտքին յատուկ, տրամաբանականօրէն չբացատրուող // երազկոտ:** Կայ մէկ կողմէ՝ անգիտակից, յանկարծակի յառնող անբանական ճանաչողութիւնը, իսկ միւս կողմէ՝ **ցնորամտային** երեւոյթներուն մեկնաբանական-քննադատական յարակցութիւնը (*Գ. Բ., 2009, էջ 282*):

ՅՆՑՈՏԻԱՊԱՏ, ած., **Մաշած, պատառոտուն հագուստներով ծածկուած // քրքրված հագուստներով:** Մեծամասնաբար փորանկարչութենէ կազմուած իր գործերը արտացոլացումն էին խռովիչ երազանքի, **ցնցոտիապատ** թշուառութեան... (*Գ. Բ., 2009, էջ 238*):

ՅՈՒՆԱՆԿԱՐՈՒԱԾ, ած., **Լոյսով՝ լոյսի շողով ու փայլով նկարուած՝ արտացոլուած պատկեր // արտապատկերված:** Պատուհանիս մէջ **ցոլանկարուած** ես, ցայգատեսակա՛ն ու ճիշդ... (*Բն., 2014, էջ 76*):

ՅՈՒՅՐԱՐԿՈՒՄ, գ., **Ցուցադրելի նիւթերը յատուկ միջոցով որպէս շաքք ցուցադրելը // ցուցադրում:** Յստակ է խօսքին երկու եզրերը. մէկ կողմէն՝ փոխանակումի միջոց, միւս կողմէ **ցուցարկումի** ձեւ (*Գ. Պ. 4, 2014, էջ 164*):

Փ

ՓԱՆԹՈՒՐԱՆԱԿԱՆ, ած., **Քաղաքական շարժում, որուն նպատակն է բոլոր թուրքերու մշակութային եւ քաղաքական միասնականութեան իրաւագործումը // քաղաքական շարժում:** Թուրքիան իր **փանթուրանական** ու ծաւալապաշտական քաղաքականութեան նոր ձեւաւորում եւ շէշտաւորում տալով... (*Ազ., 14. 10. 2020, էջ 1*):

ՓԱՌԱՏԵՆՉԻԿ, ած., **Փառքի հետամուտ, փառասէր // Փառքի ձգտող, տենչացող:** Սիմոնեան, որ երբեք **փառատենչիկ** մը չէ եղած, այլ իր սերունդին համեստագոյն ներկայացուցիչներէն մէկը (*Լ. Շառ., 2016, էջ 62*):

ՓԱՌԵՐԳԵԼ, բ., Երեսայթի մը մեծութիւնը, զօրութիւնը՝ վսեմութիւնը ներքողել՝ գովքը հիւսել // փառաբանել: Ցեղին Սիրտը թէ Հեթանոս երգեր փառերգող բանաստեղծին «Վարուժնակիս» քերթուածին երաժշտագրութիւնը... (Գ. Բ., 2009, էջ 108):

ՓԱՐԻԶԱՀԱՅ, գ., Փարիզի հայ բնակիչ // Փարիզի հայ բնակիչ: ...կարելի չէ անտեսել իր գէշ յիշատակները փարիզահայ շրջանակներէ եւ հայկական կեանքէն (Գ. Բ., 2009, էջ 150):

ՓԵՐԵԶԱԿԱՅԻՆ, ան., Մանր առեւտուրին՝ մանրավաճառութեան վերաբերող, անոր յատուկ // մանրավաճառային: Մեր անպարագիր ցար վերերգակային սայլակի մը մէջ ցուցադրելով՝ զայն կը դարձնեն պագարի ցուցադրութիւն (Գ. Բ., 2009, էջ 47):

ՓԼՓԼՈՂ, ան., Տեղ-տեղ քանդուող, խորտակուող // տեղ-տեղ քանդվող, խորտակվող: ...մերթ փլփլող, մերթ բարձրագնաց ժայռաբեկորները կ'եզերէին... (Գ. Պ. 2, 2012, էջ 327):

ՓՇԱՓՈՒՆՆՁ, գ., Փշէ կազմուած փունջ // փշերի կույտ: Քայլարշարը / Գետնանկողինն ի վեր կ'ընթանայ / Փէշը փշափունջերուն քսելով (Երթ, 2006, էջ 100):

ՓՈՒՍԱԴԻՐԱՄԻԶՈՑԱՅԻՆ, ան., Մարդոց կամ տարբեր ապրանքներու փոխադրութեան եղանակներուն վերաբերող, // տեղից տեղ անցնելու եղանակներին, տեխնիկական միջոցներին առնչվող: ...պիտի արգելակուէին բոլոր հաղորդակցութիւնները, տնտեսական կապերը, փոխադրամիջոցային կապերը եւ խաղաղապահները պիտի տեղակայուէին... (Ազ., 15. 10. 2020, էջ 2):

ՓՈՒՍԱԴԻՐՈՂԶԷՔ, գ., Փոխադրավարձ, փոխադրագին, փոխադրավճար // փոխադրավճար: Միշտ կռիւ կ'ընէր կառապաններուն հետ՝ փոխադրողչէքին առնչութեամբ (Օ. Ու., 1992, էջ 55):

ՓՈՒՍԱՆՑՈՐԴ, գ., Որեւէ բան մէկ տեղէ մէկ այլ տեղ փոխանցող // փոխանցող: Ահա այս է դերը թարգմանիչին: ...Փոխանցորդ մը, սահմանորդ մը (Գ. Պ., 2017, էջ 17):

ՓՈՒՍԼՐԱՑՈՒՑԻԶ, ան., Երկկողմանի իրար ամբողջացնող // փոխադարձաբար լրացնող: ...չպիտի շարունակէ հաւասարակշիռ, փոխլրացուցիչ վարքագիծը... (Ազ., 28. 5. 2019):

ՓՈՒՍԿԱՌԱՎԱՐԻԶ, գ., Հաստատութեան մը վարիչին փոխարինողը // որնէ հաստատութեան վարիչի՝ ղեկավարի փոխարինողը

նոդ: ...Լիբանանի կեդրոնական դրամատան նախկին **փոխկառավարիչի** յուղարկատրության արարողությունը պիտի կատարուի... (Ազ., 15. 10. 2020, էջ 3):

ՓՈԽՄԻՋՆՈՐԴՈՒՄ, գ., Երկուստեք միջնորդություն ընելը, փոխօգնություն, փոխազդեցություն // փոխօգնություն: Յղումները, մեջբերումները, **փոխմիջնորդումները**, փոխանակումները մեծաթիվ են ու սերտ... (Գ. Պ., 2017, էջ 56):

ՓՈՂԵՐԱԽՈՒՄԲ, գ., Երաժշտական փողերային գործիքներ նուագողներու խումբ, շեփորախումբ // շեփորախումբ: ...ընկերակցությամբ դպրոցի **փողերախումբին** (Թ. Տ., 2007, էջ 132):

ՓՈՐԱԳՐԱԿԱՆ, ած., Փորագրության՝ փորագրելու արուեստին յատուկ, անոր յատկանշական // փորագրությանը հատուկ: ...Տրկայի հետ գործակցած է **փորագրական** կալուածին մէջ (Գ Ք, 2009, էջ 301):

ՓՈՐԱԳՐԱՅԻՆ, ած., Մասնաւոր նիւթի վրայ փորագրելով ստեղծուած արուեստի գործ // փորագրությամբ ստեղծված: «Ընկերային խաղությունները» **փորագրային** շարքը արդիւնքն է քաղաքական իր համոզումներուն (Գ. Ք., 2009, էջ 301):

Ք

ՔԱՂԱՔԱԶԷՆ, գ., Քաղաքի եւ անոր բնակչութեան ապահովութիւնը երաշխաւորող զինուոր // քաղաքի բնակչության անորորը ապահովող զինվոր: Լիբանանի քաղաքիական կոչուած կոիւներուն ամէն անգամ որ **քաղաքազէն** մը թնթանօղին պարանը կը քաշէր (Գ. Ք., 2009, էջ 52):

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍԱԳԷՏ, գ., Մարդկային զանազան հանրութիւններու ապրանքներու արտադրութեան, փոխանակութեան եւ բաշխման մասնագէտ // տարբեր ապրանքների արտադրության, փոխանակության կամ բաշխման մասնագետ: Անոնց զաւակներէն Սարգիսը չորս տարի ուսանելէ ետք Երեւանի մէջ կը մեկնի Շուէտ, կատարելագործելու համար **քաղաքատնտեսագէտի** իր ուսումը (Թ. Թ., 2016, էջ 91):

ՔԱՂՅՐԱՅԵՂՅ, ած., Անուշութեամբ լեցուն՝ առլի // անչափ քաղցր: Եւ տանձենին՝ ամենագեղ փայլով ու **քաղցրայեղ** պտուղ-

ներով այս ծառը բարգաւաճ է կղզւոյն այն մասերուն մէջ (*Ին. 1, 2014, էջ 347*):

ՔԱՁԱՀԱՆ, ան., Քաջերին՝ դիւցազուններին ոտքի հանող, արթնացնող // քաջերին ոտքի հանող, աշխուժացնող: Արշակ Չոպանեանի **քաջահան** որակումով՝ սքանչելի տաղանդ մըն է Վարուժան, որուն քերթողի հոգին լայնօրէն կը ճախրէ «Յեղին Սիրտը» (*Լ. Է., 1919, էջ 28*):

ՔԱՌԱՄՍՍ, գ., Չորս մատ ունեցող, չորս մատնանի // չորս մատ ունեցող: ...**քառամատ** ձեռքերը խառնուած տառերու, թիւերու, յաճախ պարզ բիծերու (*Գ. Պ. 2, 2012, էջ 434*):

ՔԱՌԱՄԵԱԿ, գ., Չորս տարուան ընթացք մը // չորս տարվա ընթացք: Լոր իրագործումներով լի յաջող **քառամեակ** կը մաղթենք ՀՕՄ-ին (*Հորգ., 15 Հոկտեմբեր 2019*):

ՔԱՐՈՉՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ, ան., Քաղաքական նպատակներու իրագործումին համար եղած քարոզ // քաղաքական նպատակներով քարոզին առնչվող: Անգարա ընդդէմ աշխարհի **քարոզչաքաղաքական** այս խաղին հայկական գործօնը (*Ազ., 16 Ապրիլի 2019*):

ՔԵԶԱՄՕՏ, ան., Հարազատ, մարդու սրտին՝ հոգիին խօսող // սրտամտ...կ'ընծայէր անոր թէ՛ խորհրդաւոր, թէ՛ զարմանալիօրէն քեզամօտ զգայութիւն մը: (*Բազին թիւ 2, 2019, էջ 6*):

ՔԹԱԸՄԲԱՆ, գ., Կոկորդի վերին մասը, որ ռունգի ներքին մասը կը կապէ քիմքին // քթի վերին մասի և ըմպանի հատման կետը: Կարմրագոյն, սուր եւ միջակ տարողութեամբ, որ կը պատահի ստամոքսի, որկորի, բերանի, ըմբանի (pharynx), քիթի եւ **քթաւմբանի** (nasopharynx) մէջ (*Հայր., 11 Հոկտեմբեր, 2018*):

ՔԻՄԻԱԴԱՐՄԱՆՈՒՄ (chemotherapy), գ., Տարրաբանական դարմանում // տարրաբանական դարմանում: Քիմիադարմանումը այլ ընտրանք մըն է դարմանումի համար (*Հայր., 23 Հունվար, 2019*):

ՔՆԱՊԱՐԿ, գ., Պարկի ձեռով պատրաստուած դիրին տեղէ տեղ փոխադրելի անկողին՝ մէջը քնանալու համար // պարկաձև անկողին՝ նախատեսված զբոսաշրջիկների համար: «Բարի լոյս» պիտի չըսես գթոտ ծառին հովանի / Ոչ ալ անկէ բարձր կապոյտին ճղախճող / Որոնց տակը երկնցաւ **քնապարկը** խորտուբորտ (*Երթ, 2006, էջ 105*):

ՔՆԱՐԱԶՈՒՆ, գ., **Քերթողներու՝ արուեստագետներու ցեղին սերած (մեծ, նշանավոր քերթողների հետևորդ) // արվեստագետների տոհմից սերված ու նրանց հետևորդ:** Երբեմնի արքաները վիշապագուն, իր նոր սերունդը նոր քնարագուն (Լ. Է., 1919, էջ 80):

ՔՆԱՐԱՍԷՐ, ած., **Բանաստեղծութիւն սիրող, քերթողասէր // քերթողասէր:** ...քնարասէրներու համար նուիրական մատեան մը կը հանդիսանայ լայն առումով (Լ. Է., 1919, էջ 31):

ՔՐՏՆԼՈՒԱՅ, ած., **Շատ քրտնած // քրտնքակոխ:** Ջղայինը լիցքաթափուած ու քրտնուայ – շատ հեռանալու պէտք չկար / հատուութիւնը կուրծքիդ մէջն է արդ (Երթ, 2006, էջ 103):

ՔՐՔՄՍՅԵՂՑ, ած., **Քրքումով լեցուն՝ առլի // քրքումով լի:** Նոճիները քրքմայեղց կողերով վերջալոյսին մէջ կը բարձրանան... (Ին. 1, 2014, էջ 177):

Օ

ՕԹԱՆ, գ., **Յապաւում «Հիւսիսային Ատլանտեան Դաշնագրութեան Կազմակերպութեան» NATO//NATO-ի հայերէն հասպաւումը:** ՕԹԱՆ-ի գլխաւոր քարտուղարը նաեւ նշեց. «Այն ինչ Ռուսիա կատարեց՝ ուրիշներու իրաւունքներու ոտնահարման առաջին պարագան չէ» (Ազ., 20.11.15):

ՕԹԱՐԱՆ, գ., **Օթեւան, կայան, ապաստան // օթևանելու տեղ, հանգստավայր:** Ո վ օթարան անդորրի, ուր ամէն ինչ անսովոր է (Գ. Կ., 1977, էջ 15):

ՕԾԱՆ, գ., **Մարմնին քսելու համար պատրաստուած որեւէ քաղաղութիւն, օծանակ // քուրք:** Շրթունքները կակուղ պահելու համար գործածելու ենք յատուկ օծաններ (Հայր., 4 Սեպտեմբեր 2018):

ՕՏԱՐԱԲԱՐԲԱՌ, ած., **Օտար լեզուով խօսող- գրող // օտարալեզու:** Դպրոցներ կը փակուին, մամուլը օտարաբարբառ կը դառնայ, համայնքները կը տարտղնուին աշխարհագրականօրէն (Ազ., 2 Ապրիլ 2019):

ՕՏԱՐԵՐԵՆ, ած./գ., **Մայրենի չեղող ամէն լեզու // օտար լեզվով:** Այսպէս, փոխանակ արտայայտուելու օտարերէնով, /

փոխանակ չնչին բաներս եւ մեծ բաներս / վերածել երգերու... (Մ. Պ., էջ 33):

ՕՐԻՆԱԿԱՅԻՆ, ան., **Նմոյշ, տիպար ըլլալուն միտումս՝ այդ նպատակով յօրինումս // որպէս նմուշ**: Անոր մէջէն ընդհանրական նպատակ մը կը հետապնդեն, անձնական յուշերուն **օրինակային** տարողութիւն մը կ'ուզեն տալ (Ահկ., 1966, թիւ 1, էջ 101):

Տ

ՏԻԼՄԵՐԻԶ, գ., **Շարժապատկերը տեսարանները արձանագրող ժապաւեն, նկարում շարժապատկերի ցուցադրութեան ժապաւենը // կիստնկար**: Մինեմաներու մէջ ցուցադրումս սեւ-ճերմակ, հագուադէպօրէն նաեւ գունաւոր **ֆիլմերիզի** մը կտրտումս քարտեր (Երթ, 2006, էջ 79):

ՏՐԱՆՍԱԳԻՐ, ան., **Հայ գրող, որ կը ստեղծագործէ ֆրանսերէն // ֆրանսերէն ստեղծագործող**: Շահնուր կատարած է ընդհանում ինքնաստիճանաւորում մը. «Ֆրանսիացի եւ **ֆրանսագիր** բանաստեղծներու թիւը կը հաշուուի շուրջ հարիւր հազար» (Գ.Լ., 2009, էջ 170):

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Ա. Գիրքեր

1. Ա. Ա. /Արամ Անտոնեան, Աքսորի ճամբուն Վրայ, Երևան, «Սարգիս Խաչենց», 2016/:
2. Ա. Ս. /Արամ Սեփերձեան, Հող եւ մորմոք, ՀԳՄ հրատարակչութիւն, Երևան, 2001/:
3. Ար. Ե. /Արմենակ Եղիայեան, Արեւմտահայերէնի ուղղագրական, ուղղախօսական, ոճաբանական ուղեցոյց, Պէյրութ, 2019/:
4. Բ. Կ., Բիւզանդ Կռանեան, Ամբողջական երկեր, Ա. հատոր, Պէյրութ, 1975:
5. Գ. Ե. Գեորգ Եազրճեան, Սփիւռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները Խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ 1945-1991, Երևան 2016:
6. Գ. Կ., Գեորգ Կառվարենց, Բանաստեղծութիւն, Ս. Ղազար, Վենետիկ, 1977:
7. Գ. Պ., Գրիգոր Պըլտեան, Ֆրանսահայ Գրականութիւն 1922-1972. Նոյնէն Այլը, Երևան, 2017:
8. Գ. Պ. 1, Գրիգոր Պըլտեան, Սեմեր, Պէյրութ, 2015:
9. Գ. Պ. 2, Գրիգոր Պըլտեան, Շրջում, Սարգիս Խաչենց հրատ., Երևան, 2012:
10. Գ. Պ. 3, Գրիգոր Պըլտեան, Երկխօսութիւն Նարեկացիին հետ, Երևան, 2008:
11. Գ. Պ. 4, Գրիգոր Պըլտեան, Կրակէ Շրջանակը. Դանիէլ Վարուժանի Շուրջ, Երևան, Սարգիս Խաչենց, ՓՐԻՆԹԻՆՖՈ, 2014:
12. Գ. Պող., Գրիգոր Պողարեան, Այնթապականք, Պէյրութ, 1974:
13. Գ. Ք., Գրիգոր Քեօսեան, Պրիամակին գոյները, Պոսթոն, 2009:
14. Թ. Թ., Թորոս Թորանեան, Հարցազրոյցներ Սուրիոյ մէջ դուրսէն պարտադրուած պատերազմին հետեւանքով ՀՀ-ի կողմէ սիրով ընդունած հայերու հետ, Երևան, Յուսակն, 2016:

15. Թ. Տ., Թագուհի Տեվլեթեան, Ողջոյն, կեանք, Նիկոսիա, 2007:
16. Ին., Ինտրա, Ներաշխարհ, Պէյրուօ, 1955:
17. Ին. 1, Ինտրա, Երկեր, գիրք Ա. Երեւան, 2014:
18. Լ. Է., Լեւոն Էսաճանեան, Անմահները. Դանիէլ Վարուժան, Կ. Պոլիս, 1919:
19. Լ. Շառ. 1, Լեւոն Շառոյեան, Դեգերումներ Հայ Գրերի եւ Պատմութեան Գետեգրին, Հալէպ, 2016:
20. Լ. Շառ., Լեւոն Շառոյեան, Լեւոնականներու վերջին շառախուրը՝ Սիմոն Սիմոնեան, Երեւան, 2016:
21. Կ. Լէփ., Կարպիս Լէփեճեան, Պատմութիւն Անդրանիկ Թատերախումբի, Հալէպ, 2010:
22. Հ. Պ., Հրաչ Պարսումեան, Առանձին՝ Հոռմի Դէմ - Բ. Կատարողական, Ազդակ, 28 Դեկտեմբեր 2017:
23. Համ. Համաստեղ, Մոռացուած էջեր, հ. Դ., Երեւան, ԵՊՀ հրատ., 2007:
24. Մ. Ե., Մարուշ Երամեան, **Ջուրեր**, քերթուած, *Տարբերակներ* հատորէն, Հալէպ, 1995:
25. Մ. Ի., Մուշեղ Իշխան, Երկերի ժողովածու, Երևան, 1990:
26. Մ. Ի. 1, Մուշեղ Իշխան, Ոսկի Աշուն, Պէյրուօ, տպ. Սեւան, 1969:
27. Մ. Պ., Մովսէս Պչաքճեան, Երկերու Լիակատար Ժողովածու, 7-րդ հատոր:
28. Յ. Ն., Յակոբ Նալպանտ, Որոնում, Երթ, Սուրիահայ տարեգիրք, Հալէպ, 2006:
29. Յ. Չ., Յ. Չոլաքեան, Միջգաւառական անեքթոններ, Հալէպ, 2005:
30. Յ. Չ. 1, Յ. Չոլաքեան, Արեւմտահայերէն. կանոնակարգ եւ խնդիրներ, Երեւան, 2019:
31. Յ. Վ., Յարութ Վարդանեան, Յիշատակի հեռագիր, Երթ, Սուրիահայ տարեգիրք, Հալէպ, 2006:
32. Յակ. Ս., Յակոբ Սիրունի, Ինքնակենսագրական նօթեր, Երեւան, «Մարգիս Խաչենց», 2006:

33. Յակ. Ս., Յակոբ Սիրունի, «Ինքնակենսագրական նոթեր, Երևան, «Սարգիս Խաչենց», 2006:

34. ՅԱԿ. Պ., Յակոբ Պէքեարեան, Երթ, Արդէ՞օք կատակ էր... Սուրիահայ տարեգիրք, Հալէպ, 2006:

35. Ն. Պ. Նորա Պարութճեան, Բանասէր, Փարիզ-Ֆրանսա, 24 Յունուար 2017:

36. Ս. Խ., Սարգիս Խաչենց, Փրինթինֆո-Անտարես, Երևան 2017:

37. Ս. Ք., Սարգիս Քէհեանեան, Բարոյագիտութիւն, փիլիսոփայական ակնարկ, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի հրատ., 2018:

38. Վ. Օ., Վահէ Օշական, Կայաններ, Երևան 2017:

39. Տ. Գ., Տիգրան Գարոյեան, Երթ, Սուրիահայ Տարեգիրք 2, Հալէպ, 2006:

40. Օ. Ս., Օսգար Ուայլթ, Տորիքն Կրէյի պատկերը (անգլերէնէն թարգմանութիւնը Վահէ-Վահեան), Պէյրութ, 1992:

Բ. Բառարաններ

1. Ռ. Բ., Դ. Ս. Զիլինգարյան, Ա. Ե. Սարգսյան, Պաշտպանական – անվտանգային տերմինների բացատրական Հայերեն – ռուսերեն – անգլերեն, ռուսերեն – հայերեն, Անգլերեն – հայերեն բառարան, Լեզալ Պլյուս, Ե., 2012:

2. Անդրանիկ Վրդ. Կռանեան, Բառգիրք հայերէն լեզուի, Պէյրութ, 1998:

3. Յովհաննէս Թովմաս Գայայեան, Բառարան Գանձարան Հայերէն լեզուի, Գահիրէ, 1938:

4. Գնէլ արքեպիսկոպոս Ճերէճեան, Փարամագ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան, Կ. Տօնիկեան եւ Որդիք Հրատարակչատուն, Պէյրութ, 1992:

5. Ստեփան Մալիասեանց, Հայերէն բացատրական բառարան. Երևան: ՀՍՍՌ Պետ. Հրատ. 1944:

6. Նայիրի, Հայերէնի ուղղագրիչ ցանցային բառարան:

7. Ա. Սարգսյան, Արևմտահայերենի բառարան:

8. Ռ. Մաքալետոյան, Արևմտահայերեն – արևելահայերեն նոր բառարան:

Գ. Ամսագիրեր եւ Հանդէսներ

1. ԵՐԹ, Սուրբհայ Տարեգիրք 2, Հալէպ 2006:
2. Հայ. Հայրենիք, ամսագիր, ԱՄՆ, Ժ. տարի, թիւ 11 (119), Մեկտեմբեր 1932:
3. Հայ. 1, Հայրենիք, Եռամսեայ հանդէս, Պոսթըն, 1970, 9-րդ համար, էջ 35:
4. Բագ., Բագին, Պէյրութ:
5. Ահկ., Ահեկան, Մշակութային եռամսեայ հանդէս, Պէյրութ:

Դ. Շաբաթաթերթեր

1. Հայր., Հայրենիք շաբաթաթերթ, Նյու Յորք, 1991:
2. Հորգ., Հորիզոն շաբաթաթերթ, Կանադա, 1979:

Ե. Օրաթերթեր

1. Ագ., Ազդակ օրաթերթ, Պէյրութ, 1927:
2. Ապ., Ապառաժ, Արցախ, 2020:
3. Ասպ., Ասպարէզ, Լոս Անճելըս, 1908:
4. Ար., Արարատ օրաթերթ, Պէյրութ, ԾՌ. տարի, թիւ 13967/68/, 15 Յունիս 1989:
5. Գանձ., Գանձասար, Հալէպ, 1916:
6. Եր., Երկիր, Երեւան, 2020:
7. Ն. Մ., Նոր Մարմարա, Սթանպուլ, 2001:
8. Յառ. 1, Յառաջ օրաթերթ, Փարիզ, 1990, 2003:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջաբան.....	5
Պայմանական նշաններ և համառոտագրություններ.....	6
Բառացանկ.....	7
Օգտագործուած աղբիւրներ.....	140

Ս. Տիոյեան, Ա. Տիշենկճեան, Յ. Մարաշլեան

ՆՈՐ ԲԱՌԵՐ
ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՄԷՋ

Ա. ԳԻՐՔ

Ձևավորումը և էջադրումը՝
Ս. Հ. Խառատյանի

Կազմը՝ Ս. Ս. Արևշատյանի

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ